7223

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԷՏՍ

Ազգ. Նախակրթական Վարժարանաց

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ

յՈւսումնական Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵՓՈԽԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

معارف عموميه نظارت جليله سنك رخصتيله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

1892

91(075)
Մ-35

4.8

BIBLIOTHÈQUE NUBAR
Nº
COTE III.9.5.
U.G.A.B

91(075)
Մ-35

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԷՏՍ
Ազգ. Նախակրթական Վարժարանաց

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ
յՈւսումնական Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Բ. ՏՈՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԲԱՐԵՓՈԽԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

معارف عموميه نظارت جليلەسنك رخصتيله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ
1892

☞ Հեղինակին ստորագրութիւնը չկրող օրինակները կեղծ են եւ անվաւեր կը համարուին

2004
97279-ԱՀ
813-2004

Ա. Ռ.

ԱԶՆՈՒԱՆՈՒՔ

ՄԱՐՏԻԿ ԷՖԷՆՏԻ Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

Եւայլն եւայլն եւայլն

ՁՕՆ

ԽՈՐԻՆ ՄԵԾԱՐԱՆԱՑ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԷՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

22 Օգոստոս 1892

Համար 237

ՎԱՒԵՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԵԱՆ

Ազգային Կեդրոնական Վարչութեան Ուսումնական Խորհուրդս՝ քննելով «Համառօտ Պատկերազարդ Աշխարհագրութեան» Դասագիրքն՝ զոր 'ի պէտս Ազգ. Նախակրթական վարժարանաց պատրաստած է՝ Պատմութեան եւ Աշխարհագրութեան ուսուցիչ Գրիգոր Էֆէնտի Մարգարեան, կը վկայէ որ, Հեղինակին դիտած նպատակին՝ որ է Աշխարհագրական նախնական գիտելիքն՝ դիւրին ու հաճելի եղանակաւ աւանդել, լաւ կերպով ծառայող ընտիր դասագիրք մ'է, եւ վաւերացնելով զայն՝ կ'արտօնէ նորա գործածութիւնն յԱզգային Նախակրթարանս:

ԿՆԻՖ

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ — ԱՏԵՆԱՊԵՏ

ՊՕՂՈՍ Գ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ — Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեր սոյն Համառօտ դասագրքին՝ իբր տասն ամսոյ սուղ միջոցի մը մէջ սպառելով՝ կրկին տպագրութեան արժանանալն՝ մեզ համար իրաւամբ կը նկատեմք իբր ամենէն գործնական քաջալերութիւնը, խորհելով որ կարողացած եմք մերովսանն օգտակար ըլլալ Հայ ուսանողութեան:

Գործոյս Երկրորդ տպագրութեանն առթիւ՝ ներմուծելով հանդերձ կարեւոր փոփոխութիւններ ու յաւելումներ, մանաւանդ Օսմ, պետութեան բաժնին մէջ, անփոփոխ պահած եմք նիւթոց դասաւորութեան, *Հրահանգներու*, Մտաւոր *Ուղեւորութեանց*, մէթոտի և *Պարտականութեանց* այն ընդհանուր ուղղութիւնն՝ որոյ օգտակարութեանը փորձով համոզուած եմք:

Այնու քաղցր ակնկալութեամբ որ, Գործոյս Երկրորդ տպագրութիւնն ևս Պատ. Ուսուցչաց ներողամիտ ընդունելութեանն արժանի լինելու բաղդը պիտի ունենայ, այժմէն իսկ մեր լաւագոյն վարձատրութիւնն ստացած կը համարիմք:

1 Նոյեմբեր 1892 — Դ. Մ.

Կ. Պոլիս

ՀԱՄԱՌՕՏ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ընդհանուր Գիտելիք

ՄԱՍՆ Ա.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ Երկիրս նկարագրող գիտութիւնն է։

Երկիրս կը կոչուի նաեւ Գունտ կամ Երկրագունտ, որովհետեւ նարինջի նման կլոր է։ Երկրիս կլորութեանը կրնանք համոզուիլ, երբ՝ ընդարձակ ծովու մը եզրն կենալով՝ դիտենք հեռուէն եկող նաւ մը. այն ատեն կը տեսնենք որ՝ նախ եւ առաջ այդ նաւուն կայմերն ու առագաստները կ'երեւին եւ ապա հետզհետէ՝ նաւուն ամբողջ մարմինը։ Անկից կը հասկցուի որ՝ եթէ Երկիրս իրօք տափարակ ըլլար՝ այդ հեռուէն երեւցող նաւն թէեւ փոքր՝ բայց դարձեալ ամբողջ պէտք էինք տեսնել։

Հեռուէն երեւցող նաւու մը ձեւերը

Նոյնպէս՝ Լուսինը խաւարած ժամանակ, որոշակի կը տեսնենք որ՝ Երկիրս կլոր ստուեր մը կը ձգէ Լուսնին վրայ։ Այս եւ ասոնց նման երեւոյթներ կ'ապացուցանեն թէ՝ արդարեւ Երկիրս կլոր է։

ԵՐԿՐԻՍ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Երկիրս ունի երկու տեսակ շարժում, մին՝ 24 ժամը մէկ անգամ իր առանցքին վրայ դառնալն՝ ուրկէ յառաջ կ'ուգան Ցերեկ և Գիշեր, միւսն է տարեկան շարժում, այսինքն 365 աւուր և 6 ժամու մէջ Արեգական շուրջը դառնալն՝ ուրկէ յառաջ կ'ուգան տարւոյն 4 եղանակները որք են՝ Գարուն, Ամառ, Աշուն և Ձմեռ:

Երկիրս Արեգական շուրջը դառնալուն համար կը կոչուի Մոլորակ և ունի 40,000 քիլմ. շրջապատ: Երկիրս Լուսինէն 49 անգամ մեծ, իսկ Արեգակէն 13,000,000 անգամ փոքր է:

ԵՐԿՐԻՍ ՉՈՐՍ ԳԼԽԱՒՈՐ ԿՈՂՄԵՐԸ

Երկրագնտիս վրայ տեղւոյ կամ քաղաքի մը դիրքն ճշդիւ որոշելու համար՝ չորս գլխաւոր կողմեր մտածուած են՝ Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս և Հարաւ: Այն կողմն ուսկից ամէն առաւօտ Արեւը կը ծագի, կը կոչուի Արեւելք. — Արեւելքի հակառակ կողմն՝ ուսկից Արեւը մարը կը մտնէ՝ կը կոչուի Արեւմուտք: Երբ երեսնիս դէպ Արեւելք դարձնեմք, աջ կողմերնիս կ'ըլլայ Հարաւ եւ ձախերնիս՝ Հիւսիս:

Երկրիս չորս գլխ. կողմերը

Այս չորս գլխաւոր կողմանց մէջ տեղերն կան՝ նաև 4 երկրորդական կողմեր, ինչպէս Հիւսիսային Արեւելք եւ Հիւսիսային Արեւմուտք. — Արեւելեան Հարաւ և Արեւմտեան Հարաւ. որոնք կը կոչուին նաև Միջանկեալ կողմեր:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԳՕՏԻՔ

Երկրագնտիս մակերևութին ուսումը դիւրացնելու և նորա այլ և այլ մասանց դիրքն ճշդիւ որոշելու նպատակաւ՝ աշխարհագիրք՝ երևակայական, այսինքն իրապէս չեղած գծեր ու շրջանակներ կը մտածեն Երկրիս շուրջը: Այս գծերն են՝ Առանցք, Հասարակած, Միջօրէական և Արեւադարձ:

Առանցք կ'ըսուի Երկրիս հիւսիսէն 'ի հարաւ և անոր կեդրոնէն անցնող այն երևակայական գիծը որոյ վրայ Երկիրս կը դառնայ, Առանցքին երկու ծայրերը կը կոչուին Բեւեռ, Հիւսիսային և Հարաւային բեւեռ:

Հասարակած կ'ըսուի այն մեծ շրջանակն որ՝ Երկրիս մակերևութին ճիշդ մէջ տեղէն և բևեռներէն հաւասար հեռաւորութեամբ անցնելով Գունտը կը բաժնէ երկու հաւասար մասերու, Հիւսիսային կիսագունդ և Հարաւային կիսագունդ:

Միջօրէական կը կոչուի այն շրջանակն որ բևեռէ բևեռ ձգուելով Հասարակածը կը կտրէ և Գունտը կը բաժնէ երկու հաւասար մասերու՝ Արեւելեան կիսագունդ և Արեւմտեան կիսագունդ,

Արեւադարձ կը կոչուի՝ Բևեռներու և Հասարակածին մէջ գտնուած զուգահեռական գծերը: Հասարակածի հիւսիսային կողմինը կը կոչուի Արեւադարձ Խեցգետնի, իսկ հարաւակողմանը՝ Արեւադարձ Այծեղջեր:

Այս չորս գլխաւոր շրջանակները Երկիրս կը բաժնեն հինգ գօտիներու.

Հիւսիսային Բարեխառն Գօտի, Հարաւային Բարեխառն Գօտի, Հիւսիսային Սառուցեալ, Հարաւային Սառուցեալ Գօտի և Այրեցեալ Գօտի:

Սառուցեալ գօտիներու մէջ չափազանց ցուրտ կ'ընէ, վասն զի Արեգակը իր ճառագայթները խոտորնակի կը զարնէ հոն՝ որով բոյսք և կենդանիք նուազ կ'ըլլան:

Բարեխառն գօտիներու մէջ տաքն ու ցուրտն չափաւոր են, այս պատճառաւ բուսաբերութիւնն ալ բաւական և առատ է:

Այրեցեալ գօտւոյ մէջ սաստիկ տաք կ'ընէ, որովհետև Արեգական ճառագայթները ուղղակի կը զարնեն Երկրիս կեդրոնին և որով բոյսերն ալ առատ և այլազան են:

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ ԵՒ ՔԱՐՏԷՍՔ

Եթէ ուզեմք Երկրիս բնական ճիշդ ձևը աչքի առաջ ունենալ, արուեստական գունտ մը կ'առնեմք և անոր վրայ կը նշանակեմք ցամաքի և ջրոյ բաժանումները, աստիճանները, քաղաքական բաժանումները եւլն: Այս կերպ գունտ մը կը կոչուի Երկրագունդ:

Աշխարհացոյց քարտէս կը կոչուին այն տախտակներն որոնք



Երկրագունտ

կը ներկայացնեն Երկրիս ամբողջ մակերեւոյթն կամ անոր մէկ մասը։

Համաստարած կ'ըսուին այն աշխարհագրական տախտակներն որք Երկրիս ամբողջ մակերեւոյթը կը ներկայացնեն։

Ընդհանուր քարտէս կ'ըսուին այն աշխարհացոյցներն որոց վրայ Երկրիս հինգ մասանց մին նշանակուած է։ Իսկ երբ թղթի մը վրայ Երկրի կամ տէրութեան մը մակերեւոյթն ուզենք ներկայացնել, այն ատեն նոյն աշխարհացոյցը կը կոչուի Առանձնաքարտէս կամ Մասնաքարտէս։

Աշխարհացոյց տախտակներու վրայ՝ Երկրիս չորս կողմերը հետեւեալ կերպով նշանակուած են։

Վերի կողմը Հիւսիս, վարի կողմը Հարաւ, աջ կողմը Արեւելք, եւ ձախ կողմը Արեւմուտք։

Երկրագունտս երկու ձեւով կարելի է երեւակայական երկու մասերու բաժնել, Ա. Երբ Հասարակածին ուղղութեամբ կտրուած նկատենք, կ'ունենանք երկու կիսագունտներ՝ Հիւսիսային կիսագունտ եւ Հարաւային կիսագունտ։ Իսկ երբ հիւսիսէն 'ի հարաւ, այսինքն՝ Միջօրէականի ուղղութեամբ կտրուած նկատենք, դարձեալ կ'ունենանք երկու բաժանումներ, այսինքն Արեւելեան եւ Արեւմտեան կիսագունտ։

ՑԱՄԱՔԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Երկիրս՝ որուն վրայ կը բնակինք, կազմուած է Ցամաքէ եւ Ջուրէ որոյ շուրջն ալ պատած է մթնոլորտը։

Երկրիս մակերեւութին ընդարձակութիւնն է 509,000,000 քիլ. քառ.։ Այս մակերեւութին երեք մասը Ջուր եւ մէկ մասը Ցամաք է։

Ցամաք երկիրներն մեծաւ մասամբ զետեղուած են կիսա-

գունտներու հիւսիսակողմերը։ Ցամաքները կը բաժնուին երեք որոշ մասերու, 1. Հին Աշխարհ որ կը պարունակէ Եւրոպա, Ասիա, եւ Ափրիկէ. 2. Նոր Աշխարհ որ կը պարունակէ Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաները. 3. Ովկիանիա կամ Աւստրալիա որ տարածուած է Արեւելեան Կիսագունտին Հար. արեւելեան կողմը եւ բաղկացած է մեծ ու փոքր բազմաթիւ կղզիներէ։

Ցամաքին այլ եւ այլ ձեւերը իրենց առանձին առանձին անուններն ունին Աշխարհագրութեան մէջ ինչպէս Լեռ, Դաշտ, Կղզի, Պարանոց եայլն։

Կղզի

Կղզի կ'ըսուի ամէն կողմէն ջրով շրջապատուած մեծ կամ փոքր ցամաքին։

Կղզեխումբ կամ Արշիպեղագոս կ'ըսուին իրարու մօտ գտնուած մեծ կամ փոքր կղզիներ։

Թերակղզի եւ Պարանոց

Թերակղզի կ'ըսուի ցամաքի այն մասն որ երեք կողմէն ջրով շրջապատուած ըլլալով՝ միայն հողի կտորով մը ցամաքին միացած է։ Երբ թերակղզին շատ մեծ է կ'ըսուի Ցամաքակղզի։

Պարանոց կ'ըսուի հողի այն նեղ կտորին որ թերակղզին ցամաքին կը կապէ։

Գլուխ եւ Հրուանդան

Գլուխ կ'ըսուի ցամաքի այն փոքր մասն որ դէպ 'ի ծով երկնցած է, եթէ Գլուխը բարձր ու լեռնային է կ'ըսուի Հրուանդան։

Խութ կամ Վիմուտ կ'ըսուին ծովերու եւ կամ ովկէաններու մէջ՝ տեղ տեղ գտնուած այն ժայռերն՝ որոնք ջրոյ մակերեւութին հաւասար եւ կամ անկից քիչ բարձր ըլլալով նաւարկութեան համար վտանգաւոր են։

Երկիր կամ Աշխարհ կ'ըսուի Ցամաքի մը քաղաքականապէս որոշեալ մէկ մասն՝ ինչպէս Թուրքիա, Անգլիա, Հնդկաստան, Գաղղիա առանձին Երկիր կամ Աշխարհներ են։

Դաշտ կ'ըսուին Երկրիս տափարակ եւ ընդարձակ տեղուանքը։ Աւազուտ եւ անբեր դաշտերուն Անապատ կ'ըսեն։ Ովասիս անունը կ'ուտան անապատներու մէջ տեղ տեղ գտնուած ջրարբի ու բարեբեր վայրերուն։

Դաշտ

Ձոր կ՚ըսուի երկու լերանց մէջ տեղի խորութեանը։

Լեռ կ՚ըսուին Երկրիս վրայի բընական բարձրութիւնները։ Եթէ լեռը փոքր է կ՚ըսուի Բլուր։

Լեռնաշղթայ կամ Գօտի լերանց կը կոչուին իրարու կից՝ միաշար լեռներ որք այլ եւ այլ գօտիներէ ձեւացած են։

Լեռնադաշտ կ՚ըսուին բլրոց կմ լերանց կատարը գտնուած տափարակ տեղուանք։

Նոյնպէս լեռնադաշտ կ՚ըսուին իրարմէ անջատ բարձր լերանց խումբերով շրջապատեալ դաշտագետինք կամ աշխարհք։

Հրաբուղխ կը կոչուին այն լեռներն որոնց խորը գտնուած հանքերն ու կազերն ատեն ատեն բռնկելով՝ լեռանը գագաթը կը ծակեն եւ դուրս կ՚արձակեն կրակ, քար եւ մուխ։ Հրաբուղխին բերանը կը կոչուի խառնարան, իսկ անկէց դուրս վազած հեղուկը՝ լաւա։

Ծովային հրաբուղխ կը կոչուին այն հրաբուղխներն որոնք ծովուն ներքեւէն բռնկելով նոր նոր կղզիներ կը ձեւացնեն։

Հովիտ կ՚ըսուին երկու լերանց շղթաներու միջեւ տարածուած տափարակ եւ ընդարձակ դաշտերը։

Կիրճ կ՚ըսուին լերանց շղթաներու մէջ գտնուած նեղ եւ օձապտոյտ անցքերը։

Լեռնաշղթայ

Ափունք կամ Ծովեզերք կ՚ըսուին ցամաքի մ՚այն մասերն զորս ծովը կը թրջէ։

Այր կամ Անձաւ կ՚ըսուին երկրիս խորերը կամ լերանց ու ժայռերու մէջ գտնուած բնական մեծամեծ ծակերը։

Երկրաշարժ կ՚ըսուի Երկրիս մէկ մասին շարժելուն կամ ցնցուելուն՝ որ յառաջ կուգայ՝ Երկրիս խորերը գտնուած կազերուն կամ դիւրավառ հանքերուն՝ յանկարծական կերպով բռնկելէն։

Լեռնադաշտ

ՋՐՈՑ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Ծով, Ովկէանոս. — Երկրիս մակերեւութին մեծագոյն մասը ծածկող աղի ջրոյ ընդարձակ տարածութիւնը Ծով. իսկ այն լայնատարած ծովերն որոնք մեծամեծ ցամաքներ կը շրջապատեն՝ Ովկէանոս կը կոչուին։

Հինգ ովկէանոս կայ. Ատլանտեան, Խաղաղական կամ Մեծ ովկէանոս. Հնդկաց, Արջային եւ Հակարջային ովկէանոս։

Ծոց կ՚ըսուին ջուրին այն մասերն՝ որոնք դէպ ՚ի ցամաք ներս մտած են, իսկ երբ ամբողջ ծով մը ծոցի ձեւով դէպ ՚ի ցամաք ներս մտած է, կ՚ըսուի Ծովածոց։

Հրաբուղխ

Խորշ և Նաւահանգիստ. — Փոքր ծոցերը կը կոչուին խորշ, իսկ բնական այն ապահով խորշերն որոնց մէջ նաւեր խարիսխ ձգելով ապրանք կը փոխանակեն և կամ ճամբորդներ կ'առնուն՝ կը կոչուին Նաւահանգիստ:

Նեղուց և Ջրանցք. — Ջրոյ այն նեղ անցքերն որոնցմով երկու ծովեր կամ ովկէանոսներ կը միանան, կը կոչուին Նեղուց, իսկ եթէ նեղուցն լայն ըլլայ՝ կ'ըսուի Ջրանցք:

Լիճ և Ճահիճ. — Ցամաքին մէջ գտնուած ջրոյ այն մասերն որոնք ուրիշ ծովերու հետ հաղորդակցութիւն չունին և իրենց ջուրն ալ ընդհանրապէս անոյշ են, Լիճ կ'ըսուին: Ճահիճ կ'ըսուին երկրիս մակերևութին վրայ թեթև բարձրութեամբ տարածուած այն տղմուտ և ապականեալ ջուրերն որոնք շրջակայ բնակութեանց օդը կ'ապականեն:

Աղբիւր և Առուակ. — Աղբիւր կ'ըսուին այն ջուրերն որոնք՝ կը բղխին լերանց ստորոտներէն կամ կողերէն: Իսկ այս աղբիւրներէն ձևացած ջրոյ փոքր հոսանքներն կը կոչուին Առուակ:

Լեռնագագաթ եւ Գետ

Գետ կ'ըսուին առուակներէ և աղբիւրներէ կազմուած ջրոյ ընդարձակ հոսանքները:

Ակ և Աղբիւր. — Գետի մը բղխած տեղն Ակ կամ Աղբիւր, իսկ ծովուն հետ խառնուած տեղը կը կոչուի Գետաբերան:

Ծով եւ Նաւահանգիստ

Տելթա կ'ըսուին երբեմն գետերու բերանը գտնուած սա Δ ձևով եռանկիւնի փոքր կղզիներն՝ որոնք ընդհանրապէս նոյն գետոյ բերած աւազներէն ու

Գետաբերան

Նեղուց

Լիճ

հողերէն ձևացած են: Նշմարելի են Նեղոսի, Գանգէսի, Դանուբայ ևն. Տելթաները:

Սահանք կամ Ջրվէժ կ'ըսուին այն ջրոյ հոսանքներն որոնք ահագին բարձրութենէ մը վար կը գահավիժին։

Հոսանք և Յորձանք. — Ծովերու մէջ երբեմն ջրոյ առանձին հոսանքներ ձեւանալով այլ և այլ ուղղութեամբ կը վազեն։ Այս հոսանքներն երբ ջրոյ յատակին մէջ ցցուած ժայռերու կամ խոր տեղերու հանդիպին՝ կլոր շրջան մը կ'ընեն որ կը կոչուի Յորձանք։

Գետափունք. — Եթէ գետի մը հոսանքն 'ի վար նաւարկենք, աջ կողմերնիս կ'ըլլայ նոյն գետին Աջակողմեան ափունքն եւ ձախերնիս Ձախակողմեան ափունքը։

ՄԱՍՈՒՆՔ ԵՐԿՐԻ

Կովկասեան ցեղ

Ինչպէս տեսանք, Ցամաք երկիրներն՝ Երկրիս մակերեւութին մէկ չորրորդ մասը միայն կը կազմեն և մեծաւ մասամբ զետեղուած են հիւսիսային կիսագունդներու մէջ։ Հին Աշխարհը կը շրջապատեն Ատլանտեան, Խաղաղական, Արջային և Հնդկաց ովկէանոսք։

Նոր Աշխարհը կը շրջապատեն Արջային, Ատլանտեան, Հակարջային և Խաղաղական ովկէանոսք։

Եւրոպա, Ասիա և Աֆրիկէ կը կոչուին Հին Աշխարհ, որովհետեւ շատ հին ժամանակներէ 'ի վեր ծանօթ են. Իսկ Ամերիկա և Ովկէանիա կը կոչուին Նոր Աշխարհ՝ քանզի նոր դարուց մէջ ճանչցուեցան։

Մարդիկ՝ որոնք սփռուած են Երկրիս հինգ մասանց մէջ, կը հաշուուին իբր 1,400 միլիոն և իրենց գիմագծութեան, գոյնին և մարմնական կազմութեան համեմատ՝ կը բաժնուին հինգ գլխաւոր ցեղերու։

Մոնկոլեան ցեղ

Սպիտակ կամ Կովկասեան ցեղ՝ որ տարածուած է Եւրոպիոյ, Արեւմտեան Ա-

սիոյ, Հիւսիսային Աֆրիկէի մէջ և գաղթականութեամբ՝ աշխարհիս ամեն կողմերը։ Այս ցեղը կը հաշուուի իբր 500 միլիոն։

Ամերիկեան Հնդիկ

Դեղին կամ Մոնկոլեան ցեղ՝ որ տարածուած է հիւսիսային Եւրոպաէ 'ի զատ, Ասիոյ հիւսիսային, կեդրոնական, և Արեւելեան մասանց մէջ. Այս ցեղն ալ իբր 500 միլիոն կը հաշուուի։

Թխագոյն կամ Մալայեան ցեղ՝ որ կը բնակի Ասիոյ հարաւային արեւելեան կողմերը և Խաղաղական ովկէանոսի կղզեաց շատերուն մէջ։ Այս ցեղը՝ կը հաշուուի իբր 30 միլիոն։

Եթովպական ցեղ

Եթովպական կամ Խափշիկ ցեղ՝ որու բնադաւառն է Աֆրիկէ, իսկ այսօր աշխարհիս ամէն կողմերը ցրուած են։ Այս ցեղը կը հաշուուի իբր 100 միլիոն։

Պղնձագոյն կամ Ամերիկեան հնդիկք կը կոչուին այն բնիկ վայրենիներն որք կը բնակին Ամերիկայի մէջ և կը հաշուուին իբր 13 միլիոն։

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Քաղաքակրթեալ կը կոչուին այն մարդիկ որոնք մեծամեծ ընկերութիւններով կ'ապրին, ունին օրէնք, արուեստ, ձեռագործ, ուսում, վաճառականութիւն եւայլն։ Այս կարգի մարդոց ընկերութիւնը կը կոչուի Ազգ կամ Ժողովուրդ։

Կէս քաղաքակրթեալ կամ բոլորովին վայրենի մարդիկ խումբ խումբ և կամ առանձին ընտանիքներու բաժնուած կ'ապրին՝ վրաններու, խրճիթներու կամ քարայրներու մէջ։ Մինչդեռ քաղաքակրթեալ ազգերն կը բնակին քարէ, փայտէ կամ աղիւսէ շինուած հաստատուն և կանոնաւոր բնակարաններու մէջ։

Գիւղ կ'ըսուին սակաւաթիւ տուներու համախմբութիւնք։ Աւելի բազմաթիւ տուներ կամ կանոնաւոր շէնքեր պարունակող գիւղերը կը կոչուին Գիւղաքաղաք։

Քաղաքը մարդկային բնակութեանց ամենէն շէնն ու մեծագոյնն է։

Արուարձան կ'ըսուին քաղաքի մը՝ բերդէն կամ որոշեալ սահմանէն դուրս գտնուած մօտակայ գիւղերը, ինչպէս Գատը-քէօյ, Իւսկիւտար, Սան-Ստէֆանօ, Բերա՝ Պոլսոյ Արուարձաններն են։

Տէրութիւն կամ **Աշխարհ** կ'ըսուին այն երկիրներն որոնք մէկ կառավարութեան ներքեւ միացած են և ընդհանրապէս ունին մէկ լեզու, միօրինակ բարք և կրթութիւն, մէկ կրօն և մէկ պատմութիւն։ Թուրքիա Անգլիա, Չինաստան, Պրազիլ տէրութիւններ են։

Մայրաքաղաք կ'ըսուի Տէրութեան մ'այն քաղաքը՝ ուր ընդհանրապէս կը բնակի Թագաւորը, Իշխանը կամ Նախագահը։

Միապետական կ'ըսուի այն ձև կառավարութեան՝ որուն մէջ բացարձակ կերպով կ'իշխէ Թագաւորն կամ Կայսրը։ Եթէ տէրութեան մը մէջ Թագաւորին կամ Կայսեր իշխանութիւնը օրինօք սահմանաւորեալ է, այդ ձև կառավարութիւնը կը կոչուի **Սահմանադրական** կամ **Չափաւորեալ միապետութիւն**։ Չինաստան, Թուրքիա և Ռուսիա Բացարձակ Միապետութիւններ՝ իսկ Անգլիա, Գերմանիա, Սպանիա՝ Չափաւորեալ կամ Սահմանադրական միապետութիւններ են։

Հանրապետական կամ **Սահմանադրական** կ'ըսուին այն տէրութիւններն որոց մէջ փոխանակ կայսեր կամ Թագաւորի, ժողովուրդէն ընտրուած Նախագահ ու Երեսփոխանական ժողով մը կայ և ինքն է որ կը տնօրինէ և կ'որոշէ տէրութեան գործերը։

ԿՐՕՆՔ

Բոլոր մարդիկ կը հաւատան թէ Տիեզերքս ստեղծող և կառավարող Գերագոյն էակ մը կայ։ Միայն թէ ամէն մարդ միևնոյն կերպով չըմբռներ այդ էակն և տարբեր տարբեր ձևերով կը մատուցանէ Նմա յարգանք և պաշտամունք։ Ահա ասկից ծագում առած է կրօնից տարբերութիւնները։

Օրինակի համար. կան Ազգեր որոնք միակ և ճշմարիտ Աստուծոյ կը հաւատան և ասոնք երեք դասերու կը բաժնուին՝ 1° **Քրիստոնեայ** 2° **Մահմէտական** 3° **Մովսիսական**։

Քրիստոնեայք կը հաշուուին իբր 300,000,000, Մահմէտականք կը հաշուուին իբր 250,000,000, Մովսիսականք իբր 7 միլիոն։

Կան նաև ազգեր որոնք մէկէ աւելի աստուածներու կը հաւատան և կը կոչուին **Կռապաշտ**։ Ասոնց թիւն է 600,000,000։

Քրիստոնէութիւնը կը բաժնուի երեք գլխաւոր ճիւղերու 1°. **Կաթոլիկ** կամ **Հռոմէական Եկեղեցի**. 2° **Արևելեան** կամ **Օրթոտոքս Եկեղեցի**. 3° **Բողոքական Եկեղեցի**։

Իսկ Հայք ունին իրենց ուրոյն՝ **Ազգային Կաթուղիկէ Եկեղեցին**՝ հիմնեալ 'ի վերայ Սրբազան Առաքելոց՝ Թադէի և Բարդուղիմեայ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵՒՐՈՊԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵՒՐՈՊԱ Հին Աշխարհի հիւսիսային արևմտեան կողմը մեծ թերակղզի մը կը ձևացնէ։ Եւրոպա թէև Հինգ ցամաքներու փոքրագոյնը, սակայն ամենէ քաղաքակրթեալն, ամենէն զօրաւոր և համեմատաբար ամենէն բազմամարդն է։

Սահմաններն են՝ հիւսիսէն Արջային Սառ. ովկէանոս, արևելքէն՝ Ուրալ լերինք, Ուրալ գետ և Կասպից ծով, հարաւէն Կովկասու գօտին, Սև ծով, Պոսֆորի և Տարտանէլի նեղուցք, Միջերկրական ծով և Ճիպրալթարի նեղուց, արևմուտքէն Ատլանտեան ովկէանոս։

Եւրոպա ունի 10180000 քիլ. քառ. տարածութիւն 236000 քիլ. ծովափունք և 370000000ի չափ բնակիչ որք կըբաժնուին երեք մեծ ընտանիքներու՝ **Լատինական**, **Գերմանական** և **Սլաւական**։

Ծով և Ծոցք. — Եւրոպիոյ ծովափունք շատ անկանոն են և այս պատճառաւ ձևացած են բազմաթիւ ծովեր, ծովածոցեր ու խորշեր։

Սառ. ովկէանոսէն ձեւացած են Բարայի և Սպիտակ ծովերը։

Ատլանտեանէն ձեւացած են՝ Պալթիկ, Հիւսիսային կամ Գերմանական ծով, Մանշ, Իրլանտայի ծով, Միջերկրական՝ որմէ ձեւացած են Տիւրէնեան կամ Թօսքանայի, Ադրիական, Յոնիական, Եգէական կամ Արշիպեղագոս, Մարմարա, Սեւ և Ազախու ծովերը։

Եւրոպան շրջապատող ովկէանոսներէն ու ծովերէն ձեւացած են հետեւեալ ծոցերը։ Նախ՝ Սպիտակ ծովն ինքնին մեծ ծոց մ՝ է Սառ. ովկէանոսէն ձեւացած։

Պալթիկի մէջ կը գտնուին Պօթնեան, Ֆինլանտեան, Ռիկայի, կամ Լիվոնիոյ և Տանձիկի ծոցերը։

Ատլանտեանէ ձեւացած են Պիսքայեան կամ Կասքոնեան ծովածոցը, Պրիսթըլի ծոցը՝ Անգլիոյ հար. արեւմտեան կողմը։

Միջերկրականէ ձեւացած են Լիօնի, Ճենովայի, ծոցերը և Նափոլիի փոքր ծոցը. —Յոնիականէ ձեւացած են Տորէնտոնի Արդայի, Լեպանտի և Կորնթոսի ծոցերը. — Ադրիականէ՝ Վենետիկի և Թրիեսթէի ծոցերը։

Արշիպեղագոսի մէջ կան Նաւպլիոյ, Աթէնքի, Սելանիկի, Օրֆանոյի, Եէնիճէի, Լաքոսի և Սարոսի ծոցերը։ Սեւ ծովու մէջ կը գտնուին Պուրկասի, Վառնայի և Օտեսայի ծոցերը։

Նեղուցք. — Եւրոպիոյ ովկէանոսներն ու ծովեր իրար կապուած են հետեւեալ նեղուցներով։

Սունտ, Մեծ Պելթ, Փոքր Պելթ, Քաթթեկաթ և Սքակերրաք՝ Հիւս. և Պալթիկ ծովերու միջեւ։

Տովրի կամ Քալէի նեղուց՝ կը միացնէ Մանշը Հիւս. ծովուն։

Ս. Գէորգայ և Հիւս. Ջրանցք՝ Ատլանտեանի և Իրլանտայի ծովուն միջև։

Ճիպրալթարի կարեւոր նեղուցն՝ որ Ատլանտեանը կը միացնէ Միջերկրական ծովուն և Ափրիկէն կը բաժնէ Եւրոպաէ։

Պոնիֆաչիոյ նեղուց՝ Քորսիքա և Սարտէնիա կղզեաց միջեւ։

Մեսինայի նեղուց՝ Հար. Իտալիոյ և Սիկիլիոյ միջեւ

Օթրանթի ջրանցք՝ Յոնիականի և Ադրիականի միջեւ։

Տարտանէլի կամ Չանաք-Գալէի նեղուց՝ ՚ի մէջ Արշիպեղագոսի և Մարմարայի։

Պոսֆորի կամ Կ. Պոլսոյ նեղուց՝ որ Մարմարան կը միացնէ Սեւ ծովու։

Քէրչի կամ Ենի-Գալէի նեղուց՝ որով միացած են Սև և Ազախու ծովերը։

Թերակղզիք, Կղզիք, Պարանոցք.

Եւրոպա ունի 4 մեծ ու 3 փոքր թերակղզիներ։

Չորս մեծերն են՝ Սքանտինաւեան ցամաքակղզի (Շուէտ-Նորվեկիա) հիւս. կողմը. — Պիրենեան ցամաքակղզի (Սպանիա եւ Փորթուկալ) հար. արեւմտեան կողմը. — Ապենինեան ցամաքակղզի (Իտալիա) հար. կողմը եւ Պալքանեան ցամաքակղզի՝ Եւրոպիոյ հար արեւելեան կողմը։

Երեք փոքրերն են Եութլանտ՝ Պալթիկ և Հիւս. ծովերով շրջապատեալ. Մօրա՝ կամ Պելոպոնէս՝ Յոնիականի, Միջերկրականի եւ Արշիպեղագոսի միջև, Խրիմ՝ Սև ծովու մէջ, Ռուսիոյ հարաւակողմը։

Մօրա՝ ցամաքին կապուած է Կորնթոսի պարանոցով, իսկ Խրիմ՝ Փերեքոփի պարանոցով։

Գլխաւոր կղզիներն են։

Լօֆֆօտէնի արշիպեղագոս՝ Նորվեկիոյ հիւս. արեւմտ. կողմը։

Անգլիա՝ (Սկովտիայով միասին) Ատլանտեանի մէջ, որ է Եւրոպիոյ մեծագոյն կղզին։ Շուրջը կը գտնուին Իրլանտա մեծ կղզին արեւմտեան կողմը. Հեպրիտեանք, Շեթլանտ, Օրքադեան, Ուայթ, Մէն և Էնկլիս։ Իսկ Ատլանտեանի հիւս. արեւմ. կողմը կը գտնուի Իսլանտա մեծ և հրաբխային կղզին։

Անկլօ-Նորմանտական կղզիք՝ Մանշի ծովուն արեւմտ. կողմը։

Քաթթէկաթի նեղուցին և Պալթիկի միջև կը գտնուին Դանիական կղզիք որոց գլխաւորներն են Զէլանտ, Ֆիօնիա, Լալանտ։

Միջերկրականի մէջ, Սպանիոյ արեւելեան կողմը կը գտնուի Պալէարեան արշիպեղագոսն՝ որոյ գլխաւոր կղզիներն են Մաճօրքա, Մինօրքա, Իվիզա։ Իտալիոյ արեւմտեան կողմը կը գտնուին Քորսիքա, Սարտէնիա, Էլպա եւ հարաւային կողմը Սիկիլիա մեծ կղզին. Նոյնպէս Միջերկրականի մէջ են Մալթա, Լիպարեան և Չէրիկօ կղզիք։

Յոնիական ծովու մէջ կը գտնուին համանուն կղզիք։ Գլխաւորներն են Քորֆու, Քէֆալոնիա, Զանթա, Սանթա-Մաւրա եւն։

Արշիպեղագոսի մէջ կը գտնուին բազմաթիւ մանր կղզիներ.

Գլխաւորներն են, Նախոս, Փարոս, Թինոս, Անտրոս, Միլոս, Սիրա եւայլն որոնք կը կոչուին Կիկլատեան կղզիք։ Իսկ դէպի հիւսիս կը գտնուին Նեկրոպոնդ, Սքիրոս և այլ բազմաթիւ կղզիք որոնք կը կազմեն Սպորատեան արշիպեղագոսը։

Արշիպեղագոսի հարաւակողմը՝ Միջերկրականի մէջ կը տարածուի Կրետէ կամ Քանտիա մեծ կղզին՝ որ է Եւրոպիոյ ամենէն հարաւային ցամաքը։

Լերինք եւ Հրուանդանք

Եւրոպիոյ գլխաւոր լեռնագօտիներն են։

Տօֆրին կամ Սքանտինաւեան Ալպեանք՝ համանուն ցամաքակղզւոյն մէջ։

Կրամբեան և Քըմպըրեան լերինք՝ Մեծին Բրիտանիոյ մէջ։

Ալպեան լերինք՝ Զուիցերիոյ, Իտալիոյ, Ֆռանսայի, Գերմանիոյ և Աւստրիոյ սահմանաց վրայ։

Ժիւռա, Վօժ և Սէվէնեան լերինք՝ Ֆռանսայի արեւելեան և միջին մասանց մէջ։

Պիրէնեան գօտի՝ ընդ մէջ Սպանիոյ և Ֆռանսայի։

Կարպաթ լերինք Մաճառիստանի մէջ՝ Աւստրիոյ արեւելեան կողմը

Ապենինեան լերինք կը տարածուին Իտալիոյ հիւսիսէն ՚ի հարաւ։

Տինարեան Ալպեանք՝ Եւրոպ. Թուրքիոյ արեւմտեան կողմը։

Պալքան լերինք՝ համանուն ցամաքակղզւոյն արեւելեան մասին մէջ։

Հելլէնական լերինք՝ համանուն երկրին մէջ։

Ուրալ լերինք՝ Եւրոպիոյ արեւելեան կողմը։

Կովկաս լերինք՝ Եւրոպ. Ռուսիոյ հարաւային արեւելեան կողմը։

Եւրոպիոյ մէջ 3 գլխաւոր հրաբուղխ կայ, Վէզուվ՝ Իտալիոյ մէջ՝ Նափօլիի մօտ, Հէքլա՝ Իսլանտա կղզւոյն, Էտնա՝ Սիկիլիոյ մէջ։

Եւրոպիոյ գլխաւոր հրուանդաններն են Նօրտ-Քափ՝ Շուէտի հիւսիսակողմը։

Միզէն՝ Իրլանտայի հարաւային արեւմտեան կողմը, Լէնտսէնտ՝ Անգլիոյ հարաւային արեւմտեան կողմը։

Քինիսդէր՝ Սպանիոյ արեւմտեան հիւսիսային կողմը, Սուրբ Վինսէնթիոս՝ Փորթուկալի արեւմտեան հարաւակողմը, Թրաֆալկար Սպանիոյ հարաւային կողմը, Սքարթիվէնթօ՝ Իտալիոյ հարաւային ծայրը։

Մաթափան՝ Մօրայի հարաւակողմը, Էմինէ՝ Թուրքիոյ արեւելեան կողմը։

Գետք եւ Լիճք

Եւրոպա բաժնուած է երկու ջրբաժաններու, մին կը կազմեն Սառուցեալ և Ատլանտեան ովկէանոսներն դէպի հիւսիս և արեւմուտք, իսկ միւսն՝ որ է հարաւայինը՝ կը կազմեն Միջերկրական, Սեւ և Կասպից ծովերը։

Սառուցեալ ովկէանոսը կը թափի Փէչորա, Սպիտակ ծովը կը թափի Տվինա։

Պալթիկի հարկատուներն են Թօռնէա, Նէվա, Տուինա, Նիէմէն, Վիսթուլա և Օտէր։

Հիւսիսային ծով կը թափին Էլպա, Վէզէր, Հռէնոս, Մէօզ, Էսքօ, Թամիզ և Ֆօրթ։ Մանշի մէջ կը թափի Սէն՝ Ֆռանսայէն։

Ատլանտեան կը թափին Գլայտ, Սէվէրն, Շէննըն, Լուառ, Կարօն, Ժիռօնտ, Մինիօ, Տուրօ, Թակօ, Կուատիանա, և Կուատալքիվիր։

Միջերկրականի մէջ կը թափին Էպրօ, Ռօն, Առնօ և Տիբերիս։

Ադրիականի մէջ կը թափին Պօ և Ատիճէ։

Արշիպեղագոսի մէջ կը վազեն Վարտար, Ստրումա և Մարիծա։

Սեւ ծով կը թափին Դանուբ, Փրութ, Տնիեսթէր և Տնիեպէր։

Ազախու մէջ կը թափի Տօն։

Վօլկա և Ուրալ կը թափին Կասպից մէջ։

Եւրոպիոյ ամենէն մեծ լճերը կը գտնուին Պալթիկ ծովու սահմանակից երկու երկրաց՝ Ռուսիոյ և Շուէտի մէջ։ Լատոկա, Օնէկա, Իլմէն, Փէյփուս, և Պիէլօ՝ Ռուսիոյ մէջ։ Վէնէր, Վէթէր և Մէլար՝ հարաւային Շուէտի մէջ։

Բոնտանցա, Ցուրիխ, Լուցեռնա, Նէօշաթէլ, Լէման կամ Ժընեւրայի գեղեցիկ լճերը՝ Զուիցերիոյ մէջ։

Մաճիօրէ, Կօմօ, Կարտա, Իտալիոյ մէջ.—Պալաթօն յԱւստրիա։

Եւրոպ. Թուրքիոյ մէջ կը գտնուին Սկիւտարայի, Եանինայի, Օխրիտայի և Պեշիկի փոքր լճերը։

813-2004

Կլիմա եւ Բուսաբերութիւն

Եւրոպիոյ հիւսիսային կողմերը սաստիկ ցուրտ կ'ընեն, հարաւային երկիրներն չափաւորապէս տաք են՝ շնորհիւ Միջերկրական ծովուն՝ որ կը ողողէ իր սահմանակից երկիրները։ Իսկ միջին եւ արեւմտեան մասերն ընդհանրապէս կը վայելեն բարեխառն եւ զուարճալի կլիմայ։

Եւրոպիոյ հողն ընդհանրապէս բարեբեր եւ լաւ մշակուած է։ Կ'արտադրէ ցորեն, գարի, հաճար, վարսակ, կանեփ, գետնախնձոր, ճակնդեղ, բրինձ, ծխախոտ, ձիթապտուղ, որթատունկ, բամպակ, առատ եւ ազնիւ մրգեղէն, լեմոն, նարինջ, բանջարեղէն են։ Եւրոպա ունի նաեւ ընդարձակ անտառներ որք կ'արտադրեն ազնիւ տաղձ։

Կենդանիք եւ Հանք

Եւրոպա ունի բազմաթիւ ընտանի անասուններ որոց մասնաւոր խնամք տարուելով հետզհետէ կ'աճին ու կ'ազնուանան։ Վայրի կենդանիք քիչ են։

Եւրոպիոյ ծովերուն մէջ կ'որսան այլ եւ այլ ձկունք որոնք մեծ շահ կը բերեն, իսկ հիւսիսային կողմերը կը գտնուին Մօրիւ, Բիանկա եւայլն։

Եւրոպիոյ շատ մը երկրաց մէջ կը գտնուին հարուստ եւ կարեւոր հանքեր։ Երկաթ մանաւորապէս կը գտնուի Սքանտինավիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ։ Պղինձ՝ մանաւանդ Նորվեկիոյ, Ֆրանսայի եւ Սպանիոյ մէջ։ Անագ՝ Մեծն Բրիտանիոյ մէջ։ Ոսկի՝ կը գտնուի Ուրալ եւ Կարպաթ լերանց մէջ։ Սնդիկ՝ Սպանիոյ եւ Աւստրիոյ մէջ։ Զինկ՝ Պելճիքայի, Ֆրանսայի ու Գերմանիոյ մէջ։ Ծծումբ՝ մանաւորապէս Սիկիլիա կղզւոյն մէջ։ Հանքածուխ՝ առատօրէն կը գտնուի Անգլիոյ, Պելճիքայի, հիւսիսային Գերմանիոյ եւ քիչ մ'ալ արեւմտեան Ֆրանսայի եւ Ռուսիոյ մէջ։

Քաղաքակրթութիւն Եւրոպիոյ

Եւրոպա բաժնուած է 20 տէրութեանց եւ դասակարգուած է հետեւեալ կերպիւ։

Հիւսիսային Եւրոպա՝ որ կը պարունակէ Շուէտ-Նորվեկիա, Ռուսիա, Մեծն Բրիտանիա եւ Տանիմարքա։

Կեդրոնական Եւրոպա կը պարունակէ՝ Ֆրանսա, Պելճիքա, Հոլանտա, Գերմանիա, Զուիցերի եւ Աւստրօ-Հունգարիա։

Հարաւային Եւրոպա կը պարունակէ Փորթուգալ, Սպանիա, Իտալիա, Եւրոպ, Թուրքիա, Ռումանիա, Սերպիա, Պուլկարիա, Ղարատաղ եւ Յունաստան։

Եւրոպա թէեւ երկրագունտիս 5 մասանց փոքրագոյնը, սակայն համեմատաբար աւելի բազմամարդ եւ մանաւանդ ամենէն քաղաքակրթեալն է։ Ուսում, կրթութիւն, արուեստ, ճարտարութիւն եւ վաճառականութիւն շատ զարգացած են, այս պատճառաւ՝ Եւրոպա աշխարհիս միւս մասանց վրայ նիւթական եւ բարոյական մեծ ազդեցութիւն ունի։ Եւրոպիոյ բնակիչք կը բաժնուին երեք մեծ ընտանիքներու՝ Լատինական, Գերմանական եւ Սլաւական։

Եւրոպիոյ կառավարութեանց ձեւն է ընդհանրապէս Սահմանադրական Միապետութիւն։ Ասոնց մէջ Թուրքիա եւ Ռուսաստան Բացարձակ միապետութիւններ, իսկ Ֆրանսա եւ Զուիցերի՝ Հանրապետութիւններ են։

Եւրոպական Աշխարհ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

ԱՆԳԼԻԱ կամ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՆԳԼԻԱ կամ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ կը տարածուի Եւրոպիոյ հիւսիսային արեւմտեան կողմը եւ բաղկացած է մեծ ու փոքր բազմաթիւ կղզիներէ։

Գլխաւոր կղզիներն են՝ Անգլիա՝ որ Սկովտիոյ հետ կը կազմէ Եւրոպիոյ մեծագոյն կղզին։

Իռլանտա՝ Անգլիոյ արեւմտեան կողմը նոյնպէս մեծ կղզի մ'է

Երկրորդական կղզիներն են Հէպրիտեան, Օրկադեան, Շէթլընտ՝ հիւսիսային կողմը։ Մէն և Էնկլիսի՝ Իռլանտայի ծովուն մէջ։ Ճըրսի և Ուայթ՝ Մանշի մէջ։

Սկովտիա և հիւսիսային ու արեւմտեան Անգլիա լեռնային են, իսկ Իռլանտա դաշտային է։

Մեծին Բրիտանիոյ կլիմայն ընդհանրապէս խոնաւ, օդը մշուշապատ և ձմեռն ցուրտ է։ Հողը թէեւ 'ի բնէ ոչ այնքան բարեբեր, սակայն լաւ մշակուած է և կ'արտադրէ գետնախնձոր, գարի, բանջարեղէն և քիչ քանակութեամբ ցորեն։ Բուսոց պակասութեան փոխարէն՝ Անգլիա ունի հանքածխոյ, երկաթի, կապարի և անագի հարուստ հանքեր որոնք կը շահագործուին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Մեծն Բրիտանիա ունի 315,000 քիլ' քառ., տարածութիւն և 39,000,000 բնակիչ։

Մեծն Բրիտանիա կը բաժնուի 4 մասերու 1° Անգլիա, 2° Կալլէսի երկիր, 3° Սկովտիա, 4° Իռլանտա։

ԱՆԳԼԻԱ

Գլխաւոր Նաւահանգիստք

ԼՈՆՏՈՆ (4,300,000 բնակիչ), Մայրաքաղաք Մեծին Բրիտանիոյ, շինուած է Թամիզ գետին վրայ։ Լոնտոն իւր բազմամարդութեամբ, ընդարձակ վաճառականութեամբ, ճարտարութեանց և մեծ հարստութեան կողմանէ՝ աշխարհիս առաջին քաղաքն է։ Շէնքերուն մէջ երեւելի են Ազգային խորհրդարանը (Բարլամէնդ)։ Ս. Պօղոսի հոյակապ եկեղեցին և Ուէսդմինիսդէրի աբբայարանը։ Ա-

տոնցմէ 'ի զատ՝ Լոնտոնի մէջ կը գտնուին հարուստ թանգարաններ, հսկայ և փառաւոր կամուրջներ, ուսումնական հաստատութիւններ են։ Լոնտոնի դիմացն է Կրինիչ՝ որ ունի աստղաբաշխական դիտարան և ծովային զինուորաց հիւանդանոց։

Լիվըրփուլ, Իռլանտայի ծովուն վրայ, Մէրսի գետին բերանը խիստ վաճառաշահ ու ընդարձակ նաւահանգիստ է և աշխարհիս ամէն մասանց հետ ընդարձակ յարաբերութիւն ունի։

Պրիսթըլ, համանուն ծոցին խորը, վաճառաշահ նաւահանգիստ է։

Քարտիֆ, ունի առատ հանքածուխ։

Փորթսմութ, Փլիմութ, Մանշի վրայ պատերազմական նաւահանգիստներ են։

Տովր, համանուն նեղուցին վրայ՝ Անգլիայէ Ֆրանսա անցնելու սովորական նաւահանգիստն է, հոս ծնած է Անգլիացի անուանի բանաստեղծ՝ Լորտ Պայրըն։

Երեւելի են նաեւ Հըլ, Սաութէմփթըն, Պրայթըն, Սունտէր-լանտ եայլն։

Ներքին Գլ. քաղաքներն են

Մանչէսթըր, (550,000 բն.), Լիվըրփուլի մօտ, բամպակեղինաց և ազնիւ կտաւեղինաց մասին երկրագնդիս առաջին վաճառաշահ քաղաքն է։ Բնակչաց մէջ կան Հայ և Յոյն վաճառականներ։ Մանչէսթըրի նաւահանգիստն է Լիվըրփուլ։

Պէրմինկհէմ, ունի երկաթեղինաց և զինուց մեծամեծ գործարաններ։

Եօրք, Անգլիոյ ամենէն հին քաղաքներէն մին է։

Լիտս, ունի ազնիւ բրդեղէններ և գորգ։

Օքսֆորտ և Քէմպրիճ, անուանի են իրենց համալսարաններով։

Շէֆֆիլտ, անուանի են կտրոցեղէնները։

Երեւելի են նաեւ Նիւքէսըլ՝ որ ունի հարուստ ածխահանք։ Կալլէսի երկրին գլխ. քաղաքն է Մըրթիր-Թիտֆիլ՝ որ երկաթի ու ածխոյ հարուստ հանքեր ունի, Սալֆօն, Նոթինկհէմ, Պրատֆորտ։

Գլխ. քաղաքք Սկովտիոյ

ԷՏԻՆՊՈՒՐԿ (250,000 բն.), *Մայրաքաղաք Սկովտիոյ, ունի փառաւոր համալսարան, հոյակապ շէնքեր և կանոնաւոր փողոցներ։*

Կլասկոյ, (600,000 բն.) *Քլայտ գետին վրայ, աշխարհիս ամենէն երեւելի նաւահանգստաց մին է. ունի համալսարան և նաւաշինութեան գործարաններ։*

Երեւելի են նաեւ Տընտի և Ապըրտին։

Գլխ. քաղաքք Իրլանտայի

ՏԸՊԼԻՆ (350,000 բն.), *Մայրաքաղաք Իրլանտայի։ Կղզւոյն արեւելեան կողմը, գեղեցիկ և բանուկ նաւահանգիստ է. ունի համալսարան։ Հոս ծնած է Ուէլինկթըն անուանի զօրապետը*

Պէլֆասդ, *ճարտարարուեստ քաղաք է։*

Երեւելի են նաև Լոնտոնտէրի, Քորք, Լիմէրիկ, Ուաթըրֆորտ։

Կալուածք

Մեծն Բրիտանիա ունի ընդարձակ և հարուստ կալուածներ։

Ճիպրալդար *քաղաքն ու Մալդա կղզին Եւրոպիոյ մէջ։*

Կիպրոս *զոր առժամապէս կը կառավարէ, Ադէն քաղաքը՝ Արաբիոյ մէջ, Հնդկաստանի ամենամեծագոյն մասը, Պիրմանիա, Սէյլան կղզին, Մալաքքա և Սինկափուր. — Հոնկ-Քոնկ քաղաքը Ասիոյ մէջ։*

Ափրիկէի մէջ ունի Սիէռա-Լէոն, Բարեյուսոյ երկիրը, Ս. Հեղինէ, Համբարձման, Մորիս և Սէյշէլեան կղզիներէն 'ի զատ Մօզամպիքի մէկ մասը։

Ամերիկայի մէջ ունի Նոր Բրիտանիա, Եուքաթանի մէկ մասը Լուքայեան և Փոքր Անդիլեան արշիպեղագոսներու մեծագոյն մասը. Եամայիքա կղզին և Կույանայի մէկ մասը։

Ովկէանիոյ մէջ ունի Աւստրալիա մեծ կղզին, Վան-Տիմէն, Նոր-Զելանտա և այլ բազում մանր կղզիներ։

Անգլիոյ ընդհանուր կալուածոց տարածութիւնն է 22,848,000 *քիլմ. քառ., և նոցա բնակչաց թիւն է* 340 *միլիոն։ Անգլիա ունի* 32,000 *քիլմ. երկաթուղի։*

Ընդհանուր տեղեկութիւն

Մեծն Բրիտանիա Եւրոպիոյ ամենէն քաղաքակրթեալ և հարուստ երկիրներէն մին է։ Երեւելի են այս երկրին կտաւեղէնները, բրդեղէնները, երկաթէ, պողպատէ ու պղնձէ գործուածքները, մեքենաները, կարոցները և այլն որոնք աշխարհիս ամէն կողմը մեծ յարգ ունին և այս պատճառաւ վաճառականութիւնը շատ ծաղկած է, իսկ ծովային զօրութեան մէջ Անգլիա մէկ հատիկ է։ Անգլիացիք կը պատկանին Անկլօ-Սաքսոն ցեղին։ Երկրին պաշտօնական կրօնն է բողոքականութիւն, իսկ Իրլանտացիք կաթոլիկ են։ Կառավարութեան ձեւն է Սահմ. միապետութիւն։ Թագաւորը կամ թագուհին կը կառավարէ երկիրը Բարլամէնդ կոչուած ժողովով մը՝ որ բաղկացած է Ազնուականներէ (Լորտերէ) և ժողովրդեան ներկայացուցիչ երեսփոխաններէ՝ որոնք միասին կը կազմեն Ազգային Խորհրդարանը։

ՏԱՆԸՄԱՐՔԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՏԱՆԸՄԱՐՔԱ կամ ԴԱՆԻԱ կը գտնուի Պալթիկ և Հիւս. ծովերուն միջև և բաղկացած է թերակղզիէ մը որ է Եութլանտ և արշիպեղագոսէ մը որոյ գլխ. կղզիներն են՝ Զելանտ, Ֆիոնիա, Լալանտ, Լանկելանտ և Ֆալստէր։

Եութլանտ թերակղզին ընդհանրապէս տափարակ, ճախճային ու խոնաւ է, իսկ կղզիներն աւելի բարեբեր ու ծաղկեալ են։ Երկրին կլիման խոնաւ, ցուրտ և փոփոխական է։ Տանըմարքայի մէջ կարեւոր ոչ լեռ կայ և ոչ գետ։

Գլխ. բոյսերն են ցորեն, կանեփ, գետնախնձոր և ծխախոտ։ Տանըմարքա գրեթէ հանք չունի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Տանըմարքայի թագաւորութիւնը կը պարունակէ Եութլանտ թերակղզին և Դանեաց կամ Դանիական արշիպեղագոսը։

Տարածութիւնն է 38,000 քիլ. քառ. և բնակիչ 2'000,000։

Գլխաւոր քաղաքներ

ՔՈՓԷՆՀԱԿ (400,000 բն.), Մայրաքաղաք Տանըմարքայի, Զէլանտ կղզւոյն մէջ. գեղեցիկ քաղաք և բանուկ նաւահանգիստ է։

Հէլսինկօր՝ նոյնպէս Զէլանտի մէջ՝ ամուր և վաճառաշահ քաղաք է։

Օտէնսէ, Ֆիոնիա կղզւոյն մէջ՝ ունի չուխայի երեւելի գործարաններ։



Սառուցեալ Ովկէանոսի մէջ տեսարան

Ալպօրկ, Վիպօրկ, Արհիւս՝ Եութլանտ թերակղզւոյն կարեւոր քաղաքներն են։ — Տանըմարքայի կը վերաբերի Իսլանտա մեծ և հրաբղխային կղզին որոյ գլխաւոր բնակավայրն է Րայքիավիք։ Իսլանտայի մէջ կը գտնուին բազմաթիւ մարած հրաբուղխներ ու եռացող ջրոյ աղբիւրներ Կէյզէր անուն։ Տանըմարքա ունի նաեւ Կրօէնլանտա մեծ կղզին Ամերիկայի հիւս. կողմը, և Ս. Խաչ կղզին Փոքր Անթիլեանց մէջ։

Ընդհանուր տեղեկութիւն

Տանըմարքացիք պարկեշտ և աշխատասէր մարդիկ են։ Գլխաւորապէս կ'զբաղին երկրագործութեամբ, արհեստներով և Րինկա ձկան որսորդութեամբ։ Ճարտարութիւն և ձեռագործ բաւական յառաջ գացած են, նոյնպէս՝ հասարակաց կրթութիւն, վաճառականութիւն շատ ծաղկած են։ Տանըմարքացիք քաջ նաւորդներ են։

Երկրին կրօնքն է Բողոքականութիւն, կառավարութեան ձեւն է Սահմանադրական միապետութիւն։ Տանըմարքա ունի 1,500 քիլմ. երկաթուղի։

ՍՔԱՆՏԻՆԱՎԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՇՈՒԷՏ-ՆՈՐՎԷԿԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպիոյ հիւսիսային կողմը մեծ ցամաքակղզի մ'է Սքանտինավիա՝ որոյ սահմաններն են հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ ովկէանոս, արեւելքէն՝ Ռուսիա և Պալթիկ ծով, հարաւէն՝ Սքակէրրաքի նեղուց և Պալթիկ ծով, արեւմուտքէն Ատլանտեան ովկէանոս և Հիւսիսային ծով։

Սքանտինավեան ցամաքակղզին կը պարունակէ երկու երկիրներ՝ Շուէտ՝ արեւելեան կողմը, Նորվէկիա՝ արեւմտեան կողմը։ Շուէտի հարաւային ու արեւելեան կողմերը դաշտային, իսկ Նորվէկիա լեռնային է։ Հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարին Քէօլէն կամ Սքանտինավեան լերինք։

Կղզիք. — Նորվէկիոյ հիւսիսային արեւմտեան կողմը կը գտնուի Լոֆօտէնի արշիպեղագոսն որոյ մօտէն կ'անցնի Մալշդրէօմի յորձանքը, իսկ Պալթիկ ծովու մէջ ունի Կոթլանտ և Էօլանտ կղզիները։

Սքանտինավիոյ մէջ, ընդհանրապէս ձմեռը սաստիկ ցուրտ ու երկարատեւ է, իսկ հարաւակողմը աւելի բարեխառն։

Հողագործութիւնը միայն հարաւային մասերուն մէջ ծաղկած է և յառաջ կուգայ ցորեն, գարի, հաճար, գետնախնձոր և կանեփ։

Սքանտինավիա ունի մեծամեծ անտառներ որք շինութեան ընտիր փայտ մատակարարելով՝ մեծ հասոյթ կը բերեն։

Անուանի են այս երկրին պղնձի ու երկաթի հարուստ հանքերը, նոյնպէս Բէն բուսած եղնիկը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սքանտինավիա ունի 775,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 6,500,000 բնակիչ։ 4,600,000ը Շուէտի և մնացեալը Նորվէկիոյ մէջ։

ՇՈՒԷՏ

ՍՏՈՔՀՈԼՄ (230,000 բն.), Մայրաքաղաք Շուէտի՝ Մէլար լիճը ծովուն հետ միացնող նեղուցին վրայ ծաղկեալ քաղաք է, ունի բնական խիստ զուարճալի դիրք և հոյակապ շէնքեր։

Կօթէնպուրկ՝ (100,000) Քաթթէկաթի նեղուցին վրայ բանուկ նաւահանգիստ է։

Ուփսալա՝ Մէլար լճին հիւսիսային կողմն երեւելի քաղաք է, ունի դիտարան և անուանի համալսարան- Նշանաւոր են նաև Մալմօէ, Քարլսքրօնա, Քալմառ եւն։

ՆՈՐՎԷԿԻԱ

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ (130,000 բն.), Մայրաքաղաք Նորվէկիոյ՝ համանուն ծոցին մէջ, երեւելի է իր համալսարանով և ընդարձակ վաճառականութեամբ։

Պէրկէն՝ արեւմտեան կողմը վաճառաշահ նաւահանգիստ է, Տրոնթհայմ ունի անուանի ձեռագործներ։

Ընդհանուր տեղեկութիւն

Շուէտ և Նորվէկիա թէեւ միացեալ թագաւորութիւն մ'է, սակայն իւրաքանչիւրն իւր առանձին կառավարութիւնն ու օրէնքները ունի։

Նշանաւոր են այս երկրին բնակիչներն իրենց մաքուր բարոյականով, աշխատասիրութեամբ և բարեկրթութեամբ։ Արհեստ և վաճառականութիւն հետզհետէ ծաղկելու վրայ են։ Կրթութիւն և ուսում շատ յառաջ գացած են, այնպէս որ գիւղացիներուն գրեթէ ամէնքն ալ կարդալ ու գրել գիտեն։ Երկրին գլխ. հարստութիւններն են՝ շինութեան ազնիւ փայտ, պղնձի ու երկաթի հանքեր, Մօրիւ ձկան իւղ և հիւսիսային եղնիկ կամ եղջերու՝ զոր տեղացիք կը գործածեն իրենց Բալխիրները քաշելու։

Շուէտ-Նորվէկիացիք կրօնիւ Բողոքական են։

Սքանտինավիա ունի 9,000 քիլմ. երկաթուղի։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՌՈՒՍԻԱ Եւրոպիոյ ամենէն ընդարձակ տէրութիւնն է որ կը գրաւէ Եւրոպիոյ հիւսիսային և արեւելեան մասերն։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սառ. Ովկէանոս, արեւելքէն՝ Քարայի ծով, Ուրալ լերինք և Ուրալ գետ. — Հարաւէն՝ Կասպից ծով, Կովկաս լերինք, Ազախ և Սեւ ծով. արեւմուտքէն՝ Շուէտ, Պալթիկ ծով, Գերմանիա, Աւստրիա և Ռումանիա։

Ռուսիա մեծատարած եւ տափարակ երկիր մ'է. Հիւսիսային մասանց մէջ կերեւին ընդարձակ և սառնապատ երկիրներ. իսկ Կովկասու հիւսիսային գաւառաց և Լէհաստանի մէջ, տեղ տեղ կը գտնուին աղտ աւազի դաշտեր։ Ռուսիոյ ամենէն արգասաւոր և մշակութեան յարմար մասերն են միջին և հարաւային գաւառներն որոց մէջ հողագործութիւնը շատ ծաղկած է։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Ռուսիոյ կլիմայն հիւսիսային կողմերն սաստիկ ցուրտ և շատ տեղ սառնապատ են, իսկ միջին մասը բարեխառն ու հարաւային կողմերն զուարճալի և ծովեզերքն ալ ամառները շատ տաք կ'ընեն։

Գլխաւոր բոյսերն են՝ մեծ քանակութեամբ ցորեն, կանեփ, վուշ, ճակնդեղ, գետնախնձոր, ծխախոտ, շինութեան փայտ եւլն։ Ռուսիա ունի ընտիր տեսակէ կովեր, մանաւանդ ձի (իբր 18 միլիոն), խոզ և հիւսիսային կողմերն ալ կը գտնուին եղնիկ և մուշտակաւոր կենդանիներ։

Երկրագործ

Երկրին մէջ կան ոսկւոյ, բլաթինի, պղնձի ու երկաթի հարուստ հանքեր որոնք ընդհանրապէս կը գտնուին Ուրալ լերանց մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպական Ռուսիա ունի 5,330,000 քիլ. քառ. տարածութիւն և 95,000,000 բնակիչ, հանդերձ՝ Կովկաս 105,000,000։

Կը պարունակէ հետեւեալ մեծ բաժանումները. Մեծ Դքսութիւն Ֆինլանտիոյ, Կովկասեան երեք նահանգք (Քուպան, Թէրէք, Տաղըսթան) և Պալթիկեան նահանգք՝ որոնք բացի Ֆինլանտիայէ՝ բաժնուած են 65 կուսակալութեանց։

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ (950,000 բն.) Կայսրութեան Մայրաքաղաքն, Նէվա գետին բերանը՝ Ֆինլանտիոյ ծոցին մէջ։ Ունի հոյակապ պալատներ, թատրոններ, եկեղեցիներ և ընդարձակ հրապարակներ։ Հոն կայ Հայկական գեղեցիկ եկեղեցի մը՝ որ շինուած է արդեամբ Լազարեան մեծահամբաւ գերդաստանին։ Այս քաղաքը հիմնեց Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը։

Գլխաւոր Նաւահանգիստք

Ռուսիա կը տեսնէ հինգ ծովեր։ Սպիտակ ծովու վրայ կը

գտնուի Արխանկել, ունի մորթի և մուշտակի մեծ վաճառականութիւն։

Պալթիկի վրայ են,

Քրոնշդադ, փոքր կղզւոյ մը վրայ, հոն է տէրութեան առաջին նաւարանը։

Րիկա, (180,000), համանուն ծոցին վրայ, մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ է։ Նոյնպէս Րէվէլ բանուկ նաւահանգիստ է։

Սեւ ծովու վրայ են,

Օտէսա՝ (240,000 բն.), կայսրութեան ամենէն վաճառաշահ նաւահանգիստն է և ունի արմտեաց մեծ առեւտուր։

Իսմայիլ՝ Դանուբայ բերնին մօտ։ Երեւելի են նաեւ Աքքէրման, Քէրսոն, Նիքօլայէվ. իսկ Սէվաստօփոլ Ղրիմու արեւմտեան կողմը՝ պատերազմական նաւահանգիստ է։

Ազովու վրայ կը գտնուին Կէրչ, Թականրօք կամ Թայղան, որ ցորենի և ալիւրի մեծ առեւտուր ունի. Ազով, Տօնի բերանը. Աստրախան կամ Աժտէրխան, Կասպից ծովուն վրայ, Վոլկայի բերնին մօտ նշանաւոր նաւահանգիստ է։ Ունի խաւիարի, մուշտակի, ցորենի և մորթի մեծ վաճառականութիւն։

Ներքին Գլ. քաղաքներն են

Հիւսիսային Ռուսաստանի մէջ երեւելի են,
Հէլսինկֆօր, Նովկորոտ, Նիժնի-Նովկորոտ։

Միջին Ռուսիոյ Գլ. քաղաքներն են

Մոսկուա (650,000 բն.), բազմամարդ, շէն, վաճառաշահ և ուսումնական քաղաք է։ Ս. Փեթերսպուրկէ առաջ այս էր Ռուսիոյ մայրաքաղաքը։ Ունի հռչակաւոր պալատ մը Քրէմլին անուն և Մայր եկեղեցի մը։ Մոսկուայի մէջ ծնած է Մեծն Պետրոս Ռուսաց կայսրը, հոն է նաեւ Հայոց Լազարեան ճեմարանը։

Վարշաւիա (450,000 բն.), Մայրաքաղաք Լեհաստանի, Վիսթուլա գետին վրայ, Ռուսիոյ ամենէն ծաղկեալ, վաճառաշահ եւ ճարտարարուեստ քաղաքներէն մին է։ Նոյնպէս Լեհաստանի ճարտարարուեստ քաղաքաց մին է Լօձ։

Քիէվ (150,000) Տնիեբերի վրայ մեծ քաղաք է. Մոսկուայէն առաջ այս էր Ռուսաց մայրաքաղաքը։

Քազան (140,000) Վոլկայի վրայ, ունի համալսարան և աստղաբաշխական դիտարան։

Օրէնպուրկ․ Ասիոյ սահմանին մօտ՝ վաճառաշահ քաղաք է։

Քիշնէվ (130,000) Պեսարապիոյ գաւառին մայրաքաղաքն է։

Երեւելի են նաեւ Քարքով, Բօլդավա, Նոր Նախիջեւան, Վիլնա, Քուրսք, Վլատիմիր, Չէրնիկով, Պէրտիչէվ, Քեֆէ կամ Թէոտոսիա ուր ծնած է Այվազովսքի անուանի Հայ ծովանկարիչը։

Խրիմու գլխաւոր քաղաքներն են Պաղչէ-Սէրայ և Սիմֆէրօփոլ

Ռուսիոյ կը վերաբերին Սփիցպէրկ, Նոր Զեմլյա, Քալկույեվ, Սառ․ ովկիանոսի մէջ։ Ալանտ, Տակօ, Էօզէլ Պալթիկի մէջ։

Կալուածք

Ռուսիա Ասիոյ մէջ ունի Կովկաս, Սիպերիա, Թաթարիստանի մեծագոյն մասը և փոքր մաս մ՚ալ Աֆղանիստանէն։

Ընդհանուր տեղեկութիւն

Ռուսիա մեծատարած կայսրութիւն մ՚է որ՝ բաց ՚ի Ռուսերէ իր մէջ կը պարունակէ նաեւ այլ և այլ ժողովուրդներ․ ինչպէս՝ Ֆինլանտացի, Գերմանացի, Լէհ, Թաթար, Հայ, Հրէայ, Չէրքէս, Լէզկի, Ռումէն եւլն։ Ռուսք գործունեայ և կրօնասէր մարդիկ են, կը պատկանին Սլաւ ցեղին, և կրօնիւ Յունադաւան են։ Կառավարութեան ձեւն է բացարձակ միապետութիւն։ Ռուսիա ունի 30,000 քիլմ․ երկաթուղի։

Երկրագործութիւնը միջին և հարաւային գաւառաց մէջ շատ յառաջ գացած է։ Երկրին գլխաւոր հարստութիւններն են արմտիք, կանեփ, վուշ, մորթ, մուշտակ, խավիար, պարան, առագաստի կտաւ, ատաղձ եւլն։ Ուսում և ճարտարութիւն նոր սկսած են ծաղկիլ։ Ռուսիոյ բնակչաց 5%ը հազիւ կարդալ գրել գիտէ։ Իրենց կայսրը կը կոչուի Զար։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱ

ՖՐԱՆՍԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՖՐԱՆՍԱ կը գտնուի Միջին Եւրոպիոյ արեւմտեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Մանշի ծով և Բալէի նեղուց, արեւելքէն՝ Պելճիա, Գերմանիա, Զուիցերի և Իտալիա, հարաւէն Միջերկրական ծով և Պիրենեան լերինք, արեւմուտքէն Ատլանտեան ովկէանոս։

Ֆրանսայի հիւսիսային և արեւմտեան կողմերն ընդհանրապէս դաշտային, իսկ արեւելեան և հարաւային մասերը լեռնային են։

Ֆրանսայի կլիման՝ հիւսիսային և միջին մասերը բարեխառն և առողջ, իսկ հարաւային կողմերը ընդհանրապէս ամառները տաք կ՚ըլլան։ Երկրին հողը բարեբեր և լաւ մշակուած է։ Կ՚արտադրէ որթատունկ, ձիթենի, ցորեն, ծխախոտ, գարի, վարսակ, կանեփ, գետնախնձոր եւլն։ Շատ համբաւաւոր են Ֆրանսայի գինիները։ Ֆրանսա ունի ընդարձակ ու պարարտ արօտներ որոց մէջ կ՚արածին ոչխար, այծ, ընտիր տեսակէ կովեր, խոզ, ձի եւլն։

Երկրին մէջ կը գտնուին հանքածխոյ, երկաթի, զինկի, չինութեան քարերու հանքեր որոնք կը շահագործուին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ֆրանսա ունի 526,000 քիլոմէդր քառ․ տարածութիւն եւ 39,000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 86 գաւառներու որոնք կը կոչուին Տէփարթըման։

ՓԱՐԻԶ (2,500,000բն․), Մայրաքաղաք Ֆրանսայի, Սէն գետին վրայ շինուած՝ Եւրոպիոյ ամենէն գեղեցիկ, հարուստ և ծաղկեալ քաղաքաց մին է։ Ունի երեւելի համալսարան, մատենադարաններ, հնութեանց թանգարաններ, գեղեցիկ ձեռագործներ, զարդեղէն-



Լուվրի պալատը

ներ, ուսմանց և գիտութեանց ամէն ճիւղերու համար երևելի վարժարաններ։ Շէնքերուն մէջ անուանի են Նօտր-Տամի Մայր եկեղեցին, Նոր Օբէռա թատրոնը, Էնվալիտ անուն՝ ծեր զինուորաց անկելանոցը, Բանթէոնը, Մատըլէնի եկեղեցին, Աստեղան Յաղթական կամարը, Լուվրի պալատը ևլն։ Նաև Էյֆէլի երկաթեայ 300 բարձրութեամբ գեղեցկակերտ աշտարակն զոր 1889ին կանգնեցին և որ աշխարհիս ամենէն բարձր շէնքն է։ Ասոնցմէ ի զատ՝ Փարիզու մէջ կան Պուլվառներ, հասարակաց սիրուն պարտէզներ, թատրոններ, ընդարձակ և մաքուր ճեմելիներ ևլն.

Գլ. Նաւահանգիստք Մանշի վրայ

Քալէ, Անգլիա անցնելու սովորական և բանուկ նաւահանգիստն է։

Ռուան (110,000) Սէն գետին վրայ վաճառաշահ նաւահանգիստ է։ Հոս ծնաւ Բոռնէյլ անուանի բանաստեղծը։

Լը-Հավր (110,000) Սէնի բերանը խիստ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ է։ Հայրենիք՝ Պեռնարտէն տը-Սէն Բիէռ Ֆռանսացի մատենագրին։

Շէրպուր, պատերազմական նաւահանգիստ է, Ս. Մալօ, հայրենիք Շաթօպրիանի։

Ատլանտեանի վրայ կը գտնուին

Նանթ (130,000) Լուար գետին վրայ, ունի երևելի նաւարան։ Պրէսթ, զինուորական նաւահանգիստ է։



Էյֆէլի աշտարակը

Պօռտօ, Կարօն գետին վրայ խիստ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ, համբաւաւոր է գինին։ Անուանի են նաև Լա-Ռօշէլ և Սէն-Նազէռ, որք մեծ յարաբերութիւն ունին Նոր Աշխարհի հետ։

Միջերկրականի վրայ կը գտնուին

Մառսէյլ կամ Մարսիլիա, իբր 400,000 բնակչօք. Ֆռանսայի առաջին և աշխարհիս նշանաւորագոյն նաւահանգստաց մին է։ Հոս ծնած է Թիէռ մեծ քաղաքագէտը։

Թուլօն, ունի երևելի նաւարան։ Նիս, ունի մեղմ և զուարճալի կլիմայ։ Հոս ծնած է Կարիպալտի Իտալացի և Մասէնա Ֆռանսացի զօրավարը։

Ներքին Գլ. քաղաքներն են,

Լիլ (180,000), ամուր և ճարտարարուեստ քաղաք է։ Ռէնս, հին քաղաք է, անուանի է գինին։

Ամիէն, ունի հոյակապ Մայր եկեղեցի։

Օռլէան, հին և վաճառաշահ քաղաք՝ զոր Անգլիացւոց պաշարմանէն ազատեց Ժան Տ'Արք 1429 ին։

Լիօն, (400,000) Ֆրանսայի ամենէն ճարտարարուեստ քաղաքներէն մին և մետաքսեղինաց կողմանէ աշխարհիս ամենէն երեւելի կեդրոնն է։

Պըզանսօն, անուանի կեդրոն ժամագործութեան։ Հոս ծնած է Վիքթօր Հիւկօ։

Տիժօն, ունի քիմիական նիւթոց վաճառականութիւն։ Հոս ծնած է Մեծն Պօսիւէ։

Քլէրմօն-Ֆէռան. Հայրենիք Բասքալ բնագէտին։

Մօնփէլիէ, ունի երկրագործական վարժարան։ — Նիմ, հին քաղաք է. հոս ծնաւ Կիզօ մեծ պատմաբանը. — Թուլուզ, Լիմօժ Մօնթօպան վաճառաշահ քաղաքներ են։

Երեւելի են նաեւ Սէնթ-Էթիէն, Անկուլէմ, Ավինեօն, Կրընօպլը, Թուռ, Լիմօժ են.։

Կալուածք

Ֆրանսա Եւրոպիոյ մէջ ունի Քօրսիքա կղզին՝ որու գլխաւոր քաղաքն է Այաչչիօ։ Հոս ծնաւ Մեծն Նաբոլէօն Ֆրանսայի կայսրն։

Հեռաւոր կալուածներն են Բօնտիշէրի, Քարիքալ, Մահէ և Չանտէրնակօր քաղաքները՝ Հնդկաստանի մէջ։ Թօնքին և Հար. Քօշինշին՝ Հնդկա-Չինու մէջ։

Ալճէրի, Քօնկոյի, և Սենէկալի մէկ մէկ մասերը, Պուռայօն և շրջակայ մի քանի փոքր կղզիք՝ Ափրիկէի մէջ։

Կույանայի մէկ մասն 'ի զատ, Մառթինիք, Կուատալուփ և մի քանի փոքր կղզիներ՝ Ամերիկայի մէջ։

Մարքիզեան, Թահիթի և Նոր-Քալէտոնիա՝ Ովկիանիոյ մէջ։

Ֆրանսական ստացուածոց տարածութիւնն է 2,950,000 քիլմ. քառ. իբր 33 միլիոն բնակչօք։

Ընդհանուր տեղեկութիւն

Ֆրանսացիք աշխարհիս մեծ ազգերէ մին են։ Արուեստ, գիտութիւն, ձեռագործ, ճարտարութիւն և առեւտուր շատ կատա-

րելագործած են։ Երեւելի են այս երկրին մետաքսեղէնները, զարդեղէնները, նորաձեւութեան վերաբերեալ նիւթերը, Պօռտօյի, և Շամբանիի գինիներն, ասուեղէնը եւն. եւն։

Ֆրանսացիք ուշիմ, համակրելի, աշխատասէր և տնտեսագէտ մարդիկ են։ Կը պատկանին Լատին ցեղին։ Ֆրանսական լեզուն շատ ներդաշնակ և ընդհանրացեալ լեզու մ'է։ Տիրող կրօնն է Կաթոլիկութիւն։ Կառավարութեան ձեւն է Հանրապետութիւն։

Ֆրանսա ունի 36,000 քիլմ. երկաթուղի։

ՊԵԼՃԻՔԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պելճիքա փոքր թագաւորութիւն մ'է Ֆրանսայի հիւսիսային արեւելեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Հօլանտա և Հիւս. ծով, արեւելքէն՝ Գերմանիա, հարաւէն՝ Ֆրանսա և արեւմուտքէն՝ Հիւսիսային ծով

Ծխախոտ

Պելճիքայի բաց 'ի հարաւային արեւելեան կողմերէն՝ ուր կ'երեւին Արտէն լերինք՝ մնացեալ մասերն ընդհանրապէս դաշտային են։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Պելճիոյ կլիմայն ընդհանրապէս բարեխառն է, ամառները զուարճալի իսկ ձմեռները ցուրտ են։ Հողը բարեբեր և խիստ լաւ մշակուած ըլլալով՝ կ'արտադրէ ցորեն, ծխախոտ, գարի, կանեփ և այլ բոյսեր։

Պելճիքա ունի հանքածխոյ, զինկի ու երկաթի հարուստ հանքեր որք կը շահագործուին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պելճիքա ունի 30,000 քիլ. քառ. տարածութիւն և 6,000,000 բնակիչ։

Պելճիքա կը բաժնուի 9 գաւառներու։

ՊՐԻՒՔՍԷԼ (400,000 բն.), Մայրաքաղաք Պելճիքայի, Սէնն գետին մէկ ճիւղին վրայ շինուած նշանաւոր քաղաք է։ Ունի թագաւորական հոյակապ պալատ, գեղեցիկ Մայր եկեղեցի, գիտութեանց և ճարտարութեանց երեւելի կեդրոններ։

Գլխաւոր քաղաքներն են

Անվէրս (200,000), Էսքօ գետին վրայ բանուկ նաւահանգիստ է և ունի գեղեցիկ ձեռագործներ և մեծ վաճառականութիւն։ Կանտ (150,000), Պելճիոյ ամենէ մեծ քաղաքն է։ Լիէժ (135,000), ունի հանքածուխ և շատ մը գործարաններ։ Երեւելի են նաև Պրիւժ, Վէրվիէ, Նամիւռ, Մօնս եւայլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Պելճիքա թէեւ փոքր՝ սակայն Եւրոպիոյ ամենէ յառաջադէմ և հարուստ երկիրներէն մին է։ Ունի առատ հանքածուխ և հարուստ բուսաբերութիւն։ Ձեռագործ և ճարտարութիւն եւս շատ ծաղկեալ են։ Անուանի են կտաւեղէնները, ասղնեգործները (տանթէլ), մետաքսեղէնները, գորգերը և չուխաները։ Երկրին մէջ երկաթուղիք ու ջրանցք խիստ շատ են՝ որով ներքին հաղորդակցութիւնն ալ մեծապէս դիւրացած է։ Պելճիքա երկրագնդիս վրայ համեմատաբար իր ընդարձակութեան՝ ամենէն բազմա-



Երկաթուղի

մարդ երկիրն է, այնպէս որ ամէն մէկ քիլոմէթրի 204 բնակիչ կ'իյնայ։

Պելճիքացիք կը խօսին Ֆռանսերէն և Ֆլամաներէն՝ որ Գերմանական և Ֆռանսական լեզուներու խառնուրդ մ'է։ Երկրին կրօնն է Կաթոլիկութիւն։ Կառավարութեան ձեւն է Սահմանադրական Միապետութիւն։ Պելճիքայի թագաւորը կը կրէ Վեհապետ Քոնկոյի տիտղոսը։ Պելճիքա ունի 4,500 քիլմ. երկաթուղի։

ՀՈԼԱՆՏԱ

ԿԱՄ

ՍՏՈՐԻՆ ՆԱՀԱՆԳՔ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՈԼԱՆՏԱ Հիւսիսային ծովուն եզերքը փոքր ու տափարակ երկիր մ'է. Սահմաններն են հիւսիսէն՝ և արեւմուտքէն՝ Հիւսիսային ծով, արեւելքէն՝ Գերմանիա, հարաւէն՝ Պելճիքա։

Այս երկրին մանաւանդ հիւսիսային մասերը շատ տեղ ծովէն ցած ըլլալուն պատճառաւ՝ տեղացիք բարձր և ամուր թումբեր կանգնած են՝ երկիրը ողողմանէ պաշտպանելու համար։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Հոլանտայի կլիման ընդհանրապէս խոնաւ և փոփոխական է։ Հողը թէեւ բնականէն անբեր ու ճախճախուտ՝ սակայն բնակչաց յարատեւ աշխատութեան շնորհիւ՝ հետզհետէ այդ ճախինները ցամքելով՝ մշակելի երկիրներ դարձած են։ Գլխաւոր բոյսերն են ծխախոտ, արմտիք, կանեփ, գետնախնձոր և գարի։

Հոլանտա ունի ընդարձակ և պարարտ արօտներ որոց մէջ կը կերակրին ընտիր տեսակէ կաթնատու կենդանիներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հոլանտա ունի 33,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 4,500,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 11 գաւառներու։

ԼԱ-ՀԱՅ *կամ* **ՀԱԱԿ** (150,000 *բն.*), *Մայրաքաղաք Հոլանտայի, ծովուն մօտ, նոր ու գեղեցիկ քաղաք է։*

Ամըսդերտամ (300,000 *բն.*), *նախկին Մայրաքաղաք Հոլանտայի, Զուիտերզէի ծոցին վրայ՝ աշխարհիս ամենէն անուանի եւ վաճառաշահ նաւահանգիստներէն մին է։ Ունի փառաւոր եկեղեցիներ, արքունի պալատներ եւ ուսումնական տեղիք։ Ժամանակաւ այս քաղքին մէջ Հայք ունէին եկեղեցի եւ տպարան։*

Երեւելի են նաեւ Ռոդերտամ, Ութրէխ, Լէյտա, Հարլէմ եւ Մա՛աստրիխ։

Կալուածք

Հոլանտա Եւրոպայէ դուրս ունի հեռաւոր եւ հարուստ կալուածներ։ Ճաւա կղզին, Սումադրայի, Պորնէօի եւ Մոլուքեան կղզեաց մէկ մասը՝ Ովկէանիոյ մէջ։ Կույանայի մէկ մասը եւ Փոքր Անթիլեանց մի քանին՝ Ամերիկայի մէջ, որոց տարածութիւնն է 2 միլիոն քիլմ. քառ. եւ բնակչաց թիւն՝ իբր 31 միլիոն։

Ընդհանուր տեղեկութիւն

Հոլանտացիք աշխատասէր եւ գործունեայ մարդիկ են։ Երկրագործութիւն, արհեստ եւ վաճառականութիւն շատ ծաղկեցուցած են։ Երկրին գլխաւոր հարստութիւններն են կաշի, ձկան եւղ, պանիր, ազնիւ կտաւ, բրդեղէն եւ թաւիշ։ Հոլանտացիք երեւելի են նաեւ իբրեւ քաջ նաւաստիներ։ Կը խօսին Գերմաներէնի մէկ տեսակը։ Կրօնքն է Բողոքականութիւն։ Կառավարութեան ձեւն է Սահմանադրական միապետութիւն։ Հոլանտա ունի 2,700 քիլմ. երկաթուղի։

ԶՈՒԻՑԵՐԻ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԶՈՒԻՑԵՐԻ ԿԱՄ ՀԵԼՎԵՏԻԱ *փոքր ու լեռնային երկիր մ՚է Ֆռանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ եւ Աւստրիոյ միջեւ։*

Զուիցերի շատ երեւելի է իւր բնական զմայլելի տեսարաններուն, բարձրաբերձ ու ձիւնապատ լեռներուն, զուարճալի լիճերուն եւ առողջ ու բարեխառն կլիմային կողմանէ։

Լեռնք. — *Այս երկրին մէջ կը տարածուին Ալպեանց բազուկներն որոց գլխաւոր գագաթներն են Ս. Պէռնար, Մօն Ռօզա, Սէն Կոթառ որ ունի 13 քիլմ. երկայնութեամբ ստորերկրեայ երկաթուղի։*

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Զուիցերիոյ լեռնային գաւառաց կլիման ընդհանրապէս ցուրտ է. իսկ հովիտներուն մէջ աւելի բարեխառն եւ զուարճալի կլիմայ մը կը տիրէ։ Երկրագործութիւնը շատ ծաղկած է այս երկրին մէջ եւ կ՚արտադրէ ամէն տեսակ արմտիք ու բանջարեղէն։ Ունի բազմաթիւ կաթնատու կենդանիներ որոց կաթէն տեղացիք կը շինեն ընտիր կարագ եւ պանիրներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Զուիցերի ունի 41,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 2,900,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է Քանթոն կոչուած 22 դաշնակից գաւառակներու։

ՊԷՌՆ (45,000 *բն.*), *Մայրաքաղաք Զուիցերիոյ, շէն ու ծաղկեալ քաղաք է, ունի համալսարան, փառաւոր Մայր եկեղեցի եւ զուարճալի զբօսավայրեր եւն։*

Ճինէվրա՝ (70,000) *Համանուն լիճին վրայ սփռուն՝ եւ Զուիցերիոյ մեծագոյն քաղաքն է։ Ունի երեւելի վարժարաններ եւ ընդարձակ վաճառականութիւն։*

Ցուրիխ՝ (80,000) համանուն լճին վրայ՝ Զուիցերիոյ ամենէն ճարտարարուեստ քաղաքն է։

Լօզան՝ Ժընեւի լճին մօտ՝ ունի գեղեցիկ զբօսավայր և կանոնաւոր վարժարաններ։ Բալ կամ Բազիլեա (60,000), Հռենոսի վրայ վաճառաշահ եւ ճարտարարուեստ քաղաք է։

Երեւելի են նաեւ Նէօշաթէլ, Լուչեռնա, Սէն-Կալ, Շօ-տը-Ֆօն, Ֆրիպուրկ և Սիօն։

Ընդհանուր տեղեկութիւն

Զուիցերացիք առանձին ազգութիւն մը չեն, այլ կը բաղկանան Ֆռանսացիներէ, Գերմաններէ և Իտալացիներէ որոնք իրարու հետ շատ սիրով կ՚ապրին։ Նշանաւոր են Զուիցերիացիք՝ իբրեւ աշխատասէր, գործունեայ և ազատասէր մարդիկ ։ Այս պատճառաւ իրենց մէջ շատ յառաջ գացած է դաստիարակութիւն, արուեստ, ճարտարութիւն և առեւտուր։ Երեւելի են այս երկրին պանիրն, ժամացոյցը, ոսկիէ ու գոհարեղէն զարդերը, մետաքսեղէնները են։

Երկրին մէջ կը խօսուի Գերմաներէն, Ֆռանսերէն և Իտալերէն։ Կրօնքը Բողոքականութիւն և Կաթոլիկութիւն խառն է։ Իւրաքանչիւր գաւառ իւր առանձին կառավարութիւնն ունի։ Զուիցերի ունի 3,000 քիլմ. երկաթուղի։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԳԵՐՄԱՆԻԱ Եւրոպիոյ կեդրոնական մասին մէջ ընդարձակ տէրութիւն մ՚է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Հիւսիսային ծով, Դանիմարքա և Պալթիկ ծով. արեւելքէն՝ Ռուսիա և Աւստրիա. հարաւէն՝ Աւստրիա և Զուիցերի. արեւմուտքէն՝ Ֆռանսա, Պելճիքա և Հոլանտա։

Գերմանիոյ հիւսիսային մասն (Բրուսիա) տափարակ ու ճախ

ճախուտ է, միջին մասն աւելի բարձր դիրք ունի, հողը բարեբեր է և անտառներով ծածկուած, իսկ հարաւային և արեւմտեան կողմերն բոլորովին լեռնային են։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Ընդհանրապէս Հիւս. Գերմանիա խոնաւ, ցուրտ և օդն փոփոխական է. իսկ աւելի զուարճալի և բարեխառն են արեւմտեան և մանաւանդ հարաւային կողմերը։

Երկիրն լաւ մշակուած է և կ՚արտադրէ ցորեն, գետնախնձոր, ճակնդեղ, գարի, վարսակ, ծխախոտ և շինութեան փայտ։ Գերմանիա ունի ընտանի ամեն տեսակ կենդանիներ։ Հռենոսի շրջակայ գաւառաց մէջ յառաջ կ՚ուգայ որթեատունկ։

Հանք. — Գերմանիա հանքի մասին հարուստ է, ունի արծաթ, պղինձ, հանքածուխ, երկաթ, զինկ, կապար, մնդիկ, աղ և սաթ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գերմանիա ունի 54?,000 քիլ. քառ. տարածութիւն, եւ 50,000,000 բնակիչ։

Գերմանիա մեծ եւ փոքր բազմաթիւ դաշնակից տէրութիւններէ կազմուած ընդարձակ կայսրութիւն մ՚է և կը պարունակէ 4 Թագաւորութիւն, 6 Մեծ Դքսութիւն, 5 Դքսութիւն, 7 Իշխանութիւն, 3 Ազատ քաղաքներ ու 2 կայսերական գաւառ։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲՐՈՒՍԻՈՅ

Բրուսիա որ է Գերմանական տէրութեանց ամենէն մեծն ու կարեւորը՝ կը տարածուի Հիւսիսային և Պալթիկ ծովերուն հարաւակողմը, Հոլանտայէն սկսեալ մինչեւ ՚ի Ռուսիա։ Ունի 355,000 քիլ. քառ. տարածութիւն և 27,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՊԷՌԼԻՆ (1,400,000 բն.), Սբրէ գետին վրայ Եւրոպիոյ մեծագոյն և ամենէ ծաղկեալ քաղաքներէ մին է։ Հոյակապ շէնքեր են Կայսերական պալատը, համալսարանները, Յաղթական կամարը, զինարանը եւլն։

Գլ. Նաւահանգիստք Պալթիկ ծովու վրայ

Քէօնիկսպէրկ (135,000 բն.) ուր ծնած է Քանդ երեւելի փիլիսոփայն. Տանձիկ, Շդէդէն, Շդրալզունտ, Լիւպէկ և Քիլ.

Էլպայի բերնին մօտ կը գտնուին՝ Ալդօնա և մանաւանդ Համպուրկ որ է աշխարհիս ամենէն վաճառաշահ և բանուկ նաւահանգիստներէ մին։

Ներքին Գլ. քաղաքներն են

Պրէսլաւ (280,000), Օտէրի վրայ ճարտարարուեստ քաղաք է։

Քոլոնիա կամ Քէօլն (150,000), Հռենոսի վրայ՝ Գերմանիոյ ամենէն երեւելի քաղաքաց մին և հայրենիք է Օֆէնպախ մեծանուն երաժշտին։

Ֆրանքֆորթ (130,000), Մայն գետին վրայ, ունի երեւելի դրամատուններ։ Հոս ծնաւ Կէօթէ անուանի բանաստեղծը։

Հանովր (125,000) ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք է։

Անուանի են նաեւ Մակտէպուրկ (100,000), Ախէն կամ Էքս-լա-Շաբէլ, Բօզէն, Քասէլ, Փոցտամ, Ֆրանքֆորթ (Օտէրի վրայ), Կոպլէնց, Թիլսիթ ևն։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԱՔՍՈՆԻՈՅ

Կը գտնուի Բրուսիոյ հարաւային կողմը։

Մայրաքաղաքն է ՏՐԷԶՏԱ (200,000) Էլպա գետին վրայ գեղեցիկ ու ծաղկեալ քաղաք է։

Լայփցիկ (155,000) ունի երեւելի համալսարան և գրքի մեծ վաճառականութիւն։

Երեւելի են նաեւ Քէմնից և Ֆրայպէրկ։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՎԵՐԻՈՅ

Կը գտնուի Սաքսոնիոյ հարաւային արեւմտեան կողմը։

Մայրաքաղաքն է ՄԻՒՆԻԽ կամ ՄԻՆԽԸՆ (235,000) Իզար գետին վրայ։ Ունի երեւելի ճեմարաններ, թանգարան և անուանի համալսարան։

Նիւրէնպէրկ (100,000), ճարտարարուեստ քաղաք է, ունի տղոց սիրուն խաղալիքներ։

Երեւելի են նաեւ Աւկսպուրկ և Ռաթիզպօնա։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՎԻՒՐԹԷՄՊԷՐԿԻ

Կը գտնուի Պավերիոյ արեւմտեան կողմը։

Մայրաքաղաքն է ՇԹՈՒԹԿԱՐՏ (118,000 բն.), անուանի է այս քաղաքն արուեստից և գիտութեանց կողմանէ։

Երեւելի են նաեւ Ուլմ՝ որ Դանուբի վրայ ամուր բերդաքաղաք է։

Լուիզպուրկ՝ որ է երկրորդ թագաւորանիստ քաղաք։ Մարպախ, հոս ծնած է Շիլլէր բանաստեղծը։

ՄԵԾ ԴՔՍՈՒԹԻՒՆՔ

1°. Պատէն, Մայրաքաղաքն է ՔԱՐԼՍՐՈՒՀԷ (45,000), ունի ուսումնական երեւելի հաստատութիւններ։ Անուանի են նաեւ Հայտէլպէրկ՝ նշանաւոր է համալսարանը. Պատըն-Պատըն, ունի հանքային ջուրերու բաղնիքներ։ Երեւելի են նաեւ Մանհայմ եւ Ռաստադ։

2°. Հէսսէ-Տարմշդատ, Մայրաքաղաքն է ՏԱՐՄՇԴԱՏ (50,000), իսկ ամենէն կարեւորն է Մայանս կամ Մայնց (60,000) որ Հռենոսի վրայ երեւելի բերդաքաղաք է։ Հոս ծնաւ Յովհաննէս Կութէնպէրկ։

3°. Սաքս-Վայմար, Մայրաքաղաքն է ՎԱՅՄԱՐ։

4°. Մէքլէմպուրկ, » ՄԷՔԼԷՄՊՈՒՐԿ։

5°. Օլտէմպուրկ, » ՕԼՏԷՄՊՈՒՐԿ։

6°. Մէքլէմպուրկ-Շուէրին » ՇՈՒԷՐԻՆ։

Չորս Դքսութիւններն են

1°. Պրունսվիք, 2°. Սաքս-Քոպուրկ-Կոթա, 3°. Սաքս-Մայնինկըն, 4°. Սաքս-Օլտէնպուրկ, որոց մայրաքաղաքները իրենց անուամբ կը կոչուին։

Երեք Ազատ քաղաքներն են

Պրէմա (110,000), Համպուրկ (300,000) և Լիւպէք *որոնք խիստ վաճառաշահ քաղաքներ են։*

Կայսերական գաւառք

1871 *ին Գերմանիա Ֆռանսայէն գրաւեց* Ալզաս և Լօռէն *գաւառները՝ որոնք կը գտնուին Հռենոսի ձախ ափանց վրայ։ Գլխաւոր քաղաքներն են Շթրազպուրկ* (105,000), *երեւելի բերդաքաղաք է. ունի անուանի Մայր եկեղեցի։ Մեց՝ նոյնպէս ամուր քաղաք է։ Երեւելի են նաեւ Միւլհուզ կամ Միւլհաուզեն և Քօլմառ։*

Ընդհանուր տեղեկութիւն

Գերմանացիք երեւելի են իբրեւ գործունեայ, ծանրաբարոյ եւ ուշիմ մարդիկ։ Կրթութիւն, արուեստ, ճարտարութիւն, վաճառականութիւն և մանաւանդ զինուորական արուեստը շատ յառաջ գացած է իրենց մէջ։ Ամէն տեղ կը տեսնուին նախնական վարժարաններ, թանգարաններ և համալսարաններ։ Երկրին մէջ բազմաթիւ երկաթուղւոյ գիծեր կան և հեռագծեր ալ շինուելու վրայ են։

Գերմանացիք վերջի տարիներս Արեւելեան Ափրիկէի և Ովկէանիոյ մէջ մի քանի գաղթականութիւններ ունեցան՝ որոց տարածութիւնը 2 միլիոն քիլմ. քառ. է աւելի է։ Երկրին լեզուն Գերմաներէն է։ Կրօնը՝ Հիւս. կողմը Բողոքականութիւն, իսկ Հար. երկրաց մէջ Կաթոլիկութիւն է։

Բրուսիոյ թագաւորը կը կրէ Կայսր Գերմանիոյ տիտղոսը։ Գերմանիա ունի 43,000 քիլմ. երկաթուղի։

ԱՒՍՏՐՕ — ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՒՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ *Կեդրոնական Եւրոպիոյ մէջ, Գերմանիոյ արեւելեան հարաւային կողմն՝ ընդարձակ կայսրութիւն մ՚է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Գերմանիա, արեւելքէն՝ Ռուսիա և Ռումանիա, հարաւէն՝ Ռումանիա, Սերպիա, Թուրքիա և Գարատաղ. արեւմուտքէն՝ Ադրիական ծով, Իտալիա, Զուիցերի և Գերմանիա։*

Երկրին արեւմտ. և արեւել. հար. կողմերը շատ լեռնոտ են, իսկ Հունգարիա, Կալիցիա և Պոհեմիա գաւառներն կը պարունակեն ընդարձակ եւ բարեբեր հովիտներ։

Աւստրիոյ կլիմայն ընդհանրապէս բարեխառն եւ առողջ է, գարնան և աշնան մէջ յորդ անձրեւներ կը տեղան, իսկ Ադրիականի սահմանակից գաւառներն համեմատաբար աւելի տաք կ՚ըլլեն։ Երկրին հողը բարեբեր եւ լաւ մշակուած է. գլխաւոր բոյսերն են՝ ցորեն, գարի, կանեփ, վարսակ, որթատունկ, ծխախոտ, գետնախնձոր, ձիթենի և ազնիւ մրգեղէններ։

Կենդանիք եւ Հանք

Աւստրիա ունի ամէն տեսակ ընտանի կենդանիներ, Մաճառիստանի մէջ կը գտնուին ընտիր ձի և խոզ։

Երկրին մէջ կան արծաթի, երկաթի, կապարի զինկի, հանքածխոյ և մանաւանդ աղի հարուստ հանքեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Աւստրօ-Հունգարիա ունի 614,000 *քիլմ. տարածութիւն եւ* 40,000,000 *բնակիչ։*

Աւստրիա բաժնուած է 12 *գաւառներու։*

ՎԻԷՆՆԱ (1,350,000 *բն.*), *Մայրաքաղաք Աւստրիական կայսրութեան, Դանուբ գետին աջ եզերքին վրայ ընդարձակ, բազմա-*

մարդ և ծաղկեալ քաղաք է։ Շէնքերուն մէջ երևելի են Ս. Ստեփանոսի կաթողիկէն, կայսերական պալատները, քաղաքատունը և Օբէրա թատրոնը։ Վիէննա անուանի է նաև իբրև կեդրոն գիտութեանց, արուեստից եւ վաճառականութեան։ Մխիթարեան Հարք՝ այս մայրաքաղաքին մէջ ունին վանք և տպարան՝ ուսկից լոյս տեսած են գրական և գիտական օգտակար մատեաններ։

Գաւառք և Գլխ. քաղաքներ

Իստրիա կամ Լիւրիկէ. — Գլխ. քաղաքն է Թրիէսթէ՝ (150,000) Ադրիական ծովուն ծովուն, կայսրութեան ամենէն բանուկ ու վաճառաշահ նաւահանգիստն է և աշխարհիս ամէն կողմանց հետ ընդարձակ յարաբերութիւն ունի։ Փօլա՝ նոյնպէս Ադրիականի վրայ զինուորական նաւահանգիստ է։

Թիրոլ. — գլխ. քաղաք Ինսպրուկ, Ին գետին վրայ վաճառաշահ քաղաք է։

Ստրիա գլխ. քաղաք Կրաց (100,000), անուանի է գարեջուրը։

Վերին Աւստրիա գլխ. քաղաք ~~Սալցպուրկ~~՝ ունի հարուստ աղահանք։

Պոհէմիա գլխ. քաղաք Փրակա (165,000), վաճառաշահ քաղաք է. ունի անուանի համալսարան։

Մորավիա գլխ. քաղաք Պրիւն, ունի բրդեղէնաց երևելի գործարաններ։

Սիլէզիա գլխ. քաղաք Թրոփօ։

Կալիցիա գլխ. քաղաք Լէմպէրկ (115,000), երևելի է համալսարանը։

Քրաքովիա գլխ. քաղաք Քրաքովիա, ունի աղի, զինկի, եւ պղնձի հարուստ հանքեր։

Տալմացիա գլխ. քաղաքներն են Զառա և Ռակուզա՝ որոնք Ադրիականի վրայ նաւահանգիստներ են. Ֆիումէ՝ համանուն գաւառին գլխ. քաղաքն ու նաւահանգիստն է Ադրիականի վրայ։

Խրուաթիա գլխ. քաղաք Ակրամ։

Թրանսիլվանիա գլխ. քաղաքներն են Հէրմանշդադ, Քլաւզէնպուրկ և Քրոնշդադ։

ՀՈՒՆԳԱՐԻԱ կամ ՄԱՃԱՌԻՍՏԱՆ

Փէշթա կամ Փէշթ (360,000 բն.), Մայրաքաղաք Հունգարական թագաւորութեան, Դանուբի Թէյս կամ Թիսա ճիւղին վրայ վաճառաշահ, գեղեցիկ ու ծաղկեալ քաղաք է։ Փէշթայի դիմացն է Պուտա արուարձանը որ կը կոչուի նաև Օֆէն։

Գլխ. քաղաքներն են, Թըմշուար, Տէպրէցին, Մոհաց, Փրէզպուրկ, Թոքայ, Մարիա-Թէրէզիօբոլ եւայլն։

ՀԵՐՍԷԿ եւ ՊՈՍՆԱ

Այս երկու գաւառներն որոնք կը պատկանին Օսմանեան պետութեան, 1878 էն 'ի վեր առժամեայ կերպիւ կը կառավարէ Աւստրիա։ Գլխ. քաղաքներն են Պոսնայ կամ Պոսնա-Սէրայ, Մոստար, Պանեալուքա, Թրավնիք և Նովի։

Ընդհանուր տեղեկութիւն

Աւստրօ-Հունգարիա Եւրոպայի ամենէն ընդարձակ և զօրաւոր պետութիւններէն մին է։ Ձեռագործ, ճարտարութիւն, գիտութիւն և առևտուր շատ ծաղկած են բուն Աւստրիոյ և Պոհէմիոյ մէջ։ Դաստիարակութիւնն հետզհետէ յառաջ երթալու վրայ է, որովհետեւ նախնական կրթութիւնը պարտաւորիչ է այս երկրին մէջ։ Աւստրիացիք առանձին ազգութիւն մը չեն կազմեր, այլ կը բաղկանան Գերմաններէ, Սլաւներէ, Ռումանացիներէ, Իտալացիներէ և այլ փոքր ազգութիւններէ։ Իսկ բուն Հունգարիացիք թուով իբր 6 միլիոն՝ իրենց բնագաւառին մէջ կը կազմեն առանձին թագաւորութիւն մը։

Աւստրիական կայսրութեան մէջ կը գտնուին Կաթոլիկ, Բողոքական և Յունադաւան ժողովուրդներ։

Երկրին մէջ կան բազմաթիւ երկաթուղիներ ու ջրանցքներ։ Կառավարութեան ձևն է Սահմանադրական միապետութիւն։

Աւստրիոյ կայսրը կը կրէ միանգամայն Թագաւոր Մաճառիստանի տիտղոսը։ Աւստրիա ունի 27,000 քիլմ. երկաթուղի։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

ՍՊԱՆԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՍՊԱՆԻԱ Փորթուգալի հետ միասին կը կազմէ Հարաւային Եւրոպայի երեք մեծ ցամաքակղզիներէ մին Իբերիական անունով։ Սահմաններն են. հիւսիսէն՝ Ատլանտեան ովկէանոս եւ Ֆռանսա, արեւելքէն՝ Միջերկրական ծով, հարաւէն՝ Ճիպրալթարի նեղուց, արեւմուտքէն՝ Փորթուգալ եւ Ատլանտեան ովկէանոս։

Սպանիա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է եւ ունի գեղեցիկ ու բարեբեր հովիտներ։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն. — Սպանիոյ ներքին մասերը, բարձր լերանց պատճառաւ, ձմեռները ցուրտ կ'ըլլէ, դաշտաց մէջ բարեխառն, իսկ ծովեզերքները շատ տեղ վատառողջ են։ Երկրին հողը՝ թէեւ բարեբեր, բայց լաւ մշակուած չէ։ Գլխաւոր բոյսերն են՝ ձիթենի, նարնջենի, լեմոնի, բամպակ, շաքարեղէգ, նռնենի, արմաւենի, որթատունկ, ցորեն, գարի, եւլն։

Սպանիոյ ընտանի կենդանեաց մէջ անուանի են ձին եւ մանաւանդ Մերինոս անուն ոչխարն որոյ բուրդը բարակ եւ ազնիւ է։

Սպանիա հանքահարուստ երկիր մ'է։ Ունի սնդիկի, աղի, մարմարիոնի, զինկի, պղնձի, կապարի ու երկաթի հարուստ հանքեր որոց մեծ մասը չշահագործուիր։

Սպանիա ունի 504,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 17,000,000 բնակիչ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Երկիրը բաժնուած է 13 գլխաւոր գաւառներու որք են Կալիցիա, Աստուրիա, Հին Քասթիլիա, Վալենսիա, Մուրսիա, Անտալուզիա, Արակոն, Նավառա, Լէոն, Էսթրեմատուրա եւ Նոր Քասթիլիա են։

ՄԱՏՐԻՏ (500,000 բն.) Մայրաքաղաք Սպանիոյ, Նոր Քասթիլիա գաւառին մէջ Եւրոպայի ամենէն բարձր դիրք ունեցող մայրաքաղաքն է։ Մատրիտ գեղեցիկ քաղաք է, ունի ընդարձակ եւ փառաւոր հրապարակներ, պալատներ, ճեմարան, հոյակապ եկեղեցիներ, թանգարան եւլն։ Մատրիտի մէջ ծնած է Լօփ-տը-Վեկա անուանի բանաստեղծը։

Գլխաւոր Նաւահանգիստք

Ատլանտեանի վրայ կը գտնուին։

Սանդանտէր եւ Քատիքս, ամուր եւ վաճառաշահ նաւահանգիստներ են։

Բալոս, Քրիստափոր Քոլոմպոս այս փոքր նաւահանգիստէն ճամբայ ելաւ 'ի Նոր աշխարհ։

Ճիպրալթար, համանուն նեղուցին վրայ զինուորական երեւելի նաւահանգիստ է՝ որ 1704 էն 'ի վեր կը պատկանի Անգլիոյ։

Միջերկրականի վրայ կը գտնուին,

Մալակա (120,000) գեղեցիկ նաւահանգիստ. — Համբաւաւոր է գինին։

Պարսելոնա (150,000), Սպանիոյ ամենէ վաճառաշահ եւ ծաղկեալ քաղաքն է։

Երեւելի են նաեւ Ալմերիա, Կարթագինէ, Ալիքանդէ եւայլն։

Ներքին Գլխ. քաղաքներն են

Վալենսիա, (150,000) Կուատալավիար գետին բերնին մօտ, Սպանիոյ մեծագոյն եւ ծաղկեալ քաղաքաց մին է։

Սեվիլ, (140000) Անտալուզիա գաւառին գլխաւոր քաղաքն է խիստ վաճառաշահ ու ճարտարարուեստ կեդրոն մ'է։

Կրընատա, Մաւրիտանացւոց ժամանակ այս էր իրենց Մայրաքաղաքն՝ եւ ուր այսօր կ'երեւի Ալհամպրայի պալատին աւերակները։

Գորտովա, Մաւրիտանացւոց ժամանակ շատ ծաղկած էր. — Ունի պատուական գինի։ Հոս ծնած է Սենեկա անուանի փիլիսոփայն։

Երեւելի են նաեւ Թոլետօ, Սարակոսա, Սալամանքա, Սանթիակօ, Ալմասէն, Վալլատոլիտ, Լէոն, Պուրկոս եւլն։

Կալուածք

Սպանիա Ափրիկէի մէջ ունի Քանարեան և Աննոպոն կղզիները, Սէօթա քաղաքը՝ Մարոքի մէջ. Ֆէրնանտօ-Բօ կղզին՝ Կուինէի ծոցին մէջ։



Ալհամպրայի Պալատը

Ամերիկայի մէջ ունի Քուպա և Փօրթօ-Րիքօ կղզիները՝ Մեծ Անթիլեանց մէջ։

Ովկէանիոյ մէջ ունի Փիլիպպեանց մեծ մասը և Մարիանեան ու Քարոլինեան կղզիները, որոց ամբողջին տարածութիւնն է 1,130,000 քիլմ. քառ., և բնակչաց թիւն է 8,000,000։

Ընդհանուր տեղեկութիւն

Սպանիա ունի աշխարհագրական գեղեցիկ դիրք, բարեբեր հող և հարուստ հանքեր։ Արուեստ, գիտութիւն և ճարտարութիւն ետ մնացած են, իսկ վաճառականութիւնը բաւական զարգացած է։ Երեւելի են այս երկրին գինիները, մրգեղէնները, բուրդը, մետաքսն որոնք իր արտաքին վաճառականութեան գլխաւոր նիւթերը կը կազմեն։ Սպանիացիք կը պատկանին Լատին ցեղին և կրօնիւ Կաթոլիկ են։ Կառավարութեան ձեւն է Սահմանադրական Միապետութիւն։ Սպանիա ունի 9,000 քիլմ. երկաթուղի։

ՓՈՐԹՈԿԱԼ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՓՈՐԹՈԿԱԼ Սպանիոյ արեւմտեան կողմը փոքր երկիր մ'է։ Սահմաններն են հիւսիսէն և արեւելքէն՝ Սպանիա, հարաւէն և արեւմուտքէն Ատլանտեան ովկէանոս։

Փորթուկալ նեղ ու լեռնային երկիր մ'է։ Ունի գեղեցիկ հովիտներ՝ գետերով ոռոգուած։

Կլիմայ և Բուսաբերութիւն.— Երկրին կլիման՝ լեռնային ներքին մասանց մէջ բարեխառն, իսկ ծովեզերքն տաք է։ Երկրագործութիւնը Փորթուկալի մէջ շատ յառաջ գացած չէ։ Գլխաւոր բերքերն են տաք երկրի պտուղներ, արմտիք, լեմոն, նարինջ, ձիթենի, ծխախոտ, որթատունկ, թթենի եւայլն։ Կենդանեաց մէջ կարեւորներն են ձին ու Մերինոսեան ցեղէ ոչխարը։ Փորթուկէզք կ'ըզբաղին նաև ծովեզերեայ ձկնորսութեամբ ու շերամաբուծութեամբ։

Երկրին մէջ կան ոսկւոյ, պղնձի, կապարի, աղի և մարմարիոնի հանքեր որոնք մեծաւ մասամբ երեսի վրայ թողուած են։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Փորթուկալ ունի 92,000 քիլ. քառ. տարածութիւն և 5,000,000 բնակիչ։

ԼԻԶՊՈՆԱ (250,000 բն.), Մայրաքաղաք Փորթուկալի, Թակօ գետին բերանը խիստ գեղեցիկ և վաճառաշահ նաւահանգիստ է և ունի մեծ յարաբերութիւն Նոր Աշխարհի և Անթիլեաց հետ։ Հոս ծնած է Քամօէնսի Փորթուկեզ անուանի բանաստեղծը։

Գլխաւոր նաւահանգիստք

Փօրթօ կամ Օ'Փօրթօ. Տուրօ գետին բերանը, ունի գինւոյ և օղիի ընդարձակ վաճառականութիւն։ Այս քաղաքը հին ատեն կը կոչուէր Փօրթուս-Քալէ՝ որմէ առած է երկիրը Փօրթուկալ անունը։

Սէդուպալ, Լիզպոնի հարաւակողմը՝ վաճառաշահ նաւահանգիստ է։

Ներքին Գլ. քաղաքներն են

Քոիմպրա, Պրակա, Էվօրա, Պրականցա, Լակօս, Դավիրա են.

Կալուածք

Փորթուկալ Ափրիկէի մէջ ունի Ազորեան, Մատէրա, Դաչարի գլխոյ և Ս. Թովմաս կղզիները, Քոնկոյի և Սենեկամպիոյ մէկ մասը և արեւելեան Ափրիկէի մէջ Մօզամպիքի ափունքը։

Ասիոյ մէջ Կոա և Տիու քաղաքներն 'ի Հնդկաստան և Մաքաօ կղզին Չինաց ծովուն մէջ։ Ովկէանիոյ մէջ ունի Թիմօր։

Փորթուգալի ստացուածոց տարածութիւնն է 1,825,000 քիլմ. քառ. և բնակչաց թիւն է 5,000,000։

Ընդհանուր տեղեկութիւն

Փորթուգալի դիրքն շատ նպաստաւոր է ծովային վաճառականութեան։

Փորթուգեզք գտան Հնդկաստանի ծովային ճանապարհն՝ Ափրիկէի շրջանն ընելով։ Դաստիարակութիւն, արուեստ, ձեռագործ և ճարտարութիւն տակաւին ետ մնացած են, միայն վաճառականութիւնը ծաղկեալ է։ Երեւելի են Փորթուգալի գինիները, լեմոնը, նարինջն, մրգեղէնները, ձէթը և կաշին։ Փորթուգեզք կը վերաբերին Լատինական ցեղին և Կաթոլիկ են։ Կառավարութիւնն է սահմանադրական Միապետութիւն։ Փորթուգալ ունի 2,000 քիլմ. երկաթուղի։

ԻՏԱԼԻԱ
ԿԱՄ
ԱՊԵՆԻՆԵԱՆ ՑԱՄԱՔԱԿՂԶԻ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԻՏԱԼԻԱ Եւրոպիոյ հարաւային երեք ցամաքակղզիներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Ալպեան լերինք, արեւելքէն՝ Աւստրիա, Ադրիական ծով, Օթրանթի ջրանցք և Յոնիական ծով, հարաւային արեւելքէն. — Միջերկրական ծով և Մեսինայի նեղուց հարաւէն. — արեւմուտքէն Տիւրէնեան կամ Թոսքանայի ծով և հիւսիսային արեւմուտքէն Ֆրանսա։

Կղզիք. — Իտալիոյ կը վերաբերին Սիկիլիա, Սարտենիա, Էլպա և այլ մի քանի փոքր կղզիներ՝ Միջերկրականի մէջ.

Իտալիա՝ Եւրոպիոյ լեռնային երկիրներէն մին է. Հիւսիսային

սահմանին վրայ կը կանգնի Ալպեան բարձրաբերձ գօտին որոյ բարձրագոյն կատարներն են Մոն Պլան, Մոն Վիզօ, Մոն Սընի, Սէն-Պէռնար, Սէն-Կոթառ։ Իսկ հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարաձգին Ապենինեան լերինք։ Իտալիա ունի երկու հրաբուղխ, մին Եթնա՝ Սիկիլիոյ մէջ, միւսը Վեզուվ՝ Նափոլիի մօտ։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Իտալիա ունի բարեխառն և զմայլելի կլիմայ, բնական գեղեցիկ տեսարաններ ու պայծառ երկինք. միայն հարաւային ծովեզերեայ մասերն տեղ տեղ վատառողջ են։ Երկրին գլխաւոր բուսաբերութիւնքն են արմտիք, որթատունկ, ձիթենի, լեմոն, նարինջ, բրինձ, բամպակ, շաքարեղէգ և հարաւային երկիրներու յատուկ բոյսեր։ Իտալացիք մեծ քանակութեամբ շերամ կը բուծանեն։

Իտալիա ունի խոզ, այծ, կով, և ջորի։ Գլխաւոր հանքերն են մարմարիոն, ծծումբ, երկաթ, պղինձ, կապար, պղլեղ և պորաս։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Իտալիա ունի 296,000 քիլ. քառ. տարածութիւն և 32,000,000 բնակիչ։

ՀՌՈՄ (350,000 բն.)։ Մայրաքաղաք Իտալիոյ, Տիբերիս գետին վրայ շինուած։ Հռոմէական իշխանութեան ժամանակ՝ աշխարհիս Մայրաքաղաքն էր Հռոմ։ Այսօր եւս նշանաւոր է՝ հին դարերէ մնացած հոյակապ աւերակներով։ Իսկ նոր շէնքերուն մէջ նշանաւոր են Ս. Պետրոսի հրաշակերտ եկեղեցին և Վատիկանու պալատն՝ ուր կը բնակի Հռոմէականաց Պապը։ Ասոնցմէ 'ի զատ՝ Հռոմի մէջ կան նաեւ գեղեցիկ կաթողիկէներ, պալատներ, հնութեանց թանգարաններ, գեղարուեստից վարժարան, համալսարան են։

Գլխաւոր Նաւահանգիստք

Միջերկրականի վրայ կը գտնուին։

Ճէնովա, համանուն ծոցին վրայ՝ երեւելի ու բանուկ նաւահանգիստ։ Հոս ծնաւ Քրիստափոր Քոլոմպոս։

Լիվոռնօ, (100,000) Բիզա, Չիվիթա-Վէքքիա երեւելի և բանուկ նաւահանգիստներ են։

Նաբոլի (500,000 բն.) համանուն ծոցին խորը՝ Իտալիոյ ամենէն բազմամարդ քաղաքն է։ Ունի զուարճալի կլիմայ, ճար-

տարութիւն և ընդարձակ ատեանը։ Մօտն է Վեզուվ հրաբուղխն որ Քրիստոսի 79 թուականին թաղելով իր լաւաներուն տակ



Ս. Պետրոսի եկեղեցին ու հրապարակը

խեղդեց Հերքուլանում և Պոմպէյ քաղաքները։ Սալեռնօ, համանուն խորշին մէջ, Տարանտօ, նոյն ծոցին վրայ։

Ադրիականի վրայ կը գտնուին,

Բրինտիզի, որ հեռաւոր կարևորութիւն կ'ստանայ, երևելի

են նաև Բարի, Բարլեթթա, Մանֆրեդոնիա և մանաւանդ Անքոնա որ է երևելի և առաջին կարգի նաւահանգիստ։

Վենետիկ կամ Վենեցիա (150,000), Ադրիականի խորը բազմաթիւ փոքր կղզիներու վրայ շինուած սիրուն և մեծագործ քաղաք է և կը կոչուի «Թագուհի Ադրիականի»։ Վենետիկոյ կղզեաց միոյն՝ Ս. Ղազարու մէջ է Մխիթարեան Հարց վանքը, տպարանն ու գրատունը։ Մխիթարեանք՝ մեծ ծառայութիւն մատուցած են Հայ լեզուի և գրականութեան։

Ներքին գլխաւոր քաղաքներ

Ֆիրէնցէ կամ Ֆիորէնցա, (170,000) Արնօ գետին վրայ սիրուն և զուարճալի քաղաք է։ Գիտութիւն, գեղարուեստ և ճարտարութիւն շատ ծաղկած են հոս։ Այս քաղաքը ծնած են Լեոնէ Ժ. պապը, Տանդէ բանաստեղծը, Միքել-Անճելօ և Լէօնարտօ-տը-Վինչի պատկերահանները, Ամերիկօս-Վեսփուչչի նաւապետը ևլն։

Թուրինօ կամ Թուրին, Բօ գետին վրայ երևելի քաղաք է։ Հոս ծնած է Քավուռ մեծ քաղաքագէտը։

Միլանօ կամ Միլան, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք, Լոմպարտիոյ մէջ։ Պօլոնեա (130,000). ունի երևելի համալսարան։ Հոս ծնաւ Կալվանի անուանի բնագէտն։

Երևելի են նաև Մանդուա, ամուր քաղաք որու մօտերը ծնած է Վիրգիլիոս անուանի բանաստեղծը, ունի համալսարան և թանգարան։ Բատովա կամ Բատուա, հոս ծնած է Տիտոս-Լիվիոս հռոմայեցի պատմագիրը։ Ալեքսանդրիա, Վերօնա, Պերկամօ, Ֆօճիա, Բերուճիա և Ռեճճիօ ուր ծնած է Արիոստօ մեծ բանաստեղծը ևլն։

ՍԻԿԻԼԻԱ եւ ՍԱՐՏԵՆԻԱ

Սիկիլիա մեծ ու բարեբեր կղզի մ'է, ունի 23,600 քիլ. քառ. տարածութիւն և իբր 3,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքն է Բալէրմօ (300,000 բն.) հին ու գեղեցիկ քաղաք և բանուկ նաւահանգիստ է։ Մեսինա, համանուն նեղուցին վրայ վաճառաշահ քաղաք։

Երևելի են նաև Սիրակուսա, Գադանիա, Ճիրճենդի, Թրաբանի և Մարսալա։

Սարտենիա կը գտնուի Իտալիոյ արեւմտեան կողմը, հողն արգասաւոր՝ այլ անմշակ է։ Ունի ծծումբի, զինկի և կապարի



Վենետիկ

հարուստ հանք։ Գլխաւոր քաղաքներն են Քալիարի և Սասարի։ — Էլպա կղզին եւս նշանաւոր է իւր երկաթի հարուստ հանքով։ Գլխաւոր քաղաքն է Բորթօ-Ֆէրայօ, ուր Նաբոլէոն բնակեցաւ 1814ին։

Ընդհանուր տեղեկութիւն

Եւրոպիոյ մեծ տէրութեանց մին է Իտալիա՝ որ երեւելի եղած է իւր փառաւոր անցեալովը և զուարճալի կլիմային կողմանէ։ Գեղարուեստի, ճարտարապետութեան քանդակագործութեան մասին շատ յառաջադէմ է Իտալիա։ Իսկ ձեռարուեստ, ճարտարութիւն և գիտութիւն՝ մանաւանդ վերջին 20 տարուան մէջ բաւական յառաջադիմեցին։ Երեւելի են Իտալիոյ մարմարիոնը, երաժշտական գործիքները, մետաքսեղէնները, գինին, ձէթը, յարդէ գլխարկները, պանիրը, բրինձը, կարագը, աղած ձուկը եւլն։ Իտալացիք կը պատկանին Լատինական ցեղին և են զուարթ և զբօսասէր մարդիկ։ Լեզուն է Իտալերէն՝ որ շատ ներդաշնակ է։ Կրօնն է Կաթոլիկութիւն, Կառավարութեան ձեւն է Սահմանադրական Միապետութիւն։

Իտալիա վերջերս տէր եղաւ Հաբէշիստանի մէկ մասին։ Իտալիա ունի 13,000 քիլմ. երկաթուղի։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ կարեւոր մէկ մասն է Օսմանեան պետութեան որ՝ Դանուբեան իշխանութեանց հետ կը ձեւացնէ Պալքանեան ցամաքակղզին։

Սահմաններն են հիւս. արեւմուտքէն՝ Գարատաղ և Աւստրիա, հիւսիսէն՝ Սերպիա և Պուլկարիա, արեւելքէն՝ Սեւ ծով, հարաւէն՝ Կ. Պոլսոյ նեղուց, Մարմարա, Տարտանէլ, Արշիպեղագոս և Յունաստան. արեւմուտքէն՝ Յոնիական ծով, Օթրանթի ջրանցք և Ադրիական ծով։

Կազմութիւն և Լերինք

Եւրոպական Թուրքիա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է, սակայն՝ լերանց ստորոտներն կը տարածուին ընդարձակ և պարարտ հովիտներ որք նշանաւոր են իրենց եղական արգասաւորութեամբ։ Գլխաւոր լեռներն են՝ Արեւելեան Ալպեանք՝ կամ Տինարեան լերինք՝ Պալքանեան ցամաքակղզւոյն արեւմտեան կողմը որք կը ձեւացնեն Սեւ եւ Ադրիական ծովուց աւազանները։ Պալքանեան շերիանք՝ որք Պուլկարիան Թուրքիայէն կը բաժնեն։

Այս գօտին արեւմուտքէն դէպ արեւելք կ'երկարի և կը վերջանայ Վառնայի մօտ՝ Էմինէ հրուանդանով։ Գօճա Պալքանէն դէպ ի հարաւ կ'երկարին չորս բազուկներ, մին Ստրանճա դէպ ի հար. արեւել.՝ Կ. Պոլսոյ նեղուցին մօտ, երկրորդը Թէքիր տաղ, երրորդը Ռոտոփ կամ Տէսբոտ տաղ դէպ ի Արշիպեղագոս՝ Լնոսի ծոցին մօտ, չորրորդը կ'երկարի նոյնպէս Արշիպեղագոս և կը վերջանայ Աթոս կամ Այնորոս լեռնով (2,000 մ. բ.)։ Եւրոպական Թուրքիոյ լերանց բարձրագոյն գագաթներն են Ռիլօ և Ոլիմպոս։

Գետք եւ Լիճք

Եւրոպական Թուրքիա երկու աւազան միայն ունի, հարաւէն Արշիպեղագոս և Մարմարա, արեւմուտքէն Ադրիականը։ Արշիպեղագոս կը թափին Մարիցա կամ Մէրիճ, Քարասու կամ Սդրումա, Վարտար և Ինճէ Քարա-Սու։ Մարիցայի մէջ կը թափին Թունճա՝ ձախ կողմէն և Արդա՝ աջէն։

Արեւմտեան աւազանին գլխաւոր գետերն են Նարէնթա, Պօյանա, Տրին, Վօյուսա և Քալամա։

Եւրոպական Թուրքիոյ մէջ կը գտնուին Շքոտրայի, Օխրիտայի, Բրէզպայի, Քաստորիայի, Եանեայի, Պէշիկի և Թախինոսի լիճերը։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Երկրին կլիման ընդհանրապէս առողջ է։ Ձմեռները՝ բարձր լերանց պատճառաւ սաստիկ ցուրտ, իսկ ամառները բարեխառն և հարաւային գաւառաց մէջ ալ տեղ տեղ տաք կ'ըլլեն։

Եւրոպական Թուրքիոյ հողն 'ի բնէ արգասաւոր և հողագործութիւնն ալ բաւական ծաղկած ըլլալով՝ յառաջ կ'ուգան արմտիք, ծխախոտ, բամպակ, կանեփ, կորեակ, ներկի նիւթեր, առատ որթատունկ որք կ'ուտան պատուական գինի, բազմաթիւ պտղատու ծառեր, ձիթենի, վարդենի եւլն։ Երեւելի են Մակեդոնիոյ և Ալպանիոյ ընդարձակ անտառներն որոնք մեծ քանակութեամբ տաղձ կ'արտադրեն։

Կենդանիք եւ Հանք

Եւրոպական Թուրքիոյ ընդարձակ և պարարտ արօտավայրներուն մէջ կ'արածին այծ, կով և մանաւանդ ոչխար (Գըվըրճըք) որ համբաւաւոր է իր համեղ մսովը և որոյ բուրդն ու մորթն ալ վաճառականութեան մեծ նիւթեր են։ Եւրոպական Թուրքիա ունի նաև բազմաթիւ մշտակաւոր կենդանիներ։ Նոյնպէս ունի երկաթի, մարմարիոնի, կապարի, պղնձի և քրոմի հանքեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եւրոպական Թուրքիա ունի 165,438 քիլ. քառ. տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Պատմական կամ նախկին գաւառներն են՝ Ռումէլի, Եպիրոս, Մակեդոնիա և Թրակիա որք բաժնուած են այսօր եօթն Կուսակալութեանց (Վիլայէթ)։

1°	Կուսակալութիւն կամ Վիլայէթ	Կ. Պոլսոյ		Գլ. քաղաք		Կ. Պոլիս
2°	»	Էտիրնէի	(Թրակիա)	»	»	Էտիրնէ
3°	»	Սէլանիկի	(Մակեդոնիա)	»	»	Սէլանիկ
4°	»	Մանասթըրի	(Վերին »)	»	»	Մանասթըր
5°	»	Քոսովայի	(Ալպանիա)	»	»	Փրիզրէն
6°	»	Շքոտրայի	(Վերին Ալպանիա	»	»	Շքոտրա
7°	»	Եանինայի	(Եպիրոս և Ստորին Ալպ.	»		Եանինա

Իւրաքանչիւր կուսակալութիւն կը բաժնուի նահանգներու (Լիւա) և նահանգներն ալ գաւառակներու (Գազա)։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻՍ

Կ. ՊՈԼԻՍ որ կը կոչուէր հին ատեն Բիւզանդիոն, թէ իբր Մայրաքաղաք Օսմանեան մեծազօր պետութեան և թէ իբր աշխար-

հիս ամենէ վաճառաշահ, գեղեցիկ և ընդարձակ նաւահանգիստներէ մին՝ մեծ կարևորութիւն ունի և կրնայ 1,000 է աւելի նաւ պարու-

Կոստանդնուպոլիս

նակել: Կ. Պոլիս երեք գլխաւոր մասերէ կը բաղկանայ, 1°. Բուն Իսթանպօլ որ՝ եօթն բլուրներու վրայ շինուած ըլլալով ամփի-թատրոնի մը հիանալի ձեւն ունի և Ոսկեղջիւրի ծովակովը կը

բաժնուի Կալաթա և Բերա արուարձաններէն: 2°. Արուարձանք Ղա-լաթիոյ և Բերայի՝ Ոսկեղջիւրի ու Վոսփորի Եւրոպական եզերաց վրայ



Այա-Սօֆիա մզկիթին ներքնակողմը

գտնուած գիւղերով: 3°. Իւսկիւտար և Գատը-Քէօյ, Վոսփորի Ասի-ական եզերաց վրայ գտնուած գիւղերով: Կ. Պոլսոյ արտաքին տե-սարանն արդարեւ զմայլելի է: Երեւելի շէնքերն են Այա-Սօֆիայի

Սարայ Պուրնը

մեծագործ մզկիթը, Սուլթան-Ահմէտ՝ որու հրապարակին մէջ կայ Եգիպտական կոթող մը, Սուլթան Մահմուտի դամբարանը (թիւրպէ), Նուրի Օսմանիէ, Սուլթան Պայազիտի և Ֆաթիհի մզկիթները, Մեծ Շուկան, Փողերանոցը, Սպարապետութեան և Բարձրագոյն Դուռները, Հին պալատը, Չինիլի Քէօշկը ևլն։ Վոսփորի երկու եզերաց վրայ կը գտնուին Տոլմա-Պաղչէի, Չրաղանի, Պէյլէր-Պէյիի կայսերական հոյակերտ պալատներէն ի զատ՝ նաև դեսպանաց և մեծատանց փառաւոր ապարանքներ ու ամարանոցներ։ Նշանաւոր է նաև Եըլտըզի գեղեցիկ պալատն՝ Օրթա-Քէօյի բարձանց վրայ՝ ուր ընդ-հանրապէս կը բնակի մեր Օգոստափառ Ինքնակալն ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆ։ Պոլսոյ արուարձանաց մէջ Բերա ամենէն նշանաւորն է իւր արհեստական գեղեցկութեամբ, բազմամարդութեամբ, կանոնաւոր փողոցներով, փառաւոր շէնքերով, թատրոններով, եկեղեցիներով, վարժարաններով ևլն. Հոս կը բնակին մեծաւ մասամբ Եւրոպացիք և Դեսպանք։

Ղալաթիոյ մէջ Հայք ունին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, Ազգ. Կեդրոնական և Թաղային վարժարանները. Ազգ. Խորհրդարանը, Մատենադարանը, Միացեալ Ընկերութեանց գրասենեակները՝ : Իսկ ի Բերա՝ Հայք ունին Ս. Երրորդութիւն փառաւոր եկեղեցին, Աղջկանց Արհեստագիտական Ուսումնարանն, Նարեկեան վարժարանը՝ ևլն։

Վոսփորի գլխաւոր գիւղերն են Պէօյիւք-Տէրէ, Թարապիա, Եէնի-քէօյ, Օրթա-քէօյ, Պէշիկ-թաշ՝ Եւրոպական եզերաց վրայ։ Պէյ-քօզ, Գանտիլլի, Գուզկունճուք, Իւսկիւտար՝ Ասիական եզերաց վրայ։ Սոյն եզերքը Մարմարայի վրայ կան Հայտար-Փաշա և աւելի կարեւոր՝ Գատը-քէօյ՝ շէն և բազմահայ գիւղերը։ Մարմարայի Եւրոպական եզերաց վրայ կան Գում-Գաբու, ուր կը գտնուի Ազգային Պատրիարքարանը, Ս. Աստուածածնայ Մայր Եկեղեցին, Պէզճեան Մայր վարժարանը և այլ նշանաւոր վարժարանք, Եէնի-Գաբու, Սամաթիա, Եէտի-գուլէ, ուր կայ Հայոց Նորաշէն և փառաւոր Հիւանդանոցը, Մաքրի-քէօյ ու Սան-Ստէֆանօ։ Մարմարայի մէջ Նի-

կոմիդիոյ ծոցին մօտ կը գտնուին Իշխանաց Կղզիք։

Կ. Պոլիս ունի իբր 950,000 բնակիչ որք կը բաղկանան հետեւեալ կերպով, Թուրք, Յոյն, Հայ, Հրէայ, ու Օտարազգիք։

Կ. Պոլիս երկաթուղեաւ միացած է Փարիզու։

Գլ. Նաւահանգիստք Եւրոպական Թուրքիոյ

Մարմարայի վրայ կը գտնուին,

Սիլիվրի և մանաւանդ Ռոտոսթօ կամ Թէքիր-Տաղ, 30,000 հայաշատ և բանուկ նաւահանգիստը։

Կէլիպոլու, (20,000) Տարտանելի նեղուցին բերանը։

Արշիպեղագոսի վրայ կը գտնուին,

Տէտէ-Աղաճ, համանուն խորշին վրայ՝ որ երկաթուղեաւ կապուած է Էտիրնէի՝ ։

Գավալա, Եէնիճէ, անուանի է ասոնց ծխախոտը։

Օրֆանօ, համանուն ծոցին վրայ ապահով նաւահանգիստ մ՚է։

Սէլանիկ, (100,000) համանուն ծոցին խորը. Եւրոպական Թուրքիոյ ամենէն մեծ ու վաճառաշահ նաւահանգիստն է։ Կ՚արտադրէ արմտիք, բամպակ, բուրդ, ծխախոտ, մետաքս, գինի ևլն։ Սէլանիկ երկաթուղեաւ միացած է Փարիզի։

Յոնիականի վրայ կը գտնուին Բրեվեզա և Բարկա։

Ադրիականի վրայ են Վալօնա կամ Ավլօնա և Տուրացցօ բանուկ նաւահանգիստները։

Ներքին Գլխ. քաղաքներն են

Էտիրնէի կուսակալութեան մէջ,

Էտիրնէ կամ Ադրիանուպոլիս, (80,000) Մարիցայի վրայ երեւելի և վաճառաշահ քաղաք՝ որ Կ. Պոլսէ առաջ Օսմանցւոց Մայրաքաղաքն էր, Ադրիանուպոլիս երկաթուղեաւ միացած է Փարիզու և Կ. Պոլսոյ։ Երեւելի են նաև Քըրք-Քիլիսէ, Տիմօթիքա, Մուսթաֆա-Փաշա, Լիւլէ-Պուրկաս, Չօրլու ևլն։

Սէլանիկի կուսակալութեան մէջ,

Սէլանիկէն ՚ի զատ որ՝ առաջին նաւահանգիստն է Եւրոպական Թուրքիոյ, երեւելի են նաև Տրամա, Սէրէս, Տէմիր-Հիսար, Քէօփրիւլի ևլն։

Մանասթըրի կամ Վերին Մակեդոնիոյ մէջ,

Մանասթըր կամ Պիթօլիա (50,000), ամուր և զինուորական քաղաք է։ Սէրֆիճէ, Օխրիտա, Գալքան-Տէլէն, Էլպասան, Գորիճա։

Քոսովայի կուսակալութեան մէջ,

Գլխաւոր քաղաքն է Բրիզրէն (55,000), Չար-Տաղ լերան ստորոտը վաճառաշահ ու գեղեցիկ քաղաք։ Երևելի են նաև Իւսկիւպ, Եէնի-Պազար, Միթրովիցա, Բրիշթինա, Իփէք, Աքօվա ևլն։

Շքոտրայի կուսակալութեան մէջ,

Գլխաւոր քաղաքն է Շքոտրա (35,000), համանուն լճին եզերքը մեծ և վաճառաշահ քաղաք։ Երևելի են նաև Աք-Հիսար, Քավաեա, Ալէսիո։

Եանեայի կուսակալութեան մէջ,

Գլխաւոր քաղաքն է Եանեա (10,000), համանուն լճին մօտ, մեծ ու վաճառաշահ քաղաք։ Հոս ծնած է Տէփէլէնլի Ալի փաշա։ Երևելի են նաև Էրկէրի կամ Արճիրօքասդրօ, Պէրաթ, Մէցօվօ։

Կղզիք

Արշիպեղագոսի հիւսիսային կողմը՝ Թուրքիա ունի մի քանի կղզիներ որոց գլխաւորներն են Թասոս, Սամոթրակէ, Իմպրոս, Լէմնոս, Թենէտոս կամ Պոզճա Ատասը Տարտանելի նեղուցէն 24 քիլոմ. հեռի։ Իսկ Արշիպեղագոսի հարաւային կողմը՝ կը գտնուի Գանտիա կամ Կրետէ մեծ կղզին որ ունի 8600 քիլմ. քառ. տրծ. 2,000,000 բն. և է Արտօնացեալ կուսակալութիւն (Վէլայէթը Մէմթազէ)։ Ունի բարեբեր հող և բանուկ վաճառականութիւն ձէթի, նարնջի, լեմոնի, չաճառի, գինւոյ, մետաքսի և մրգեղինաց։ Բնակչաց մեծագոյն մասը Յոյն է։ Գլխաւոր քաղաքներն են Քանտիա, Ռեթիմօ, և Քանէա։

Ընդհանուր տեղեկութիւն

Եւրոպական Թուրքիա երևելի է իւր աշխարհագրական գեղեցիկ դիրքով, արգասաւորութեամբ, առողջ կլիմայով և հարուստ բուսաբերութեամբ։

Երկրագործութիւն և արուեստ հետզհետէ յառաջանալու վրայ են, իսկ վաճառականութիւնը բաւական բանուկ է։ Ձեռագործաց մէջ յարգի են մետաքսեայ և բրդէ գործուածքները, [illegible] և դիպակը։

Եւրոպական Թուրքիոյ մէջ կը բնակին բաց 'ի Թուրքերէ՝ նաև Պուլկար, Արնաւուտ, Յոյն, Հայ, Հրէայ, Սերպ, Գնչու ևայլն։

Կառավարութեան ձևն է Միապետութիւն։ Թագաւորը կը կոչուի Սուլթան՝ որ է միանգամայն յաջորդ (Խալիֆէ) Իսլամաց Մարգարէին։ Արդի Սուլթանն է ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ Բ. լուսամիտ և յառաջդիմասէր Կայսրն՝ Որոյ գահակալութենէն 'ի վեր երկիրն վայելած է նիւթական և բարոյական մեծամեծ բարւոքումներ։ Օսմանեան պետութիւնը կ'ամբողջացնեն Ասիական Թուրքիա, Հիճազ ու Եէմէն գաւառները Արաբիոյ մէջ, Թարապլուս և Պէնկազի Ափրիկէի մէջ։ իսկ Եգիպտոս՝ ընդ գերիշխանութեամբ Վեհ. Սուլթանին՝ առանձին Փոխարքայութիւն մ'է,

Եւրոպական Թուրքիա ունի իբր 1,656 քիլմ. երկաթուղի։

ՀԱՐԿԱՏՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊՈՒԼԿԱՐԻԱ 1879 էն 'ի վեր կազմուած ինքնօրէն իշխանութիւն մ'է՝ 'ի մէջ Դանուբայ, Սև ծովու, Պալքան լերանց և Սերպիոյ։ Երկրին հիւսիսային և արևելեան կողմերը դաշտային, իսկ հար. և արևմտեան կողմերը լեռնոտ են։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Պուլկարիոյ կլիմայն՝ Պալքան լերանց պատճառաւ ձմեռները սաստիկ ցուրտ, իսկ միւս եղանակաց մէջ բարեխառն է։ Պուլկարիա ունի արգասաւոր հող և բաւական ծաղկեալ երկրագործութիւն։ Կ'արտադրէ ցորեն, գարի, եգիպտացորեն, վարսակ ևլն։ Ունի ընդարձակ արօտներ յորս կ'արածին կաթնատու ազնիւ կենդանիք։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պուլկարիա ունի 63,972 քիլ. քառ. տարածութիւն և 2,500,000 բնակիչ։

ՍՕՖԻԱ (30,000 բն.) Մայրաքաղաք Պուլկարիոյ, Վիթօշ լերան ստորոտը՝ բաւական ծաղկեալ քաղաք է։ Հոս կը նստի երկրին իշխանը։

Ռուսճուգ, (28,000) Դանուբի վրայ երեւելի նաւահանգիստ, և է Պուլկարիոյ մեծագոյն քաղաքը։

Վառնա, Սեւ ծովու վրայ բանուկ նաւահանգիստ է։ Նիկօպոլիս, Դանուբի վրայ, նոյնպէս Վիտին որ հին բերդաքաղաք է։

Երեւելի են նաեւ Թրնովա, Շումլա, Բլեվնա, Սամաքօվ, Կապրովա, Տուպնիցա, Սիլիստրէ, Զիշդովա եւլն։

Պուլկարիա երկաթուղեաւ կապուած է Կ. Պոլսոյ ու Արեւմտեան Եւրոպիոյ հետ։

Ընդհանուր տեղեկութիւն

Պուլկար ազգը կը վերաբերի Սլաւ ցեղին և է աշխատասէր ու յառաջդիմասէր մի ժողովուրդ՝ որ տակաւ կը զարգանայ։ Ունի Ազգ. Խորհրդարան, Նախարարութիւն և Քրիստոնեայ մի իշխան։ Պուլկարք Յունադաւան են կրօնիւ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌՈՒՄԷԼԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌՈՒՄԷԼԻ փոքր այլ բազմամարդ և ինքնօրէն գաւառ մ'է Պուլկարիոյ հարաւակողմը։ Ունի 35,900 քիլ. քառ. տարածութիւն և 1,000,000 բնակիչ։ Երկիրը լաւ մշակեալ ու բարեբեր է։ Գլխաւոր բոյսերն են ընտիր արմտիք, եգիպտացորեն, բրինձ, գարի, բամպակ և վարդ՝ որմէ կը շինեն վարդի իւղ։ Անուանի են այս գաւառին ոչխարները ([illegible]) և կովը։

Ֆիլիպէ, (35,000) գլխաւոր քաղաք Արեւելեան Ռումէլիի, Մարիցայի վրայ հին ու վաճառաշահ քաղաք է։ Ունի մեծ առեւտուր մետաքսի, բրդեղինաց, գորգի և բամպակեղինաց։

Երեւելի են նաեւ Պուրկաս, Սեւ ծովու վրայ նաւահանգիստ։ Թաթար-Բազարճըգ, Էսկի-Զաղրա, Եէնի-Զաղրա, Գըզանլըգ, Սլիվնօ, Այտօս, Քարնապատ եւլն։

Պուլկարիա և Արեւել. Ռումէլի կը գտնուին ընդ գերիշխանութեամբ Օսմանեան պետութեան։

ՌՈՒՄԱՆԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՌՈՒՄԱՆԻԱ 1878 էն հաստատուած առանձին մի թագաւորութիւն է և կը պարունակէ Մոլտավիա, Վալախիա, և Տուպրուճա գաւառները։

Սահմաններն են հիւսիսէն՝ Աւստրիա, արեւելքէն՝ Ռուսիա և Սեւ ծով. հարաւէն՝ Դանուբ. արեւմուտքէն՝ Աւստրիա և Սերպիա։

Երկիրն ընդհանրապէս դաշտային է, միայն հիւսիսային սահմանին վրայ կը կանգնին Կարպաթեան լերինք։ Երկրին կարեւորագոյն գետն է Դանուբ որ հարաւէն անցնելով երեք բերաններով (Սուլինա, Քիլիա և Ս. Գէորգ) կը թափի 'ի Սեւ ծով։

Ռումանիայէն Դանուբայ մէջ կը թափին Ալուտա և Սերէթ։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Երկրին կլիման տեղ տեղ ցուրտ, բայց ընդհանրապէս բարեխառն, իսկ Տապրուճա ջերմոտ է։ Հողը բարեբեր և լաւ մշակուած է։ Առատօրէն կ'արտադրէ արմտիք, ծխախոտ և ազնիւ ատաղձ։

Ռումանիա ունի կաթնատու կենդանիներ և խոզ։ Նոյնպէս ունի բարիւղ և հանքային աղ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ռումանիա ունի 130,000 քիլ. քառ. տարածութիւն և 5,400,000 բնակիչ։

ՊՈՒՔՐԷՇ *կամ* **ՊՈՒՔԱՐԷՍԴ** (220,000 *բն.*) *Մայրաքաղաք Ռումանիոյ, գեղեցիկ և վաճառաշահ քաղաք է։ Ունի ընդարձակ փողոցներ, զբօսատեղիներ և դպրոցներ։*

Եաշ *կամ* Եասի, *Գլխաւոր քաղաք Մոլտավիոյ։ — Սուլինա, Քէօսթէնճէ, Կալաց, Իպրայիլ, Ճուրճեվօ, բանուկ նաւահանգիստներ են։ Երևելի են նաև Քալաշար, Ալէքսանդրիա, Քոյօշա են։*

Ընդհանուր տեղեկութիւն

Ռումանք կը պատկանին Լատին ցեղին։ Երկրին մէջ կան նաև Հրէայ, Ռուս, Թուրք, Պուլկար և Գնչու։ Նոյնպէս կան սակաւաթիւ Հայեր որոնք հետզհետէ օտարանալու վրայ են։ Երկրագործութիւնը շատ ծաղկած է այս երկրին մէջ, այնպէս որ արմտեաց, արջառի և ատաղձի վաճառականութեամբ շատ ստակ կը մտնէ ի Ռումանիա։ Տիրող կրօնն է Յունադաւանութիւն։ Կառավարութիւնն է Սահմանադրական Միապետութիւն։

Ռումանիա ունի 2,500 *քիլմ. երկաթուղի։*

ՍԵՐՊԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՍԵՐՊԻԱ Պալքանեան տէրութեանց մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Դանուբ, արևելքէն՝ Ռումանիա և Պուլկարիա, հարաւէն՝ Թուրքիա և արևմուտքէն Աւստրիա։ Երկիրն ընդհանրապէս լեռնային է։ Երևելի են Սերպիական Ալպեանք որոյմէ ձևացած է Երկաթի Դուռ կոչուած Դանուբայ նշանաւոր կիրճը։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Սերպիա ունի առողջ կլիմայ, բայց ձմեռները սաստիկ ցուրտ կ'ընէ՝ բարձր լերանց պատճառաւ։

Երկիրն բարեբեր և բաւական լաւ մշակուած է։ Կ'արտադրէ առատ արմտիք, ծխախոտ, ոլթեառնիկ և ատաղձ։ Ունի կաթնատու

և մուշտակաւոր կենդանիներ ու խոզ։ Սերպիոյ մէջ կան հանքային աղ ու երկաթ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սերպիա ունի 48,580 *քիլմ. քառ. տարածութիւն և* 2,200,000 *բնակիչ։*

ՊԵԼԿՐԱՏ (40,000 *բն.*) *Մայրաքաղաք Սերպիոյ, Դանուբայ և Սավայի միացման տեղը ամուր և վաճառաշահ բերդաքաղաք է։*

Երևելի են նաև Նիշ՝ ուր ծնած է Մեծն Կոստանդիանոս, նոյնպէս Սեմենտրիա, Քրակոյեվաց, Ալեքսինաց, Եակօտինա, Լիսկովաց, Բիրօթ և Վրանիա։

Ընդհանուր տեղեկութիւն

1882 *էն 'ի վեր առանձին թագաւորութիւն մ'եղած է Սերպիա։ Միայն երկրագործութիւնը ծաղկած է այս երկրին մէջ։ Սերպիոյ արտաքին վաճառականութեան նիւթերն են բուրդ, խոզ, արմտիք, ծխախոտ ևլն։ Սերպիացիք կը պատկանին Սլաւ ցեղին և են Յունադաւան։ Կառավարութիւնն է Սահմ. Միապետութիւն։*

Սերպիա ունի 600 *քիլմ. երկաթուղի։*

ՂԱՐԱՏԱՂ կամ ՄՈՆԹԵՆԷԿՐՕ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՂԱՐԱՏԱՂ ինքնօրէն, փոքր ու լեռնոտ երկիր մ'է Պալքանեան ցամաքակղզւոյն արևմտեան հիւս. կողմը, Թուրքիոյ, Աւստրիոյ և Ադրիականի միջև։ Երկիրն է բոլորովին անբեր ու աղքատ։ Կլիման ալ ընդհանրապէս ցուրտ է։

Ունի 9,000 *քիլ. քառ. տարածութիւն և իբր* 250,000 *բնակիչ։*

Մայրաքաղաքն է Չէթինէ *ուր է բնակավայր Իշխանին։ Տուլչինօ*

և Անթիվարի նաւահանգիստներ են։ Իսկ ներքին մասին մէջ կան Պոտկորիցա և Նիկշիք։

Գարատաղցիք կորիճ, աշխատասէր և արիասիրտ են։ Կը պատկանին Սլաւ ցեղին և կրօնիւ Յունադաւան են։

ԵԼԼԱԴԱ ԿԱՄ ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՅՈՒՆԱՍՏԱՆ փոքր երկիր մ'է Եւրոպիոյ հարաւային կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Թուրքիա, արեւելքէն՝ Արշիպեղագոս, հարաւէն՝ Միջերկրական և արեւմուտքէն՝ Յոնիական ծով։

Յունաստան կը բաժնուի երեք բնական մասերու 1°. Ելլադա 2°. Մորա կամ Պելոպոնէս, 3°. Հելլենական կղզիք։ Յունաստան ունի բազմաթիւ ծոցեր, խորշեր ու թերակղզիներ որոնք իր արտաքին հաղորդակցութեան շատ նպաստաւոր եղած են։

Ընդհանրապէս լեռնային երկիր մ'է Յունաստան՝ որոյ հիւսիսէն ի հարաւ կ'երկարի Հելլենական դօտին։ Երեւելի բարձունքներն են Փինտոս, Պառնասոս, Ողիմպոս, Օսսա և Պելիոն։

Կլիմայ եւ բուսաբերութիւն

Երկրին կլիման ընդհանրապէս բարեխառն և առողջ է, միայն ծովեզերեայ մի քանի մասերն ճահճային ըլլալուն՝ տաք, վատառողջ ու ջերմոտ են։ Գլխաւոր բերքերն են բամպակ, ձիթենի, թութ, չամիչ, լեմոն, կիտրոն, ազնիւ գինի, ներկի նիւթեր, սուսամ եւլն։ Յունաստան ունի նաեւ մետաքս ու մեղր։ Համբաւաւոր է Յունաստանի մարմարիոնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Յունաստան ունի 65,000 քիլ. քառ. տրծ. և 2,200,000 բնակիչ։

ԱԹԷՆՔ (90,000 բն.) Մայրաքաղաք Յունաստանի, համանուն ծոցին մօտ որ երկաթուղեաւ կապուած է Պիրէանի։ Աթէնք

հին դարուց մէջ խիստ նշանաւոր եղած է իր անուանի փիլիսոփաներով, գիտուններով և իր բարձր քաղաքակրթութեամբ։ Հնութենէ մնացած շէնքերուն մէջ երեւելի են Պարթենոն կամ Աթենասայ Տաճարը, Ակրոպոլիսը եւլն։

Շերամի որդ

Գլխաւոր նաւահանգիստք Յոնիականի վրայ

Պատրաս, Մորայի հիւսիսային կողմը վաճառաշահ եւ բանուկ նաւահանգիստ է։

Կորնթոս, համանուն պարանոցին վրայ։ Անուանի է գինին ու չամիչը։ Նավարին, Մօրայի արեւմտեան կողմը։

Նաւպլիա, մեծ վաճառականութիւն ունի գինւոյ, ձէթի և սպունգի։

Արշիպեղագոսի վրայ են

Փիրէ կամ Պիրէոն, նաւահանգիստ Աթէնքի։
Վոլո, համանուն ծոցին վրայ։

Ներքին Գլ. քաղաքներն են

Ելլադայի մէջ,

Լարիսա կամ Եէնի-Շէհիր, Ֆէրսալա, Թրիքալա և Քարտիցա գեղեցիկ ու ծաղկեալ քաղաքներ են։ Միսողոնկի ամուր բերդաքաղաք է։ Հոս մեռաւ 1824 ին՝ Անգլիացի անուանի բանաստեղծ Լորտ Պայրըն։

Երեւելի են նաեւ Թիւա, Սֆալա, Լիվադիա, Մարաթոն, Լամիա, Մեգարա եւլն։

Մորայի մէջ կան,

Թրիփոլիցա, Մէթոնէ, Սպարտա, Քորոնէ, Մոնէմվասիա, Արկադիա, Կալամադա եւն։

Յոնիական կղզիք

Քորֆու, (հին Կորկիւրէ) համանուն մայրաքաղաքաւ։ Պաքսօ, և Քէֆալոնիա որ է Յոնիական արշիպեղագոսի մեծագոյն կղզին։ Գլ. քաղաքն է Արկոստոլի։ Զանդա (հին Զակինդոս) համանուն քաղաքաւ։ Սանդա-Մավրա (հին Լեւկասիա)։ Թէաքի (հին Իթաքէ), հայրենիք Ոդիսեւսի։ Չէրիկօ, Մորայի հարաւային կողմը քարոտ և ամլեր կղզի մ'է։

Արեւելեան Արշիպեղագոս

Յունաստանի մեծագոյն կղզին է Եւբէա կամ Նեկրոբոնդէ, Ատտիկէի արեւելեան կողմը։ Գլխաւոր քաղաքն է Քալքիս։ Սպորադեան Արշիպեղագոսի մէջ երեւելի է նաեւ Սկիրոս։

Կիկլադեան Արշիպեղագոսի գլխաւոր կղզիներն են Հիդրա, Շիրա կամ Սիրա, Նաքսոս, Թինօս, Անդրոս, Ծիա, Միլօ, Փարօ, Սերֆօ եւայլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Յունաստան 1830 էն 'ի վեր հաստատուած թագաւորութիւն մ'է որ՝ հետզհետէ յառաջադիմելու վրայ է՝ շնորհիւ իր աշխարհագրական նպաստաւոր դրից և բնակչաց գործունէութեան։ Յոյնք կը պատկանին Հելլէն ցեղին որ մեծ դեր կատարած է անցելոյն մէջ։ Այսօր եւս նշանաւոր են Յոյնք՝ նաւային ու առեւտրական ասպարէզներու մէջ իրենց ունեցած մեծ յարմարութեամբ։ Լեզուն է Նոր Հելլէներէն, կրօնն է Յունադաւանութիւն, կառավարութեան ձեւն է Սահմանադրական միապետութիւն։ Յունաստան ունի իբր 600 քիլմ. երկաթուղի։

Եւրոպիոյ մէջ կան նաեւ հետեւեալ փոքր իշխանութիւնները։

1° ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄՈՆԱՔՕՅԻ

Ֆրանսայի հար. արեւելեան կողմը, 21 քիլմ. քառ. տարածութեամբ ու իբր 10,000 բնակչօք փոքր իշխանութիւն մ'է։ Գըլխաւոր քաղաքն է Մօնաքօ։

2° ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՆՏՕՐԱՅԻ

Պիրէնեան լերանց մէջ և Ֆրանսայի պաշտպանութեան ներքեւ. 452 քիլմ. քառ. տարածութեամբ և իբր 6,500 բնակչօք փոքր Հասարակապետութիւն մ'է, Գլ. քաղաքն է Անտորրա-Լա-Վիէժա։

3° ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԷՆ-ՄԱՌԷՆԻ

Իտալիոյ հիւսիսային արեւելեան կողմը փոքր Հասարակապետութիւն մ'է։

4° ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԼԻԽԹԷՆՇԹԱՅՆԻ

Զուիցերիոյ և Աւստրիոյ սահմաններուն վրայ փոքր իշխանութիւն մ'է։ Մայրաքաղաքն է Վատուզ, իբր 9,000 բնակչօք։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՒՐՈՊԻՈՅ ՎՐԱՅ

1.

Եւրոպա ո՞ր կիսագնդին մէջ կը գտնուի, — Ի՞նչ է իր բնական ձեւը. — Ի՞նչ ովկէանոսներ ու ծովեր կը տեսնէ. — Ո՞ր ծովերէն ձեւացած են Բոթնիոյ, Ֆինլանտիոյ, Րիկայի, եւ Տանցիկի ծոցերը. — Հիւսիսային եւ Միջերկրական ծովերէն ո՞ր ծոցերը ձեւացած են. — Ադրիականի, Արշիպեղագոսի եւ Սեւ ծովերու մէջ ո՞ր ծոցերը կան. — Եւրո-

պիոյ Ովկէանոսներն ու ծովերը ինչ երեւելի նեղուցներով միացած են. — Եւրոպայի կարեւոր լճերը ո՛ր երկրաց մէջ կը գտնուին. — Քանի՞ աւազան ունի Եւրոպա։ Ո՞ր երկիրներէն կ'անցնին եւ ո՞ւր կը թափին Հռենոս, Դանուբ, Վոլկա, Ուրալ, Ռոն, Մարիցա, Լուառ, Վիսթուլա, Կուատիանա, Էպրօ, Բօ, Թակօ, Էլպա, Եւրոպայի ո՞ր Մայրաքաղաքները գետերու վրայ շինուած են։ — Կ. Պոլսոյ դիրքին վրայ ինչ կրնաս ըսել։

2.

Որո՞նք են Եւրոպայի գլխաւոր կղզիները. — Եւրոպայի ո՛ր թերակղզիները տէրութիւններ կը կազմեն. — Եւրոպա քանի՞ գլխաւոր հրուանդան ունի. — Ո՞ւր կը գտնուին Ուրալ, Քէօլէն, Կովկաս, Ալպեան, Պիրենեան, Ապենինեան, Կարպաթ եւ Պալքան Լերինք։ Որո՞նք են Եւրոպայի երեք գլխաւոր հրաբուղխները. — Ո՞րոնք են Եւրոպայի երկրագործական երկիրները. — Ո՞ր երկիրները կ'արտադրեն ցորենք, գետնախնձոր, կանեփ, ճակնդեղ, գարի, վարսակ եւ ատաղձ. — Ո՞ր երկիրը կարտադրէ խաւեար, մուշտակ, առագաստի կտաւ, կաշի եւ կաթնատու կենդանիներ. — Ո՞ր երկիրները կ'արտածեն ձկան իւղ, կարագ եւ պանիր. — Եւրոպայի ո՞ր երկիրները կ'արտադրեն գինի եւ այլ ոգելից ըմպելի. — Ո՞ր երկիրներն ունին հանքածուխ, մարմարիոն, պղինձ, երկաթ, զինկ, ծծումբ, բլատին, ոսկի եւ արծաթ. — Եւրոպական ո՛ր երկրաց մէջ ձեռագործ եւ ճարտարութիւն շատ ծաղկած են։

3.

Եւրոպա ո՞րչափ բնակիչ ունի եւ քանի՞ մեծ ընտանիքներու կը բաժնուին. — Ո՞ր ժողովուրդներն են Կաթոլիկ, Բողոքական եւ Յունադաւան։ Ո՞րոնք են Եւրոպայի գաղթային տէրութիւնները. — Ո՞րոնք են Բացարձակ, Սահմանադրական եւ Հանրապետական տէրութիւնները։ Նշանակէ Եւրոպայի երեւելի նաւահանգիստները. — Ցոյց տուր զինուորական նաւահանգիստները. — Փորթուկալ, Սպանիա, Հարաւային Ֆրանսա, Իտալիա, Յունաստան ու Եւրոպական Թուրքիա ինչ տեսակ բոյսեր կ'արտադրեն։

4.

Ի՞նչ կողմանէ երեւելի է Պօրտօ, Լիոն. Շէֆֆիլտ, Օքսֆորտ, Քէմպրիճ, Մանչէսթըր, Լիտս, Նիս, Մալակա, Օռլէան, Էտիմպուրկ, Նիւքէսըլ, Քարտիֆ, Նափոլի, Միլան, Օտէսա, Համպուրկ, Ժընէվրա, Քոլոնեա, Բալօս, Ամստէրտամ, Վենետիկ, Կորնթոս, Վարշաւիա, Կրաց, Սէլանիկ, Ֆլօրէնցա, Աթէնք, Հաւր, Լայփցիկ, Մոսքուա, Ճիպրալթար, Վառնա, Արխանկէլ, Պէլկրատ, Լիվըրբուլ, Ռոտտերտամ, Պըզանսօն, Բուսձըգ, Քրոնշտատ, Նանդ, Լը-Հավր, Լօզան, Տրէզտա եւլն։

5.

Ո՞ւր ծնած են Պէռնարտէն-տը-Սէն-Բիէռ, Լորտ Պայրըն, Վիրգիլիոս, Շաթօպրիան, Տանդէ, Կառիպալտի, Լամընէ, Օֆֆէնպախ, Մոցառ, Կէօթէ, Շիլլէր, Կութթէմպէրկ, Մեծն Կոստանդիանոս, Տէմիլէնլի Ալի փաշա, Լեւոն Ժ. Միքէլ Անճէլօ, Ամերիկօս-Վէսփուչչի, Վիքթօռ-Հիւկօ, Թիէռ, Քոռնէյլ, Պօսիւէ, Բասքալ, Այվազովսքի Յովհաննէս, Ուէլինկթըն, Մասէնա, Մեծն Պետրոս, Կիզօ, Քանդ, Սենեկա, Քալվին, Քամէնսքի, Լօփ-տը-Վէկա, Կալվանի, Արիոստօ, Տիտոս-Լիվիոս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ասիա Արեւելեան կիսագունտի մեծագոյն ցամաքն է և կը տարածուի Հին աշխարհի հիւսիսային և արեւելեան կողմը։

Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ ովկէանոս, հիւսիսային արեւելքէն՝ Պէհրինկայի նեղուց և Պէհրինկայի ծով, արեւելքէն՝ Խաղաղական ովկէանոս, արեւել. հարաւէն՝ Մալաքքայի նեղուց, հարաւէն՝ Հնդկաց ովկէանոս, հարաւային արեւմուտքէն Պապ-էլ-Մանտէպի նեղուց։ Արեւմուտքէն՝ Կարմիր ծով, Միջերկրական, Արշիպեղագոս, Մարմարա, Սեւ, Կասպից ծովերն և Ուրալ գետ ու Կովկաս լերինք։

Ծովք և Ծոցք

Սառուցեալ ովկէանոսէ ձեւացած է Քարայի ծովը. Խաղաղականէ ձեւացած են Պէհրինկայի, Օխոդսքի, Ճաբոնի, Դեղին, Կապոյտ և Չինաց ծովերը։ Արեւմտեան կողմը կը գտնուին Կարմիր, Միջերկրական, Արշիպեղագոս, Մարմարա, Սեւ և Կասպից ծովերն՝ որոնք իբր սահման կը ծառայեն։

Ասիոյ գլխաւոր ծոցերն են Օպի, Ենիսէ՝ որոնք ձեւացած են Սառուցեալ ովկէանոսէ։ Անատիրի ծոց՝ Պէհրինկայի ծովէն ձեւացած, Բէչիլիի ծոց՝ Դեղին ծովէն ձեւացած, Թոնքինի և Սիամի ծոցք՝ Չինաց ծովէն ձեւացած։

Հնդկաց ովկէանոսէն ձեւացած են՝ բաց ի Պէնկալայի և Օմանի մեծ ծոցերէն՝ նաեւ Մարթապանի, Պարսից և Ատէնի ծոցերը։ Միջերկրականի մէջ կ'երեւին Աղեքսանդրիոյ և Ատալիոյ ծոցերը։ Արշիպեղագոսի մէջ՝ Զմիւռնիոյ, իսկ Մարմարայէ ձեւացած են Մուտանիոյ և Նիկոմիդիոյ ծոցերը։

Նեղուցք

Ասիոյ նեղուցներն են՝ Պէհրինկայի նեղուց՝ համանուն ծովուն և Սառուցեալ ովկէանոսի միջեւ, Դարաքքայի նեղուց՝ Սախալեան կղզւոյն և Սիպերիոյ միջեւ, Լա Բէրուզի նեղուց՝ Ճափոնի Եէզօ կղզւոյն և Սախալիէնի միջեւ, Քորէայի նեղուց, Ճափոնի և Չինաց ծովերուն մէջ տեղ, Մալաքքայի նեղուց՝ Հնդկաց և Խաղաղական ովկէանոսներու միջեւ որ միանգամայն Ասիան կը բաժնէ Ովկէանիայէ, Հիւրմիւզի նեղուց՝ կը միացնէ Օմանի ծոցն Պարսկային ծոցին հետ։ Պապ-Էլ-Մանտէպի նեղուց՝ Ատէնի ծոցին և Կարմիր ծովու միջեւ, Սուէզի ջրանցք՝ որով Ափրիկէ կը բաժնուի Ասիայէ և Միջերկրականը կը միանայ Կարմիր ծովու հետ։ Արեւմտեան կողմը կ'երեւին Տարտանէլի և Կ. Պոլսոյ նեղուցք՝ 'ի մէջ Արշիպեղագոսի, Մարմարայի և Սեւ ծովերու։

Լիճք

Ասիա ունի մեծ ու փոքր բազմաթիւ լիճեր։ Մեծագոյններն են Կասպից և Արալ՝ որոնք իրենց մեծութեանն համար կը կոչուին նաեւ ծով։

Ուրմիա, Պարսկաստանի մէջ, Սեւան, Կովկասու մէջ, Վանայ լիճ, Մեռեալ, Թուզ-կէօլ, Պէյ-Շէհիր, Աք-Շէհիր՝ Ասիական Թուրքիոյ մէջ։ Պալխաշ և Պայքալ՝ Սիպերիոյ մէջ. Լոպ, Քուքունոր, Կարպոյտ՝ կեդրոնական լեռնադաշտին մէջ։

Գետք

Ասիա բաժնուած է 5 աւազաններու, Հիւսիսային, Արեւել-

եան, Հարաւային, Արեւմտեան և Կեդրոնական, զոր կը կազմեն Կասպից և Արալ ծովերը։

Հիւսիսային աւազանի հարկատուներն, են՝ Օպի, Ենիսէ ու Լենա։

Արեւելեան » » » Անատիր, Ամուր, Հօանկ-Հօ կամ Դեղին, Քեանկ կամ Կապոյտ, Քամպօճ և Մէնամ։

Հարաւային աւազանի հարկատուներն են՝ Ակա, Պրահմա-փութրա, Գանգէս Կոտավէր որոնք կը թափին Պէնկալայի ծոցը։ Ինդոս կամ Սինտ՝ Օմանի ծոցը, Տիգրիս եւ Եփրատ՝ Պարսկային ծոցը։

Արեւմտեան աւազանին մէջ կը թափին՝ Ալիս կամ Գըզըլ-ըրմաք, Իրիս կամ Եէշիլ-ըրմաք, Սաքարիա, Ճորոխ կամ Չիւրիւք Սու 'ի Սեւ ծով։ Արշիպեղագոսի մէջ կը թափին՝ Կէտիզ կամ Հերմոս, Մէնտէր կամ Սքամանտր։

Կեդրոնական աւազանի հարկատուներն են՝ Կուր և Երասխ՝ 'ի Կասպից, Սիր-Տարիա և Ամու-Տարիա՝ Արալայ ծովը։

Թերակղզիք, Կղզիք և Հրուանդանք

Ասիոյ շուրջը կը գտնուին հետեւեալ թերակղզիք։

Անատօլու կամ Փոքր Ասիա՝ արեւմտեան կողմը։

Արաբիա, Հնդկաստան և Հնդկա-Չին՝ հարաւակողմը։

Քորէա և Քամչաթքա՝ արեւելեան կողմը։

Ասիոյ գլխաւոր կղզիներն են՝ Նոր Սիպերիա և Վրանկել՝ Սառուցեալ ովկէանոսին մէջ։ Խաղաղականի մէջ՝ Քուրիլեան, Սախալիէն, Ճափոնեան կղզիք (Եզօ, Նիփօն, Սիքօք և Քիուսիու), իսկ Ֆորմոզա, Հայնան և Մաքաօ՝ Չինաց ծովուն մէջ։

Հնդկաց ովկէանոսին մէջ կը գտնուին Լաքէտիվեան, Մալտիվեան, Սէյլան, Անտաման և Նիքօպար կղզիք։

Միջերկրականի և Արշիպեղագոսի մէջ կը գտնուին Հռոդոս, Սամոս, Քիոս, Միտիլլի եւլն։

Ասիոյ գլխաւոր հրուանդանները են Գլուխ Հիւսիսոյ կամ Սիվէրօ-Վոստոչնի՝ Սիպերիոյ հիւսիսային կողմը։ Գլուխ Արեւելեան՝ Սիպերիոյ հիւսիսային արեւելեան կողմը։ Հռումանիա՝ Մալաքքա թերակղզւոյն հարաւային ծայրը։ Գլուխ Գոմորին՝ Հնդկաստանի հարաւային ծայրը, Ռազէլկաթ՝ Արաբիոյ հարաւակողմը։ Պապա-Պուրնու՝ Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը։

Լերինք

Ասիոյ գլխաւոր լեռնագօտիներն են՝ Ալդայ և Սդանովոյ՝ Չինու և Սիպերիոյ միջեւ։ Արեւելեան կողմը Բուն Չինու լերինք՝ համանուն երկրին մէջ. Հիմալայա գօտի՝ Հնդկաստանի և Չինու միջեւ, որ կը պարունակէ երկրագնտիս բարձրագոյն գագաթները։ Այս շղթային բազուկները կ'երկարին 'ի Հնդկա-Չին և տեղւոյն անուամբ կը կոչուին։ Կովկասու լերինք՝ Սեւ և Կասպից ծովերու միջեւ։ Արարատ, Տաւրոս, Անտի-Տաւրոս, Լիբանան՝ Ասիական Թուրքիոյ մէջ։ Հինտու-Քուշ՝ Պարսկաստանի և Աֆղանիստանի մէջ։ Էլ-Արէբ՝ Արաբիոյ մէջ։ Ուրալ՝ Ասիոյ արեւմտեան կողմը։ Արեւելեան և Արեւմտեան Կատ՝ Հնդկաստանի երկու կողմերը։

Կլիմայ, Բուսաբերութիւն, Հանք և կենդանիք

Ասիա կը գտնուի Հիւսիսային Սառուցեալ, Հիւսիսային բարեխառն և Այրեցեալ գօտիներու տակ։ Հիւսիսային մասերն սաստիկ ցուրտ կ'ըլլեն, ձմեռներն երկար. հողը խոնաւ ու ջրոտ և ընդհանրապէս նուազ բնակելի, և այս պատճառաւ հողագործութիւնն ալ շատ ետ մնացած է։ Միջին մասերն բարեխառն ու հողն արգասաւոր է. իսկ ամենէն բազմամարդ, հարուստ և բարեբեր աշխարհներն են հարաւային երկիրք՝ որոց մէջ երկու եղանակ միայն կը տիրէ՝ չոր և անձրեւային։

Ասիոյ բուսական գլխաւոր հարստութիւններն են՝ արմտիք, բամպակ, խահուէ, շաքարեղէգ, բրինձ, թէյ, արմաւ, համեմունք, խնկեղէն, պանիան, քօքօ, կինամոն, ծխախոտ, ներկի նիւթեր, շինութեան փայտ, լեղակ, ձիթենի, տաք երկրի պտուղներ եւայլն։

Ասիա նշանաւոր է նաեւ իւր հարուստ հանքերով։ Ունի թանկագին քարեր, ոսկի, արծաթ, բլատին, պղինձ, քարիւղ, անագ, երկաթ, կապար, քրոմ, մարմարիոն եւլն։

Ընտանի ամեն տեսակ կենդանիներէ 'ի զատ՝ Ասիոյ ար. երկրաց մէջ կը գտնուին՝ առիւծ, վագր, ռնգեղջիւր, փիղ, ինձ, ընձուղտ, կոկորդիլոս, պօա օձ և այլ թունաւոր սողուններ ու ճճիներ, Իսկ Հիւսիսային երկրաց մէջ կան մուշտակաւոր կենդանիք։

Քաղաքակրթութիւն Ասիոյ

Ասիա իւր յարակից կղզիներովն ունի իբր 44,160,000 քառ. քիլ. տարածութիւն և իբր 800 միլիոն բնակիչ։

Մարդկային ազգի պատմութեան մէջ խիստ նշանաւոր եղած է Ասիա իբր օրրան արուեստից, գիտութեանց և բարձր քաղաքակրթութեան։ Սակայն այսօր՝ համեմատաբար իւր փառաւոր անցեալոյն՝ շատ ետ մնացած է։

Ասիոյ բնակիչք մեծաւ մասամբ կը բաղկանան Մոնկոլեան և Կովկասեան ցեղերէ որոց մեծագոյն մասին կրօնն է կռապաշտութիւն, մնացեալք Քրիստոնեայ և Մահմէտական են։

Ասիական տէրութեանց կառավարութեան ձեւն ընդհանրապէս բացարձակ Միապետութիւն է։

Ասիա բաժնուած է 12 տէրութեանց,

Հիւս. մասը կը պարունակէ Ռուսական Ասիա

Արեւմ. » » » Կովկասիա, Ասիական Թուրքիա և Արաբիա։

Միջին մասը կը պարունակէ Թուրքաստան, Պարսկաստան, Աֆղանիստան և Պելուճիստան։

Հար. մասը կը պարունակէ Հնդկաստան և Հնդկա-Չին։

Արեւել. » » » Չինաստան և Ճափոն։

Ասիական Աշխարհ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՍԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՍԻԱ կը պարունակէ երեք գլխաւոր երկիրներ 1° ՍԻՊԵՐԻԱ, 2° ԿՈՎԿԱՍԻԱ, 3° ԹՈՒՐՔԱՍՏԱՆ ԿԱՄ ԱՆԴՐ-ԿԱՍՊԵԱՆ ԱՇԽԱՐՀ։

1° ՍԻՊԵՐԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՍԻՊԵՐԻԱ կը գրաւէ Ասիոյ հիւսիսային մասն և աւելի մեծ է քան ամբողջ Եւրոպա։

Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ ովկէանոս, հիւսիսային արեւելքէն՝ Պէհրինկայի նեղուց և ծով, արեւելքէն Օխոցքի՝ և Ճաբոնի ծովերը. հարաւէն՝ Չինական կայսրութիւն և Թուրքաստան, արեւմուտքէն Կասպից ծով, Ուրալ գետ ու Եւրոպա։

Սիպերիա ընդարձակ ու տափարակ երկիր մ՚է որոյ սահմաններուն վրայ կ՚երեւին բարձրաբերձ գօտիներ։ Երկրին մանաւանդ հիւսիսային կողմերը սաստիկ ցուրտ կ՚ընեն և ձմեռներն ալ խիստ երկայն են, միայն արեւմտեան և հարաւային մասանց մէջ քիչ քանակութեամբ յառաջ կ՚ուգան արմտիք, գետնախնձոր, հաճար, վարսակ ու գարի։ Սիպերիա ունի ոսկւոյ, արծաթի, բլատինի և պղնձի հարուստ հանքեր։ Երեւելի են Սիպերիոյ մուշտակաւոր կենդանիները։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սիպերիա ունի 12,500,000 քառ. քիլոմէթր տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Թօպօլսք (30,000 բն.) Իրթիշի վրայ, երեւելի է այս քաղաքը՝ իբր կեդրոն Եւրոպիոյ և Ասիոյ վաճառականութեան։ Ունի կաշւոյ գործարաններ։

Իրքուցք, Պայքալ լճին մօտ, Չինու հետ մեծ վաճառականութիւն ունի։

Օմսք, Թուրքաստանի սահմանին մօտ։

Կարեւոր են նաեւ Եքադերինպուրկ, Սեմիբալադինսք, Ներչինսք։ Իսկ իբրեւ նաւահանգիստ երեւելի են Վլադիվոսթոք, Բետրոբավլովսքի, Օխոցք, Աժան ու Նիքոլայեվսք։

Ընդհանուր տեղեկութիւն

Սիպերիա հին ատեն կը կոչուէր Սկիւթիա և միայն վերջի դարուս մէջ լաւ մը ճանչցուեցաւ։ Սիպերիոյ բնակիչք կը բաղ-

կանան Թաթարներէ, Մոնկոլներէ, Ռուսերէ և այլ ցեղերէ։ Ռուս տէրութիւնը՝ քաղաքական յանցաւորները Ներչինսք և Սաքալիէն կղզին կ՚աքսորէ։ Սիպերիոյ բնակիչք ընդհանրապէս կ՚զբաղին ձկնորսութեամբ, որսորդութեամբ, կաշեգործութեամբ և Չինու ու Եւրոպիոյ հետ վաճառականութեամբ։

2° ԿՈՎԿԱՍԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻԱ կը տարածուի Սեւ և Կասպից ծովերուն միջեւ, իսկ հարաւէն սահման ունի Թուրքիա և Պարսկաստան։

Կովկասիա ընդհանրապէս լեռնային երկիր մ՚է։ Ունի ընդարձակ և բարեբեր հովիտներ ու գեղեցիկ գետեր։ Կլիմայն՝ բարձր լերանց պատճառաւ՝ ձմեռները սաստիկ ցուրտ, իսկ ամառներն



Կարս

ալ դաշտային մասանց մէջ չափազանց տաք կ՚ընէ։ Գլխաւոր բերքերն են արմտիք։ Որթատունկ, բամպակ, ձիթապտուղ և ազնիւ մրգեղէններ, ունի նաեւ մետաքս և բուրդ։ Հանքաց մէջ նշանաւոր են պղինձը, երկաթը, արծաթախառն կապարը և մանաւանդ քարիւղն ու նաւթը՝ որոցմէ մեծ քանակութեամբ դուրս կը ղրկէ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կովկասիա ունի 463,000 քիլ. քառ. տարածութիւն և 7,000,000 բնակիչ:

Մայրաքաղաքն է Թիֆլիզ *կամ* Տփղիս (90,000 *բն.*), *Կուր գետին վրայ մեծ ու վաճառաշահ քաղաք՝ որ կապուած է երկաթուղեաւ Պաքուի և Պաթումի հետ: Ունի նորաշէն ու գեղեցիկ թաղեր, թատրոններ ու եկեղեցիներ: Հայք կարեւոր տեղ մը կը գրաւեն այս քաղաքին բնակչաց մէջ:*

Երեւելի են նաեւ Խութայիս, որ հին ատեն Իմէրէթի մայրաքաղաքն էր. — Գանձակ կամ Եղիսաբեթուպոլիս, գեղեցիկ քաղաք՝ որ էր աթոռ Աղուանից թագաւորութեան: — Նախիջեւան, աշխարհիս հնագոյն քաղաքաց մին՝ զոր Շահ Աբբաս կործանելով՝ բնակիչները բռնի տարաւ ի Պարսկաստան և ուր հիմնեցին Նոր Ջուղա



Էջմիածին

քաղաքը: Շամախի, երեւելի են գորգերը: Երեւան, *համանուն նահանգին մէջ Հրազդան գետին վրայ: Անոր մօտն է Վաղարշապատ՝ ուր կը գտնուի Ս. Էջմիածնայ հռչակաւոր վանքն՝ որ է Մայր աթոռ Հայոց ընդհանրական Կաթողիկոսութեան: Ունի տպարան և հարուստ թանգարան: Շուշի կամ Շուշա, բնակիչներն Հայ ու Թաթար են: Նոր Պայազիտ, Սեւանայ լճին մօտ: Ախալցխա, Կուրի մօտ վաճառաշահ քաղաք է: Կիւմրի կամ Ալեքսանդրուպոլիս,*

Ախուրեան գետին մօտ՝ նոր և ամուր քաղաք է: Կարս, անուանի բերդաքաղաք է: Երեւելի են նաեւ Ագուլիս, Արտահան, Նուխի և այլն: Իսկ իբրեւ նաւահանգիստ՝ կարեւոր են Փոթի և Պաթում Սեւ ծովու, Պաքու, Կասպեյի վրայ: Այս վերջինն ունի առատ քարիւղի և նաւթի մեծ վաճառականութիւն:

Ընդհանուր տեղեկութիւն

Կովկասիա Ռուսիոյ կարեւոր բաժանումներէն մին և առանձին գաւառ մ՚է: Երկիրն է հարուստ, բարեբեր և վաճառաշահ: Փոթիէն ու Պաթումէ մինչեւ Պաքու երկաթուղի մը շինուած է: Գլխաւոր բնակիչներն են Վրացի, Հայ, Թաթար, Թուրք, Լէզկի, Մինկրել, Աբազա, Պարսիկ, Լազ, եւն: Այս ժողովրդոց մէջ Հայք մասնաւոր կարեւորութիւն մ՚ունին իրենց վաճառականութեամբ և արուեստներով:

3° ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԹՈՒՐՔԱՍՏԱՆ ընդարձակ և տափարակ երկիր մ՚է որ կը տարածուի Սիպերիոյ, Չինու, Աֆղանիստանի, Պարսկաստանի և Կասպից ծովու միջեւ:

Երկրին հիւսիսային և արեւմտեան մասերն ընդհանրապէս անապատ և քաղաքներն ալ ընդհանրապէս ովասիսներ են: Արեւելեան և հարաւային մասերուն մէջ կ՚երկարին բարձր լերանց գօտիներ, իսկ Կասպից ծովու արեւելեան հարաւային կողմը կը տարածուի Քարա-Գում, և Արալայ ծովակին արեւելեան կողմը՝ Գըզըլ-Գում մեծ անապատը:

Թուրքաստանի մէջ ամառները սաստիկ տաք, իսկ լեռնային գաւառաց մէջ ձմեռները ցուրտ կ՚ընէ:

Թուրքաստանի հարաւային և արեւելեան մասերը կը պարունակեն արգասաւոր և ջրարբի դաշտեր որք կ՚արտադրեն ցորեն, ծխախոտ, գարի, բամպակ, մրգեղէն և տաք երկրի բերքեր: Թուրքաստան ունի հարուստ հանքեր ոսկւոյ, պղնձի, արծաթի, կապարի ու թանկագին քարերու:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Թուրքաստան ունի 3,434,000 քիլ. քառ. տարածութիւն և 5,600,000 բնակիչ։

Այս երկիրը քաղաքականապէս կը բաժնուի երկու մասերու 1° Ռուսական Թուրքաստան 2° Անկախ Թուրքաստան։

ՌՈՒՍԱԿԱՆ ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

Գլխաւոր քաղաքներն են Թաշքենտ, կուսակալանիստ եւ վաճառաշահ քաղաք։ Ունի մետաքսեղինաց, կաշւոյ և անօթեղինաց գործարաններ։ Խոքանտ՝ Քարա-Սուի վրայ։ Սմրղանտ գեղեցիկ դիրքով վաճառաշահ և ճարտարարուեստ քաղաք է։ Հոս է Թիմուր-Լենկի գերեզմանը։

Նշանաւոր են նաեւ Մերվ, Խոճենտ, Ֆուլճա և Բալխ կամ Պալխ որ հին քաղաք է։

ԽԱՆՈՒԹԻՒՆ ԽԻՎԱՅԻ

Գլխաւոր քաղաքն է Խիվա, վաճառաշահ քաղաք, ունի գորգի և մետաքսեղինաց վաճառականութիւն։

Ուրկենճ, ունի երկրագործական բերքեր և մեծ վաճառականութիւն Եւրոպիոյ հետ։

ԽԱՆՈՒԹԻՒՆ ՊՈՒԽԱՐԱՅԻ

Մայրաքաղաքն է Պուխարա, Զէրաֆշանի բարեբեր հովտին մէջ հին ու անուանի քաղաք որ է Կեդրոնական Ասիոյ մեծագոյն վաճառատեղին և ուսկից կը մեկնին կարաւանք յԵւրոպա, ՚ի Սիպերիա, ՚ի Չին, ՚ի Հնդկաստան և ուրիշ երկիրներ։ Պուխարա ունի դպրոցներ, մզկիթներ և շատ մը աւերակներ։

Քարշի, Ամու-Տարիայի մօտ, ունի մետաքսեղինաց և զէնքի գործարաններ։ Երեւելի են նաեւ Հիսար, Շէհրի-Զէպս, եւլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Թուրքաստան կամ Թաթարիստան հին դարուց մէջ շատ երեւելի էր իւր հզօր աշխարհակալներով։ 1865 էն ՚ի վեր Ռուսք

սկսան այս երկրին այլ և այլ մասանց տիրել, այնպէս որ՝ Թուրքաստանի ինչ ինչ մասերն անուանական անկախութիւն մը միայն ունին։ Թաթարք Մահմէտական են ու կ՚զբաղին երկրագործութեամբ, խաշնարածութեամբ ու վաճառականութեամբ։ Քաղաքակրթութեան մէջ շատ յետադէմ են։ Երկրին գլխաւոր վաճառքներն են ծխախոտ, արմտիք, մետաքս, բուրդ, կաշի, թանկագին քարեր, զէնք եւայլն։

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ Օսմանեան պետութեան կարեւորագոյն մէկ մասն է և կը գրաւէ Ասիական ցամաքին արեւմտեան մասը։

Սահմաններն են հիւսիսէն՝ Սեւ ծով, հիւսիսային արեւելքէն՝ Կովկասիա, արեւելքէն՝ Պարսկաստան և Պարսից ծոց, հարաւէն՝ Արաբիա, Սուէզի ջրանցք և Միջերկրական ծով, արեւմուտքէն՝ Արշիպեղագոս և Մարմարա։

Ասիական Թուրքիա ընդհանրապէս լեռնային երկիր մ՚է։ Արեւելեան մասին մէջ կ՚երեւին Արարատեան լերինք, Սեւ ծովու եզերքը՝ Անտի-Տաւրոս, Միջերկրականի երկայնքը Տաւրոս, Միջերկրականի արեւելեան եզերաց վրայ՝ Լիբանան, իսկ Պարսից սահմանագլխին երկայնութեամբ կ՚երեւին Քիւրտիստանի լերինք։ Արարատի բարձրագոյն գագաթն է Մասիս։ Տաւրոսի գլխաւոր գագաթներն են Սիփան-Տաղ (Նեպուհ), Ալմա-Տաղ, Պապա-Տաղ, իսկ ամենէն նշանաւորն է Արգէոս կամ Էրճիաս, որ ունի 4,000 մէթր բարձրութիւն։ Անտիտորոսի գլխաւոր գագաթներն են Պինկէօլ (Բիւրակն), Մուրատ-Տաղ և Քէշիշ-Տաղը Պրուսայի մօտիկ։ Լիբանանու գլխաւոր գագաթներն են Թապոր և Կարմեղոս։

Գետք և Լիճք

Ասիական Թուրքիա կը բաժնուի երեք գլխաւոր ջրշեղջներու
1° Սեւ ծով ուր կը թափին Զիւրիւֆ-Սու (Ճորոխ), Եէշիլ-Իրմաք

(Իրիս), Գըզըլ-Ըրմաք (Ալիս) և Սախարիա: 2° Մարմարայի մէջ կը թափի Սուսուրլու, Արշիպեղագոսի մէջ Մէնտէր, Կէտիզ և Պախըր-Չայ: Միջերկրական կը թափին Գարա-Սու (Կիւդնոս), Սիհան, Ճիհան և Որոնդէս (Ասըյ-Սու): Յորդանան կը թափի Մեռեալ ծովու մէջ. 3° Պարսկային ծոցը կը թափին Ասիական Թուրքիոյ մեծագոյն տերը Եփրատ՝ որ ունի երկու ճիւղ, մին կը բղխի Ծաղկեօյ լեռներէն և կը կոչուի Արածանի, իսկ միւսը կը բղխի Կարնոյ լեռներէն և կը կոչուի Գարա-Սու: Տիգրիս կը բղխի Խարբերդու լեռներէն և միանալով Եփրատի՝ կը կազմէ Շատ-Իւլ-Արապը և կը թափի Պարսից ծոցն: Կասպից ծովու միակ հարկատուն է Երասխ կամ Արաքս որ կը բղխի Կարնոյ լեռներէն:

Ասիական Թուրքիոյ գլխաւոր լիճերն են՝ Վանայ ծով, արեւելեան մասին մէջ: Թուզ-Կէօլ, Աֆ-Շէհիր, Պէյ-Շէհիր, Էկիրտիր՝ Փոքր Ասիոյ մէջ: Իզնիկի, Սափանճայի փոքր լճակները՝ Մարմարայի մօտ: Տիբէրիայի, Անտիոքայ, Հալէպի և Մեռեալ ծովակը՝ Ասորւոց երկրին և Պաղեստինու մէջ:

Կլիմայ և Բուսաբերութիւն

Ասիական Թուրքիոյ արեւելեան և հիւսիսային գաւառները բարձր լեռանց պատճառաւ սաստիկ ցուրտ կ՚ըլլան: Փոքր Ասիա համեմատաբար աւելի բարեխառն է՝ բաց 'ի ծովեզերեայ մի քանի մասերէ որոց մէջ սաստիկ ջերմ կը տիրէ: Իսկ Միջագետաց, Պաղեստինու և Արաբիոյ մերձակայ գաւառաց մէջ խիստ տաք կ՚ընէ:

Ասիական Թուրքիա ունի պարարտ հող, ընդարձակ ու բարեբեր հովիտներ եւ պարարտ մարգագետիններ: Երկրագործութիւնը հետզհետէ ծաղկելու վրայ է: Գլխաւոր բերքերն են արմտիք, բամպակ, սուսամ, ծխախոտ, ձիթենի, որթատունկ, թութ, չամիչ, աֆիօն, լեմոն, նարինջ, ներկի նիւթեր, արմաւ, եգիպտացորեն, շաքարեղէգ, խաշուէ, հիւսելի նիւթեր, մրգեղէն, կանեփ, բրինձ, վուշ են: Ասիական Թուրքիա ունի նաեւ ընդարձակ անտառներ որք կը մատակարարեն շինութեան ազնիւ փայտ: Ունի նաեւ առատ մետաքս:

Կենդանիք և Հանք

Ասիական Թուրքիոյ մէջ կան ոչխար, այծ (մանաւանդ Էնկիւրինը), ձի, ջորի, կով, եզ, ուղտ, մուշտակաւոր կենդանիներ, թռչուններ և հարաւային մասանց մէջ ալ վայրի գազաններ:

Ասիական Թուրքիա ունի հարուստ հանքեր պղնձի, արծաթախառն կապարի, աղի, պաղլեղի, քրոմի, պօռասի, շինութեան քարերու եւայլն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ասիական Թուրքիա ունի 1,250,000 քիլ. քառ. տարածութիւն և 16,000,000 բնակիչ:

Պատմական գլխաւոր բաժանումներն են Փոքր Ասիա, Միջագետք, Սուրիա, Պաղեստին եւլն: Իսկ այսօր՝ Ասիական Թուրքիա քաղաքականապէս բաժնուած է 22 կուսակալութեանց (Վիլայէթ) որք են:

Քասթէմունի և Տրապիզոն, Սեւ ծովու վրայ:

Խիւտավէնտիկեար, Պիղա

Այտըն՝ Արշիպեղագոսի վրայ:

Քօնիէ, Ատանա, Հալէպ, Պէյրութ, և Սուրիէ՝ Միջերկրականի վրայ:

Էրզրում և Տէրսիմ՝ Ռուսիոյ սահմանին վրայ:

Վան, Մուսուլ, Պաղտատ և Պասրա՝ Պարսից սահմանագլխին վրայ:

Էնկիւրի, Սըվազ, Մամուրէթ-իւլ-Ազիզ, Տիարպէքիր, Պիթլիս, Ներքին մասանց մէջ:

Օսմանեան Արշիպեղագոսի կղզիք կը կազմեն առանձին կուսակալութիւն մը Ճէզայիրի-Պահրը-Սէֆիտ անուամբ:

Իւրաքանչիւր կուսակալութիւն կը բաժնուի Նահանգներու (Լիվա) և նահանգներն ալ՝ Գաւառներու (Գազա):

Իզմիտի Միւթէսարըֆութեան գլխաւոր քաղաքներն են,

Իզմիտ կամ Նիկոմիդիա, համանուն ծոցին խորը, ունի նաւարան, երկրագործական բերքեր և բաւական բանուկ առեւտուր: Նիկոմիդիոյ դիմացն է Պարտիզակ կամ Պահճէճիք Հայաբնակ աւանը: Նոյնպէս Նիկոմիդիայէն իբր 6 ժամ հեռաւորութեամբ դէպ 'ի հիւս. արեւելք կը գտնուի Արմաշու Չարխափան Ս. Աստուածածնի վանքը և Կղերական վարժարանը: Ատափազար, Սաքարիայի մօտ, ընդարձակ դաշտի մը վրայ բազմահայ ու վաճառաշահ քաղաք մ՚է: Ունի երկրագործական առատ բերք, մետաքս ու արջառ: Կը գտնուին նաեւ Սափանճա, Կէյվէ, Օրթաքէօյ, Գարամուրսալ, Եալովա եւայլն:

Պիղայի փոքր նահանգին գլխաւոր քաղաքներն են:

Տարտանէլ կամ Չանաք-Գալէ (10,000), համանուն նեղուցին վրայ ամուր քաղաք է, — Պիղա, Քօճա-Չայ գետակին վրայ, բարեբեր երկրի մը մէջ։ Լափսաքի, Տարտանէլի նեղուցին վրայ, ունի մրգեղէն. — Բունար-Պաշը որ հին Տրովադա քաղաքին տեղն ըլլալ կը կարծուի։

ԽԻՒՏԱՎԷՆՏԻԿԵԱՐ կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են.

Պրուսա (60,000), Ոլիմպոս լերան ստորոտը հին ու զուարճալի քաղաք է։ Ունի հոյակապ մզկիթներ, ջերմուկներ և մետաքսեղէն կերպասներ։ Պրուսա այժմ երկաթուղիաւ միացած է Մուտանիա նաւահանգստին. — Քէօթահիա, Սաքարիա գետոյն Բուրսաք ճիւղին մօտ վաճառաշահ քաղաք մ'է։ Ունի հանքային ջուրեր և աֆիոնի բերք։

Աֆիոն-Գարա-Հիսար, հարուստ դաշտի մը մէջ կարեւոր քաղաք է։ Ունի աֆիոն. — Պիլէճիք, լեռնադաշտի մը վրայ, ունի երկրագործական բերքեր։

Երեւելի են նաեւ Իզնիկ. համանուն լճին վրայ, Մուհալըճ, Կիւլ-Փազար, Լէֆքէ, Պալըքէսիր, Էրտէք, Էտրէմիտ, Եէնի-Շէհիր, Սընտըրղը, Իյնէ-Կէօլ, Ուշաք, Կէտիզ եւայլն։

ԱՅՏԸՆի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Զմիւռնիա կամ Իզմիր, (186,000) համանուն ծոցին խորը, Ասիական Թուրքիոյ ամենէն վաճառաշահ ու ծաղկեալ նաւահանգիստն է։ Ունի գեղեցիկ քարափ. ներկի նիւթերու, չամիչի, թուզի, մորթի, ծխախոտի, աֆիոնի, սուսամի, արմտեաց, օղիի, կապերտի եւլն. ընդարձակ վաճառականութիւն։ Հայք այս քաղաքին մէջ ունին փառաւոր եկեղեցի, երկսեռ վարժարան ու հիւանդանոց։

Այտըն բարեբեր երկրի մը մէջ, ունի երկրագործական բերքեր ու ջերմուկներ. — Մանիսա, վաճառաշահ քաղաք է, ունի բամպակեղէն գեղեցիկ գործուածքներ. — Պէրղամա, Քայիքոս գետին մօտ, շուրջը կը գտնուին երեւելի շինուածոց աւերակներ. — Տէնիզլի, գեղեցիկ դրից մէջ սիրուն քաղաք մ'է։ Մօտերը կան շատ մը աւերակներ։ Երեւելի են նաեւ Նազիլի, ունի ընտիր թուզ. — Ալա-Շէհիր, Աք-Հիսար, Մուղլա, Մէնէմէն, Պայընտըր, Պուռնապատ, Սէօքէ, Քըրք-Աղաճ եւայլն։

ԳՈՆԵԱՅի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Գոնիա կամ Իկոնիոն (40,000), բարձր լեռնադաշտի մը վրայ

հին ու վաճառաշահ քաղաք է։ Ունի գորգ, կաշի և հնութենէ մնացած աւերակներ. — Աք-Շէհիր, համանուն լճին մօտ, հին ու վաճառաշահ քաղաք է։ Նիկտէ կամ Նիյտէ, Սելճուգեանց տիրապետութեան ժամանակ շատ ծաղկեալ էր. — Նէվ-Շէհիր, վաճառաշահ քաղաք է. — Քարաման, ունի հոյակապ մզկիթ։ — Երեւելի են նաեւ Էրէյլի, Սպարդա, Իւրկիւպ, Էլմալը, Քարաղաճ, Իպրատի, Աք-Սէրայ եւայլն։

ԱՏԱՆԱՅի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Ատանա (45,000), Ճիհան գետին վրայ բարեբեր դաշտի մը մէջ, ու երկաթուղիաւ կապուած է Մէրսինի. — Թարսուս կամ Տարսոն Փոքր Ասիոյ հնագոյն քաղաքներէն մին է. — Սիս, հոս է Հայոց մասնաւոր և համանուն կաթողիկոսութեան աթոռը. — Հաճըն, լեռնային դիրքով Հայաբնակ քաղաք մ'է։ Երեւելի են նաեւ Սելեֆքէ, Մսիս, Եարփուզ, Էրմէնէք, Այաս եւայլն։

ՀԱԼԷՊի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Հալէպ կամ Բէրիա (110,000), հին ու վաճառաշահ քաղաք է։ Երեւելի են մետաքսեայ ու բամպակեայ նուրբ ու ճաշակաւոր ձեռագործները. — Այնթապ կամ Անթէպ, լերան մը ստորոտն, բաւական ծաղկեալ քաղաք է. — Եդեսիա կամ Ուրֆա, Միջագետաց ամենէն երեւելի ու վաճառաշահ քաղաքաց մին է. — Մարաշ կամ Գերմանիկ, Ճիհան գետին մէկ ճիւղին վրայ ծաղկեալ քաղաք մ'է, Պիրէճիք կամ Բերդա Եփրատայ վրայ հարուստ և վաճառաշահ քաղաք է. Անթաքեա, Որոնդէս գետին վրայ, Միջերկրականի մօտ, երեւելի քաղաք է։ Ուլնիա կամ Զէյթուն լեռնային դիրքով Հայաբնակ գիւղաքաղաք մ'է։ Երեւելի են նաեւ Ալպիստան, Պէյլան, Իտլիպ, Նիզիպ, Քիլիս եւայլն։

ՍՈՒՐԻՈՅ կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Դամասկոս կամ Շամը-Շէրիֆ (150,000), հին, մեծագործ և վաճառաշահ քաղաք է՝ արգասաբեր երկրի մը մէջ։ Անուանի են մետաքսեայ ու ոսկեթել բանուածքները, գորգերը, այլ և այլ ձեռագործները, պտուղական մրգեղէնները եւայլն։

Համա, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք՝ Որոնդէսի վրայ։ Երեւելի են նաեւ Հէմս, և մանաւանդ Պա՛ալպէք, որու մօտ կան երեւելի աւերակներ։

ՊԷՅՐՈՒԹի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Պէյրութ (100,000), Միջերկրականի վրայ Ասիական Թուրքիոյ ամենէն երեւելի նաւահանգիստներէն մին է։ Ունի գեղեցիկ քարափ. Եւրոպական ոճով նորաշէն փողոցներ, գեղեցիկ շէնքեր և ընդարձակ վաճառականութիւն. — Լաթաքիա, Միջերկրականի վրայ գեղեցիկ քաղաք. — Երեւելի են նաեւ Տրիպոլիս, կամ Թարապլուսը Շամ, Սայտա և Սուր՝ հին Տիւրոս և Սիդոն Փիւնիկեան քաղաքաց տեղ, Աքքա, երեւելի բերդաքաղաք, Հայֆա, Նապլուս, Թիպերիատ, եւայլն։

ԵՐՈՒՍԱՂԷՄի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Երուսաղէմ (Էլ-Գուտս. 50,000), Հռչակաւոր ուխտատեղի համօրէն քրիստոնէից։ Հայք հոս ունին Ս. Յակոբայ երեւելի վանքը,



Ս. Յակոբայ ժառանգաւորաց Վարժարանը

տպարան, ժառանգաւորաց վարժարան և Պատրիարքական առանձին աթոռ։ Երուսաղիմայ մօտերը կը գտնուին Բեթղեհէմ, Երիքով, Էլ-Քալիլ, Նազարէթ, Կափառնայում, Բեթանիա՝ որք տէրունական վայրեր են քրիստոնէից համար։ Երուսաղէմ՝ այժմ երկաթուղեաւ միացած է Եաֆա նաւահանգստին։ Լիբանանու ինքնօրէն կուսակալութեան գլխաւոր քաղաքն է Տէյր-Էլ-Գամէր։

ՄՈՒՍՈՒԼի և ՊԱՂՏԱՏի կուսակալութեանց գլ. քաղաքներն են։

Մուսուլ (55,000), Տիգրիսի վրայ Նինուէի աւերակաց մօտ

վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք է։ Ունի բամպակեայ գեղեցիկ ձեռագործներ՝ Մուսուլին անուն. — Պաղտատ (100,000), Տիգրիսի վրայ հին ու վաճառաշահ քաղաք է։ Ունի գեղեցիկ ձեռագործներ և ընդարձակ առեւտուր. — Պասրա համանուն կուսակալութեան մէջ, Շաթ-էլ-Արապի վրայ վաճառաշահ և ընդարձակ նաւահանգիստ է։ Երեւելի են նաեւ Քուռնա՝ Եփրատի ու Տիգրիսի միացման տեղը. — Հիլլա, Եփրատայ վրայ, հին Բաբելոնի աւերակաց մօտ. — Մէշհէտ-Ալի և Մէշհէտ-Հիւսէյին, Պարսից ուխտատեղիներ են. — Սիւլէյմանիէ՝ Պարսից սահմանագլխին վրայ։

ՎԱՆԱՅ կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Վան (35,000), համանուն լճին արեւելեան կողմը, հին ու վաճառաշահ քաղաք է։ Մօտն է Վարագայ Լեռն ու Աւագ Ս. Նշանի համբաւաւոր վանքը։ Երեւելի են նաեւ Արճէշ, Ոստան, Շատախ եւայլն։

ՊԻԹԼԻՍի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Պիթլիս կամ Բաղէշ (25,000), Վանայ ծովուն արեւմտեան կողմը, Ասիական Թուրքիոյ վաճառաշահ քաղաքաց մին է։ Ունի գեղեցիկ դիրք և ընտիր ձեռագործներ. — Սղերդ, Տիգրիսի մէկ ճիւղին մօտ, ամուր ու վաճառաշահ քաղաք է, ունի գեղեցիկ ասուեղէն կերպասներ. — Մուշ (15,000), ընդարձակ ու զուարճալի դաշտի մը մէջ, ունի արմտիք, մրգեղէն ու տեղական գեղեցիկ ձեռագործներ։ Բնակիչք մեծ մասամբ Հայ են։ Անկէ իբր 6 ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Ս. Կարապետի հռչակաւոր վանքը՝ կառուցեալ 'ի Ս. Գրիգոր Լուսաւորչէ։ Երեւելի գիւղեր են Հացիկ կամ Հացեկաց, որ է հայրենիք Ս. Մեսրոպայ, Խորոնք, հայրենիք Մովսէսի Խորենացւոյ եւն։ Նոյնպէս երեւելի են Խիզան, Բաղէշու հարաւային արեւելեան կողմը, Ախլաթ, Պուլանըգ, Սասուն եւայլն։

ԽԱՐԲԵՐԴի կամ ՄԱՄՈՒՐԷԹ-ԻՒԼ-ԱԶԻԶի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Խարբերդ կամ Քարբութ (30,000), բարձր լերան մը ստորոտը շինուած ամուր քաղաք է։ Կը բաժնուի երկու մասերու, հին Թաղ, որ է լերան վրայ և միւսը նոր Թաղ, Մէզրէ, ուր կը բնակի կուսակալը։

Արաբկիր, Եփրատայ մէկ գետակցին վրայ վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք է. — Ակն կամ Էկին (15,000), Եփրա-

տայ վրայ բարեբեր ու զուարճալի երկրի մը մէջ, ունի տեղական գեղեցիկ ձեռագործներ։ Ակնայ մօտերը կը գտնուին Կամարակապ, Ապուշեխ, Արեգի Հայաբնակ գիւղերն, ինչպէս նաեւ Հռոմկլայ ուր կայ Ս. Ներսէս Շնորհալւոյ գերեզմանը. — Մալաթիա, Եփրատի մէկ ճիւղին վրայ, բարեբեր հովտի մը մէջ, ունի աֆիոն եւ մրգեղէն։ Երեւելիին նաեւ Չմշկածաք, ունի սիրուն պարտէզներ, Բերի, Խոզաթ, Կապան-Մատէն, Հէքիմ-Խան, Ատիաման, Մեծկերտ եւայլն Հայաբնակ գիւղերը։

ՏԻԱՐՊԷՔԻՐի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Տիարպէքիր (48,000), Հին եւ ընդարձակ քաղաք է Տիգրիսի վրայ։ Ունի հին պարիսպ եւ Ուլու Ճամի մզկիթը։ Երեւելի են հողէ եւ պղնձեղէն անօթներն ու գեղեցիկ ձեռագործները։

Մարտին, բարձր բլրոյ մը վրայ շինուած հին քաղաք է, ունի տեղական ձեռագործներ. — Արկանա կամ Արղանի, բարձր լերան մը վրայ. — Անոր մօտն է Բարձրահայեաց Ս. Աստուածածնի երեւելի վանքը. — Բալու, Արկանի հիւսիսային կողմը Եփրատայ վրայ, ունի շատ մը հնութիւններ։ Երեւելի են նաեւ Սեւերէկ, Մուֆարղին, Միտիաթ, ուր է աթոռն Ասորւոց Պատրիարքութեան. — Ճէզիրէ, բնակիչք մեծաւ մասամբ Քիւրտ են։

ՏԷՐՍԻՄ եւ ՀԷՔՔԵԱՐԻ լեռնային գաւառաց գլ. կեդրոններն են,

Չմշկածաք, Եփրատայ մօտ, ունի ընտիր կապերտ եւ գորգեր. — Խոզաթ, ունի արմտիք. — Ճուլամէրկ եւ Ամատիէ, բնակչաց մէջ կան շատ մը Քիւրտ։

ԷՐԶՐՈՒՄի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Էրզրում (50,000), հին, ընդարձակ եւ վաճառաշահ քաղաք է. — Բաբերդ կամ Պայպուրթ, Ճորոխի վրայ, լեռնային գեղեցիկ տեսարանով շէն քաղաք մ՚է. — Երզնկա կամ Էրզինկեան, Եփրատայ մօտ, Բանակատեղի Օսմ. զօրաց. — Քամախ կամ Քէմախ, Եփրատայ ձախ ափանց վրայ, ունի հին շէնքեր. — Պայազիտ, Պարսից սահմանագլխին վրայ։ Անոր մօտ է Ուչ-Քիլիսէ ըսուած երեւելի վանքը։ Երեւելի են նաեւ Քղի կամ Կեղի, Ալաշկերտ կամ Թօփրագ-Քալէ, Խնուս, Հասան-Քալէ եւայլն։

ՏՐԱՊԻԶՈՆի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

ՊԻԹԼԻՍի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Պիթլիս կամ Բաղէշ (25,000), Վանայ ծովուն արեւմտեան կողմը, Ասիական Թուրքիոյ վաճառաշահ քաղաքաց մին է։ Ունի գեղեցիկ դիրք եւ ընտիր ձեռագործներ. — Սղերդ, Տիգրիսի մէկ ճիւղին մօտ, ամուր ու վաճառաշահ քաղաք է, ունի գեղեցիկ ասուեղէն կերպասներ. — Մուշ (15,000), ընդարձակ ու զուարճալի դաշտի մը մէջ, ունի արմտիք, մրգեղէն ու տեղական գեղեցիկ ձեռագործներ։ Բնակիչք մեծ մասամբ Հայ են։ Անկից իբր 6 ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Ս. Կարապետի հռչակաւոր վանքը՝ կառուցեալ ՚ի Ս. Գրիգոր Լուսաւորչէ։ Երեւելի գիւղեր են Հացիկ կամ Հացեկաց, որ է հայրենիք Ս. Մեսրոպայ։ Խորոնք, հայրենիք Մովսէսի Խորենացւոյ եւն։ Նոյնպէս երեւելի են Խիզան, Բաղէշու հարաւային արեւելեան կողմը, Ախլաթ, Պուլանըգ, Սասուն եւայլն։

ԽԱՐԲԵՐԴի կամ ՄԱՄՈՒՐԷԹ-ԻՒԼ-ԱԶԻԶի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Խարբերթ կամ Քարբութ (30,000), բարձր լերան մը ստորոտը շինուած ամուր քաղաք է։ Կը բաժնուի երկու մասերու, հին թաղ որ է լերան վրայ եւ միւսը նոր թաղ, Մէզրէ, ուր կը բնակի կուսակալը։

Արաբկիր, Եփրատայ մէկ գետակին վրայ վաճառաշահ ու ճարտարարուեստ քաղաք է. — Ակն կամ Էկին (15,000), Եփրատայ վրայ բարեբեր ու զուարճալի երկրի մը մէջ, ունի տեղական գեղեցիկ ձեռագործներ։ Ակնայ մօտերը կը գտնուին Կամարակապ, Ապուշեխ, Արեգի Հայաբնակ գիւղերն, ինչպէս նաեւ Հռոմկլայ ուր կայ Ս. Ներսէս Շնորհալւոյ գերեզմանը. — Մալաթիա, Եփրատի մէկ ճիւղին վրայ, բարեբեր հովտի մը մէջ, ունի աֆիոն եւ մրգեղէն։ Երեւելի են նաեւ Չմշկածագ, ունի սիրուն պարտէզներ, Բերի, Խիզաթ, Կապան-Մատէն, Հէքիմ-Խան, Ատիաման, Մեծկերտ եւայլն Հայաբնակ գիւղեր են։

ՏԻԱՐՊԷՔԻՐի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Տիարպէքիր (48,000 բն.), Հին եւ ընդարձակ քաղաք է Տիգրիսի վրայ։ Ունի հին պարիսպ եւ Ուլու Ճամի մզկիթը։ Երեւելի են հողէ եւ պղնձեղէն անօթներն ու գեղեցիկ ձեռագործները։

Մարտին, բարձր բլրոյ մը վրայ շինուած հին քաղաք է, ունի տեղական ձեռագործներ. — Արկանա կամ Արղանի, բարձր լերան մը

վրայ.— Անոր մօտն է Բարձրահայեաց Ս. Աստուածածնի երեւելի վանքը. — Բալու, Արկանայի հիւսիսային կողմը Եփրատայ վրայ, ունի շատ մը հնութիւններ։ Երեւելի են նաեւ Սեւերեկ, Մուֆարղին, Մտիար, ուր է աթոռն Ասորւոց պատրիարքութեան. — Ճէզիրէ բնակիչք մեծաւ մասամբ Քիւրտ են։

ՏԷՐՍԻՄ և ՀԷՔՔԵԱՐԻ լեռնային գաւառաց գլ. կեդրոններն են։

Խոզաթ, ունի արմտիք. — Ճուլամերկ և Ամատիէ, բնակչաց մէջ կան շատ մը Քիւրտ։

Համբարձման լեռ.

ԷՐԶՐՈՒՄի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Էրզրում (50,000 բն.), հին, ընդարձակ եւ վաճառաշահ քաղաք է. — Բաբերդ կամ Մայպուրթ, Ճորոխի վրայ, լեռնային գեղեցիկ տեսարանով շէն քաղաք մ'է. — Երզնկա կամ Էրզինկեան, Եփրատայ մօտ, բանակատեղի Օսմ. զօրաց. — Կամախ կամ Քէմախ, Եփրատայ ձախ ափանց վրայ, ունի հին շէնքեր. — Բայազիտ, Պարսից սահմանագլխին վրայ։ Անոր մօտ է Խոջ-Քիլիսէ ըսուած երեւելի վանքը։ Երեւելի են նաեւ Քղի կամ Կեղի, Ալաշկերտ կամ Թօփրագ-Քալէ, Խնուս, Հասան-Քալէ եւայլն։

ՏՐԱՊԻԶՈՆի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Տրապիզոն (50,000), Սեւ ծովու վրայ, հին ու վաճառաշահ քաղաք և Ասիական Թուրքիոյ մեծագոյն նաւահանգիստներէն մին է։ Գլ. բերքերն են լուբիա, կաղին եւայլն։

Սամսոն, նոյնպէս երեւելի նաւահանգիստ, կ'արտածէ արմտիք, ծխախոտ, բուրդ եւն. — Սինոպ, բնական նաւահանգիստ և է Ասիական Թուրքիոյ ամենէն հիւսիսային քաղաքը։ Կ'արտածէ ընտիր ատաղձ. — Կիրասոն և Օրտու փոքր նաւահանգիստներ են ունին կաղին և արմտիք. — Կիւմիւշխանէ, մօտերը կան արծաթի հանք։ Երեւելի են նաեւ Րիզէ, փոքր նաւահանգիստ. — Պաֆրա, ունի ընտիր ծխախոտ. — Չարշամպա, Գէլքիթ եւայլն։

ԳԱՍԹԷՄՈՒՆԻի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են։

Գասթամոնու, (35,000), Կէօք-Ըրմագ գետակին վրայ, գեղեցիկ հովտի մը մէջ. ունի արջառի տուրեւառ; մօտերը կան պղնձի հանք։ — Ինէպօլու, փոքր նաւահանգիստ սոյն կուսակալութեան. — Զաֆրանպօլու, ունի քրքում (զաֆրան). — Պօլու, ունի հանքային ջուրեր և բաւական բանուկ վաճառականութիւն. — Չանղըրը, Ալիս գետին վրայ, ունի երկրագործական բերքեր և այծու մազ. — Էրէյլի, Պօլուի նաւահանգիստն է, մօտերը կան ածխահանք. — Երեւելի են նաեւ Իսքիլիպ, Թաշ-Քէօփրի, Պարթըն եւայլն։

ԷՆԿԻՒՐԻԻի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Էնկիւրի կամ Անգարա (40,000), բարձր լեռնադաշտի մը վրայ հին և ընդարձակ քաղաք է. — Անուանի է մետաքսանման և գանգուր այծու մազը, մօտերը կան շատ մը աւերակներ. — Կեսարիա կամ Գայսէրի (50,000), Էրճիաս լերան ստորոտը, հին ու վաճառաշահ քաղաք է, շատ համբաւաւոր է այս քաղաքին ապուխտը (Գայսէրի փասթըրմա-ն) անուամբ։ Կեսարիոյ մօտն է Ս. Կարապետի նշանաւոր վանքը. — Նոյնպէս Կեսարիոյ մօտերը կը գտնուին Թալաս, Ինճէ-Սու, Ֆէնէսէ եւայլն հայաշատ աւանները. — Եօզկաթ, բարեբեր երկրի մը մէջ, մօտերը կան կապարի հանք. — Քըր-Շէհիր, Ալիս գետին մօտ. — Սիվրի-Հիսար, բարձրադիր քաղաք մ'է. — Զօրում, բարեբեր երկրի մը մէջ վաճառաշահ քաղաք է. — Երեւելի են նաեւ Պէյ-Պազար, Նալլը-Խան, Մուճալըճ, Սունկուրլու, Մաճուր եւն։

ՍԸՎԱԶի կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են,

Սեբաստիա կամ Սըվազ (40,000), Մէյրէգում լերան ստորոտը

և Ալիս գետին մօտ հին ու անուանի քաղաք է. ունի մեղր, բուրդ և մանաւանդ առատ և ընտիր արմտիք, տեղական գեղեցիկ ձեռագործներ, ինչպէս գորգ, կաշի ևն։ Հոս ծնած է Մխիթար Աբբա, հիմնադիրն՝ համանուն միաբանութեան։

Եւդոկիա կամ Թոքատ, Իրիս գետին մօտ զուարճալի դիրքով քաղաք մ'է, ունի պղնձեղէն անօթներ և բազմակերպ գեղեցիկ կերպասներ. Եւդոկիոյ մօտ է Ոսկերբերանի հռչակաւոր վանքը. — Շապին-Գարա-Հիսար. բարեբեր դաշտի մը մէջ, մօտերը կան պղնձի և արծաթախառն կապարի հանքեր. — Ամասիա, վաճառաշահ քաղաք Իրիսի վրայ, ունի մետաքսի գործարաններ և հին շինուածոց աւերակներ։ Հոս ծնած է Ստրաբոն Յոյն Աշխարհագէտը. — Կիւրին. ճարտարարուեստ քաղաք, ունի ասուեղէն կերպասներ. — Տիվրիկ, Սըվազի արեւելեան կողմը, ունի արմտիք. — Մարզուան, բարեբեր դաշտի մը մէջ, գլխաւոր բերքն է աֆիոն և արմտիք։ Երեւելի են նաեւ Զիլէ, Նիկսար, Օսմանճըգ, Վէզիր-Քէօփրիւ եւայլն։

Գլխաւոր Նաւահանգիստք Ասիական Թուրքիոյ՝ իրենց պատկանած կուսակալութիւններով

Մարմարայի վրայ, Իզմիտի Մութէսարըֆութեան մէջ.
Նիկոմիդիա կամ Իզմիտ, համանուն ծոցին խորը.
Խիւտավէնտիկեար կուսակալութեան մէջ.
Մուտանիա, համանուն ծոցին խորը, նաւահանգիստ Պուրսայի,
Կէմլէյիկ, համանուն ծոցին խորը. Պանտըրմա, վաճառաշահ նաւահանգիստ Պալըքէսէրի։
Պիղայի կուսակալութեան մէջ,
Տարտանէլ կամ Չանաք-Գալէ, համանուն նեղուցին վրայ ամուր նաւահանգիստ։
Արշիպեղագոսի վրայ. — Այտընի կուսակալութեան մէջ,
Իզմիր կամ Զմիւռնիա, մեծ և ծաղկեալ նաւահանգիստ՝ համանուն ծոցին խորը, ընդարձակ վաճառականութիւն ունի Եւրոպիոյ հետ։
Չէշմէ, գեղեցիկ և բանուկ նաւահանգիստ Քիոս կղզիին դիմացը։ Երկրորդական նաւահանգիստներ են Սքալա-Նովա, կամ Քուշ-Ատասը, Ֆոչա, Պոտրում և Մաքրի։

Միջերկրականի վրայ՝ Գոնիայի կուսակալութեան մէջ,
Ատալիա, համանուն ծոցին խորը վաճառաշահ նաւահանգիստ. — Երկրորդական նաւահանգիստ է Ալայա։
Ատանայի կուսակալութեան մէջ,
Մէրսին, երկաթուղեաւ միացած է Թարսուս և Ատանա քաղաքաց։
Հալէպի կուսակալութեան մէջ,
Իսքէնտէրուն, համանուն ծոցին վրայ բանուկ նաւահանգիստ, բայց օդը վատառողջ է։
Սուրիոյ կուսակալութեան մէջ,
Լաթաքիէ, կ'արտածէ արմտիք, ծխախոտ և օճառ,
Թրիփոլի կամ Թարապլուս-էս-Շամ, ունի ձէթ, ծխախոտ, մետաքս, սպունգ, նարինջ, լեմոն եւայլն։
Պէյրութ, ընդարձակ և վաճառաշահ նաւահանգիստ. — ունի գեղեցիկ քարափ
Երուսաղէմի գլխաւոր նաւահանգիստն է Եաֆա որ առաջնոյն հետ կապուած է երկաթուղեաւ։ Երեւելի են Եաֆայի լեմոնի և նարինջի պարտէզները։
Սեւ ծովու վրայ, Տրապիզոնի կուսակալութեան մէջ,
Տրապիզոն, Ասիական Թուրքիոյ Սեւ ծովու ամենէն վաճառաշահ նաւահանգիստն է և ընդարձակ յարաբերութիւն ունի թէ սահմանակից երկրաց ու թէ Եւրոպիոյ հետ։
Կիրասոն, բանուկ նաւահանգիստ, ունի կաղին. — Սամսոն, երեւելի նաւահանգիստ է, ունի ընտիր ծխախոտ։ Օրտու, Րիզէ, երկրորդական նաւահանգիստներ են։
Գասթէմունիի կուսակալութեան մէջ,
Սինոպ, երեւելի նաւահանգիստ է, կ'արտածէ տտաղձ. — Ինէպօլու, կ'արտածէ մրգեղէն, տտաղձ և արմտիք. — Երեւելի են նաեւ Պարթըն և Էրէյլի։

Օսմանեան Արշիպեղագոս

Օսմանեան Արշիպեղագոսը կը կազմեն Միտիլլի, Քիոս կամ Սաքըզ-Ատասը, Ռոտոս կամ Հռոդոս, Սամոս կամ Սուսամ-Ատասը, Իմրոս, Լեմնոս, Թենէտոս կամ Պոզճա-Ատասը, Քոս կամ Սթանքէօյ, Թասօս, և այլ մի քանի կղզիներ որք լեռնային են ընդհան-

բալէս, բայց ունին բարեբեր հող և կ'արտադրեն արմտիք, գինի, թութ, նարինջ, լեմոն, չամիչ, ձիթապտուղ, մետաքս, օղի, սուսամ եւլն։ Այս Արշիպեղագոսը կը կազմէ առանձին մի կուսակալութիւն, իսկ Սամոս արտօնացեալ կուսակալութիւն է։ Կիպրոս լեռնային կղզի մ'է և զոր առժամապէս կը կառավարէ Անգլիա։ Ունի անուանի գինի և մրգեղէն։ Գլխաւոր քաղաքներն են Ֆամակօսդա, Լառնախա և Լեմեսօս։

Ընդհանուր տեղեկութիւն

Ասիական Թուրքիա ընդարձակ ու հարուստ երկիր մ'է, թէ հողագործութեան և թէ վաճառականութեան խիստ յարմար։ Ձեռագործ, ճարտարութիւն, առեւտուր և ընդհանուր քաղաքակրթութիւն հետզհետէ յառաջ երթալու վրայ են։ Կառուղիներ ու երկաթուղիներ սկսած են շինուիլ՝ որոց շնորհիւ հաղորդակցութիւնք պիտի դիւրանան հետզհետէ։

Ասիական Թուրքիոյ արտաքին վաճառականութեան գլխաւոր նիւթերն են՝ արմտիք, ծխախոտ, բամպակ, այծու մազ, բուրդ, մորթ, ձէթ, գինի, աֆիոն, թութ, չամիչ, ներկի նիւթեր, մրգեղէն, ձիթապտուղ, մետաքս, չգործուած մետաղներ, մետաքսեայ և բրդեղէն տեղական ճաշակաւ գեղեցիկ հիւսուածք եւայլն։

Ասիական Թուրքիոյ գլխաւոր բնակիչներն են Թուրք, Հայ (իբր 2,000,000), Արաբ, Քիւրտ, Ասորի, Յոյն, Լազ, Հրէայ, Թիւրքմէն, Չէրքէզ եւլն։ Այս ժողովուրդք կ'զբաղին ընդհանրապէս երկրագործութեամբ, խաշնարածութեամբ, տեղական արհեստներով և ներքին ու արտաքին վաճառականութեամբ։ Քրիստոնեայք զինուորական ծառայութենէ ազատ են, բայց փոխարէն կը վճարեն զինուորական տուրք։ Ասիական Թուրքիա ունի իբր 1,000 քիլմ. երկաթուղի։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ՝ որ կը կոչուի նաեւ Իրանի Թագաւորութիւն, կը տարածուի Ասիական Թուրքիոյ արեւելեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Կովկասիա, Կասպից ծով և Թուրքաստան. արեւելքէն՝ Աֆղանիստան և Պելուճիստան, հարաւէն՝ Պարսից ծոց, Հիւրմիւզի նեղուց և Օմանի ծոց. արեւմուտքէն՝ Թուրքիա։

Պարսկաստանի հիւսիսային և արեւմտեան կողմերն ընդհանրապէս լեռնային են ուր կ'երեւին Էլպրուս, Լարիստանի ու Ֆարսիստանի լերինք, իսկ արեւելեան և միջին մասերը դաշտային և տեղ տեղ ալ անապատային են։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Երկրին կլիմայն արեւելեան և հարաւային կողմերը սաստիկ տաք և վատառողջ, իսկ հիւսիսային և արեւմտեան գաւառները՝ բարեխառն, տեղ տեղ ալ հիւանդաբեր են։

Գլխաւոր բերքերն են արմտիք, բրինձ, չամիչ, փուշ, կանեփ, ծխախոտ (թէնպէքէ), բամպակ, մետաքս, ազնիւ պտուղներ, ներկի նիւթեր, բժշկական բոյսեր եւայլն։

Պարսկաստան ունի ձի, ջորի, ուղտ, այծ ու ոչխար որոց բուրդըն ազնիւ է։

Իսկ հանքաց մէջ կարեւորներն են արծաթ, ոսկի, պղինձ, քարիւղ և թանկագին քարեր՝ որոնք մեծաւ մասամբ չեն շահագործուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պարսկաստան ունի 1,650,000 քիլ. քառ. տարածութիւն և 7,000,000 բնակիչ։

ԹԷՀՐԱՆ (200,000 բն.) Պարսկաստանի Մայրաքաղաքն է Էլպրուս լերան ստորոտը՝ վատառողջ երկրի մը մէջ։ Նշանաւոր է Շահին պալատը։

Գլխաւոր Նաւահանգիստք

Պարսկաստան Կասպից ծովու վրայ ունի Պաչմրուշ և Րեշտ, իսկ Պարսկային ծոցին վրայ՝ Պուշիր և Պէնտէրապպասի նաւահանգիստները։

Ներքին Գլ. քաղաքներն են

Դաւրէժ կամ Թէպրիզ (180,000), Ուրմիոյ լճին հիւսիսային արեւելեան կողմը մեծ ու վաճառաշահ քաղաք է և ունի ընդարձակ առեւտուր՝ Եւրոպիոյ հետ։ Բնակչաց մէջ կան բազում Հայեր որք ունին եկեղեցի, դպրոց և առաջնորդարան։

Իսպահան, նախկին մայրաքաղաք Պարսկաստանի։ Երեւելի են բամպակեայ ու մետաքսեայ գեղեցիկ հիւսուածքները, զէնքերը և անօթեղէնները։ Իսպահանի մօտ է Նոր-Ջուղա՝ որու բնակիչք մեծաւ մասամբ Հայ են՝ Հին-Ջուղայէն գաղթած։

Շիրազ, երկրին արեւմտեան հարաւային կողմը, գեղեցիկ պարտէզներով և ընդարձակ այգեստաններով շրջապատեալ քաղաք մ'է։ Ունի պատուական ծիրան, դեղձ, գինի, [illegible] և վարդի իւղ։ Ուրմիա, համանուն լճին մօտ։ Հոս ծնած է Զրադաշտ մոգը։

Համատան, Մայրաքաղաք հին Մարաստանի, վաճառաշահ քաղաք է. ունի ձեռագործներ։

Երեւելի են նաեւ Մէշհէտ, Գազվին, Կրմանշահ եւայլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Պարսիկները կը վերաբերին Արեաց ցեղին ու են չարքաշ, գործունեայ և աշխատասէր։ Ուսման և քաղաքակրթութեան մէջ շատ ետ մնացած են, իսկ ձեռարուեստի և վաճառականութեան մէջ բաւական յաջողակ են։ Երեւելի են իրենց գորգերը, շալերը, պղնձէ անօթները, զէնքերը եւայլն։ Պարսկաստան կը վաճառէ թէնպէքի, բրինձ, չամիչ, վարդի իւղ, թանկագին քարեր, կաշի, բուրդ եւլն։

Բնակչաց մէջ կան Պարսիկներէ 'ի զատ՝ Հայ. Արաբ, Հրէայ, Թուրք և Քիւրտ։

Երկրին տիրող կրօնն է Մահմէտականութիւն։

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ՝ որ կը կոչուի նաեւ Թագաւորութիւն Քապուլի, փոքր տէրութիւն մ'է Պարսկաստանի արեւելեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Թուրքաստան. արեւելքէն՝ Հնդկաստան. հարաւէն՝ Պելուճիստան և արեւմուտքէն Պարսկաստան։

Երկրին հիւսիսային և արեւելեան կողմերը կը տարածուին Հինտու-Քուշ լերինք, մնացեալ մասանց մէջ կը գտնուին հովիտներ և տեղ տեղ ալ անապատներ։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Կլիմայն՝ հիւսիսային և արեւմտեան կողմերը ցուրտ, իսկ արեւելեան և հարաւային մասանց մէջ բարեխառն և տեղ տեղ ալ շատ տաք կ'ըլլան։

Գլխաւոր բերքերն են ցորեն. բրինձ, ծխախոտ, վուշ, բամպակ. շաքարեղէգ, թթենի, և պտղատու ծառեր։ Կարեւոր հանքերն են ոսկի, արծաթ, պղինձ և սնդիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Աֆղանիստան ունի 720,000 քիլ. քառ. տարածութիւն և 6,000,000ի չափ բնակիչ։

ՔԱՊՈՒԼ (60,000 բն.), Մայրաքաղաք Աֆղանիստանի, Ասիոյ հնագոյն քաղաքաց մին է, շրջապատեալ գեղեցիկ պարտէզներով, ունի հին պարիսպ և միջնաբերդ։

Հերատ, երկրին արեւմտեան հիւսիսային կողմը՝ վաճառաշահ ու ծաղկեալ քաղաք է։ Ունի զինուց, ընտիր գորգերու և վարդի իւղի գործարաններ։

Գանտահար, երկրին կեդրոնը՝ ամուր և վաճառաշահ քաղաք է։

Երեւելի են նաեւ Ճէլալապատ, Մայմանէ, և Քունտուզ։

Ընդհանուր տեղեկութիւն

Աֆղանիստան Ասիոյ երկրորդական երկիրներէն մին է և ունի էմիր մը՝ որու իշխանութիւնը սահմանափակեալ է։ Աֆղանք՝

պատերազմասէր ու չարքաշ մարդիկ են։ Փոքր մաս մը կ'զբաղի տեղական արհեստներով, իսկ մեծագոյն մասը թափառական և հովիւ է։ Կրօնն է Մահմէտականութիւն։ Ռուսք մանաւանդ և Անգլիացիք հետզհետէ այս երկրին ներսերը կը յառաջանան և արդէն մեծ ազդեցութիւն ունին։

ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ փոքր տէրութիւն մ'է՝ Աֆղանիստանի հարաւակողմը։ Սահմաններն են հիւսիսէն Աֆղանիստան, արեւելքէն՝ Հնդկաստան. հարաւէն՝ Օմանի ծոց և արեւմուտքէն՝ Պարսկաստան։

Երկրին հիւսիսային կողմերը լեռնային են. իսկ արեւմտեան և հարաւային մասանց մէջ կը տարածուին ընդարձակ անապատներ։

Բարեբեր հովտաց մէջ յառաջ կուգան արմտիք, բամպակ, լեղակ, շաքարեղէք, արմաւ, նուշ եւլն։ Ունի նոյնպէս՝ ոսկւոյ, արծաթի ու երկաթի հանքեր՝ երեսի վրայ մնացած։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պելուճիստան ունի 350,000 քիլ. քառ. տարածութիւն և 1,000,000 ի չափ բնակիչ։

ՔԷԼԱԹ. Մայրաքաղաք Պելուճիստանի, երկրին հիւսիսային կողմը, ամուր և վաճառաշահ քաղաք՝ ուր կը բնակի երկրին Խմիրը։

Կանտավա, Քէլաթի արեւելեան հարաւային կողմը գեղեցիկ քաղաք է։ Կարեւոր են նաեւ Պէլա և Քէտաճ։

Ընդհանուր տեղեկութիւն

Պելուճիստանցիք ընդհանրապէս կզբաղին խաշնարածութեամբ ու երկրագործութեամբ։ Քաղաքակրթութիւնը մուտ չէ գտած իրենց մէջ և Անգլիացիք մեծ ազդեցութիւն ունին այս երկրին այլ և այլ մասանց վրայ։ Երկրին կրօնն է Մահմէտականութիւն։

ԱՐԱԲԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՐԱԲԻԱ Ասիոյ ցամաքին հարաւային երեք մեծ թերակղզիներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Ասիական Թուրքիա. արեւելքէն՝ Պարսից ծոց, Հիւրմիւզի նեղուց և Օմանի ծոց. հարաւէն՝ Հնդկաց ովկէանոս. արեւմուտքէն՝ Պապ-Իւլ-Մանտէպի նեղուց, Կարմիր ծով և Սուէզի ջրանցք։

Անապատ

Արաբիա մեծաւ մասամբ անապատային երկիր մ'է, միայն արեւմտեան կողմը (Հիճազ ու Եէմէն գաւառները) բարեբեր ու բազմամարդ են և այս պատճառաւ՝ երկրին այն մասը կը կոչուի Երջանիկ Արաբիա։ Արեւմտեան մասին մէջ կ'երկարի լեռնագօտի մը՝ Էլ-Աչէր անուն։ Երկրին կլիմայն սաստիկ տաք է, քիչ անգամ անձրեւ կ'ուգայ և որոշեալ ժամանակ մը կը փչէ Սիմում կոչուած խորշակն՝ որ մահաբեր ազդեցութիւն ունի բուսոց և կենդանեաց համար։

Գլխաւոր բոյսերն են խնկեղէն, ընտիր խահուէ, շաքարեղէգ, արմաւ, խէժ, բամպակ, լեղակ, թուզ, եւլն։ Կենդանեաց մէջ անուանի են ուղտը, ջորին և մանաւանդ ձին՝ որ տևողերական համբաւ ունի իւր չքնաղ գեղեցկութեանն համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Արաբիա ունի 2,850,000 քիլոմէթր քառ. տարածութիւն և 7-10,000,000 բնակիչ։

Գլխաւոր Քաղաքք և Նաւահանգիստք

ՄԷՔՔԷ (45,000 բն.) Հիճազ գաւառին գլխաւոր քաղաքը, հայրենիք Իսլամաց Մարգարէին և նշանաւոր ուխտատեղի համօրէն Մահմէտականաց՝ ուր ամէն տարի հազարաւոր ուխտաւորներ կ'երթան Գուրպան Պայրամի առթիւ։

Մէտինէ, հոս է Մարգարէին գերեզմանը։ — Ճիտտէ, Կարմիր ծովու վրայ՝ Մէքքէի նաւահանգիստն է։

Ադէն, համանուն ծոցին վրայ՝ Արաբիոյ ամենէն բանուկ ու հարաւային նաւահանգիստն է և 1838 էն 'ի վեր կը վերաբերի Անգլիացւոց։

Եամպօ, Կարմիր ծովու վրայ։

Սանա'ա, զուարճալի և հարուստ քաղաք է Եմէնի գաւառին մէջ։

Մօքքա, Կարմիր ծովու վրայ երկրորդական նաւահանգիստ, անուանի է խահուէն։

Մասկաթ, Օմանի ծովուն վրայ գեղեցիկ և վաճառաշահ նաւահանգիստ է և ունի առանձին Սուլթան մը։

Երեւելի են նաև Թայիֆ և Հուտէյտահ։

Ընդհանուր տեղեկութիւն

Արաբիոյ բնակիչք՝ բաց 'ի Հիճազ ու Եէմէնէ, ընդհանրապէս յետադէմ ու կիսավայրենի վիճակի մէջ են։ Ոմանք կ'զբաղին հողագործութեամբ և կը կոչուին Ֆէլլահ, կամ ալ որ Թափառական կը շրջին իրենց հօտերով և կը կոչուին Պէտէվի։ Արաբիոյ կենդանեաց մէջ շատ երեւելի է ուղտը՝ որ կատարեալ համբերութեամբ մղոններով տեղ կը ճամբորդէ՝ դիմանալով հոգնութեան, ծարաւի և աղաւոր փոթորիկներու։ Նշանաւոր է նաև ձին՝ իւր աքանչելի գեղեցկութեան կողմանէ։ Արաբիոյ մէջ կը գտնուին նաև շատ Հրէաներ՝ Որդիք Ռեքաբեայ անուն։

ՃԱՊՈՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՃԱՊՈՆ մեծ ու փոքր կղզիներէ բաղկացեալ առանձին տէրութիւն մ'է Չինու արեւելեան կողմը, Խաղաղական ովկէանոսի մէջ։

Գլխաւոր կղզիներն են Նիփօն, Սի-Քօք, Քիու-Սիու և Եօզօ։ Այս չորս մեծ կղզիներէն 'ի զատ, կան նաև Քուրիլեան և Լիու-Քիու փոքր արշիպեղագոսները։

Ճապոնական կղզիք ընդհանրապէս լեռնոտ և հրաբղխային են։ Հիւսիսային եղերաց մէջ ցուրտ, միջին մասը բարեխառն, իսկ հարաւակողմը տաք կ'ընէ։

Երկրին հողը խիստ լաւ մշակուած է և կ'արտադրէ բրինձ, ցորեն, հաճար, վարսակ, բանջարեղէն, թէյ, պտղատու ծառեր են։

Ճապոն ունի ոսկւոյ, արծաթի, սնդիկի, պղնձի, անագի, երկաթի, հանքածխոյ և ծծումբի հարուստ հանքեր զորս կը շահագործէ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ճապոնեան կղզիք ունին 380,000 քիլ. քառ. տարածութիւն և 40,000,000 բնակիչ։

ԵՏՕ կամ **ԴՕՔԻՕ** (300,000 բն.), Մայրաքաղաք Ճապոնի, Նիփօնի արեւելեան կողմը՝ Եւրոպական ճաշակաւ զարդարուած մեծ ու վաճառաշահ քաղաք է։ Ունի գեղեցիկ ձեռագործներ, ծովային վարժարան, պալատներ ու հոյակապ մեհեաններ։

Գլխաւոր քաղաքք Նիփօն կղզւոյն

Եօքօ-Համա, Ետօի ծոցին վրայ ազատ նաւահանգիստ, ունի ցորենի, մետաքսի և թէյի մեծ վաճառականութիւն։

Օսաքա, (450,000), նոյնպէս ազատ նաւահանգիստ է, մօտերը կան ածխահանք։

Միաքօ կամ Քիօդօ, կղզւոյն հարաւային արեւմտեան կողմը՝

կեդրոն ուսմանց, գիտութեանց և գեղեցիկ ձեռագործներու։ Այս էր Ճաբոնի նախկին մայրաքաղաքը։

Սակայ, ունի յախճապակւոյ գործարաններ։

Նակասաքի, Քիու-Սիու կղզւոյն մէջ՝ ազատ և բանուկ նաւահանգիստ է։

Քակօսիմա, նոյն կղզւոյն հարաւակողմը։

Հաքօդատ կամ Քաքօտադէ, Եզօ կղզւոյն գլխաւոր քաղաքն է։

Ընդհանուր տեղեկութիւն

Ճաբոն՝ թէև Ասիոյ ամենէն արևելեան դին, Խաղաղական ովկէանոսի մէջ փոքր երկիր մ'է, սակայն ամենէն քաղաքակրթեալը կը հանդիսանայ իր արուեստներով, գիտութեամբ, ձեռագործներով, գեղարուեստներով, հաղորդակցութեան միջոցներով և վաճառականութեամբ։ Ուշիմ Ճաբոնցիք՝ վերջի ժամանակներս շատ յառաջ գացին լեզուագիտութեան, նաւային արուեստի և ճարտարութեանց մէջ։ Իրենց արտաքին վաճառականութեան գլխաւոր նիւթերն են թէյ, յախճապակի, սատափէ զարդեր, ընտիր մետաքսեղէնք, շերամի հունտ, բրինձ, աղած ձուկ ևլն։ Ճաբոնցիք Մոնկոլեան ցեղին կը վերաբերին ու կռապաշտ են, կը հետևին Պուտտայի աղանդին։ Կառավարութեան ձևն է Սահմանադրական Միապետութիւն։ Կայսրը կը կոչուի Միքատօ՝ որ ունի թէ կրօնական և թէ քաղաքական իշխանութիւն։ Ճաբոն ունի 1,000 քիլ. երկաթուղի։

ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆ՝ Ասիոյ հարաւակողմը կը ձևացնէ ընդարձակ ցամաքակղզի մը՝ որու սահմաններն են հիւսիսէն՝ Հիմալայա լերինք. արևելքէն՝ Պիրմանիա և Պէնկալայի ծոց. հարաւէն՝ Հնդկաց ովկէանոս. արևմուտքէն՝ Օմանի ծոց, Պէլուճիստան և Աֆղանիստան։

Կղզիք

Հնդկաստանի կը պատկանին Սէյլան (2,550,000 բն.) հարաւակողմը մեծ և հարուստ կղզի։ Մայրաքաղաքն է Քոլոմպօ։ — Լաքետիվեան կղզիք՝ արևմտեան կողմը՝ որոնք բուստէ ձևացած մանր կղզիներ են. — Մալտիվեան կղզիք, հարաւային արևմտեան կողմը, 12,000 կղզեակներէ կազմուած փոքր արշիպեղագոս մ'է։

Հնդկաստանի հիւսիսային սահմանին վրայ կիսաշրջանակի ձևով կը կանգնի Հիմալայա հսկայ գօտին որ կը պարունակէ աշխարհիս բարձրագոյն գագաթները, նոյնպէս հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարին երկու բազուկներ՝ Արևելեան Կաղ և Արևմտեան Կաղ անունով։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Հնդկաստան ունի այլազան կլիմաներ. — Հիմալայա լերանց ստորոտը բաւական ցուրտ, միջին մասը բարեխառն, հարաւակողմը սաստիկ տաք, իսկ ծովեզերքները շատ տեղ վտառողջ են, այնպէս որ ժանտախտ ու այլ մահաբեր հիւանդութիւնք գրեթէ անպակաս են։ Հնդկաստան ունի երկու որոշ եղանակ՝ չոր և անձրևային։

Երկրին հողը շատ արգասաւոր է և կ'արտադրէ առատ ու այլազան բոյսեր, ինչպէս արմտիք, եգիպտացորեն, բրինձ. բամպակ, լեղակ, նարինջ, լուշ, կանեփ, համեմունք, ծխախոտ, շաքարեղէգ, պտղատու ծառեր, քափուր, խահուէ. բժշկական բոյսեր, աֆիօն, պանան, պամպու եղէգ, չինութեան ազնիւ փայտ, ինկեղէն ևլն։

Հնդկաստան շատ հարուստ է նաև հանքի մասին։ Ունի ոսկի, երկաթ, ադամանդ, պղպատ, արծաթ, կապար, զինկ, պղինձ, հանքածուխ, անագ ևայլն։

Հնդկաստանի արևմտեան ծովեզրին և մօտակայ կղզեաց շուրջը առատ մարգարիտ կ'որսան։

Հնդկաստան ունի ընտանի և վայրի բազում կենդանիներ. ինչպէս՝ եզ, ջորի, ուղտ, ձի, էշ, ոչխար, այծ, մանաւանդ փիղը զոր ընտանեցուցած են և իրենց մեծ ծառայութիւններ կը մատուցանէ։ Կան նաև գեղեցիկ թռչուններ, հնդկահաւ, թութակ ևայլն։ Ասոնցմէ 'ի զատ կը գտնուին բազմաթիւ վայրի գազաններ. ինչպէս, ռնգեղջիւր, առիւծ, վագր, օձ, կոկորդիլոս, գիշատիչ թռչուններ ևայլն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հնդկաստան ունի 3,800,000 *քիլ. քառ. տարածութիւն և* 285,000,000 *բնակիչ։*

Հնդկաստան քաղաքականապէս հետևեալ կերպիւ բաժնուած է,

1°. Անգլիական Հնդկաստան,

2°. Հարկատու *կամ* Անգլիացւոց դաշնակից Հնդիկք,

3°. Անկախ Հնդիկք,

4°. Ռուսական *և* Փորթուկէզեան ստացուածք,

ԿԱԼԿԱԹԱ (800,000), *Մայրաքաղաք Անգլիական Հնդկաստանի Գանգէսի մէկ ճիւղին վրայ. ծովէն* 160 *քիլ. հեռաւորութեամբ մեծ ու վաճառաշահ քաղաք և առևտրական առաջին կարգի նաւահանգիստ մ'է։ Ընդարձակ և կարևոր յարաբերութիւն ունի Եւրոպիոյ, Ասիոյ ու Ովկէանիոյ հետ։ Հոս կան երևելի Հայ վաճառականներ որք ունին եկեղեցի ու ճեմարան։*

Նաւահանգիստք Անգլիական Հնդկաստանի

Քարաչի, *Ինդոսի բերնին մօտ՝ ծաղկեալ նաւահանգիստ է։*

Ահմէտապատ, *Կիւզարաթ թերակղզւոյն հիւսիսային կողմը․*

Սիւրաթ, » » *հարաւային* »

ունի մուսլին և այլ ձեռագործներ։

Պոմպայ (650,000), *համանուն փոքր կղզւոյն վրայ բազմամարդ ու ծաղկեալ նաւահանգիստ՝ որ մեծ յարաբերութիւն ունի Եւրոպիոյ հետ․*

Քալիքուդ, 1498 *ին՝ առաջին անգամ հոս ոտք կոխեց Վասքօ-Տէ-Կամա Փորթուկէզ անուանի նաւապետը․*

Քոչին, *հին ատեն այս էր Հոլանտական Հնդկաստանի գլխաւոր քաղաքը։*

Պէնկալայի ծոցին վրայ

Մատրաս (400,000 *բն.*), *Արևելեան Հնդկաստանի ամենէն նշանաւոր ու վաճառաշահ նաւահանգիստն է։*

Մասուլիփաթամ, *համբաւաւոր է իւր բազմակերպ ընտիր ձեռագործներով։*

Երևելի են նաև Վիշակափաթամ և Պիկակօշէ։

Ներքին գլխաւոր քաղաքներ

Պէնարէս (200,000), *Գանգէսի վրայ մեծ վաճառատեղի աղամանդի, ոսկեղէն զարդուց և է միանգամայն կեդրոն գիտութեանց։*

Ալլահապատ (150,000), *Ջիմնա գետին վրայ ամուր քաղաք և Հնդկաց ուխտատեղի է։*

Լահօռ (100,000), *Նախկին մայրաքաղաք Մօնկոլ իշխանաց, անուանի է շալը։*



Ակրայի մէջ Շահ Ջիհանի շիրիմը (Թաճ-Մահալ)

Բաղնա, *Գանգէսի վրայ, ունի աֆիօնի և մետաքսեղէնաց մեծ առևտուր։*

Տէլհի (150,000), *ճարտարարուեստ և վաճառաշահ քաղաք Ջիմնայի վրայ։*

Ակրա, *հոս է Շահ-Ջիհանի գերեզմանը։ Երևելի են նաև Լաքնօ, Նակբուր, Մուլթան, Բէշավէր ևայլն։*

ՇԱՐԿԱՏՈՒ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Գլխաւոր Քաղաքներ

Քաշմիր, Ճէլամ գետին վրայ, իւր զուարճալի դիրքովը, ձեռագործներովը ու ճարտարութեամբն շատ երեւելի է։ Անուանի են գորգը, շալը, վարդի իւղը եւայլն։

Հայտէր-Ապատ, Քիստնա գետին մէկ ճիւղին վրայ, մայրաքաղաք Նիզամի։

Երեւելի են նաեւ Պանկալոր, Աւրընկապատ, Իսլամապատ, Պարօտ եւայլն։

ԱԶԱՏ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հիմալայա լերանց ստորոտը փոքր թագաւորութիւն մ'է Նեփալ, ունի 2,500,000 բնակիչ։ Մայրաքաղաքն է Քաթմանտու։

Պութան, նոյնպէս փոքր թագաւորութիւն մ'է Նէփալի արեւելեան կողմը 1 միլիօն բնակչօք։ Մայրաքաղաքն է Փունախա։

ՖՌԱՆՍԱԿԱՆ ԵՒ ՓՈՐԹՈԿԷԶԵԱՆ ՍՏԱՑՈՒԱԾՔ

Ֆռանսա 'ի Հնդկաստան ունի Չանտէրնակօր, Եանաօ, Փոնտիշէրի և Քարիքալ չէն քաղաքները՝ Պէնկալայի ծոցին վրայ։ Մահէ՝ Մալապարի ծովեզրին վրայ։ Ֆռանսական Հնդկաստանի գլխաւոր կեդրոնն է Փոնտիշէրի։

Փորթոկալ 'ի Հնդկաստան Օմանի ծոցին վրայ ունի Տիու, Տաման և Կօա քաղաքները։

Ընդհանուր տեղեկութիւն

Հնդկաստան՝ Ասիոյ ընդարձակ երկիրներէն մին ու երեւելի է իւր բուսական և հանքային մեծ հարստութեամբ։ Անգլիացւոց գերիշխան տիրապետութեան ներքեւ մտնելէն 'ի վեր՝ այս երկիրն բռկած է աւելի յառաջադիմել արուեստից, վաճառականութեան և քաղաքակրթութեան մէջ։ Հնդիկք մեծաւ մասամբ կը պատկանին Արիական ցեղին և ընդհանրապէս կռապաշտ են։ Եւրոպացիներէն 'ի զատ՝ կայ նաեւ մաս մը տեղացի քրիստոնեայ և 17 միլիոնի չափ Մահմէտական։

Երկրին մէջ բաց 'ի Հնդիկներէ՝ կը գտնուին նաեւ 1 միլիոնէ աւելի Եւրոպացի, նոյնպէս Արաբ, Պարսիկ, Թաթար, Հայ և Հրեայ։

Նշանաւոր են Հնդկաց մետաքսեղէնները, գորգերը, շալերը, բրդեղէնները, ոսկիէ ու փղոսկրէ զարդեղէնները, անօթները են։

Հնդկաստան կը կառավարուի Անգլիացի Փոխարքայով մը։

Հնդկաստան ունի 25,000 քիլմ. երկաթուղի։

ՉԻՆ

ԿԱՄ

ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՉԻՆԱՍՏԱՆ կը գրաւէ Ասիոյ միջին և արեւելեան մասն և է աշխարհիս ամենէն բազմամարդ երկիրն։ Սահմաններն են՝ հիւսիսէն՝ Սիպերիա, արեւելքէն՝ Խաղաղական ովկէանոս, հարաւէն՝ Չինաց ծով, Հնդկա-Չին և Հնդկաստան. արեւմուտքէն՝ Թուրքաստան.

Այս ընդարձակ աշխարհին արեւմտեան, հիւսիսային և հարաւային կողմերը կը տարածուին երկար ու բարձրաբերձ լերինք որոնք ծնունդ կուտան խոր ու երկար գետերու։ Հիւսիսային և արեւմտեան կողմերը կը տարածուին ընդարձակածաւալ լեռնադաշտներ որոնք ծանօթ են Թիպէթի կամ Ասիոյ մեծագոյն լեռնադաշտ անուամբ։

Կլիմայ եւ բուսաբերութիւն

Չինաստան իւր երկրային ընդարձակութեան պատճառաւ՝ ամէն աստիճանի կլիմայ, ամէն տեսակ հող և ամէն կլիմայի յատուկ բուսաբերութիւն ունի։ Հիւսիսային կողմերը՝ Սիպերիոյ սահմանին վրայ ցուրտ, միջին մասերը բարեխառն, իսկ հարաւակողմը՝ համեմատաբար աւելի տաք է։

Բուն Չինաստանի մէջ շատ ծաղկած է երկրագործութիւնը, այս

պատճառաւ առատօրէն յառաջ կ'ուգայ թէյ, բրինձ, եգիպտացորեն, բամպակ, լեղակ, քափուր, պամպու եղէգ, իւղալից հունտեր, համեմունք, պտղատու ծառեր, շինութեան ընտիր փայտի անտառներ, մանաւանդ թթենի՝ որ շերամի համար մեծ կարեւորութիւն ունի։ Երկրին մէջ կը գտնուին ձի, ջորի, ուղտ, ոչխար և բազմաթիւ թռչուններ։ Ծովեզերեայ բնակիչք կզբաղին ձկնորսութեամբ։

Չինաստան ունի երկաթի, պղնձի, զինկի, անագի, կապարի, ոսկւոյ, արծաթի, ծծումբի, քարիւղի և թանկագին քարերու հարուստ հանքեր որոնք Կայսեր սեփականութիւնն են։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Չինաստան ունի 11,500,000 քիլ. քառ. տարածութիւն և 380,000,000 բնակիչ։

Չինաստան կը բաժնուի 6 գլխաւոր մասերու. Բուն Չին, Մանչուրիա, Քորէա, Մոնկոլիա, Արեւելեան Թուրքաստան և Թիպէթ:

ՓԷ-ՔԻՆ (1,500,000 բն.), Կայսրութեան Մայրաքաղաքն է Բէյ-Հօ գետին վրայ, կը բաժնուի երկու մասերու, Թաթարաց կամ Ներքին քաղաք, Արտաքին կամ Չինական քաղաք: Թէեւ այս քաղաքն արտաքուստ քեղեցիկ կ'երեւի, սակայն ներքին մասերը աղտոտ և անճաշակ են։

Գլխաւոր Նաւահանգիստք

Թիէն-Ցին, համանուն գետին վրայ վաճառաշահ քաղաք է և Փէքինի նաւահանգիստը։

Հոնկ-Քոնկ, Քանթոնի ծոցին մէջ փոքր կղզւոյ մը վրայ խիստ վաճառաշահ նաւահանգիստ է։ Այս քաղաքը կը վերաբերի Անգլիացւոց և ընդարձակ յարաբերութիւն ունի Եւրոպայի և Ամերիկայի հետ։

Քանդոն, Չինաց ծովէն ձեւացած համանուն ծոցին վրայ մեծ և վաճառաշահ նաւահանգիստ՝ զոր Անգլիացիք և Ֆռանսացիք 1858 ին պատերազմաւ առին։

Շանկ-Հայ, Ասիոյ ամենէն բանուկ նաւահանգիստներէն մին է։

Նինկ-Բօ, Շանկ-Հայի հարաւը։ Երեւելի են նաեւ Ֆու-Չէու-Ֆու, Հիամէն, Մաքօ եւայլն

Ներքին Գլ. քաղաքներն են

Նանքին (500,000), բուն Չինու մէջ՝ Եան-Ձու-Քեանկ գետին վրայ հին ու ճարտարարուեստ քաղաք է։ Երեւելի են նաեւ Թինկ-Թու, Սիանկ-Թան եւայլն։

Ուրկա, Մոնկոլիոյ մէջ՝ ուր կը բնակի Պուտտայականաց Քրմապետը։

Եարքանդ և Քաշկար, վաճառաշահ քաղաքներ են Չինական Թուրքաստանի մէջ։

ՔՈՐԷԱ

Քորէա փոքր թերակղզի մ'է Չինու հիւսիսային արեւելեան կողմը և իբր 10,000,000 բնակչօք անկախ թագաւորութիւն մ'է։ Մայրաքաղաքն է Սէուլ կամ Քիէնկ։

Թիպէթի գլխաւոր քաղաքներն են Լասսա որ մեծ ուխտատեղի է, Ժիկակունկաս, մեծագոյն քաղաքն է Թիպէթի։

Կղզիք

Չինու կը վերաբերին Հայնան և Ֆորմոզա մեծ կղզիները, իսկ Մաքաօ փոքր կղզին Փորթուկալի. և Հոնկ-Քոնկ՝ Անգլիոյ։

Ընդհանուր տեղեկութիւն

Հարուստ և ընդարձակ երկիր մ'է Չինաստան որոյ բնակիչք կը վերաբերի Մոնկոլեան ցեղին և նշանաւոր են իբրեւ լուրջ, չարքաշ, համբերատար քիչ մ'ալ նենգամիտ մարդիկ։ Չինացիք Քրիստոսէ դարեր յառաջ հնարած են կողմնացոյցը, կարկինը, վառօդը, թուղթը և տպագրութեան արուեստը։ Նշանաւոր են իրենց յախճապակիները, մելանը, թէյը, մետաքսեղէնները, գորգերը, չուխան եւայլն։

Չինացիք կռապաշտ են և կը հետեւին ընդհանրապէս Պուտտայականութեան։ Կառավարութեան ձեւն է բացարձակ Միապետութիւն։ Կայսրը կը կոչուի Որդի Երկնից (Թիէն-Ձի) և իշխանք՝ Մանտարին։

ՀՆԴԿԱ–ՉԻՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հնդկա-Չին Ասիոյ հարաւային երեք մեծ ցամաքակղզիներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Չինաստան. արեւելքէն՝ Չինաց ծով. հարաւէն՝ Մալաքքայի նեղուց. արեւմուտքէն՝ Պէնկալայի ծոց և Հնդկաստան։

Ընդհանրապէս լեռնային և հրաբղխային երկիր մ՚է Հնդկա-Չին՝ որոյ հարաւակողմը կ՚երկարի Մալաքքա թերակղզին։ Արեւելեան կողմը կը տեսնուի Թոնքինի, հարաւը՝ Սիամի, իսկ արեւմտեան կողմը Մարթապանի ծոցը։ Երկրին հիւսիսէն ՚ի հարաւ կը հոսին խոր ու երկար գետեր։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Հնդկա-Չինու կլիմայն՝ լեռնային գաւառաց մէջ ցուրտ, հովտաց մէջ տաք, իսկ ճահճային ու ցած վայրերն ալ խոնաւ ու ջերմոտ են։

Երկրին հողը ընդհանրապէս արգասաբեր ու պարարտ է, մանաւանդ գետոց շրջակայ հովիտներն։ Գլխաւոր բոյսերն են բրինձ, ցորեն, եգիպտացորեն, խահուէ, շաքարեղէգ, համեմունք, դեղօրայք, պանան, ծխախոտ, լեղակ, չինութեան փայտ, քափուր եւն։ Ունի նոյնպէս ոսկւոյ, արծաթի, պղնձի, անագի, զինկի, հանքածխոյ և թանկագին քարերու հարուստ հանքեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հնդկա-Չին ունի 1,800,000 քիլ. քառ. տարածութիւն և 40,000,000 բնակիչ։

Բաժանմունք և գլխաւոր Քաղաքք

Հնդկա-Չին կը բաժնուի 8 մասերու որք են՝ Կայսրութիւն Աննամի, Ֆրանսական Քոչինչին, Թագաւորութիւն Քամպոճի,

Մալաքքա, Թոնքին, Թագաւորութիւն Սիամի, Կայսրութիւն Պիրմանիոյ և Անգլիական Հնդկա-Չին։

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՄԻ

Աննամ կը գրաւէ Հնդկա-Չինու արեւելեան մասն և ունի 7,000,000 բնակիչ։ Կը գտնուի Ֆրանսայի գերիշխանութեան ներքեւ։

Մայրաքաղաքն է ՀՈՒԷ, ծովէն 25 քիլմ. հեռի՝ ամուր և վաճառաշահ քաղաք է։

Երեւելի են նաեւ Թուրան և Ֆայֆ-Ֆօ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՈՉԻՆՉԻՆ

Այն կարեւոր և հարուստ գաւառը՝ որոյ տէր են Ֆրանսացիք 1867 էն ՚ի վեր, կը գտնուի Սիամի հարաւակողմը և ունի 1,500,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքն է Սայկօն (100,000 բն.), Մէ-Քօնկ գետին բերնին մօտ, խիստ վաճառաշահ նաւահանգիստ մ՚է և գլխաւոր կայարան՝ Եւրոպայէն Ծայրագոյն Արեւելք երթեւեկող սուրհանդակ շոգենաւներու։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՔԱՄՊՈՃԻ

Գամպոճի թագաւորութիւնը կը գտնուի Սիամի և Ստորին Քոչինչինի միջեւ և է Ֆրանսայի պաշտպանութեան տակ։

Ունի 1,000,000 բնակիչ,

Մայրաքաղաքն է Բնօմ-Բէնկ կամ Նամ-Վան։

ՄԱԼԱՔՔԱ

Մալաքքա թերակղզւոյն հարաւակողմը կը գտնուին մի քանի ինքնօրէն փոքր իշխանութիւններ որոց բնակիչք սեւամորթ, վայրենի ու լեռնաբնակ ցեղեր են։ Գլխաւոր բնակավայրերն են Սա-ղանկօր և Ճոհօր։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԻԱՄԻ

Այն երկիրը կը տարածուի ցամաքակղզւոյն կեդրոնական մասին մէջ։ Ունի հարուստ հանքեր և առատ բուսաբերութիւն։ Բնակչաց թիւն է 6,000,000։

Մայրաքաղաքն է Պանքօք (500,000 բն.), Մէնամ գետին բերնին մօտ՝ վաճառաշահ և բանուկ նաւահանգիստ է։ Կ՚արտածէ բրինձ, համեմունք, շինութեան փայտ, շաքարեղէգ եւայլն։

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ՊԻՐՄԱՆԻՈՅ

Հնդկա-Չինու ամենէն հիւսիսային և ամենէն հարուստ երկիրներէն մին է Պիրմանիա։ Ունի 4,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Մանտալայ (100,000 բն.), Իրաւատի գետին մօտ՝ շէն ու ծաղկեալ քաղաք է, հոս կը բնակի Անգլիացի կուսակալը։ Երեւելի են նաեւ Ավա և Ամարափուրա։

ԹՈՆՔԻՆ

Հնդկա-Չինու հիւսիսային արեւելեան կողմը՝ համանուն ծոցին վրայ փոքր գաւառ մ՚է Թոնքին՝ ուր վերջին տարիներս Ֆռանսացիք տէր եղած են։ Ունի 12,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքն է Հանօի՝ Սօնկ-Քօ գետին վրայ ընդարձակ և վաճառաշահ քաղաք։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՆԴԿԱ-ՉԻՆ

Անգլիա Հնդկա-Չինու մէջ ունի Պիրմանիոյ և Մալաքքայի մէկ մէկ մասերը, նաեւ Անտաման, Նիքոպար և Սինկափոր կղզիները։

Գլխաւոր քաղաքներն են Ռանկուն (110,000 բն.), Մայրաքաղաք՝ Անգլիական Պիրմանիոյ և նշանաւոր նաւահանգիստ Իրաւատիի մէկ ճիւղին վրայ։ Փէկու, նոյնպէս Իրաւատիի բերնին մօտ՝ որ է նախկին մայրաքաղաք։ Երեւելի են նաեւ Բրօմ, Տաղունգի, Բէսայիմ եւայլն,

Ընդհանուր տեղեկութիւն

Հնդկա-Չին՝ Ասիոյ հարաւային արեւելեան կողմը՝ աշխարհագրական խիստ նպաստաւոր դիրքով օժտուած գեղեցիկ և հարուստ ցամաքակղզի մ՚է՝ մեծաւ մասամբ Եւրոպացւոց գերիշխանութեան ներքեւ։ Ունի բուսական և հանքային մեծ հարստութիւնք որք կը շահագործուին։ Տեղացիք տակաւին ըստ մեծի մասին կիսավայրենի վիճակի մէջ են։ Միայն Սիամցիք, Քոչինչինցիք և Քամպոճցիք քիչ շատ տրամադիր են քաղաքակրթուելու։

Երկրին կրօնն է Պուտտայականութիւն։

ԱՍԻՈՅ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1.

Ասիա՝ Արեւելեան կիսագունտի ո՞ր մասը կը գրաւէ, ի՞նչ գիտես իր մեծութեանը վրայ. — Ո՞րոնք են սահմանները. — Քանի՞ ովկէանոսներ կը տեսնէ եւ ո՞ր ծովերը ձեւացած են անոնցմէ. — Ասիա Ամերիկայէ ո՞ր նեղուցով բաժնուած է, ո՞ր նեղուցներով Ափրիկէ. ո՞րոնցմով Եւրոպայէ. — Խաղաղական եւ Հնդկաց ովկէանոսներէ ո՞ր մեծ ծոցերը ձեւացած են. — Միջերկրականի եւ Արշիպեղագոսի մէջ ո՞ր ծոցերը կան։

2.

Ասիա քանի՞ աւազան ունի. — Ո՞րոնք են Հիւսիսային աւազանի գլխաւոր գետերը. — Դէպ ՚ի Խաղաղական ո՞ր մեծ գետերը կը թափին. — Ո՞ր երկիրներէն կ՚անցնին եւ ո՞ւր կը թափին Գանգէս, Կոտավէրի, Պրահմափուդրա, Ինդոս, Եփրատ, Տիգրիս. — Սեւ ծովու աւազանին հարկատուները ո՞րոնք են. — Ցոյց տուր Ասիոյ ներքին աւազանին հարկատուները. — Սուրիոյ եւ Պաղեստինու մէջ ո՞ր գետերը կան. — Դասակարգէ Ասիոյ մեծագոյն եւ նաւարկելի գետերը. — Ո՞րոնք են Ասիոյ գլխաւոր լիճերը։

3.

Ասիա ի՞նչ երեւելի թերակղզիներ ունի. — Ո՞ր թերակղզիները առանձին տէրութիւններ կը կազմեն. — Ցո՛յց տուր Ասիոյ երեւելի կղզիներն ու արշիպեղագոսները. — Ո՞ր երեւելի արշիպեղագոսը առանձին տէրութիւն մը կը կազմէ. — Ո՞րն է Ասիոյ ամենէն հիւսիսային, ամենէն արեւելեան, ամենէն հարաւային եւ ամենէն արեւմտեան գլուխը. — Ո՞ւր կը գտնուին Ռաղէկաթ, Հաումանիա, եւ Լոփաթքա հրուանդանները. — Ո՞րոնք են Ասիոյ լեռնային երկիրները. — Եւրոպիոյ եւ Ասիոյ միջեւ ո՞ր գօտին կայ. — Ո՞ւր կը գտնուին Արարատ, Տօրոս, Անտի-Տօրոս։ Կովկաս, Հիմալայա, Էլ-Արէթ, Ալթայ, Հինտու-Քուշ, Սթանովա լերինք. — Ասիոյ մեծագոյն անապատները ո՞ր երկրաց մէջ կը գտնուին։

4.

Ասիա քանի՞ գօտիներու ներքեւ կը գտնուի. — Ո՞ր երկիրները Սառուցեալ, որոնք Բարեխառնի տակ եւ որո՞նք Այրեցեալ գօտւոյ մօտ կը գտնուին. — Ասիոյ հարաւային երկրաց մէջ սովորաբար քանի՞ եղանակ կը տիրէ. — Ո՞րոնք են Ասիոյ գլխաւոր բոյսերը. — Ո՞ր երկրաց մէջ մեծ

քանակութեամբ յառաջ կ'ուգան արմտիք, խաշուէ, բամպակ, բրինձ, թէյ, համեմունք, ներկի նիւթեր, բժշկական բոյսեր եւն. — Ո՞ւր կը գտնուի քարիւղ, անագ, պղինձ, բլադին, ոսկի, թանկագին քարեր, երկաթ եւն. — Ասիոյ մէջ ի՞նչ ընտիր կենդանիներ կան. — Ո՞ր երկրաց մէջ կը գտնուին մուշտակաւոր կենդանիք. — Ո՞ւր կը գտնուին վայրի գազաններ, օձեր ու մժեղներ. — Ասիոյ ո՞ր երկիրները գինի կ'արտադրեն։

5.

Ասիական Թուրքիոյ բնական դրից վրայ ի՞նչ կրնաս ըսել. — Պատմական բաժանումները ո՞րոնք են. — Այսօր քանի՞ կուսակալութեանց կը բաժնուի. — Ո՞րոնք են գլխաւոր բոյսերը, հանքերն ու կենդանիները. — Ցոյց տուր Ասիական Թուրքիոյ ներքին վաճառաշահ քաղաքները. — Ի՞նչ կողմանէ երեւելի են Պրուսա, Քէօթահեա, Գոնեա, Կեսարիա, Սըվազ, Դամասկոս, Հալէպ, Պաղտատ, Վան, Էնկիւրիւ, Տիգրանակերտ, Սամսոն, Այտըն. — Փոթիէ սկսեալ՝ ցոյց տուր Ասիոյ գլխաւոր նաւահանգիստներն մինչեւ Քամչաթքա. — Ցոյց տուր Ասիոյ այն քաղաքներն՝ որք նշանաւոր ուխտատեղիներ են Քրիստոնէից, Մահմէտականաց եւ Կռապաշտից. — Ցոյց տուր Ասիոյ այն քաղաքներէն՝ որոնք երեւելի յիշատակարաններ կը պարունակեն. — Ցոյց տուր այն քաղաքներն որոց մէջ ձեռագործ եւ ճարտարութիւն աստիճան մը զարգացած են։

6.

Ասիա ո՞րքան բնակիչ ունի. — Քանի՞ գլխաւոր ցեղերու կը բաժնուին. — Քանի՞ տեսակ կրօն կայ Ասիոյ մէջ. — Ո՞ր ժողովուրդներն են Քրիստոնեայ, Մահմէտական եւ Կռապաշտ. — Ասիոյ կառավարութեանց ձեւն ի՞նչպէս է ընդհանրապէս. — Ասիոյ մէջ Եւրոպացիք ի՞նչ կարեւոր կալուածներ ունին. — Ասիաէ ի՞նչ տեսակ բերքեր կը փոխադրուին յԵւրոպա. — Այբ ու Բենական կարգաւ՝ նշանակէ Ասիոյ երեւելի քաղաքները. — Քէօնիկսպէրկէն՝ նաւով պիտի երթամք Փէքին, ցոյց տալով այն ովկէանոսներն, ծովերը, ծոցերը, նեղուցները, կղզիները եւ հրուանդանները որոց պիտի հանդիպիմք մեր ուղեւորութեան միջոցին։

ՀՐԱՀԱՆԳ

1. Գծել Ասիոյ համր քարտէսն եւ առանձին գոյներով նշանակել Եւրոպական կալուածները.
2 Նոյն քարտէսին վրայ նշանակել՝ Կովկասեան, Մոնկոլեան եւ Մալայեան ցեղերու բնակավայրերը։
3. Նշանակել՝ այն երկիրներն որք կ'արտադրեն թէյ, խաշուէ, բամպակ բրինձ եւ համեմունք։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՓՐԻԿԷ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Աֆրիկէ կը գրաւէ Արեւելեան կիսագունտին արեւմտեան հարաւային մասն, տարածուելով Միջերկրական և Կարմիր ծովերու, Ատլանտեան և Հնդկաց ովկէանոսներու միջեւ։

Սահմաններն են հիւսիսէն՝ Միջերկրական ծով. հիւսիսային արեւելքէն՝ Սուէզի ջրանցք. արեւելքէն՝ Կարմիր ծով, Պապ-էլ-Մանտէպի նեղուց և Հնդկաց ովկէանոս. հարաւէն՝ Խաղաղական և արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկէանոս իսկ հիւսիսային արեւմուտքէն՝ Ճիպրալթարի նեղուց՝ որով կը բաժնուի Եւրոպայէ։

Աֆրիկէ իւր յարակից կղզիներովն ունի իբր 23,000,000 քիլ. քառ. տարածութիւն որ ըսել է Եւրոպիոյ իբր երեք անգամն։ Աֆրիկէ ունի եռանկիւնի մը ձեւ և համեմատաբար իւր ընդարձակութեան՝ Հին Աշխարհի ամենէ կանոնաւոր ծովափունք ունեցող ցամաքն է։

Ծոցք և Նեղուցք

Աֆրիկէի գլխաւոր ծոցերն են Սիրթ և Կապէս՝ Միջերկրականէ ձեւացած։ Կուինէոյ մեծ ծոցն՝ Ատլանտեանէ ձեւացած. Պէնէն և Պիաֆրա փոքր ծոցերը, Կուինէոյ ծոցէն ձեւացած են։

Աֆրիրէ ունի չորս գլխաւոր նեղուցներ, Ճիպրալթար՝ որ կը գտնուի Ատլանտեանի ու Միջերկրականի միջեւ. Սուէզի ջրանցք՝ Միջերկրականի ու Կարմիր ծովու միջեւ. Պապ-էլ-Մանտէպի նեղուց՝ Կարմիր ծովու և Ադէնի ծոցին միջեւ. Մոզամպիքի ջրանցք՝ Արեւելեան Աֆրիկէի ու Մատակասքար կղզւոյն միջև։

Գետք և Լիճք

Ափրիկէ ունի երեք գլխաւոր աւազան, Միջերկրական, Հնդկաց և Ատլանտեան։ Միջերկրական թափող ամենէ կարեւորն և Ափրիկէի մեծագոյն գետն է Նեղոս՝ որոյ գլխաւոր գետակիցներն են Սպիտակ և Կապոյտ Նեղոս։ Հնդկաց ովկէանոսը կը թափին Լիմպոպո, Զամպեզ, Ռուվումա և Լումպիճի։ Ատլանտեան կը թափին Սենեկալ, Կամպիա, Ռիօ-Կրանտ, Նիկեր կամ Ճոլիպա, Քոնկո կամ Լիվինկսթըն, Օկուէ, Քուանզա, և Օրանժ։

Ափրիկէի մէջ կան մեծ ու փոքր բազմաթիւ լիճեր որոց շատերն վերջի տարիներս գտնուեցան։ Գլխաւորներն են Չատ՝ Սուտանի մէջ։ Հասարակածային Ափրիկէի արեւելեան կողմը կը գտնուին Վիքթորիա-Նիանզա, Ալպերդ-Նիանզա, Թանկանիքա, Պանկուէոլա, Նիասսա, Նըգամի եւլն։

Կազմութիւն եւ Լերինք

Ափրիկէ երկրիս հինգ մասանց մէջ ամենէն աւելի և ամենէն ընդարձակ անապատներ պարունակող ցամաքն է։ Ընդհանրապէս ծովեզերաց մօտ կերեւին երկար ու բարձրաբերձ լերինք որոց ստորոտներն քիչ շատ բարեխառն ու բնակելի են։

Ափրիկէի գլխաւոր լեռներն են Ատլաս գօտին՝ Պէրպէրիստանի մէջ. Եթովպական լերինք՝ Հաբաշու երկրին մէջ. Քիլիմա-Նջարօ՝ կեդրոնական և արեւելեան մասանց մէջ. Քոնկ լերինք արեւմտեան կողմը. Լոքաթա լերինք՝ հարաւային արեւելեան կողմը.

Ափրիկէի չորս գլխաւոր կողմերը կ'երեւին հետեւեալ հրուանդանք, Պոն՝ հիւսիսային կողմը. Դաչարի գլուխ՝ արեւմտեան կողմը Սենեկամպիոյ մէջ. Բարեյուսոյ գլուխ՝ հարաւային ծայրը, Կուարտաֆուի գլուխ՝ արեւելեան ծայրը։

Կղզիք

Ափրիկէի գլխաւոր կղզիներն են Ասորեան, Քանարեան, Մատէրա և Դաչարի գլխոյ փոքր արշիպեղագոսներէն 'ի զատ Ս. Հեղինէ, Համբարձման, Իշխանի, Ս. Թովմաս, Աննոպոն և Ֆէրնանտօ-Բօ կղզիք՝ Ատլանտեանի մէջ։

Սոքոթրա, Սէշէլեան, Զանզիպար, Քոմորեան, Պուրպոն, Մորիս և Մատակասքար մեծ կղզին՝ Հնդկաց ովկէանոսին մէջ։

Կլիմայ, Բուսաբերութիւն, Հանք և Կենդանիք

Ափրիկէ իւր մեծատարած անապատներուն և համեմատաբար ջրոյ նուազութեան պատճառաւ՝ երկրիս հինգ մասանց մէջ ամենէ տաք և սակաւաբնակ ցամաքն է։ Հիւսիսային և հարաւային կողմերը քիչ շատ բարեխառն, իսկ Հասարակածային ու սահմանակից երկրաց մէջ դժոխային տաք կ'ընէ։ Այս երկրաց մէջ կը տիրէ երկու տրոչ եղանակ, չոր և անձրեւային։

Ափրիկէի բարեբեր երկրաց մէջ մեծ առատութեամբ յառաջ կ'ուգան ցորեն, բրինձ, եգիպտացորեն, շաքարեղէգ, բամպակ, խահուէ, համեմունք, խնկեղէն, թուզ, նարինջ, լեմոն, ձիթենի, լեղակ, արմաւ, որթատունկ, բժշկական բոյսեր եւլն։ Ափրիկէ ունի նաեւ հսկայ և լայնատարած անտառներ որք կը մատակարարեն շինութեան ազնիւ փայտ։

Ափրիկէ ունի ոսկի որ կը գտնուի գետոց աւազին մէջ։ Կան նաեւ պղնձի, երկաթի, կրանիթի, աղի և մանաւանդ ադամանդի հարուստ հանք՝ որ կը գտնուի Հարաւային Ափրիկէի մէջ։

Ափրիկէի ընտանի կենդանեաց ամենէն երեւելին է ուղտը որ մեծ օգտակարութիւն ունի և զոր իրաւամբ կը կոչեն Անապատի նաւ։ Երեւելի են նաեւ ջորին, ոչխարը, ձին, եզը եւլն։ Բայց աւելի բազմաթիւ են վայրի գազանք, ինչպէս՝ վագր, առիւծ, կոկորդիլոս, լինձ, ռնգեղջիւր, փիղ, զէպր, ընձուղտ, կապիկ, ջայլամ, թռչուններ, թունաւոր օձեր, ճճիներ, մրջիւններ եւայլն։

Քաղաքակրթութիւն

Ափրիկէ ունի իբր 170 միլիոն բնակիչ (կարծեօք) որոնք կը պատկանին այլ և այլ ցեղերու։ Ասոնք ընդհանրապէս վայրենի, պատերազմիկ ու մարդակեր են։ Բնակչաց մեծագոյն մասին կրօնն է կռապաշտութիւն կամ նիւթապաշտութիւն, իսկ Հիւսիսային երկիրք, Նուպիա, Սուտան և Հնդկաց ովկէանոսի սահմանակից երկրաց մէկ մասին մէջ կը տիրէ Մահմետականութիւն։ Ափրիկէի այլ և այլ մասանց մէջ գրեթէ Եւրոպացի ամէն ազգէ գաղթա-

կաններ կը գտնուին որք կ՚զբաղին երկրագործութեամբ և առեւտուրով։ Այս Եւրոպացիք կ՚աշխատին բնիկները հետզհետէ քաղաքակրթելու ։

Քաղաքական բաժանմունք

Հիւսիսային Ափրիկէի երկիրներն են Եգիպտոս, Պէրպէրիստան, (Թրիպոլիս, Թունուզ, Ալճէրի և Մարոք) Նուպիա, Սահարա կամ Մեծ Անապատ։

Միջին Ափրիկէի երկիրներն են՝ Սենէկամպիա, Հիւսիսային Կուինէա, Հարաւային Կուինէա, Հիւսիսային Նիկրիտիա կամ Սուտան, Քոնկոյի պետութիւն և Սոմալ։

Հարաւային Ափրիկէի երկիրներն են՝ Հարաւային Կուինէա, Օթենթացւոց Երկիր, Հարաւային Նիկրիտիա, Մոզամպիք, Զանկէպար, Քաֆրաստան, Բարեյուսոյ Երկիր, Նադալ, Թրանսուալ և Հանրապետութիւն Օրանժի։

Ափրիկեան Աշխարհ

ԵԳԻՊՏՈՍ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵԳԻՊՏՈՍ՝ Ափրիկէի նշանաւորագոյն երկիրն է և կը գրաւէ այն ցամաքին հիւսիսային արեւելեան մասն։ Սահմաններն են հիւսիսէն Միջերկրական ծով. արեւելքէն՝ Սուէզի ջրանցք և Կարմիր ծով. հարաւէն՝ Նուպիա. արեւմուտքէն Թրիպոլիս և Լիբիոյ անապատը։

Եգիպտոս նեղ ու երկար հովիտ մ'է որու աջ կողմէն կ'երկարին Արաբական և ձախ կողմէն Լիբիական լերինք։ Եգիպտոսի

մէջէն կ'անցնի Նեղոս գետը որ՝ Հասարակածի տակ գտնուած Վիքթորիա Նիանզա լճէն բղխելով դէպ 'ի հիւսիս կը հոսի և բազմաթիւ բերաններով կը թափի Միջերկրական ծով։ Առանց Նեղոս գետին՝ Եգիպտոս պիտի լինէր անջրդի անապատ մը այնպէս որ՝ շատ իրաւամբ ըսած է Հերոդոտոս Յոյն պատմիչը թէ՝ — «Եգիպտոս Նեղոսի մէկ պարգեւն է» —։ Այս գետը տարին երկու անգամ կանոնաւորապէս կը յորդի և շրջակայ հովիտները կը ծածկուին ջրով։ Երբ ջուրերը քաշուին, կը թողուն պարարտ կաւ մը՝ որու վրայ երկրագործը մեծ դիւրութեամբ կ'աշխատի և այսպէս քիչ ժամանակի մէջ Եգիպտոսի հովիտը կը ծածկուի ամենազգի բոյսերով և կ'առնու զմայլելի դրախտի մը կերպարանքը. Ահա այս է Եգիպտոսի աննման արգասաւորութեան պատճառը։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Եգիպտոսի կլիմայն ընդհանրապէս շատ տաք է, բայց 'ի ըստորին մասէն՝ ուր քիչ շատ բարեխառն է։

Գլխաւոր բոյսերն են ցորեն, գարի, եգիպտացորեն, բրինձ, բամպակ, կանեփ, շաքարեղէգ, ծխախոտ և բանջարեղէնք. ունի նոյնպէս բազմաթիւ պտղատու ծառեր, ինչպէս արմաւենի, որթատունկ, թզենի, նարնջենի, ծիրանի, նռնենի, ձիթենի։ Երեւելի է նաեւ պապիրոս անուն եղէգը՝ որոյ ներքին մաշկը հին ատեն իբրեւ թուղթ կը գործածէին։



Պապիրոս

Երկրին մէջ կան կրանիթի, մարմարիոնի և Նաթրոն ըսուած աղի հանքեր։

Կենդանեաց մէջ կարեւորներն են ոչխար, եզ, ուղտ և ջորի։ Վայրի կենդանիներն են կոկորդիլոս, Հիպոս անուն մուկը, ձիագետի և մեծամեծ օձեր։



Կոկորդիլոս

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եգիպտոս ունի իբր 1,020,000 քիլ. քառ. տարածութիւն և 6,800,000 բնակիչ։

Եգիպտոս կը բաժնուի երեք մասերու՝ Ստորին Եգիպտոս կամ Տէլդա, Միջին Եգիպտոս և Վերին Եգիպտոս։

ԳԱՀԻՐԷ (400,000 բն.), Եգիպտոսի Մայրաքաղաքն է Նեղոսի աջ ափանց մօտ, կը բաժնուի երկու որոշ մասերու. Հին թաղ՝ որ աղտոտ է և կը պարունակէ հին շէնքեր, Նոր թաղ որ ունի գեղեցիկ շէնքեր, մաքուր և ընդարձակ փողոցներ։ Գահիրէի արևմտեան կողմը կը գտնուին հին Մեմֆիս քաղաքին աւերակներէն ի զատ՝ այն լեռնաձև Բուրգերն ու մարդագլուխ Սփինքսն՝ որք հազարաւոր տարիներէ 'ի վեր կանգուն մնացած են։

Գլխաւոր նաւահանգիստք Միջերկրականի վրայ

Աղեքսանդրիա կամ Իսքէնտէրիէ (230,000 բն.), Եգիպտոսի և աշխարհիս նշանաւորագոյն նաւահանգստաց մին է զոր հիմնեց Մեծն Աղեքսանդր Քրիստոսէ 332 տարի յառաջ։

Ռօզէթ կամ Րաշիտ, Տամիէթ կամ Տիմիաթ, Տէլդայի վրայ բանուկ նաւահանգիստներ են և ունին բրինձ, բամպակ, ծխախոտ։

Բօռ-Սայիտ, Սուէզի ջրանցքին բերնին վրայ՝ բանուկ նաւահանգիստ է։

Սուէզ, Կարմիր ծովու վրայ Եգիպտոսի երևելի վաճառատեղեաց մին է և նոյն ջրանցքին բացուելէն 'ի վեր աւելի մեծ կարևորութիւն առած է, որովհետև Միջերկրականէ՝ Հարաւային և Արևելեան Ասիա երթևեկող նաւերն անկէց կ'անցնին։

Սուէզի ջրանցք

Ներքին գլխաւոր քաղաքներ

Մէհալլէթ-էլ-Քէպիր, Թանթահ, Զակազիկ, Տամանհուր, և Մանսուրահ Ստորին Եգիպտոսի մէջ։ Մէտինէթ-էլ-Ֆայում, Տամիեհ՝ Միջին մասին մէջ։ Սիութ, Կիրկէհ, Քարնաք ու Լուքսոր՝ հին Թեբէ քաղաքին աւերակաց մօտ աննշան գիւղեր են՝ Վերին Եգիպտոսի մէջ։

Ընդհանուր տեղեկութիւն

Հին դարուց մէջ շատ երևելի էր Եգիպտոս իւր բարձր քաղաքակրթութեամբ, արհեստներով, ճարտարութեամբ և իւր իմաստուն օրէնքներով։

Այս երկրին յաջորդաբար տիրեցին Պարսիկք, Մակեդոնացիք, Հռոմայեցիք, Արաբք և 'ի վերջոյ Օսմանցիք։ Եգիպտոսի Փոխարքայն կը կոչուի Խըտիվ որ կը ճանաչէ Օսմ. Վեհ. Սուլթանին գերիշխանութիւնը։ Խըտիվներու իշխանութիւնը ժառանգական է։ Եգիպտոս աւելի մեծ կարևորութիւն ստացաւ Սուէզի ջրանցքին բացուելէն 'ի վեր, որովհետև անկէց առաջ՝ Եւրոպայէն Հնդկաստան և կամ Արևելեան Ասիա գացող նաւեր՝ ստիպուած էին Ափրիկէի շրջանն ընել, մինչդեռ հիմա, նոյն ջրանցքէն անցնելով՝ քիչ ժամանակի մէջ և քիչ ծախքով կրնան երթևեկել։ Երկրին մէջ կը գտնուին Ղպտիք, Արաբք, Թուրք, Հրեայ ու Եւրոպական ամէն ազգէ բնակիչք։ Նոյնպէս Հայ գաղթականութիւն մ'ալ կայ որ կարևոր տեղ մը կը բռնէ Եգիպտոսի մէջ։

ՆՈՒՊԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՆՈՒՊԻԱ կը տարածուի Եգիպտոսի հարաւակողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Եգիպտոս. արեւելքէն՝ Կարմիր ծով ու Եթովպիա. հարաւէն և հարաւային արեւմուտքէն՝ Սուտան. արեւմուտքէն՝ Լիբիոյ անապատ։

Այս երկրին միայն հիւսիսային և միջին մասերը բարեխառն են՝ շնորհիւ Նեղոս գետին, մնացեալ տեղուանքն աւազուտ անապատներ են։ Կլիման խիստ տաք և վատառողջ է, միայն հարաւային կողմերը կ'անձրեւէ։

Գլխաւոր բոյսերն են բրինձ, եգիպտացորեն, գարի, ծխախոտ, բամպակ Թզենի և արմաւ։ Տեղական բերքերու մէջ յիշատակութեան արժանի են նաեւ փղոսկրը, խէժը, ոսկւոյ փոշին, վայրի կենդանեաց մորթը և չինութեան ազնիւ փայտերը։

Նուպիա ունի արջառ, եզ, ջորի, ուղտ և բազում վայրի կենդանիներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նուպիա ունի 1,200,000 քըլոմէթր քառակուսի տարածութիւն և 4,000,000 բնակիչ։

Երկիրը կը բաժնուի երկու մասերու, 1°. Վերին Նուպիա, 3°. Ստորին Նուպիա։

ՔԱՐԹՈՒՄ (40,000 բն.), Մայրաքաղաք Նուպիոյ, Կապոյտ և Սպիտակ Նեղոսներու միացման տեղը՝ ամուր և վաճառաշահ քաղաք է և մեծ յարաբերութիւն ունի շրջակայ երկրաց հետ։

Քասալլահ, Եթովպիոյ սահմանին մօտ՝ վաճառաշահ փոքր քաղաք մ'է։

Սուաքիմ, Կարմիր ծովու վրայ բանուկ նաւահանգիստ է։

Երեւելի են նաեւ Պէրպէր, Քորտոֆան, Նոր Տոնկոլա և Սէննաար՝ Նեղոսի մօտ։

Ընդհանուր տեղեկութիւն

Նուպիացիք կը պատկանին Արաբական ցեղին և են պատերազմասէր ու կիսավայրենի։ Բնակչաց մեծ մասին կրօնն է Մահմէտականութիւն։

ԵԹՈՎՊԻԱ կամ ՀԱՊԷՇԻՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵԹՈՎՊԻԱ բարձր եւ ընդարձակ լեռնադաշտ մ'է Նուպիոյ հարաւակողմը ուր կ'երեւին բարձր գագաթներ ու մեծատարած հովիտներ։ Մայիսէն մինչեւ Սեպտեմբեր կանոնաւորապէս կ'անձրեւէ, այս պատճառաւ կլիման բաց 'ի ծովեզերքէն՝ ընդհանրապէս բարեխառն է։

Գլխաւոր բոյսերն են ցորեն, բրինձ, բամպակ, շաքարեղէգ, խահուէ, արմաւ, խէժ և ազնիւ փայտի ընդարձակ անտառներ։

Ընտանի կենդանեաց մէջ երեւելի են ձին, ջորին, էշը, ոչխարը և կովը։ Կան նաեւ բազում վայրի գազաններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եթովպիա ունի իբր 800,000 քիլ. քառ. տարածութիւն և 3,000,000 ի չափ բնակիչ

Եթովպիա բաժնուած է այլ և այլ ինքնագլուխ իշխանութեանց որոց գլխաւորներն են Ամհարա, Թիկրէ և Շօա։

Գլխաւոր Քաղաքներ

ԿՈՆՏԱՐ, Մայրաքաղաք Ամհարայի, Տէմպէա լճին հիւսիսային կողմը վաճառաշահ քաղաք է։

Աքսում, գլխաւոր քաղաք Թիկրէի՝ որ էր նախկին մայրաքաղաք Եթովպիոյ։

Երեւելի են նաեւ Փասօ, Կաչօպար, Սամհարա։

Մասուա, Կարմիր ծովու վրայ բանուկ և նշանաւոր նաւահանգիստ՝ զոր վերջերս Իտալացիք գրաւեցին։

Ընդհանուր տեղեկութիւն

Եթովպիա իւր լեռնային կազմութեան, բարձրաբերձ դաշտավայրերուն և բնական այլ և այլ սիրուն տեսարաններուն պատճառաւ՝ կոչուած է Ափրիկեան Զուիցերի։ Այս երկիրն հին դարուց մէջ ունեցած է բարձր քաղաքակրթութիւն մը, մինչեւ այսօր՝ յետին տգիտութեան և խաւարի մէջ է։ Բնակիչք՝ ըստ մեծի մասին բարբարոս, պատերազմասէր ու ծոյլ են։ Երկրին վաճառականութիւնը հրէից ձեռքն է։ Տեղացւոց մեծագոյն մասին կրօնն է Քրիստոնէութիւն։

ՊԷՐՊԷՐԻՍՏԱՆ

ՌՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պէրպէրիստան կը կոչուի հիւսիսային Ափրիկէի այն մասն՝ որ կը տարածուի Եգիպտոսէ մինչեւ Ատլանտեան ովկէանոս։

Պէրպէրիստան կը պարունակէ չորս երկիրներ, Թարապլուս, Թունուզ, Ճէզայիր և Մարոք։

Թարապլուս ընդհանրապէս տափարակ ու անապատային է, իսկ Թունուզէ մինչեւ Ատլանտեան կ'երկարի Ատլաս գօտին որմէ սկսեալ՝ Միջերկրականի միջեւ գտնուած երկիրը կը կոչուի Թէլ և է բարեբեր, չէն ու բազմամարդ։

Կլիմայ եւ բուսաբերութիւն

Երկրին կլիմայն՝ լեռնային մասանց մէջ բարեխառն և տեղ տեղ խոնաւ, իսկ դաշտաց և Մեծ անապատի սահմանաց վրայ սաստիկ տաք կ'ըլլայ։

Պէրպէրիստանի բուսական գլխաւոր արտադրութիւններն են արմաւ, ծխախոտ, արմաւ, ձիթենի, նարնջենի, թթենի, բամպակ, որթատունկ, շաքարեղէգ, շինութեան աղնիւ փայտ եւայլն։

Պէրպէրիստանի մէջ կը գտնուին արծաթի, պղնձի, կապարի, երկաթի, ցինկի, շինութեան ազնիւ փայտերու և աղի հանքեր։

Երկրին մէջ կան ձի, էշ, ջորի, կով, այծ, ուղտ և ջայլամ որոյ փետուրը շատ յարգի է։

ԹԱՐԱՊԼՈՒՍ

Թարապլուս՝ Եգիպտոսի և Թունուզի միջեւ ընդարձակ երկիր մ'է, 1,000,000 քիլ. քառ. տարածութեամբ և իբր 1,000,000 բնակչօք, կը պատկանի Օսմանեան պետութեան։

Գլխաւոր քաղաքն է Թրիփոլի կամ Թարապլուսը Ղարպ՝ որ բանուկ նաւահանգիստ է Միջերկրականի վրայ։ Երկրորդական նաւահանգիստ է Պէնկազի։

Թարապլուսի հարաւային կողմը կը գտնուի Ֆէզզանի ընդարձակ ովասիսը։ Գլխաւոր քաղաքն է Մուրզուք որ մեծ առեւտուր ունի փղոսկրի, խէժի և ջայլամի փետուրի։ Ասկից կը մեկնին Սուտան գացող կարաւանք։

ԹՈՒՆՈՒԶ

Թունուզ Ափրիկէի ամենէն հիւսիսային երկիրն է՝ Ալճէրիի և Թարապլուսի միջեւ։ Ունի 120,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Թունուզ՝ Միջերկրականի մօտ, ուր կը գտնուին հին Կարքեդոնի աւերակները։ Թունուզ ճարտարարուեստ և վաճառաշահ քաղաք մ'է։

Կապէս, համանուն ծոցին վրայ բանուկ նաւահանգիստ է։

Պիզէրթա, Ափրիկէի ամենէն հիւսիսային քաղաքն է։

Երեւելի են նաեւ Քէրուան, Սֆաքս, Համամէթ եւայլն։

Թունուզ առժամանակեայ կերպիւ կը գտնուի ընդ պաշտպանութեամբ Ֆրանսայի։

ԱԼՃԷՐԻ կամ ՃԷԶԱՅԻՐ

Ալճէրի՝ Պէրպէրիստանի և միանգամայն Ափրիկէի ամենէն հարուստ և քաղաքակրթեալ երկիրներէն մին է և որ կը տարածուի Թունուզի և Մարոքի միջեւ։

Ունի 670,000 քիլ. քառ. տարածութիւն և 3,800,000 բնակիչ:

Երկրին Մայրաքաղաքն է ԱԼՃԷՐԻ կամ ԷԼ-ՃԷԶԱՅԻՐ (70,000 բն.), ամուր և վաճառաշահ նաւահանգիստ է, կը բաժնուի երկու մասերու. Հին թաղ որ է՝ Արաբական քաղաքը, և Նոր թաղ որ ունի Փռանսական չէն քաղաքի մը երեւոյթն:

Կոստանդին, ամուր քաղաք է, մօտերը կան հին շէնքերու աւերակներ:

Օրան, Միջերկրականի վրայ զինուորական նաւահանգիստ է:

Պօն, ապահով և բանուկ նաւահանգիստ է, հոս ապրած է Ս. Օգոստինոս երեւելի հայրապետը:

Ֆիլիփվիլ, նորաշէն և գեղեցիկ քաղաք է:

Երեւելի են նաև Պուժի, Մոսթականէմ, Շէռշել ևլն:

Ալճէրի 1830 էն 'ի վեր կը պատկանի Փռանսայի:

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՈՔԻ

Մարոք՝ Պէրպէրիստանի ամենէն արեւմտեան երկիրն ու ինքնիշխան Պետութիւն մ'է և որոյ վեհապետը կը կոչուի Սուլթան:

Մարոք ունի 680,000 քիլ. քառ. տարածութիւն և 6,000,000 բնակիչ:

Երկրին մեծագոյն քաղաքն է ՖԷՍ (100,000 բն.), ճարտարարուեստ և վաճառաշահ քաղաք, ունի Մարոքէն անուն գեղեցիկ հիւսուածքներ:

Մարոք, երկրորդ քաղաքն է և կարաւաններով կը հաղորդակցի Միջերկրականի նաւահանգստաց հետ:

Թանճէր և Թէթուան, Միջերկրականի վրայ բանուկ նաւահանգիստներ են:

Ատլանտեանի վրայ երեւելի նաւահանգիստ է Մոկատոր, երկրորդական են Մէքինէզ և Մազական:

Սպանիոյ կը վերաբերին Սէութա, Մէլիլ և Վէլէզ փոքր քաղաքները՝ Ճիպրալթարի մօտ:

Ընդհանուր տեղեկութիւն

Պէրպէրիստան ունի աշխարհագրական գեղեցիկ դիրք և մեծ յարմարութիւն ծովային վաճառականութեան համար: Այս երկրին բնակիչքն են Պէրպէր, Արաբացի, Մուրի, Թուրք, Հրէայ ու Եւրոպացի: Քաղաքակրթութիւնը միայն Ալճէրիի մէջ մուտ գտած է: Պէրպէրիստան մեծ առեւտուր ունի արմաւաց, բուրդի, ձիթոյ, կաշւոյ, մետաքսեղինաց, Արաբական զէնքերու, խէժի, գեղեցիկ թռչնոց փետուրներու, վայրի գազանաց մորթերու ևն:

ՍԱՀԱՐԱ կամ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՍԱՀԱՐԱ կամ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ կը կոչուի այն աւազուտ և լայնատարած երկիրն որ՝ կը տարածուի Պէրպէրիստանի, Ատլանտեանի, Սենէկալի, Սուտանի, Եգիպտոսի, Նուպիոյ և Նուբիոյ միջև:

Սահարա անապատին մէջ տեսարան

Սահարա իբր 7,000,000 քիլ. քառ. տարածութեամբ և իբր 4,000,000 բնակչօք աւազային անսահման անապատ մ'է՝ ուր քիչ տեղեր կ'երեւին ովասիսներ:

Կլիմայն անտանելի կերպիւ տաք և աւազային մրրիկներն ալ անպակաս են։

Գլխաւոր ովասիսներն են՝ Թուաթ, Թիտիֆէթ, Պիլմա, Թաւկան, Ատրար, Թիպպու եւայլն։

Բնակիչք Պէրպէրներէ, Մաւրիտանացիներէ և այլ ցեղերէ բաղկացեալ վայրենի մարդիկ են և կ՚զբաղին խաշնարածութեամբ ու տեղական բերոց առեւտրով։ Ամէն տեսակ գազաններ ու ճճիներ կը վխտան այս երկրին մէջ։

ՄԻՋԻՆ ԱՓՐԻԿԷ

ՍԵՆԷԿԱՄՊԻԱ

ՍԵՆԵԿԱՄՊԻԱ՝ որ առած է իւր անունն Սենէկալ և Կամպիա գետերէն, Ափրիկէի ամենէն արեւմտեան երկիրն է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սահարա. արեւելքէն՝ Սուտան. հարաւէն՝ Կուինիա և արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկէանոս։

Ընդհանրապէս տափարակ երկիր մ՚է Սենէկամպիա, մանաւանդ ծովեզերեայ մասերն ծովէն ցած ըլլալնուն՝ շատ տաք կ՚ըլլան։

Կլիմայ եւ Բուսաբերութիւն

Երկրին կլիմայն սաստիկ տաք է. — Ունի երկու եղանակ՝ չոր և անձրեւային որ կը տեւէ Յուլիսէ մինչեւ Հոկտեմբեր։ Սենէկամպիա՝ հասարակածային ամէն տեսակ բոյսերէն ՚ի զատ՝ ունի նաև Պաօպապ անուն հսկայ ծառն որոյ կոճղն ունի իբր 10 մէթր տրամագիծ։

Այս երկիրն ունի 920,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 10,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են

Ս. Լուի, Սենէկալ գետին բերանը՝ համանուն կղզւոյն վրայ ամուր և վաճառաշահ քաղաք մ՚է։

Սաֆֆար, Դալարի գլխոյ հրուանդանին հարաւակողմը։

Կորէ, համանուն կղզւոյն վրայ, կը պատկանի Ֆրանսացւոց։

Անգլիա Սենէկամպիոյ մէջ ունի Պաթըրսթ, Կամպիա գետին բերանը։ — Նոյնպէս Ձոռճարաւն և Աչպրէդա։

Փորթուկէզեան գլխաւոր քաղաքներն են Րիօ-տը-Բաչէօ և Րիօ-տը-Կէպա։

Բաց ՚ի ասոնցմէ՝ ներքին մասանց մէջ կը գտնուին այլ և այլ՝ անկախ թագաւորութիւններ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԻԱ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԻԱ կը կոչուի արեւմտեան Ափրիկէի այն մասն որ՝ Սենէկամպիայէ սկսեալ՝ կը տարածուի դէպ յարեւելեան հարաւ՝ մինչեւ Լոբէզ հրուանդանը։

Այս երկիրն ունի բարձրաբերձ լեռներ, խիտ անտառներ և ջրոյ բազմաթիւ հոսանքներ որոնք երկիրը կ՚արգասաւորեն։ Կլիմայն չափազանց տաք և վատառողջ է, Մայիսէն մինչեւ Հոկտեմբեր ահաւոր փոթորիկներով անձրեւներ կը տեղան։

Գլխաւոր բոյսերն են՝ արմաւ, ծխախոտ, եգիպտացորեն, բրինձ, պանան, լեղակ, նարինջ, համեմունք, շինութեան աղնիւ փայտ եւայլն։

Երկրին գետերը իրենց աւազին հետ կը բերեն ոսկւոյ փոշի։ Կենդանեաց մէջ մասնաւոր կարեւորութիւն մ՚ունի փիղն որմէ կ՚առնուն փղոսկր։

Հիւսիսային Կուինիա ունի 2,500,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 12,500,000 բնակիչ։

Երկիրը՝ տեղական մի քանի իշխանութիւններէ ՚ի զատ՝ բաժնուած է նաեւ Եւրոպական հետեւեալ տէրութեանց միջեւ։

Գլխաւոր երկիրներն են

1. Սիէրա-Լէօն, գլխաւոր կեդրոն Անգլիական գաղթականութեան։ Բնակիչք՝ գերութենէ ազատեալ սեւեր են։ Գլխաւոր քաղաքն է Ֆրիթաւն։ Օդը վատառողջ է։

2. Լիպէրիա, Ազատ հանրապետութիւն մ'է զոր Ամերիկացիք հիմնեցին 1840 ին՝ ազատեալ Քրիստոնեայ սեւերու համար, Գլխ. քաղաքն է Մօնրովիա՝ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ։

Հիւս. Կուինեոյ Վայրենի

3. Փղոսկրի ծովեզր, գլխաւոր քաղաքներն են Կրան-Պասամ, Ասինի և Տապու որոնք կը պատկանին Ֆրանսացւոց։

4. Ոսկւոյ ծովեզր, ուր տեղի կ'ունենայ ոսկւոյ փոշիի առեւտուր։ Գլխաւոր քաղաքներն են Քէյփ-Քօսթ, Էլմինա և Ս. Գէորգ զորս Հոլանտացիք թողին Անգլիացւոց։

5. Աշանթիի Երկիր, ներքին մասին մէջ։ Գլխաւոր քաղաքներն են Կումասի և Սելաղա։

6. Գերեաց ծովեզր, այս երկիրը կը պարունակէ մի քանի իշխանութիւններ որոց ամենէն երեւելին է Տահօմէի Թագաւորութիւնը. Գլխաւոր քաղաքներն են՝ Ապօմէ, Ուիտաճ, Բօրթօ-Նօվօ որ կը պատկանի Ֆրանսացւոց։ Նոյնպէս Ֆրանսայի կը պատկանի Կապոն՝ որ տակաւ կարեւորութիւն կ'առնայ։

7. Պենէի Երկիր, առանձին փոքր թագաւորութիւն մ'է համանուն մայրաքաղաքաւ։

Գերմանիա եւս 1884 էն 'ի վեր տիրած է Գերեաց ծովեզրի մէկ մասին և Գամէրունի։

Ընդհանուր տեղեկութիւն

Այս երկրին բնիկները սեւամորթ Ափրիկեցիներ են վայրենաբարոյ։ Կրօնքնին է նիւթապաշտութիւն, կան ալ որ մարդազոհ կ'ընեն։ Եւրոպացիք կ'աշխատին այս վայրենի ցեղերը հետզհետէ քաղաքակրթել։

ՆԻԿՐԻՏԻԱ կամ ՍՈՒՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նիկրիտիա կամ Սուտան կը կոչուի այն ընդարձակ երկիրն՝ որ կը տարածուի ընդ մէջ Սահարայի, Սենէկամպիոյ, Կուինիոյ, Հասարակածային Ափրիկէի և Նուպիոյ։

Սուտան ընդհանրապէս անապատ է, բայց կան նաեւ ընդարձակ և բարեբեր ովասիսներ որոց շատը այս վերջի տարիներս գտնուեցան։ Կլիմայն խիստ տաք է. Յունիսէն մինչեւ Հոկտեմբեր անընդհատ անձրեւ կը տեղայ։ Այս երկրին մէջէն կ'անցնի Նիկեր կամ Տիալի-Պա մեծ գետը՝ որ Կուինիոյ ծոցը կը թափի։

Գլխաւոր բոյսերն են բամպակ, իւղալից հունտեր, ծխախոտ, պղպեղ, արմաւ, բրինձ, շաքարեղէգ, պանան, եւլն։ Տեղական հարստութեանց կարգին մէջ երեւելի են նաեւ ոսկւոյ փոշին, փղոսկրը, ջայլամի փետուրը, գոհարեղէնները, խէժը, մետաքսեղէնները, վայրի կենդանեաց մորթը եւայլն։

Սուտանի մէջ՝ ուղտ, ձի և ջորիէ 'ի զատ՝ կը գտնուին նաեւ վայրի գազաններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սուտան ունի իբր 3,000,000 քիլ. քառ. տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Այս երկիրը կը բաժնուի այլ և այլ իշխանութեանց և բնիկ թագաւորութիւններու որոց գլխաւորներն են։

1. Ուասուլօ, Նիկէրի վերին հովտին մէջ հարուստ և բարեբեր երկիր մ'է, բնակիչք հիւրասէր և աշխատասէր են։

2. Պամպարայի Երկիր, գլխ. քաղաքներն են, Սէկու և Ճէնի։

3. Թոմպուքթու, վաճառաշահ քաղաք է, ունի տեղական բերոց մեծ առեւտուր։

4. Կանօ, փոքր թագաւորութիւն մ'է համանուն քաղաքաւ։

5. Սաքաթու, Նիգէրի մօտ, մայրաքաղաքն է Վուռնօ:

6. Պուռնու, Չատ լճին արեւմտեան կողմը, գլխաւոր քաղաքն է Քուքա:

7. Պակիրմի, զօրաւոր թագաւորութիւն մ'է Մասէնեա մայրաքաղաքաւ։

8. Ուատայ, Չատ լճին հիւսիսակողմը, գլխ. քաղաքն է Ապէշըր:

9. Քորտոֆան, երկրին արեւելեան կողմը, ունի գեղեցիկ ովասիսներ, գլխաւոր քաղաքն է Էլ-Ո-պէյթ:։

10. Տարֆուր, Քորտոֆանի հարաւային արեւելեան կողմը, ընդարձակ և հարուստ ովասիս մ'է, գլխաւոր քաղաքն է Ֆաշէրոր, մեծ առեւտուր ունի շրջակայ երկրաց հետ։

Այս վերջին երկուքը Եգիպտոսի գերիշխանութեան ներքեւ են։

Ընդհանուր տեղեկութիւն

Սուտանի բնակիչք ընդհանրապէս Մահմէտական են, կան նաեւ կռապաշտ և մարդակեր ցեղեր։ Ովասիսներու բնակչաց մէջ կան այնպիսի ցեղեր որոնք մեծ յարմարութիւն ունին արհեստագործութեան և որոց ամենէն երեւելին է Ֆէլլաթա ցեղը որ կը բնակի Չատ լճին եզերքն և Քոնկօյի հովտին մէջ։ Եւրոպացի խուզարկուներու շնորհիւ՝ այս երկիրն հետզհետէ կը ծանօթանայ քաղաքակիրթ աշխարհի։

ՍՈՄԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սոմալ՝ Ափրիկէի ամենէն արեւելեան երկիրն է որ՝ Պապ-էլ-Մանտէպի նեղուցէն ու Եթովպիայէն սկսեալ՝ կը տարածուի մինչեւ Զանկէպար։

Երկրին հիւսիսային և արեւմտեան կողմերը լեռնային, իսկ ծովեզերքները տափարակ, ճահճային ու վատառողջ են, կլիման շատ տաք է։ Գլխաւոր հարստութիւններն են՝ դեղին սաթ, խէժ և խնկեղէն։

Բնակիչք կը բաղկանան տեղացի Պէրպէրներէ և Սօմալի կոչուած Մահմէտական Արաբներէ որք կ'զբաղին խաշնարածութեամբ, նախնական արհեստներով և ոմանք ալ արտաքին վաճառականութեամբ։

Սօմալ ունի 850,000 քիլոմէթր քառ. տարածութիւն և իբր 5,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են

Զէյլա, Պապ-էլ-Մանտէպի նեղուցին վրայ փոքր քաղաք մ'է։

Պէրպէրա, Մակատոֆօ, երկրորդական նաւահանգիստներ են։

Պապ-էլ-Մանտէպի վրայ Ֆռանսացիք ունին Օպօք անուն փոքր նաւահանգիստ, իսկ Անգլիացիք Մուշաֆն՝ փոքր կղզին։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒԻՆԻԱ կամ ՔՈՆԿՕ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒԻՆԻԱ կը կոչուի արեւմտեան Ափրիկէի այն երկիրն որ կը տարածուի Լօբէզ հրուանդանէն մինչեւ Ֆրիօ գլուխը։ Երկրին ծովեզերքները ընդհանրապէս ցած, ճահճային ու վատառողջ են, իսկ ներքին մասանց մէջ կը գտնուին բարեխառն տեղեր։

Այս երկրին մէջ Հօկտ., է մինչեւ Մարտ՝ յորդառատ կ'անձրեւէ։

Երկրին արեւելքէն դէպ արեւմուտք կը վազէ Քոնկօ կամ Լիվինկսթըն մեծ գետն՝ որոյ ակը յաջորդաբար գտան Քամէրոն և Սդէնլի խուզարկուները։

Քոնկօյի բուսաբերութիւնքն են բրինձ, բամպակ, արմաւ, ծխախոտ, լեղակ, խէժ, գունատու բոյսեր, խահուէ, շաքարեղէգ,

և չինութեան աղնիւ փայտ։ Կը գտնուին նաև ոսկւոյ, երկաթի, պղնձի, ծծումբի, քարիւղի և բորակի հանքեր որոնք նոր սկսած են շահագործուիլ։

Քոնկոյի մէջ կը գտնուին Հասարակածի ամէն տեսակ գազաններ, օձ և վնասակար ճճիներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարաւային Կուինէա ունի 1,000,000 քիլ. քառ. տարածութիւն և 11,000,000ի չափ բնակիչ։

Երկիրը բաժնուած է 6 գլխաւոր մասերու։

1. Թագաւորութիւն Լոանկոյի, գլխաւոր քաղաքն է Պուալի։
2. Քաքոնկո, գլխաւոր քաղաքն է Քէնկէլէ։
3. Քոնկոյի Երկիր, Հարաւային Կուինէայ ամենէն հարուստ և ծաղկեալ մասն երկրին է։ Գլխաւոր քաղաքն է Սան-Սալվատօր։
4. Անկոլայի Երկիր, կը պատկանի Փորթուկալի, գլխաւոր քաղաքն է Ս. Բօլ տը-Լօանտա։
5. Պէնկուէլա, նոյնպէս կը պատկանի Փորթուկալի, գլխաւոր քաղաքն է Ս. Ֆիլիփ տը-Պէնկուէլա։
6. Մոսամէտէս, փոքր երկիր մ'է համանուն քաղաքաւ և կը պատկանի Փորթուկալի։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՈՆԿՕ

Ֆրանսա Քոնկոյի մէջ ունի կարևոր գաղթականութիւն մը որ կը տարածուի Հիւսիսային Կուինէայէ մինչև Քոնկօ կամ Զայիրէ գետը։

Գլխաւոր քաղաքներն են Պրազզավիլ, Լիպրըվիլ և Կապօն։

Այս երկիրն հետզհետէ ծաղկելու վրայ է։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՆԻԿՐԻՏԻԱ կամ ԱԶԱՏ ՔՈՆԿՕ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Այս անուամբ կը ճանչցուի այն ընդարձակ աշխարհն որ կը տարածուի Սուտանէն 'ի Քաֆրաստան և Հարաւային Կուինէայէն դէպ արևելք՝ մինչ 'ի Սոմալ և 'ի Զանկէպար։



Լիվինկսթըն

Այս երկիրը ներկայ դարուս վերջի շրջանին մէջ ճանչցուեցաւ՝ շնորհիւ Եւրոպացի և Ամերիկացի երևելի խուզարկուներու՝ ինչ-

պէս Լիվինկսթընի, Սթիֆ, Կրանդ, Պեյքըր, Էմին փաշա և մանաւանդ Սթէնլի, որոնք գտան մեծամեծ լիճեր, անտառներ և ծանօթացան այլ և այլ ցեղերու ու նորանոր երկրաց։

Եւրոպական այլ և այլ ազգերէ բաղկացած մասնաւոր ընկերութեան մը ջանիւք՝ որ կը կոչուի Քոնկոյի Ամերիկեան ընկերութիւն, այս երկիրն իւր առևտրական գործունէութեան ասպարէզ ընտրած է ընդ պաշտպանութեամբ Պելճիոյ Լէոփոլտ թագաւորին որ կը կրէ Վեհապետ Քոնկոյի տիտղոսը։

Քոնկօ բաժնուած է զանազան տեղացի ցեղերու մէջ ու այլ և այլ փոքր թագաւորութեանց։

Գլխաւոր քաղաքներն են Մըսալալա, Թապօրա, Ուկուկօ, Մըբուօբուա, Ուճիճի, Մըբոյօ, Քասանկա որք կը պատկանին Գերմանացւոց, իսկ ծովեզերեայ մասերը կը գտնուին ընդ գերիշխանութեամբ Անգլիոյ։

ՕԹԵՆԹԱՑՒՈՑ ԵՐԿԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Օթենթոտս կը գտնուի Օվամպիայի, Բեչուանայ երկրին և Օրանժի միջև։ Երկիրը լեռնային և խիտ անտառներով ծածկուած է որոց մէջ կը գտնուին շատ մը վայրի գազաններ։ Բնիկներն այլ և այլ ցեղերու բաժնուած սևամորթ և կռապաշտ մարդիկ են. կ'զբաղին խաշնարածութեամբ և որսորդութեամբ։ Քաղաք չունին դրեթէ, այլ կ'ապրին Քրա'ալ կոչուած տեսակ մը խեղճուկ աւաններու մէջ որոնք գլխի վայր դարձած կողովի ձևն ունին։ Բողոքական Միսիոնարք կ'աշխատին այս կռապաշտ ժողովուրդը Քրիստոնեայ ընել։

ԲԱՐԵՅՈՒՍՈՅ ԵՐԿԻՐ
ԿԱՄ
ՔԱՓԻ ՏԷՐՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քափ՝ Աֆրիկէի ամենէն հարաւային և կարևորագոյն երկիրն է՝ զոր 1498 ին առաջին անգամ գտաւ Պառթէլէ-մի Տիազ Փորթուկէզ անուանի նաւապետը։



Քափ

Երկիրն ընդհանրապէս լեռնային է, բայց ունի ընդարձակ, բարեբեր և խիտ լաւ մշակուած դաշտեր որոց մէջ յառաջ կ'ուգան արմտիք, կանեփ, նարինջ, լեմոն, կիտրոն, թուզ, որթե-

տունկ, բամբակ, խահուէ, շաքարեղէգ եւլն։ Շատ յարգի է այս երկրի գինին։ Նոյնպէս կը գտնուի ադամանդի հանք։

Կենդանեաց մէջ յարգի են ձին, կովը և ոչխարը որոց բուրդը առեւտուրի մեծ նիւթ մ'է։ Ասոնցմէ 'ի զատ՝ Անգղիացիք այս երկրին մէջ կը սնուցանեն Էնկիւրիի համբաւաւոր այծերէն՝ որոց մազը մեծ յարգ ունին ամէն տեղ։ Կլիմայն ընդհանրապէս բարեխառն է։ Ունի երկու որոշ եղանակ, չոր և անձրեւային։ Առաջինը կ'սկսի Սեպտեմբերէն և կը տեւէ մինչեւ Մարտ։ Անձրեւային եղանակը կ'սկսի Մայիսին՝ սաստկալի փոթորիկներով և կը տեւէ մինչեւ Օգոստ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բարեյուսոյ երկիրն ունի 630,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 1,350,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Քափ, Հնդկաց ովկէանոսի վրայ ծաղկեալ ու վաճառաշահ նաւահանգիստ է։ Սուէզի ջրանցքը չբացուած՝ Եւրոպայէ Հնդկաստան գացող նաւերն ասկից կանցնէին։ Բօռդ-Էլիզապէթ, Անգլիական Քաֆրաստանի մէջ նաւահանգիստ է և ունի փղոսկրի և բուրդի մեծ վաճառականութիւն։

Կոստանդինա, գեղեցիկ այգեստաններով շրջապատուած փոքր քաղաք մ'է։

Երեւելի են նաեւ Արեւելեան Լոնտոն և Հրազմթոյն։

ՔԱՖՐԱՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՔԱՖՐԱՍՏԱՆ կը տարածուի Հնդկաց ովկէանոսի, Բարեյուսոյ երկրին, Մոզամպիքի և Օթէնթոթի միջեւ։

Քաֆրաստան լեռնային երկիր մ'է, տեղ տեղ կը գտնուին նաեւ աւազուտ դաշտեր՝ գեղեցիկ ովասիսներով։ Այս երկիրն հիւսիսէն կ'անցնի Զամպէզ գետը զոր առաջին անգամ գտաւ Լիվինկսթըն Անգլիացի անուանի երկրախոյզը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քաֆրաստան ունի իբր 1,200,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,000,000 ի չափ բնակիչ։

Քաֆրաստան կը բաժնուի այլ և այլ երկիրներու որոց կարեւորները կը պատկանին Անգլիոյ։

1. Նադալի Երկիր, գլխաւոր քաղաքներն են Բիեդէր-Մարիձպուրկ և Բօռ-Նադալ։

2. Զուլուներու Երկիր, որոց բնակիչք վայրենի են և յաճախ պատերազմի մէջ։

3. Հանրապետութիւն Օրէնճի, փոքր Հանրապետութիւն մ'է Քափի հիւսիսային արեւելեան կողմը, բնակիչք կը կոչուին Պօէր և են Քրիստոնեայ։ Գլխաւոր քաղաքն է Պլէօմֆօնթայն։

4. Հանրապետութիւն Թրանսուալի, զոր հիմնած են Հոլանտացիք։ Գլխաւոր քաղաքն է Բրէդօրիա։

Սոյն ծանօթ երկիրներէն 'ի զատ՝ ներսերը կը գտնուին Պասութա, Մախալօլօ, Պանեայի, և Պարօձէ անուանեալ վայրենի և ինքնագլուխ ցեղեր են.

Քաֆրաստանի բնակիչք կը կոչուին Քաֆր կամ Քաֆիր որոնք վայրենի և պատերազմասէր են։ Երկրին մէջ կը գտնուին ոսկւոյ և ադամանդի հանք։

ՄՈԶԱՄՊԻՔ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՄՈԶԱՄՊԻՔ՝ Արեւելեան Ափրիկէի կարեւոր երկիրներէն մին է որ՝ Ցէլկասօ հրուանդանէն սկսեալ՝ կ'երկարի 'ի հարաւ մինչ 'ի Քաֆրաստան։ Երկրին արեւմտեան սահմանին վրայ կը գտնուի Լուփոթա գօտին որ կը պարունակէ բարձր գագաթներ։ Կլիմայն ներքին մասանց մէջ բարեխառն, իսկ ծովեզերքը տաք և վատառողջ են։ Հողը բարեբեր և բազմաթիւ վտակներով ոռոգեալ է։ Առատօրէն կ'արտադրէ բրինձ, արմտիք, շաքարեղէգ, խահուէ,

բամպակ, լեղակ, արմաւ, նարինջ, լեմոն եւլն։ Լեռները ծածկուած են գեղեցիկ և թանձր անտառներով՝ որոց մէջ կը գտնուին բազում փիղ։ Երկրին մէջ կան ոսկւոյ, արծաթի և ադամանդի հարուստ հանքեր։

Մոզամպիք ունի 900,000 քիլմ. քառ. տարածութիւն և 2,500,000 բնակիչ։

Գլխաւոր Քաղաքներն են

Մոզամպիք, համանուն փոքր կղզւոյն մէջ բանուկ նաւահանգիստ մ'է։

Քիլիմանէ, Զամպէզ գետին տէլդային վրայ, ունի փղոսկրի, խէժի և արմտեաց մեծ առեւտուր։

Սօֆալա, երեւելի նաւահանգիստ է, մօտերը կան ոսկւոյ հանք։

Ներքին մասանց մէջ կը գտնուին Սէնա և Թէթէ՝ Զամպէզի վրայ։

Այս երկիրը Փորթուկէզք գտան 1498 ին՝ որ բաւական ծաղկեցաւ. բայց վերջի տարիներս Անգլիա այս երկրին ծովեզերեայ մէկ մասին տէր ըլլալով՝ Փորթուկալ քիչ մը տեղ միայն ունի այսօր։

ԶԱՆԿԷՊԱՐ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Զանկէպար երկար ու ծովեզերեայ երկիր մ'է որ կը տարածուի Հասարակածէն դէպ 'ի հարաւ՝ մինչեւ Տէլկատօ հրուանդանը։

Երկիրը լեռնային է, արեւմուտքէն դէպ արեւելք կը վազեն բազմաթիւ ջրոյ հոսանքներ որք երկիրը կ'արգասաւորեն։ Ծովեզերեայ մասին կլիմայն տաք ու վատառողջ, իսկ ներսերը բաւական բարեխառն են։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Զանկէպար ունի 650,000 քիլ. քառ. տարածութիւն և 1,200,000ի չափ բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են

Զանզիպար, համանուն փոքր կղզւոյն վրայ գեղեցիկ ու բանուկ նաւահանգիստ մ'է։ Հոս կը նստի Զանզիպարի Սուլթանը։

Պակամոյօ, Զանզիպար կղզւոյն դիմացը կարեւոր նաւահանգիստ մ'է ուսկից կը մեկնին կարաւանք՝ Ափրիկէի ներսերն երթալու համար։

Մէլէնտ, Քիլօա և Մակատօքօ բանուկ նաւահանգիստներ են։

Ծովեզերեայ մօտ կը գտնուին երկու փոքր կղզիներ՝ Բէմպա և Մօմպազա։

Ընդհանուր տեղեկութիւն

1881 էն 'ի վեր՝ Գերմանացիք իրենց կառավարութեան պաշտպանութեան ներքեւ մի քանի ընկերութիւններ կազմած էին իրենց ազգային վաճառականութիւնը զարգացնելու նպատակաւ։ Իսկ 1888 էն 'ի վեր՝ Գերմանիա այս երկրին և շրջակայ ընդարձակ հողերու տէր եղած է՝ որոց սահմանը կը հասնի մինչեւ Հասարակածի մեծ լիճերը։ Տեղւոյն բնակիչք այլ և այլ ցեղերու բաժնուած սեւամորթ կռապաշտներ են, կը գտնուին նաեւ Մահմէտական Արաբներ՝ որոնք առեւտրով կ'զբաղին։

ԱԿՐԱ-ՓԷՔՈՒԱՆԱ

Հարաւային Կուինիոյ և Բարէյուսոյ երկրին միջեւ լեռնային երկիր մ'է Ակրա-Փէքուանա՝ ուր Գերմանացիք 1885 էն 'ի վեր փոքր գաղթականութիւն մը հիմնած են։

ՕՎԱՄՓԻԱ

Հարաւային Կուինիաէ սկսեալ մինչեւ Օթէնթացւոց երկիրը տարածուած ծովեզերեայ նեղ ու լեռնային երկիրը կը կոչուի Օվամպիա՝ որու մէկ մասին տէր են Գերմանացիք։ Երկիրը լաւ ճանչցուած չէ տակաւին, բնակիչք կը կոչուին Օվամպօ և են երկրագործ ու հանդարտաբարոյ մարդիկ։

ԱՓՐԻԿԵԱՆ ԿՂԶԻՔ

Հնդկաց ովկէանոսի մէջ

ՄԱՏԱԿԱՍՔԱՐ

Մատակասքար, կը գտնուի Մոզամպիքի դիմացը, ունի 590,000 քիլ. քառ. տարածութիւն և 4,000,000 ի չափ բնակիչ։ Այս մեծ կղզւոյն հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարի գեղեցիկ անտառներով ծածկուած գօտի մը որ կը կոչուի Կաումիր։ Կղզւոյն ներքին մասանց կլիմային զով ու բարեխառն, իսկ ծովեզերքը վտառողջ՝ այլ շատ բարեբեր է։ Մատակասքար՝ Հասարակածի ամէն տեսակ բերքերն առատօրէն ունի, կը գտնուին նոյնպէս պղնձի, կապարի, երկաթի, ծծմբի, մանկանէզի և մարմարիոնի հարուստ հանքեր։

Գլխաւոր քաղաքներն են Թանանարիվօ, լերան մը կատարին վրայ շինուած է և կը ճանչցուի իբր Մայրաքաղաք Հովասի երկրին։

Դամադավ, Ֆոյրտուանդ, Թէնէրիվէ, Մուջանկա նաւահանգիստներ են կղզւոյն արեւելեան կողմը։ Ֆրանսացիք Մատակասքարի արեւելեան կողմն ունին Սուրբ Մարիամ կղզին, իսկ արեւմտեան հիւսիսային կողմը՝ Նոսի-Պէ և Նոսի-Դամպա կղզիները։ Մատակասքար կը բաժնուի զանազան իշխանութեանց որոց գլխաւորն է Հովասի երկիրը։ Ֆրանսա հետզհետէ իւր ազդեցութիւնը կը տարածէ այս հարուստ և կարեւոր կղզւոյն վրայ՝ որ արդէն իւր պաշտպանութեան ներքեւ է։

ՍԷՇԷԼԵԱՆ ԿՂԶԻՔ

Մատակասքարի հիւսիսային արեւելեան կողմը 30 ի չափ փոքր ու լեռնային կղզիներէ բաղկացած փոքր արշիպեղագոս մ'է որ կը պատկանի Անգլիոյ։ Նոյնպէս Անգլիոյ կը վերաբերի Սոխօրոա ապառաժուտ կղզին։

ՄԱՍՔԱՐԻՆԵԱՆ ԿՂԶԻՔ

Այս արշիպեղագոսը կը գտնուի Մատակասքարի արեւելեան կողմը, և է բարեբեր ու լաւ մշակուած։ Մօրիս կամ Ֆրանսայի կղզի և Րոտրիկէզ կը պատկանին Անգլիոյ, իսկ Պուրպօն Ֆրանսայի կը վերաբերի։

ՔՈՄՈՐԵԱՆ ԿՂԶԻՔ

Այն կղզիք կը գտնուին Մոզամպիքի ջրանցքին հիւսիսային կողմը, ունին բարեխառն կլիմայ և առատ բուսաբերութիւն։ Գլ. կղզիներն են Մեծ Կոմօր, Մօհէլի, Անժուան, և Մայօթ։ Այս վերջինը կը պատկանի Ֆրանսայի։

Ատլանտեանի կղզիք

ԱԶՈՐԵԱՆՔ

Ազօրեանք կը գտնուին Փորթուգալի արեւմտեան կողմը և ունին գեղեցիկ կլիմայ և հարուստ բուսաբերութիւն։ Գլխաւոր կղզիներն են Թէրսէիրա, Ս. Միշէլ, Սանդա-Մարիա եւլն. որք կը պատկանին Փորթուգալի։

ՄԱՏԷՐԱ ԿՂԶԻՔ

Կը գտնուին Ազօրեանց հարաւակողմը, երկու գլխաւոր կղզի կայ Մատէրա և Փորթօ-Սանթօ։ Այս կղզիք ունին առողջարար կլիմայ և գեղեցիկ անտառներ։ Մատէրա կը պատկանի Փորթուգալի։

ՔԱՆԱՐԵԱՆ ԿՂԶԻՔ

Այս արշիպեղագոսը կը գտնուի Սահարայի ծովեզրին մօտ և նշանաւոր է իւր կլիմային հեշտութեամբ, բնական հարստութեամբ և զմայլելի տեսարաններով։ Գլխաւոր կղզիներն են Թէնէրիֆա, Փալմա, Քանարիա, Երկաթի կղզի, Ֆորթավէնթուրա եւլն. Քանարեանք կը պատկանին Սպանիոյ։

ԴԱԼԱՐԻ ԳԼԽՈՅ ԿՂԶԻՔ

Այս արշիպեղագոսն ալ գտած են Փորթուգեզք և իրենց կը պատկանի։ Գլխաւոր կղզիներն են Ս. Վէնսան, ունի հանքածուխ։ Ս. Անթոն, Սանթիակօ եւլն։

Կուինէոյ ծոցի կղզիներն են

Ֆէրնանտօ-Փօ, գեղեցիկ կղզի մ'է և կը պատկանի Սպանիոյ։ Ս. Թովմաս և Իշխանի կղզի կը պատկանին Փորթուգալի, Աննոպօն՝ նոյնպէս Սպանիոյ։

Ատլանտեանի բացերը կը գտնուին Ս. Հեղինէ պատուաժուտ կղզին՝ ուր աքսորուելով մեռաւ Ֆրանսայի կայսրը Մեծն Նափոլէոն: Ասոմփսիօն կամ Վերափոխում, հրաբղխային կղզի մ'է որ առաջնոյն հետ կը պատկանի Անգլիոյ:

ԱՓՐԻԿԷԻ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1.

Ափրիկէ Երկրագնտին ո՞ր մասին մէջ կը գտնուի. — Ի՞նչ է իւր բնական ձեւը. — Ի՞նչ գիտես իւր մեծութեան վրայ. — Ո՞րոնք են սահմանները. — Քանի՞ ովկէանոս եւ ի՞նչ ծովեր կը տեսնէ. — Ափրիկէի հիւսիսային եւ արեւմտեան կողմերը ո՞ր ծոցերը կան. — Ո՞ր նեղուցով բաժնուած է Ասիայէ եւ որով՝ Եւրոպայէ. — Ի՞նչ կրնաս ըսել Ափրիկէի ընդհանուր կազմութեանը վրայ. — Ի՞նչ լերանց գօտիներ կան Ափրիկէի մէջ. — Ո՞րոնք են չորս գլխաւոր հրուանդանները. — Եգիպտոսի երկու կողմերը ո՞ր լեռները կան:

2.

Ափրիկէ քանի՞ աւազան ունի. — Ուսկի՞ց կը բղխի եւ ո՞ւր կը թափի Նեղոս. — Ո՞րոնք են Ատլանտեանի հարկատուները. — Ո՞ր գետերը կը թափին Հնդկաց ովկէանոսին մէջ. — Ո՞ւր կը գտնուի Չատ լիճը. — Հասարակածի ներքեւ ո՞ր մեծ լիճերը կան. — Ատլանտեանի մէջ ո՞ր կղզիները կը գտնուին. — Հնդկակա՞ց ովկէանոսի մէջ. — Մատակասքարի հիւսիսային կողմը ո՞ր հրուանդանը կայ:

3.

Ափրիկէ ո՞րչափ տարածութիւն եւ բնակիչ ունի. — Մեծագոյն մասն ի՞նչ կլիմայի ներքեւ է. — Ո՞ր երկիրները Հասարակածին ներքեւ կը գտնուին. — Պէրպէրիստանի կլիման ի՞նչպէս է. — Ո՞րոնք են Ափրիկէի բերքերը. — Ո՞ր երկրաց մէջ յառաջ կ'ուգան բրինձ, բամպակ, որթետունկ եւ խահուէ. — Ափրիկէ ի՞նչ հանքեր ունի. — Ո՞ր երկրին մէջ կը գտնուի ադամանդ. — Ընտանի ի՞նչ կենդանիներ ունի. — Ո՞րոնք են Ափրիկէի վայրի գազանները. — Ուղտը ի՞նչ մասնաւոր կարեւորութիւն մ'ունի Ափրիկէի համար:

4.

Ափրիկէ քանի՞ գլխաւոր ազգութեանց կը բաժնուի. — Բնակիչք մեծաւ մասամբ ի՞նչ ցեղի կը պատկանին. — Ո՞ր երկիրները կան Միջերկրականի, Ատլանտեանի եւ Հնդկաց ովկէանոսի վրայ. — Ափրիկէի կարեւորագոյն երկիրներուն ո՞րոնք տիրած են. — Ափրիկէի մէջ ի՞նչ երկիրներ ունի Անգլիա, Ֆրանսա՞, Թուրքիա՞, Փորթուկա՞լ, Գերմանիա՞, Սպանիա՞. — Բոռ-Սայիտէ ճամբայ ելնելով Ափրիկէի շրջանն ըրէ, ցոյց տալով գլխաւոր երկիրները՝ եւ նշանակելով նոցա նաւահանգիստները. — Ցոյց տուր Ափրիկէի գետերուն ու գետեզերեայ գլխաւոր քաղաքները:

5.

Ո՞րոնք եղած են Ափրիկէի շրջանն ընող առաջին նաւորդները. — Ո՞ր երկիրները խուզարկեցին Մօնքօ-Բարք. Պարթհ, Սփիք, Կրանդ, Լիվինկսթըն, Պրազա, Ստէնլի, Պէյքըր, Էմին փաշա. — Ափրիկէ բնական ի՞նչ պատճառներով քաղաքակրթութեան մէջ ետ մնացած է. — Ի՞նչ է բնակչաց կրօնն ու զբաղումը. — Ափրիկէի ո՞ր բերքերը մեծ յարգ ունին Եւրոպիոյ մէջ:

ՀՐԱՀԱՆԳ

1o. Գծել համր Ափրիկէ մը եւ նշանակել անոր երեւելի նաւահանգիստները:
2o. Նոյնպէս գծել Ափրիկէի աշխարհացոյց մը եւ առանձին գոյներով նշանակել Եւրոպական գաղթականութիւնները:
3o. Առանձինն գծել Եգիպտոսի եւ Պէրպէրիստանի քարտէսը:
4o. Գծել համր Ափրիկէ մը եւ նորա վրայ նշանակել լերանց գօտիներն, գետերն ու լիճերը:

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՄԵՐԻԿԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՄԵՐԻԿԱ՝ որ կը կոչուի նաեւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, կը գտնուի Արեւմտեան կիսագունտի մէջ և կը տարածուի Հիւսիսային Բեւեռէ մինչ 'ի Հարաւային Բեւեռ:

Ամերիկա կը բաժնուի երկու ցամաքներու, ՀԻՒՍԻՍԱՅԻՆ

ԱՄԵՐԻԿԱ և ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ *որոնք միացած են Փանամայի պարանոցով։*

Ովկէանոսք, Ծովք, Ծոցք և Նեղուցք

Նոր Աշխարհը շրջապատած են 4 ովկէանոսներ՝ Արջային՝ հիւսիսային կողմը որմէ ձեւացած են Լինքըլնի, Պաֆֆինի և Հուտսոնի ծովերը։

Ատլանտեան ովկէանոս՝ արեւելեան կողմն՝ որմէ ձեւացած են Անդիլեան ծովը, Ս. Լօռանի, Մեքսիկայի, Հոնտուրասի, Տարիէնի, Վենեզուէլլայի կամ Մարաքայպոյի, Սանդոսի և Ս. Գէորգայ ծոցերը։

Խաղաղական ովկէանոս արեւմտեան կողմն՝ որմէ ձեւացած են Պէհրինկայի ծովէն 'ի զատ՝ Քալիֆօռնիոյ և Փանամայի ծոցերը։

Նոր Աշխարհի գլխաւոր նեղուցներն են Պէհրինկայի նեղուց՝ Սառուցեալ և խաղաղական ովկէանոսներու միջեւ և որ կը բաժնէ Նոր աշխարհը Ասիայէ։

Տիւիսի նեղուց, Պաֆֆինի ծովուն և Ատլանտեանի միջեւ։

Հուտսոնի նեղուց, համանուն ծոցը կը միացնէ Ատլանտեանի հետ։

Պէլ-իլի նեղուց, Ս. Լօրան ծոցին և Ատլանտեանի միջեւ։

Լէնքէսդր, Պէռռօ և Պէնքսի նեղուցները Բեւեռային կղզեաց միջեւ։

Մակէլլանի նեղուց, Հար. Ամերիկայի հարաւակողմը՝ Հրոյ երկրին և Հօրն գլխոյն մէջ տեղ։

Գետք և Լիճք

Հիւսիսային Ամերիկա ունի չորս աւազան՝ Հիւսիսային՝ ուր կը թափին Մաքընզի, Մայն և Պաքք 'ի Սառուցեալ ովկէանոս։ Չըրչիլ, Նէլսոն, Ալպանի և Սեվէրն՝ կը թափին Հուտսոնի ծոցը։

Ատլանտեան ովկէանոս կը թափին Սէն-Լօրան, Հուտսոն, Քոնէքթիքութ և Փոթոմաք։

Մեքսիկայի ծոցը կը թափին Միսիսիփի և Միսուրի նշանաւոր գետերէն 'ի զատ՝ նաեւ Րիօ-Կրանտ-տէլ-Նօռ։

Հարաւային Ամերիկայէ Անդիլեան ծով թափող գետն է Մա-տըլէն. Իսկ Ատլանտեան կը թափին Օրինօքօ, Ամազոն, Թոքան-

տին, Սան-Ֆրանչիսքօ և Րիօ-տը-լա-Փլաթա մեծ գետը՝ որ ձեւացած է Բարակուա, Բարանա և Ուրուկուա գետերէն։ Արեւմտեան աւազանի գետերն են Եուքօն որ՝ Ալասքայէն անցնելով կը թափի Պէհրինկայի ծովը։ Օրէկօն, Քոլումպիա կը թափին Մեծ ովկէանոս։ Քալիֆօրնիոյ ծոցը կը թափի Րիօ-Քոլօռատօ։

Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային և արեւելեան կողմերը կը գտնուին հետեւեալ կարեւոր լիճերը, — Մեծ Արջ, Գերեաց, Ադապասքա, Ուինիփեկ, Վերին, Միչիկան, Հուրօն, Օնթարիօ և Էրիէ որոց մեծ մասը ջրանցքներով իրար միացած են։

Հարաւային Ամերիկայի լիճերն են։ Մարաքայպօ՝ Քոլոմպիոյ հիւսիսակողմը։ Թիթիքաքա՝ Բէրուի հարաւակողմը, Լօս-Փաթօս՝ Պրազիլիոյ հարաւակողմը։

Թերակղզիք, Կղզիք և Հրուանդանք

Ամերիկայի մէջ կը գտնուին վեց գլխաւոր թերակղզիներ, Լապրատօր՝ Նոր Բրիտանիոյ հիւսիսային արեւելեան կողմը. Նոր Սկովտիա՝ Նոր Բրիտանիոյ արեւելեան կողմը. Ֆլօրիտա՝ Միացեալ Նահանգաց հարաւային արեւելեան կողմը. Եուքաթան՝ Մեքսիկայի արեւելեան հարաւային կողմը։

Ալասքա՝ Հիւս. Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը, Քալիֆօռնիա՝ Մեքսիկայի արեւմտեան կողմը։

Նոր Աշխարհը շրջապատող ջուրերուն մէջ կը գտնուին մեծ ու փոքր կղզիներ։

Գլխաւորներն են։

Կրօէնլանտիա, Սառուցեալ ովկէանոսի մէջ, Հիւս. Ամերիկայի հիւսիսային արեւելեան կողմը։

Վիքթօրիա-Լանտ, Բրէնս-Ալպէր, Քըմպըրլէնտ, Մէլվիլ, Քոպըրն՝ նոյնպէս սառուցեալ ովկէանոսի մէջ սառնապատ և թերածանօթ կղզիներ են։

Ատլանտեանի մէջ կը գտնուին Նիու-Ֆաունտլէնտ (Նոր երկիրը), Ս. Պետրոս, Միքըլօն, Բրէնս-Էտուար, Անթիքոսթի՝ Ս. Լօրանի բերնին մօտ։

Պերմուտեան, Լուքայեան, Մեծ և Փոքր Անդիլեանք՝ Մեքսիկայի ծոցին և Անդիլեան ծովուն միջեւ։

Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան կողմը՝ Խաղաղականի մէջ

կը գտնուին Ալէութեան, Թագուհի Շառլօթ եւ Վանքուվր կղզիք։

Հարաւային Ամերիկայի արեւմտեան կողմը կը գտնուին Կաղափակոս, Չիլօէ, Ուէլինկթըն, Հանովր եւ Աստուածամօր արշիպեղագոսն։

Հարաւային ծայրը կը գտնուի Հրոյ Երկիր կոչուած հրաբղխային փոքր կղզին որ Մակէլլանի նեղուցով ցամաքէն բաժնուած է։ Հրոյ երկրին հիւսիսային արեւելեան կողմը կը գտնուի Մալուինեան փոքր արշիպեղագոսը։

Նոր աշխարհի գլխաւոր հրուանդաններն են։
Ֆէրուէլ, Կրօէնլանտիոյ հարաւային կողմը։
Հաթրաս, Մ. Նահանգաց արեւելեան »
Քաթօշ, Եուքաթանի արեւ. հիւսիսային »
Ս. Լուկաս, Քալիֆօրնիոյ հարաւային »
Ս. Լուիզ, Լապրատորի արեւելեան »
Արեւմտեան գլուխ, Ալասքայի արեւմտեան »
Սէյպըլ, Նոր Սկովտիոյ հարաւային »

Հարաւային Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են։
Կալլինաս, Քոլոմպիոյ հիւսիսային կողմը։
Օրանժ, Ս. Րոք եւ Ֆրիօ՝ Պրազիլիոյ ափանց վրայ։
Հօրն, Հրոյ երկրին հարաւակողմը։
Ս. Անտօն, Լա-Պլաթայի արեւելեան հարաւային կողմը
Պարինա, Պերուի արեւմտեան կողմը։

Լերինք եւ Հրաբուղք

Նոր Աշխարհի ամենէն նշանաւոր լեռնաշղթայն է Ապառաժ գօտին որ՝ Ալասքայէն սկսեալ ու ցամաքին արեւմուտքէն կ՚երկարի մինչեւ Հրոյ երկիր։

Այս գօտին Հիւսիսային Ամերիկայի մէջ կը կոչուի Ապառաժ, Մեքսիկայի եւ Կեդրոնական Ամերիկայի մէջ Քորտիլեան, իսկ Հարաւային Ամերիկայի մէջ Անտեան կամ Անտէզ լերինք։

Սոյն շղթային արեւմտեան կողմը՝ Միացեալ Նահանգաց մէջ կը գտնուի Սիէռա-Նէվատա գօտին, իսկ նոյն երկրին արեւելեան մասին եւ Ատլանտեանի միջեւ կ՚երկարի Ալլէկանի գօտին։

Պրազիլիոյ մէջ կը գտնուին համանուն լերինք։

Նոր Աշխարհի գլխաւոր հրաբուղխներն են Ս. Եղիա, Աքոնկակուա, Փիչինկա, Արէքիփա, Քոթօփաքսի։

Կլիմայ եւ բուսաբերութիւն

Ամերիկա գտնուելով երկու բեւեռներու միջեւ՝ ունի հաւասարապէս երեք գօտիներու ներգործութիւնը։ Միայն թէ Հասարակածային երկիրք՝ շնորհիւ իրենց մէջ ունեցած բարձրաբերձ լերանց եւ ընդարձակ գետերուն, մանաւանդ աւազային անապատներէ զերծ ըլլալնուն պատճառաւ՝ Հին Աշխարհի միեւնոյն աստիճանին ներքեւ գտնուած երկիրներէն աւելի բարեխառն են։

Հիւս. Ամերիկայի հիւսիսային կողմերն սաստիկ ցուրտ եւ սառնապատ, Մեքսիկայի ծոցին սահմանակից մասը վատառողջ իսկ միջին կողմերը տաք կ՚ըլլան։

Նոր Աշխարհի հողն ընդհանրապէս բարեբեր է եւ ամէն կլիմայի յատուկ բոյս կ՚արտադրէ։ Գլխաւոր բոյսերն են արմտիք, բրինձ, եգիպտացորեն, հաճար, վարսակ, մանեօքա, գետնախնձոր, նարինջ, կիտրոն, որթատունկ, քօքօ, պանան, շաքարեղէգ, խահուէ, ծխախոտ, բամպակ, ներկի նիւթեր, բժշկական բոյսեր, վանիլիա, քինա, լեղակ, պտղատու ծառեր, շինութեան ազնիւ փայտ, քաքաօ եւլն։

Կենդանիք եւ Հանք

Նոր Աշխարհը շատ անուանի է իւր հարուստ հանքերուն կողմանէ։ Ունի հանքածուխ, քարիւղ, ոսկի, արծաթ, պղինձ, բլատին, երկաթ, սնդիկ, թանկագին քարեր, ծծումբ եւլն։

Ամերիկա ունի եզ, ոչխար, այծ, ձի, էշ եւ այլ ընտանի կենդանիներ որոնք փոխադրուած են Հին Աշխարհէ։ Իսկ վայրի կենդանիներն են Գակուար (կարմիր վագր), Եակուար, գայլ, արջ, կոկորդիլոս, մեծամեծ օձեր, կինճ, կապիկ, լամա, ջայլամ եւլն։

Քաղաքակրթութիւն

Ամերիկա ունի 120,000,000ի չափ բնակիչ որոց մեծագոյն մասը սերած է Եւրոպաէ գաղթած Անգլիացիներէ, Իրլանտացիներէ, Սպանիոլներէ, Փորթուկէզներէ, Ֆռանսացիներէ Գերմաններէ եւլն։

Այս գաղթականք՝ իրենք արդէն քաղաքակրթեալ՝ Նոր Աշխարհի մէջ ալ գտնելով բնական ամէն տեսակ հարստութիւններ,

սկսան քիչ ժամանակի մէջ մեծ յառաջադիմութիւններ ընել քաղաքակրթութեան ամէն ճիւղերուն մէջ։

Բնիկ Ամերիկացիներն ալ որոնք կը կոչուին Հնդիկ, հետզհետէ քաղաքակրթուելու վրայ են։

Նոր Աշխարհի կառավարութեանց ձեւն է Հանրապետութիւն։ Հիւսիսային Ամերիկայի մէջ՝ Նոր Բրիտանիա և Միացեալ Նահանգաց բնակիչք ընդհանրապէս Բողոքական, իսկ մնացեալներն Կաթոլիկ են։

Ամերիկա մինչեւ ԺԵ^րդ դարու վերջերը անծանօթ էր Հին Աշխարհի։ 1492 ին՝ Ճենովացի անուանի նաւապետ մը՝ Քրիստափոր Քոլոմպոս, որ միանգամայն քաջ աշխարհագէտ էր, համոզուած ըլլալով թէ երկիրս կլոր է, Հնդկաստանի ծովային ճանապարհը գտնելու նպատակաւ՝ Սպանիոյ Փալօս նաւահանգստէն ճամբայ ելաւ դէպ արեւմուտք, և փոխանակ Հնդկաստանի՝ գտաւ Նոր Աշխարհի մէկ մասը։ Ինքն Քոլոմպոս՝ կարծելով թէ իրօք Հնդկաստան հասած է, տեղացիները կոչեց Հնդիկ։

Սակայն Նոր Աշխարհը փոխանակ Քոլոմպոսի անուամբն կոչուելու, ԱՄԵՐԻԿԱ անուանուեցաւ՝ Ֆիօրենցացի Ամերիկոս Վեսփուչչի ճանապարհորդին անուամբ։

Ամերիկեան Աշխարհ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԳՐՕԷՆԼԱՆՏԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԱԳԻՐ

ԳՐՕԷՆԼԱՆՏԱ կը տարածուի Հիւս. Ամերիկայի հիւս. արեւելեան կողմը՝ Սառուցեալ և Ատլանտեան ովկէանոսներու, Պաֆֆինի ծովուն և Տէյվիսի նեղուցին միջեւ։ Մեծատարած և սառնապատ կղզի մ'է Գրօէնլանտա զոր Թ^րդ դարուն գտան Իսլանտացի նաւորդք։ Միայն հարաւային կողմերը կ'աճին քիչ քանակութեամբ գետնախնձոր, կանեփ և հաճար։ Տեղացիք կարճահասակ մարդիկ են և կը կոչուին Եսքիմացի։ Գլխաւոր զբաղումնին է ձկնորսութիւն և որսորդութիւն։ Կրօնիւ Բողոքական են։



Փօկ

Տանըմարքացիք այս կղզւոյն արեւմտեան ափանց վրայ ունին Ուբէրնավիգ, Քրիսդիանշապ, Եուլիանապ և Կոդհապ գաղթավայրերն՝ որոց եղերքը կէտ ձկան և փոկի որսորդութիւն կ'ընեն։ Գրօէնլանտա ունի իբր 14,000 բնակիչ։

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ

ԲՆԱԿԱՆ ՏԵՂԱԳԻՐ

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ՝ կը գրաւէ Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային մասը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Արջային ովկէանոս, արեւելքէն՝ Ատլանտեան ովկէանոս, հարաւէն՝ Միացեալ Նահանգ, արեւմուտքէն՝ Ալասքա և Մեծ ովկէանոս։

Բրիտանական Ամերիկա ընդհանրապէս տափարակ երկիր մ'է,

իսկ հիւսիսային կողմերը խոնաւ և ճահճային են: Կլիմայն հիւսիսային կողմերն ու Գանատայի մէջ սաստիկ ցուրտ, ձմեռները երկայն և ամառները կարճ են: Խաղաղականի սահմանակից գաւառաց կլիմայն աւելի բարեխառն է:

Երկրին հողը թէեւ բնականէն այնքան բարեբեր չէ, բայց բնակչաց աշխատութեան շնորհիւ երկրագործութիւնը շատ ծաղ-



Քրիստափոր Քոլոմպոս

կած է և կ'արտադրէ գետնախնձոր, արմտիք, եգիպտացորեն, կանեփ, ծխախոտ և հաճար. Նոյնպէս՝ Նոր Բրիտանիոյ բուսական գլխաւոր հարստութեանց մէկն է գեղեցիկ անտառներն՝ որոնք շինութեան ազնիւ փայտ կը մատակարարեն:

Երկրին մէջ կը գտնուին ոսկւոյ, արծաթի, երկաթի, կապարի, պղնձի, մանկանէզի և քրոմի հանքեր որոնք ընդհանրապէս կը շահագործուին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նոր Բրիտանիա ունի 8,300,000 *քիլ. քառ. տարածութիւն և* 4,500,000 *բնակիչ: Երկիրը բաժնուած է այլ և այլ գաւառներու որոց ամբողջութիւնը կը կազմէ* Գանատական Դաշնակցութիւնը:

Մայրաքաղաքն է **ՕԹԱՎԱ** (30,000 *բն.*), *համանուն գետակին վրայ, Գանատայի գլխաւոր քաղաքն է և ունի ատաղձի մեծ վաճառականութիւն:*

Քէպէք, *Ս. Լօրանի վրայ գեղեցիկ դիրքով խիստ վաճառաշահ նաւահանգիստ է:*

Մոնրէալ (150,000 *բն.*), *Ստորին Գանատայի գլխաւոր քաղաքն և է Ս. Լօրանի վրայ ծաղկեալ ու վաճառաշահ նաւահանգիստ. ունի նաւարան և ուսումնական հաստատութիւններ:*

Թորոնթօ, *Օնթարիօ լճին վրայ* Վերին Գանատայի *ամենէ ծաղկեալ քաղաքն է:*

Ֆրետէրիկթաւն *և* Ս. Օհաննէս, *գլխաւոր քաղաքներ են* Նոր Պրունսվիգ *գաւառին մէջ:*

Հալիֆաքս, Նոր *Սկովտիոյ գլխաւոր քաղաքն ու բանուկ նաւահանգիստ է:*

Նոր Երկիր, *Ս. Լօրան գետին բերանը՝ եռանկիւնաձեւ կղզի մ'է որու ծովափանց մօտ ընդարձակ ձկնորսութիւն կ'ըլլայ: Գլխ. քաղաքն է Ս. Օհաննէս:*

Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը կը գտնուին Պերմուտեան անբեր և ապառաժուտ կղզիք որոնք Նոր Բրիտանիոյ կը վերաբերին:

Իսկ Ս. Պետրոս, Մեծ Միքըլօն և Փոքր Միքըլօն կը պատկանին Ֆրանսայի:

Մեծ ովկէանոսի մէջ կը գտնուին Վանքուվր և Թագուհի Շառլօթ կղզիները՝ Բրիտանական ցամաքին մօտ:

Բրիտանական Ամերիկա թէեւ 'ի բնէ չէ այնքան բարեբեր, սակայն իր բնակչաց գործունէութեան շնորհիւ՝ երկրագործութիւնը բաւական յառաջ գացած է, մանաւանդ Գանատայի մէջ:

Բնակիչք ըստ մեծի մասին Անգլիացի են: Ֆրանսացիք կը գտնուին Գանատայի մէջ՝ որ էր 'ի սկզբան իրենց սեփականութիւնը: Արուեստ, վաճառականութիւն և հասարակաց կրթութիւն զարգացեալ վիճակի մէջ են: Երկրին տիրող կրօնն է Բողոքականութիւն, իսկ Ֆրանսացիք Կաթոլիկ են:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ կը գրաւեն Հիւս. Ամերիկայի կեդրոնական մասն և կը կազմեն Երկրագնտիս մեծագոյն Հանրապետութիւնը։

Սահմաններն են Հիւսիսէն՝ Նոր Բրիտանիա, արեւելքէն՝ Ատլանտեան ովկէանոս, հարաւէն՝ Անգլիեան ծով, Մեքսիկայի ծոց և Մեքսիկա. արեւմուտքէն՝ Խաղաղական ովկէանոս։



Հսկայ ծառ 'ի Քալիֆօռնիա

Այս երկրին արեւելեան և արեւմտեան կողմերը կ'երկարին բարձր լեռնագօտիներ, իսկ մէջ տեղը ընդարձակ դաշտագետին

մ'է որու մէջէն կը հոսին Միսիսիփի և Միսուրի մեծ գետերը։

Միացեալ Նահանգներն իրենց ընդարձակութեան պատճառաւ՝ ամէն տեսակ կլիմայ ունին։ Օրինակի համար, հիւսիսային նահանգները Եւրոպիոյ հիւսիսային երկիրներու կլիմայն ունին, Ատլանտեանի ծովեզերեայ ու միջին մասերը՝ ամառները բարեխառն և նոյն համեմատութեամբ ձմեռներն ալ ցուրտ կ'ըլլեն, իսկ Մեքսիկայի ծոցին և ծովեզերայ սահմանակից մի քանի գաւառաց մէջ սաստիկ տաք կ'ըլլէ և տեղ տեղ ալ մահացու հիւանդութիւններ յառաջ կ'ուգան։ Այս գեղեցիկ երկիրը՝ որու մէջ հողագործութիւնը շատ ծաղկած է, կ'արտադրէ ցորեն, գետնախնձոր, ծխախոտ, բամպակ, լեղակ, բրինձ, շաքարեղէգ, որթատունկ, թզենի, նարնջենի, կիտրոնենի, ներկի նիւթեր, դեղօրայք, այլ և այլ պտղատու և շինութեան փայտի ընտիր ծառեր, մեծատարած և հսկայ անտառներ՝ մանաւանդ 'ի Քալիֆօռնիա։

Միացեալ Նահանգներն ունին հարուստ հանքեր ածխոյ, քարիւղի, երկաթի, պղնձի, ոսկւոյ, արծաթի, կապարի, զինկի, մնդիկի, շինութեան քարերու ևլն։

Ընտանի կենդանեաց մէջ կը գտնուին կով, ձի, ոչխար, այծ, խոզ և հարաւային մասանց մէջ ալ՝ կոկորդիլոս, ընձուղտ և մեծամեծ օձեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Միացեալ Նահանգներն ունին 7,650,000 քիլ. քառ. տարածութիւն և 64,500,000 բնակիչ։

Այս երկիրը կը պարունակէ 45 նահանգ և մի քանի Թէրրիթօրի որոնք իրարու դաշնակից բայց առանձին հանրապետութիւններ են՝ ունենալով իրենց նախագահն ու տեղական վարչութիւնը, այնպէս որ ամէնքն ալ առանձին առանձին մէկ մէկ տէրութեան կը նմանին աւելի։ Իսկ երկրին ընդհանուր օրէնքները կը հաստատէ Քօնկրէս կոչուած Ազգային ժողովն որ՝ կը բաղկանայ Ծերակոյտէ ու Երեսփոխանաց ժողովէն՝ որոնց անդամները նահանգներէն կը ղրկուին։ Այս Գերագոյն ժողովն է որ կ'ընտրէ երկրին Ընդհանուր Նախագահը։

ՈՒԱՇԻՆԿԴԸՆ (150,000 բն.), Մայրաքաղաք Միացեալ Նահանգաց, Փոթոմաք գետին վրայ, հիմնեալ յանուն Գէորգ Ուա-

շինկրդն անուանի զօրավարին։ Այս քաղաքին մէջ տեղը՝ բլրի մը վրայ կառուցուած է Կապիտոլ անուանեալ՝ ազգային հոյակապ շէնքը։ Ուաշինկդընի մէջ է կառավարութեան կեդրոնը և խորհրդարանը։

Գլխաւոր նաւահանգիստք Ատլանտեանի վրայ

Բօրլանտ և Փորթսմաութ, *Մէյն նահանգին մէջ*։

Պոսթըն, *Մասաչուսէթ նահանգին գլխ. քաղաքն ու անուանի նաւահանգիստ է. Հոս ծնած է Բէնճամին Ֆրանքլին մեծանուն փիլիսոփայն*։

ՆԻՈՒ-ԵՈՐՔ (*իբր* 2,000,000 *բն.*)։ *Դաշնակցութեան ամենէ բազմամարդ ու ծաղկեալ նահանգին կարեւորագոյն քաղաքն է՝ Հուտսըն գետին վրայ և միանգամայն խիստ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ է։ Նիու-Եորքի գլխաւոր արուարձաններն են Պրուքլին, ուր կայ առկախեալ մեծագործ կամուրջ մը, և Ժէրսէյ-Սիթի*։

Պալթիմօր, *Մէրիլանտ նահանգին մէջ ծաղկեալ նաւահանգիստ. կ'արտահանէ արմտիք*։

Նորֆոլք, *Վիրճինիա նահանգին մէջ երեւելի նաւահանգիստ է*։

Չարլսթոն, *Հար. Քարոլինայի գլխաւոր քաղաքն և վաճառաշահ նաւահանգիստ է*։

Բէնսաքոլա, *Մեքսիքայի ծոցին վրայ Ֆլօրիտա նահանգին մէջ*։

Մօպիլ, » » » *Ալապամա* » »

Նոր-Օռլէան, (300,000 *բն.*), *ընդարձակ և վաճառաշահ նաւահանգիստ է Լուիզիանա նահանգին մէջ, գլխաւորապէս կարտահանէ բամպակ*։

Կալվէսթըն, *Թեքսաս նահանգին մէջ բանուկ նաւահանգիստ է*։

Խաղաղականի վրայ ամենէն նշանաւոր նաւահանգիստն է Սան-Ֆրանչիսկօ, *որ երկաթուղեաւ միացած է Ատլանտեան ովկէանոսի*։

Ներքին Գլ. քաղաքներն են

Ֆիլատելֆիա, Փիթիզպուրկ, Րիչմոնտ, Քոլումպիա, Ատլանթա, Սինսինաթի, Չիկակօ, Ֆրանքֆօրթ, Լուիզվիլ, Սէն-Լուի, Սաքրամէնթօ, Վիրճինիա են։

ԱԼԱՍՔԱ

Ալասքա՝ Հիւս. Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը՝ իբր 70,000 *բնակչօք մեծատարած ցամաքակղզի մ'է որ՝ 'ի սկզբան*

Ռուսաց կը վերաբերէր բայց 1867 *էն 'ի վեր կը պատկանի Միացեալ Նահանգաց։ Այս երկրին մեծ մասը սառնապատ լինելուն՝ միայն ծովեզերքները ծանօթ են և ուր պալէնայի որսորդութիւն կըլլայ։ Այս ցամաքակղզւոյն մէջն է Ս. Եղիա հրաբուղխը։ Գլխաւոր քաղաքն է Նոր Արխանկել*.

Ընդհանուր տեղեկութիւն

Միացեալ Նահանգներն 'ի սկզբան Անգլիոյ գերիշխանութեան ներքեւ էին, սակայն աւելի դրեթէ մէկ դար առաջ բաժնուելով Մայր երկրէն, եղան առանձին Հանրապետութիւն։ Այս երկրին բնակիչք բաղկացած են Անգլիացիներէ, Իրլանտացիներէ, Գերմանացիներէ, Ֆռանսացիներէ և այլ Եւրոպական ազգերէ։ Արուեստ, ճարտարութիւն, ձեռագործ, երկրագործութիւն, նախնական կրթութիւն և վաճառականութիւն շատ զարգացած են։ Երկիրը ծածկուած է երկաթուղւոյ բազմաթիւ գծերով և ջրանցքներով։ Տիրող լեզուն է Անգլիերէն։ Կրօնն է Բողոքականութիւն։

Միացեալ Նահանգներն ունին 270,000 *քիլմ. երկաթուղի*։

ՄԵՔՍԻԿԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՄԵՔՍԻԿԱ՝ որ էր ի սկզբան Սպանիական գաղթականութիւն մը, կը տարածուի Միացեալ Նահանգաց հար. արեւմտեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Միացեալ Նահանգք, արեւելքէն՝ Մեքսիկայի ծոց, հարաւէն՝ Կեդրոնական Ամերիկա, և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկէանոս։ Երկիրն ընդհանրապէս լեռնային է և կը պարունակէ երկու նշանաւոր հրաբուղխներ՝ Փոփոքաթէբլ (5,400 *մ. բ.*) *և Օրիզապա* (5,300 *մ. բ.*)։

Երկրին միջին մասերը բարձր լերանց պատճառաւ բարեխառն, արեւմտեան կողմերն սաստիկ տաք, իսկ արեւելեան ծովեզերքն

շատ փատառողջ է և կը տիրէ Դեղին ջերմ կոչուած մահացու հիւանդութիւնը։

Մեքսիկայի հողն թէև ընդհանրապէս խիստ բարեբեր՝ սակայն լաւ մշակուած չէ։ Գլխաւոր բոյսերն են ցորեն, շաքարեղէգ, քաքաօ, վանիլիա, բամպակ, լեղակ, գետնախնձոր, քինա եւն։ Ունի նաեւ բազմաթիւ պտղատու ծառեր եւ չինութեան աղնիւ փայտ։

Մեքսիկա ունի արծաթախառն կապարի, պղնձի, ոսկւոյ և արծաթի հարուստ հանքեր։

Ընտանի կենդանիներէ 'ի զատ՝ կը գտնուին Բակուար և այլ վայրի գազաններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Մեքսիկա ունի 2,000,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 10,500,000 բնակիչ։

Մեքսիկա՝ իրարու դաշնակից 27 նահանգներէ կազմուած Հանրապետութիւն մ'է։

ՄԵՔՍԻԿՕ (300,000 բն.), Մայրաքաղաք Մեքսիկայի, ծովու մակերեւութէն 2,274 մէթր բարձրութեամբ սիրուն հովտի մը մէջ։ Ունի գեղեցիկ Մայր եկեղեցի, Արքեպիսկոպոսարան, փողերանոց, համալսարաններ և բաւական բանուկ վաճառականութիւն։

Գլխաւոր Նաւահանգիստք

Վէրա-Քրուզ, երեւելի նաւահանգիստ, ունի առեւտրական մեծ յարաբերութիւն Եւրոպիոյ հետ։ Քամբէջ, Եուքաթան թերակղզւոյն մէջ՝ ուր կան շատ հնութիւններ։

Խաղաղականի վրայ կը գտնուին Մազաթլան և Ակափուլքօ։

Ներքին Գլ. քաղաքներն են

Բուէպլա, ճարտարարուեստ քաղաք է։ Երեւելի են նաեւ Սան Լուի-տը-Փոթոզի, Կուատալախարա, Կուանա-Խուաթօ, Քուէրէթարօ եւայլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Այս երկիրը գտաւ Ֆէրնան-Քորթէզ Սպանիայի երեւելի նաւապետը 1519ին, որ ատեն Մեքսիկացիք ունէին կանոնաւոր կառավարութիւն և բաւական քաղաքակրթեալ էին։ Սպանիացիք 300 տարւոյ չափ տիրեցին այս երկրին, բայց 1821էն 'ի վեր անկախ է։

Արուեստ եւ ճարտարութիւն հետզհետէ զարգանալու վրայ են։ Մեքսիկայի վաճառականութեան նիւթերն են՝ խահուէ, վանիլիա, ծխախոտ, ղունատու նիւթեր, լեղակ, շաքար, քաքաօ, չինութեան աղնիւ փայտ, այլեւայլ մետաղներ, կաշի եւլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՈՒՔԱԹԱՆ

Սոյն թերակղզւոյն արեւելեան ծովեզրին մէկ մասը կը պատկանի Անգլիոյ։ Գլխաւոր քաղաքն է Պէլիզ՝ որ ունի Քամբէջի փայտի ընդարձակ առեւտուր։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ կը կոչուի այն նեղ երկիրն՝ որ Մեքսիկայէ սկսեալ՝ կ'երկարի մինչեւ Փանամա։ Լեռնային երկիր մ'է Կեդրոնական Ամերիկա՝ ուր կը գտնուին 35 է աւելի հրաբուղխներ։ Ունի երկու լիճ, Նիքարակուա և Մանակուա։

Կլիմայն՝ ներքին մասանց մէջ զով, իսկ ծովեզերքը տաք ու փատառողջ է։

Գլխաւոր բոյսերն են բրինձ, քաքաօ, խահուէ, շաքար, բամպակ, ծխախոտ, լեղակ, վանիլիա, պտղատու ծառեր, չինութեան աղնիւ փայտ եւլն։

Երկրին մէջ կան հարուստ հանքեր որոնք չեն շահագործուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կեդրոնական Ամերիկա ունի 446,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,900,000 բնակիչ։

Բաժնուած է հինգ առանձին Հանրապետութեանց որք են՝ Կուաթեմալա, Սան-Սալվատօր, Հոնտուրաս, Նիքարակուա և Քօսթա-Րիքա։

ԿՈՒԱԹԷՄԱԼԱ

Կը գտնուի Կեդրոնական Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը և է հինգ հանրապետութեանց մեծագոյնը։ Ունի 1,400,000 բնակիչ։ Գլխ. քաղաքներն են Կուաթեմալա, Սան-Ճօզէ, Ս. Թովմաս և Վէրափազ։

ՍԱՆ-ՍԱԼՎԱՏՕՐ

Կուաթէմալայի հարաւային արեւմտեան կողմը՝ Խաղաղականի վրայ ծաւալեալ Հանրապետութիւն մ'է։ Մայրաքաղաքն է Սան-Սալվատօր, Նաւահանգիստն է Աքաժութլա։

ՀՈՆՏՈՒՐԱՍ

Կը տարածուի Կուաթէմալայի հարաւային արեւելեան կողմը։ Գլխաւոր քաղաքներն են Քոմայակուա և Թէկուսի-Գալփա:

ՆԻՔԱՐԱԿՈՒԱ

Սոյն Հանրապետութիւնը կը տարածուի Հոնտուրասի հարաւակողմը։ Մայրաքաղաքն է Մանակուա՝ համանուն լճին քով։ Սան Ճուան և Կրէյթաուն բանուկ նաւահանգիստներ են։ Երեւելի են նաեւ Կրընատա և Լէօն։

ՔՕՍԹԱ-ՐԻՔԱ

Կեդրոնական Ամերիկայի ամենէն հարաւային Հանրապետութիւնն է։ Ունի հարուստ բուսաբերութիւն և ընդարձակ առեւտուր շինութեան ազնիւ փայտի։

Մայրաքաղաքն է Սան-Ճօզէ։ Գլխաւոր քաղաքներն են Քարթակօ և Փունթա-Արէնաս:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

Հարաւային Ամերիկա կը պարունակէ 12 տէրութիւն, Քոլոմպիա, Վենեզուէլլա, Կույանա, Էգուադօր, Պրազիլիա, Բէրու, Բարակուէ, Ուրուկուէ, Չիլի, Լա-Բլադա և Փաթակոնիա։

ՔՈԼՈՄՊԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քոլոմպիա կը գտնուի Հարաւային Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Անդիլեան ծով, հիւսիսային արեւմուտքէն՝ Կեդրոնական Ամերիկա, արեւելքէն՝ Վենեզուէլլա, հարաւէն՝ Էգուատօր և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկէանոս։

Այս երկրին հիւսիսէն 'ի հարաւ կերկարին Անտէզ լերինք որոնք կը պարունակեն հրաբղխային գագաթներ։

Երկրին կլիման՝ լեռնային գաւառաց մէջ բարեխառն և առողջ, իսկ ծովեզերքը սաստիկ տաք և վատառողջ է։

Գլխաւոր բոյսերն են բժշկական բազմատեսակ տունկեր, որդան կարմիր, քաքաօ, խահուէ, ծխախոտ. վանիլիա, շաքարեղէգ, քաուչու, տաք երկրի պտուղներ եւն։

Քոլոմպիա ունի ոսկւոյ, բլատինի, արծաթի, կապարի և թանկագին քարերու հարուստ հանքեր որոնք երեսի վրայ թողուած են։

Քոլոմպիոյ մէջ կը գտնուին բազում վայրի գազաններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քոլոմպիա ունի 900,000 քիլ. քառ. տարածութիւն եւ 3,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՊՕԿՈԹԱ, ծովուն մակերևոյթէն 3650 մէթր բարձրութեամբ լեռնադաշտի մը վրայ շինուած: Ունի համալսարան, փառաւոր մայր եկեղեցի ու երևելի գործարաններ կաշւոյ, գորգի և ոսկեղէն զարդուց:

Գլխաւոր Նաւահանգիստներն են

Ս. Մարթա, Կարթագինէ, Բոլոն և մանաւանդ Փանամա:

Ներքին գլխաւոր քաղաքներն են Սանթա-Ֆէ, Պոպայեան, Մէտէլին ևլն:

Ընդհանուր տեղեկութիւն

Այս երկիրը կոչուած է Քոլոմպիա՝ ՚ի յիշատակ Քրիստափոր Քոլոմպոսի: Բնակիչք կը բաղկանան Սպանիօլներէ, Սևերէ և բնիկ Ամերիկացիներէ: Ուսում և ճարտարութիւն տակաւին ետ մնացած են, իսկ վաճառականութիւնը բաւական բանուկ է: Անդիլեան ծովուն մէջ երկու փոքր կղզիներ՝ Նոր Բրովիտէնս և Ս. Անտրէ կը վերաբերին Քոլոմպիոյ,

ՎԵՆԵՑՈՒԷԼԼԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՎԵՆԵՑՈՒԷԼԼԱ՝ Հարաւային Ամերիկայի հիւսիսային երկիրներէն մին է: Սահմաններն են հիւսիսէն՝ Անդիլեան ծով, Ատլանտեան ովկէանոս և Անգլիական Կույանա. հարաւէն՝ Պրազիլ և արևմուտքէն Քոլոմպիա:

Վենեցուէլլա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է: Իր մէջէն կ'անցնի Օրէնոքօ գետը՝ որ երկրին արգասաւորութեան մեծապէս կ'օգնէ:

Կլիման՝ հիւսիսային ծովեզերաց վրայ տաք ու վատառողջ, իսկ լերանց ու հովտաց մէջ աւելի բարեխառն է: Գլխաւոր բոյսերն

Թունաւոր օձ

են խահուէ, քաքաօ, շաքարեղէգ, բամպակ, ծխախոտ, լեղակ, վանիլիա և շինութեան փայտ,

Վենեցուէլլա ունի մարմարիոն, կրանիթ, պղինձ և հանքային ջուրեր: Այս երկրին մէջ կան մժեղներ և բազմաթիւ թունաւոր օձեր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Վենեցուէլլա ունի 1,137,000 քիլ. քառ. տարածութիւն և 2,200,000 բնակիչ:

Մայրաքաղաքն է ՔԱՐԱՔԱՍ (60,000 բն.), գեղեցիկ հովտի մը մէջ խիստ զուարճալի քաղաք է, իւր նաւահանգիստն է Կուէյրա:

Բուէրթօ-Քապէլլօ, Մարաքայիպօ, Պօլիվառ և Ս. Քառլօ բանուկ նաւահանգիստներ են:

Ներքին քաղաքաց մէջ երևելի են Վալէնցիա, համանուն փոքր լճին մօտ զուարճալի դիրքով քաղաք մ'է: Սան-Ֆիլիփ, Մէրիտա, Պառսէլոնա, Սան-Ֆէռնանտօ ևլն:

Ընդհանուր տեղեկութիւն

Վենեցուէլլայի բնակիչք բաղկացեալ են խառնածին Հնդիկներէ ու Ամերիկացիներէ: Դաստիարակութիւն և արուեստ տակաւին ողորմելի վիճակի մէջ են: Երկրին գլխաւոր հարստութիւններն են խահուէ, քաքաօ, բամպակ, լեղակ, շաքար, գեղօրայք ևլն:

ԿՈՒՅԱՆԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿՈՒՅԱՆԱ կը կոչուի այն երկիրը որ Ատլանտեանէ սկսեալ կը տարածուի մինչև Վենեցուէլլա, հարաւէն՝ սահման ունենալով Պրազիլեան:

Երկրին ծովեզերեայ մասերը ցած, ճախճային և անառողջ են, արեւմտեան կողմերը լեռնոտ, իսկ ներքին մասերը քիչ ծանօթ։

Կլիման՝ ծովեզերքը սաստիկ տաք ու վտանգաւոր են, ներսերը՝ ջրոյ հոսանքներու պատճառաւ խոնաւ՝ ու տեղ տեղ ալ զով են։

Գլխաւոր բոյսերն են շինութեան փայտ, գունատու և բժշկական բոյսեր, խէժ, շաքար, խահուէ, քաքաօ, ընկուզ, վանիլիա են։

Երկրին մէջ կը գտնուին բազում վայրի գազաններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կույանա բաժնուած է Եւրոպական 3 տէրութեանց՝ Անգլիոյ, Ֆրանսայի և Հոլանտայի միջեւ։

Անգլիական Կույանա. Մայրաքաղաքն է Ճորճ-Թաուն, Տէմէրարա գետին բերանը վաճառաշահ նաւահանգիստ է։

Ֆրանսական Կույանա. Մայրաքաղաքն է Քայէնա, համանուն փոքր կղզւոյն վրայ՝ ուր կ'աքսորուէին Ֆրանսայի քաղաքական յանցաւորք։

Հոլանտական Կույանա. Մայրաքաղաքն է Փարամարիպօ, որ ծաղկեալ և ապահով նաւահանգիստ է։

ԷԳՈՒԱԹՕՐ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԷԳՈՒԱԹՕՐ՝ Հարաւային Ամերիկայի արեւմտեան երկիրներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Քոլոմպիա, արեւելքէն Պրազիլիա, հարաւէն՝ Պէրու և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկէանոս։ Այս երկիրը Հասարակածի ներքեւ գտնուելուն պատճառաւ՝ կոչուած է Էքուատօր (Հասարակած)։

Էգուաթօրի մէջ կը գտնուին Չիմպօրազօ, Քօթօփաքսի և Փիչինչա նշանաւոր հրաբուխները։ Երկրին կլիման դաշտային մասանց մէջ տաք ու խոնաւ, իսկ լերանց վրայ աւելի բարեխառն և տեղ տեղ ալ ցուրտ է։ Գլխաւոր բոյսերն են արմտիք, քաքաօ,

քինքինա, ընկուզ, ծխախոտ, բամպակ և պտղատու ծառեր։ Երկրին մէջ կան ոսկւոյ և այլ հարուստ հանքեր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Էգուաթօր ունի 643,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 1,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՔԻԹՕ (80,000 բն.), ծովուն մակերեւոյթէն 2950 մէթր բարձրութեամբ լեռնադաշտի մը վրայ շինուած է։ Թէեւ Հասարակածի տակ՝ սակայն ունի առողջ և բարեխառն օդ, Այս քաղաքը քանիցս երկրաշարժէ կործանած է։

Կուայաքիլ, համանուն խորշին վրայ, երկրին գլխաւոր նաւահանգիստն է։ Ներքին գլխաւոր քաղաքներն են Քուէնքա, Լէօն են։

Էգուաթօրի կը վերաբերի Կալապակոս փոքր արշիպեղագոսը որ Սպանիօլերէն կը նշանակէ Կրիաներու կղզի։

ՊՐԱԶԻԼԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊՐԱԶԻԼԻԱ՝ կը գրաւէ Հարաւային Ամերիկայի արեւելեան ու միջին մասը, իսկ իւր անունը առած է Պրազա կոչուած ներկի բոյսէ մը։

Սահմաններն են հիւսիսէն՝ Վենեցուէլլա և Կույանա, արեւելքէն՝ Ատլանտեան ովկէանոս, հարաւէն՝ Ուրուկէ, Պարակուա և Լա-Պլադա, արեւմուտքէն Պոլիվիա, Պէրու, Էգուաթօր և Քոլոմպիա։

Այս ընդարձակ երկրին հիւսիսային և արեւմտեան մասանց մէջ կը գտնուին տափարակ ու ճախճախուտ դաշտեր, կեդրոնական և հարաւային գաւառներն ընդհանրապէս աւելի բարձր դիրք ունին և կը պարունակեն գեղեցիկ ու բարեբեր հովիտներ որոց կլիման բարեխառն է։ Պրազիլիոյ հիւսիսային մասն Հասարակածի ներքեւ գտնուելուն՝ սաստիկ տաք կ'ըլլայ, ծովեզերքը նաւաղ տաք, իսկ ներքին մասերը համեմատաբար աւելի բարեխառն են։

Այս ընդարձակ երկրէն կանցնի աշխարհիս մեծագոյն

գետը՝ Ամազոն որ ունի 5,000 քիլմ. երկայնութիւն և 300 մէթր լայն բերան։ Իւր մէջ կը թափին մեծ ու փոքր բազմաթիւ գետեր։ Պրազիլիոյ հողն շատ բարեբեր է և խիստ մեծ քանակութեամբ կ'արտադրէ խահուէ, շաքարեղէգ, քաքաօ, ծխախոտ, բամպակ, մեխակ, վանիլիա, բժշկական բոյսեր և շինութեան ազնիւ փայտ։ Պրազիլիա ունի ադամանդի, ոսկւոյ, արծաթի, պղնձի, երկաթի, մարմարիոնի և հանքածխոյ հարուստ հանքեր։

Երկրին մէջ կը գտնուին ընտանի կենդանիներէ 'ի զատ՝ վայրի գազաններ, ինչ. ռնգեղջիւր, թունաւոր օձեր, վնասակար ճճիներ են։



Ռնգեղջիւր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պրազիլիա ունի 8,340,000 քիլմ. քառ. տարածութիւն և 14,000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 20 գաւառներու։

Մայրաքաղաքն է ՌԻՕ-ԵԱՆԷՅՐՕ, աշխարհիս ամենէն մեծ, ամենէն վաճառաշահ և ապահով նաւահանգստաց մին է։ Առեւտրական ընդարձակ և կանոնաւոր յարաբերութիւն ունի Անգլիոյ, Ֆռանսայի, և Փորթուգալի հետ։ Երեւելի են այս քաղաքին թանգարանները, գեղարուեստից վարժարանը եւլն։

Պրազիլիոյ երեւելի նաւահանգիստներն են՝ Պահիա կամ Սան-Սալվատօր, ունի շաքարի և ծխախոտի մեծ վաճառականութիւն։

Բէրնամպուք, Բառա կամ Պէլէմ, Բորթօ-Սէկուրօ, Վիքթօրիա, Սանթօս, Բորթօ-Ալլէկրէ եւլն։

Ներքին մասին մէջ երեւելի են Ս. Բօլ, Կույապա, Ուրօ-Բրէթօ եւլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Պրազիլիա 'ի սկզբան կը պատկանէր Փորթուգալի, բայց 1825 էն 'ի վեր եղած է ինքնագլուխ տէրութիւն մը։ Բնակիչք կը բաղկանան սեւամորթ, խառնածին և սպիտակ ցեղերէ։ Դաստիարակութիւն, ձեռարուեստ և ճարտարութիւն հետզհետէ ծաղկելու վրայ են։ Պրազիլիոյ գլխաւոր հարստութիւններն են գոհարեղէն, խահուէ, շաքար, բամպակ, քաուչու (լասթիկ), ծխախոտ, շինութեան փայտ դեղի վերաբերեալ բոյսեր եւլն։ Տեղացւոց խօսած լեզուն է Փորթուգալերէն. կրօնն է Կաթողիկութիւն և կառավարութեան ձեւն է հանրապետութիւն։

Պրազիլիա ունի 8,000 քիլմ. երկաթուղի։

ԲԷՐՈՒ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բէրու՝ Հարաւային Ամերիկայի կարեւոր երկիրներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Էգուաթօր, արեւելքէն՝ Պրազիլիա և Պոլիվիա, հարաւէն՝ Չիլի և արեւմուտքէն Խաղ. ովկէանոս։

Այս երկրին հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարի Անտէզ գօտին որոյ ստորոտները կը տարածուին ընդարձակ և արգասաւոր հովիտներ և որոց մէջ կը տիրէ մշտնջենաւոր գարուն, իսկ ծովեզերքը աւազուտ և անբեր է։ Բէրուի մէջ է Արեգուիփա հրաբղխային լեռն որ ունի 4,000 մէթր բարձրութիւն։ Երկրին կլիման՝ բարձր լեռնադաշտերու վրայ զով և առողջարար, իսկ Պրազիլիոյ մօտերը տաք ու տեղ տեղ խոնաւ են։

Բէրուի հողն բարեբեր ու լաւ մշակուած է, կ'արտադրէ արմտիք, բրինձ, դեղօրայք և հարաւային երկիրներու յատուկ բոյսեր ու պտղատու ծառեր։

Բերուի մէջ կը գտնուին թանկագին քարեր, ոսկի, արծաթ, սնդիկ, կապար, երկաթ եւլն։

Այս երկրին մէջ կը գտնուի Կուանօ կոչուած թռչնոց աղբը որ մեծ կարեւորութիւն ունի Եւրոպայի մէջ՝ ծաղկի մշակութեան համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բերու ունի 1,090,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 3,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԼԻՄԱ (100,000 բն.), Խաղաղական ովկէանոսէն 9 քիլոմէթր դէպ ՚ի ներս. և որու նաւահանգիստն է Քալլաօ։ Լիմա, ունի գեղեցիկ մայր եկեղեցի, ընդարձակ հրապարակներ և հոյակապ շէնքեր։

Ներքին Գլ. քաղաքներն են

Քուսկօ, Բերուի նախկին մայրաքաղաքն էր՝ Ինքաս կոչուած թագաւորաց ժամանակ։

Արեքիփա, երկրին հարաւակողմը, համանուն հրաբուխին մօտ։

Կուանքավելիքա, մօտերը կան ոսկւոյ և սնդիկի հարուստ հանքեր։

Երկրորդական նաւահանգիստներն Իքիքա, Արիքա, Բայդա։

Ընդհանուր Տեղեկութիւն

Բերուի առաջին անգամ տիրեցին Սպանիացիք 1531ին, բայց 1821ին, եղաւ առանձին հանրապետութիւն։ Այս երկիրը գտնուած ժամանակ, տեղացիք ունէին կանոնաւոր կառավարութիւն, թագաւոր՝ որ կը կոչուէր Ինքաս։ Բերուի մէջ կը գտնուին մեհեաններու և փառաւոր յիշատակարանաց աւերակներ։ Բնակիչք կը բաղկանան բնիկ Ամերիկացիներէ և Սպանիօլներէ։ Քաղաքակրթութիւնը տակաւին նոր սկսած է ծաղկիլ այս երկրին մէջ։

Բերու ունի 3000 քիլմ. երկաթուղի։

ՊՈԼԻՎԻԱ կամ ՎԵՐԻՆ ԲԵՐՈՒ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊՈԼԻՎԻՈՅ սահմաններն են՝ հիւսիսէն և արեւելքէն՝ Պրազիլիա, հարաւէն՝ Լա-Բլադա և արեւմուտքէն՝ Բերու։ Երկիրը լեռնային է. Անտեան շղթային բարձրագոյն գագաթները հոս կը գտնուին։ Այս Անտեաց արեւմտեան կողմը անջրդի և սառնապատ է, իսկ արեւելեան կողմը բարեբեր, և կը վայելէ զուարճալի կլիմայ։

Գլխաւոր բոյսերն են՝ որթատունկ, ձիթենի, բամպակ, արմաւ, շաքարեղէգ, խահուէ, ծխախոտ, քաքաօ, քինքինա մեծ առատութեամբ, վանիլիա, բժշկական բոյսեր եւլն։

Լամա

Պոլիվիա ունի ոսկւոյ, արծաթի, պղնձի և անագի հարուստ հանքեր։ Այս երկրին մէջ կը գտնուին լամա, ալբակոս, ժակուար, կապիկ, կինճ եւլն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պոլիվիա ունի 1,250,000 *քիլ. քառ. տար. և* 2,400,000 *բն.)։*

Մայրաքաղաքն է ՉՈՒՔԻՍԱՔԱ, *Բոքքօ լերան ստորոտը զուարճալի դիրքով գեղեցիկ քաղաք մ'է, մօտերը կան արծաթի հանքեր։*

Գլխաւոր քաղաքներն են

Լա-Բազ, *Պոլիվիոյ Հանրապետութեան մեծագոյն քաղաքն է, մօտերը կան ոսկւոյ հանք։*

Փոթօզի, *ունի արծաթի հարուստ հանք։ Երեւելի են նաեւ Սանդա-Քրուզ, Սան-Բէտրօ եւլն։*

Ընդհանուր Տեղեկութիւն

Պոլիվա 'ի սկզբան Արճէնթինի մէկ մասը կը կազմէր, սակայն 1825 *ին Սիմօն Պոլիվար անուանի զօրապետին օգնութեամբ՝ բաժնուեցաւ անկից ու եղաւ անկախ Հանրապետութիւն, երկիրն ալ Պոլիվարի անուամբ կոչուեցաւ Պոլիվիա։*

ԲԱՐԱԿՈՒԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲԱՐԱԿՈՒԱ կամ ԲԱՐԱԿԷ՝ փոքր Հանրապետութիւն, մ'է 'ի մէջ Պրազիլիոյ, Լա-Բլադայի և Պոլիվիոյ։ Կլիմայն՝ բարձր տեղերը զով և չոր, իսկ դաշտաց մէջ տաք ու խոնաւ է։ Գլխաւոր բերքերն են՝ բամպակ, ծխախոտ, չինութեան փայտ, շաքարեղէգ, սափառնա և տեսակ մը տեղական ընտիր թէյ՝ որ խէրբա ըսուած ծառին տերեւն է։

Բարակուա ունի 150,000 *քիլ. քառ. տարածութիւն և* 30‘000 *բնակիչ։*

Մայրաքաղաքն է ԱՍՕՄՓՍԻՕՆ *կամ* ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ, *այսօր աննշան քաղաք մ'է։*

Վիլլա-Րիքա, *երկրին կեդրոնը, Հանրապետութեան երկրորդ քաղաքն է*

Երեւելի են նաեւ Հումայթա, Սան-Բէտրօ եւայլն։

Բարակուա 'ի սկզբան Սպանիացւոց տիրապետութեան ներքեւ էր՝ որմէ 1818*ին բաժնուելով եղաւ ազատ Հանրապետութիւն։ Սակայն Պրազիլիոյ, Արճէնթինի և Ուրուկուայի դէմ մղած պատերազմներով շատ տկարացաւ և իւր բնակիչներն ալ մեծապէս նուազեցան։*

ՈՒՐՈՒԿՈՒԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՈՒՐՈՒԿՈՒԱ կամ ՈՒՐՈՒԿԷ՝ Պրազիլեոյ, Խաղաղականի և Արճէնթինի միջեւ փոքր Հանրապետութիւն մ'է։ Կլիմայն ընդհանրապէս բարեխառն և հողը շատ արգասաւոր է։ Ունի ընդարձակ և պարարտ արօտներ որոց մէջ կ'արածին բազմաթիւ արջառք

Տարածութիւնն է 218,000 *քիլ. քառ. տարածութիւն և բնակիչ* 600,000։

Մայրաքաղաքն է ՄՈՆԹԷՎԻՏԷՕ (80,000 *բն.*), *Րիօ-տը-լա-Բլադա ծոցին հիւսիսային կողմը մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ է։*

Երկրորդական քաղաքներն են Մալտօնատօ, Քոլոնիա և Բանէյոնէս։

ՉԻԼԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Չիլի՝ Հարաւային Ամերիկայի արեւմտեան կողմը նեղ ու լեռնային երկիր մ'է որ կ'երկարի Բերուէն մինչեւ 'ի Գլուխ Հորն։

Այս երկրին մէջ կը գտնուի Հարաւային Ամերիկայի մէկ հրաբուղխը՝ Ակոնկակուա։ Չիլի ունի բարեխառն ու առողջ կլիմայ։ Ձմեռներն ընդհանրապէս կարճ և գարունն երկայն է։ Երկիրը լաւ մշակուած է և կ'արտադրէ տաք երկրի յատուկ բոյսեր, մրգեղէն ևլն։ Ունի նաև ոսկւոյ, արծաթի և պղնձի հարուստ հանքեր։

Չիլի ունի 900,000 քիլ. քառ. տար. և 4,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՍԱՆԴԻԱԿՕ (270,000 բն.), ընդարձակ դաշտի մը մէջ՝ զուարճալի դիրքով գեղեցիկ ու ծաղկեալ քաղաք մ'է որ երկրաշարժէ մեծ վնասներ կրած է։

Գլխաւոր նաւահանգիստներն են

Վալպարէզօ, նշանաւոր նաւահանգիստ որ՝ երկաթուղեաւ կապուած է մայրաքաղաքին։

Նոյնպէս երեւելի նաւահանգիստներ են Քօքիմպօ, Սան-Ֆռանչիսկօ, Վալտիվիա ևլն։

Կղզիք

Չիլիի կը վերաբերին Չիլօէ արշիպեղագոսը, Սան-Ֆերնանտօ, Սան-Ֆելիքս, Ս. Ամբրոսիոս և Ժուան-Ֆերնանտեզ կղզեաց խումբերն որք ծովեզրէն 200 քիլմ. դէպ արեւմուտք կը գտնուին։ Նոյնպէս Չիլիի կը վերաբերին Փաթակոնիոյ մէկ մասը եւ հետեւեալ կղզիք, Աստուածամօր Արշիպեղագոս, Ուէլլինկթըն, Հանովր, Ատէլայիտ ևլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Չիլի 1844էն 'ի վեր հաստատուած անկախ Հանրապետութիւն մ'է և Հարաւային Ամերիկայի ամենէն յառաջադէմ երկիրը։ Հողագործութիւն, ձեռարուեստ և ճարտարութիւն բաւական զարգացած են, միայն թէ երկրաշարժ և քաղաքական պատերազմներ՝ մեծ վնաս հասուցած են այս երկրին։ Չիլիի գլխաւոր հարստութիւններն են ոսկի, պղինձ, արծաթ, արմտիք, կուանօ, կաշի, փայտ ևլն։ Այս երկրին հետ ամենէն աւելի յարաբերութիւն ունին Անգլիա, Ֆռանսա և Գերմանիա։

Չիլի ունի 2,500 քիլմ. երկաթուղի։

ԲԼԱԴԱ կամ ԱՐՃԷՆԹԻՆԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՐՃԷՆԹԻՆԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ սահմաններն են հիւսիսէն՝ Պոլիվիա, արեւելքէն՝ Բարակուա, Պրազիլ, Ուրուկուա և Ատլանտեան ովկէանոս, հարաւէն՝ Փաթակոնիա և արեւմուտքէն՝ Չիլի։

Երկրին արեւմտեան սահմանին վրայ կ'երկարի Անտէզ գօտին։ Իր մէջէն կ'անցնի Լա-Բլադա գետն՝ որու շրջակաները արծաթի հանքեր գտնուելուն պատճառաւ՝ Սպանեօլք առաջին անգամ երկիրը կոչեցին Լա-Բլադա՝ որ կը նշանակէ արծաթ։ Կլիման ընդհանրապէս առողջ է, լեռնային գաւառաց մէջ ցուրտ կ'ընէ, իսկ հարաւային կողմերը կը գտնուին Բամբաս անուն անջրդի անապատներ։ Լա-Բլադայի հողը շատ բարեբեր է և կ'արտադրէ տաք երկրի բերքեր։ Երկրին հանքերուն մէջ միայն ոսկին ու արծաթը կը շահագործուին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԼԱ-ԲԼԱԴԱ ունի 2,800,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 4,000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է 14 դաշնակից գաւառներու։

Մայրաքաղաքն է ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ (200,000բն.), Րիօ-տը-լա-Բլադայի հարաւային ափանց վրայ գեղեցիկ դիրքով վաճառաշահ նաւահանգիստ մ'է և կանոնաւոր յարաբերութիւն ունի Անգլիոյ, Գերմանիոյ և Ֆռանսայի նաւահանգստաց հետ։

Գլխաւոր քաղաքներն են

Ռօզարիօ, Բարանա գետին վրայ բանուկ նաւահանգիստ է։

Մէնտօզա, երկրին արեւմտեան կողմը։ Երեւելի են նաև Գօրտովա, Սանդա-Ֆէ, Սանդիակօ, Սան-Ժուան ևլն։

Ընդհանուր տեղեկութիւն

Արճէնդին 'ի սկզբան Սպանիական գաղթականութիւն մ'էր որ 1810ին եղաւ անկախ Հանրապետութիւն։ Արուեստ և քաղա-

Սառուցեալ ովկէանոսի մէջ տեսարան

քաղքթութիւն հետղհետէ զարգանալու վրայ են։ Երկրին գլխաւոր հարստութիւններն են բուրդ, աղած միս, կաշի, ճարպ, ջայլամի փետուր, այլ և այլ մետաղներ։

Լա-Բլադա ունի 12,000 քիլմ. երկաթուղի։

ՓԱԹԱԿՈՆԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Փաթակոնիա՝ կը գտնուի Հարաւային Ամերիկայի հարաւային ծայրը և է քարուտ ու անապատային մի երկիր՝ որոյ բնակիչք Թափառական ու վայրենի Հնդիկներ են։ Արճէնդին և Չիլի 1881էն 'ի վեր այս երկիրը բաժնած են իրենց մէջ։

ՄԱԿԷԼԼԱՆԻ ԿՂԶԻՔ

Փաթակոնիոյ հարաւակողմը կը գտնուի այս արշիպեղագոսն՝ որոյ մեծագոյնն է Հրոյ երկիր և որ բաժնուած է ցամաքէն Մակէլլանի նեղուցով։ Այս կղզեաց մօտ սոսկալի փոթորիկներ կը պատահին

Բնակիչք վայրենի են եւ կ'ապրին ձկնորսութեամբ։

Մակէլլանի նեղուցին արեւելեան կողմը կ'գտնուի Ֆակլենտ կամ Մալուինեան արշիպեղագոսն՝ ուր Անգլիացիք գաղթականութիւն մը հիմնած են՝ Պալէնա որսալու համար։ Սոյն կղզիք ունին բարեխառն կլիմայ և հարուստ հանքեր։

ԱՆԴԻԼԵԱՆ ԿՂԶԻՔ

ԿԱՄ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սոյն կարեւոր արշիպեղագոսը՝ զոր 1492 ին առաջին անգամ գտաւ Քրիստափոր Քոլոմպոս, կը գտնուի երկու Ամերիկաներու միջեւ, Անդիլեան ծովուն արեւելեան հիւսիսային և արեւելեան հարաւային կողմը, կը բաժնուի երեք գլխաւոր խումբերու։

Լուքայեան կամ Պահամա կղզիք, հիւսիսային կողմը։

Մեծ Անդիլեանք, մէջ տեղը։

Փոքր « արեւելեան հարաւային կողմը։

Անդիլեանք ընդհանրապէս լեռնային և ոմանք ալ հրաբղխային են։ Երկու որոշ կլիմայ կը տիրէ, չոր՝ որ Նոյեմբերէ մինչեւ Ապրիլ կը տեւէ, իսկ թացեալին՝ ամբողջապէս կ'անձրեւէ և այս միջոցին կը պատահին ահաւոր և բուռն մրրիկներ։

կղզեաց հողն բարեբեր և ընդհանրապէս լաւ մշակուած ըլլալով առատօրէն կ'արտադրէ Ասիոյ, Ափրիկէի և Ամերիկայի

ամենէն պիտանի և շահաւոր բոյսերը՝ ինչպէս խահուէ՝ շաքարեղէգ, խիստ յարգի ծխախոտ, լեղակ, պանան, բամպակ, որդան կարմիր, քաքաօ, ներկի և բժշկական բոյսեր, համեմունք եւլն։ Հանքաց մէջ կարևորներն են ոսկի, արծաթ, պղինձ, հանքածուխ, ծծումբ և հանքային ջուրեր։

Եւրոպիոյ կենդանիք՝ բաց 'ի խոզէ և ճագարէ՝ ([illegible]) չեն աճիր այս կղզեաց մէջ։

ԼՈՒՔԱՅԵԱՆ ԿՂԶԻՔ

Լուքայեան կամ Պահամա կղզիք բաղկացեալ են 650 է աւելի փոքր կղզիներէ և կը պատկանին Անգլիոյ։ Այս կղզեաց միոյն՝ Կուանահանի կամ Սան-Սալվադօրի մէջ էր որ, առաջին անգամ Քոլոմպոս ոտք կոխեց 1492 ին։

ՄԵԾ ԱՆԴԻԼԵԱՆՔ

Մեծ Անդիլեանք բաղկացած են 4 մեծ կղզիներէ՝ Քուպա, Հայիթի, Եամայիքա և Փորթօ-Րիքօ։

ՔՈՒՊԱ

Այս կղզին Անդիլեանց մեծագոյնն է և ունի 118,833 քիլ. քառ. տարածութիւն և 1,530,000 բնակիչ։ Հողը խիստ բարեբեր է և կ'արտադրէ շաքար, խահուէ, ընտիր ծխախոտ, լեղակ, քաքաօ, բամպակ, անանաս, շինութեան աղնիւ փայտ, եղիպտացորեն եւլն։ Ունի նաև պղնձի, արծաթի, ածխոյ և աղուճակի հարուստ հանքեր։

Մայրաքաղաքն է Հավանա (240,000 բն.), գեղեցիկ և վաճառաշահ նաւահանգիստ է։

Երևելի են նաև Մադանզաս, Սանդիակօ-տը-Քուպա, Փորթօ-Փրէնս եւլն։

ՀԱՅԻԹԻ

Այս կղզին որ կը կոչուի նաև Սան-Տօմինկօ, կը բաժնուի երկու անկախ Հանրապետութեանց, 1. Հայիթիի և 2. Տօմինիկեան։

Հայիթիի մայրաքաղաքն է Փորթօ-Փրէնս, որ գեղեցիկ նաւահանգիստ է։

Տօմինիկեան Հանրապետութեան մայրաքաղաքն է Սան-Տօմինկօ, որ Նոր-Աշխարհի մէջ Եւրոպացւոց ձեռօք շինուած առաջին քաղաքն է։ Կղզւոյն տարածութիւնն է 77,000. բնակչաց թիւն է 850,000։

ԵԱՄԱՅԻՔԱ

Այս կղզին կը գտնուի Քուպայի հարաւակողմը։ Ունի 10,850 քիլմ. քառ. տար. և 600,000 բնակիչ. կը պատկանի Անգլիոյ։

Կ'արտադրէ տաք երկրի ամէն տեսակ բերքեր։ Համբաւաւոր են մանաւանդ ռոմը, ծխախոտը և շաքարը։

Մայրաքաղաքն է Քինկսդըն, որ է երևելի նաւահանգիստ, նոյնպէս Փոր-Րոյըլ, կղզւոյն հարաւային կողմը վաճառաշահ նաւահանգիստ է։

ՓՈՐԹՕ-ՐԻՔՕ

Այս կղզին ունի 750,000 բնակիչ։ Առատօրէն կ'արտադրէ հասարակածի բերքեր։ Մայրաքաղաքն է Սան-Ժուան-տը-Փորթօ-Րիքօ, կղզւոյն հիւսիսային կողմը վաճառաշահ և ամրապատ նաւահանգիստ է և կը պատկանի Սպանիոյ։

ՓՈՔՐ ԱՆԴԻԼԵԱՆՔ

Փոքր Անդիլեանք ունին կիսաշրջանակի մը ձեւ և իրենց հին բնակչաց անուամբ կը կոչուին նաեւ Քարայիպեան կղզիք և ընդհանրապէս քարոտ և հրաբղխային են։

Կը բաժնուին երեք խումբերու և կը պատկանին Անգլիոյ, Ֆռանսայի, Հոլանտայի և Տանըմարքայի։

Անգլիոյ պատկանող կղզիներն են Սանդա Լուչիա, Ս. Վինսէն, Ս. Քրիստոֆ, Նէվիս, Անթիկուա, Պարպատոս, Թապակօ, Դրինիտէտ։

Ֆռանսայի կը պատկանի Կուատալուփ, Մարի-Կալանդ, Տէզիրատ, Լէ-Սէնդ, Ս. Բարթէլէմի, Ս. Մարտինօ։

Հոլանտայի կը պատկանին Ս. Մարտինոյի հարաւային մասը, Ս. Եւստաթէոս, Քիւրասաօ, Արուպա եւլն։

Տանըմարքայի կը վերաբերին Ս. Խաչ, Ս. Թովմաս և Ս. Օհաննէս կղզիք։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1.

Ամերիկա ո՞ր կիսագնտին մէջ կը գտնուի. — Քանի՞ մասերէ կը բաղկանայ. — Ո՞ր պարանոցով իրար միացած են. — Ո՞րոնք են սահմանները. — Ո՞ր ովկէանոսները կը տեսնէ. — Ի՞նչ երեւելի ծոցեր ու նեղուցներ կան Նոր Աշխարհի մէջ. — Ի՞նչ կրնաս ըսել Ամերիկայի բնական ընդհանուր կազմութեանը վրայ. — Ո՞ր երեւելի լեռնագօտին՝ ցամաքին հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարի. — Ի՞նչ անուններ կ'առնու ցամաքին այլեւայլ մասանց մէջ. — Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը ո՞ր գօտին կայ. — Ո՞րոնք են Նոր Աշխարհի գլխաւոր հրուանդանները. — Ապառաժլերանց մէջ ո՞ր երեւելի հրաբուղխները կան։

2.

Նոր Աշխարհը քանի՞ աւազաններ ունի. — Որո՞նք են հիւսիսային աւազանի հարկատուները. — Մեքսիկայի ծոցին մէջ ո՞ր երկու մեծ գետերը կը թափին. — Հարաւային Ամերիկայի գետերն դէպ 'ի ո՞ւր կը վազեն ընդհանրապէս. — Հիւսիսային Ամերիկայի մէջ ո՞ր մեծ լիճերը կան. — Ո՞րոնք են կեդրոնական ու Հարաւային Ամերիկայի գլխաւոր լիճերը. — Սառուցեալ ովկէանոսի մէջ ո՞ր կղզիները կան. — Մեքսիկայի ծոցին արեւելեան կողմը ո՞ր մեծ արշիպեղագոսը կայ եւ քանի՞ մասերու կը բաժնուի. — Ո՞րոնք են Պէհրինկայի ծովուն ու Խաղաղականի գլխաւոր կղզիները։

3.

Ամերիկա ո՞րչափ տարածութիւն և որչա՞փ բնակիչ ունի. — Ո՞ր գօտիներքեւ կը գտնուի. — Ո՞րոնք են Բարեխառն, Սառուցեալ եւ Այրեցեալ ներու գօտիներու տակ գտնուած երկիրք. — Ի՞նչ բերքեր ունի Ամերիկա. — Ո՞ր երկիրները մեծ քանակութեամբ կ'արտադրեն բամպակ, ցորեն, խահուէ, շաքարեղէգ, վանիլեա, բժշկական բոյսեր, բրինձ եւ աղնիւ ատաղձ։ Ի՞նչ հարուստ հանքեր ունի Նոր Աշխարհը. — Ո՞ր երկրաց մէջ կը գտնուին քարիւղ, հանքածուխ, երկաթ, պղինձ, ոսկի, ադամանդ եւ արծաթ։ Ո՞րոնք են Ամերիկայի ընտանի եւ վայրի կենդանիները. — Երկրագործութիւնը մասնաւորապէս ո՞ր երկրաց մէջ շատ յառաջ գացած է։

4.

Ամերիկա քանի՞ տէրութեանց բաժնուած է. — Բնակիչք ի՞նչ ազգութիւններէ բաղկացեալ են. — Ի՞նչ կրօն կը դաւանին. — Եւրոպական ո՞ր

տէրութիւնք Ամերիկայի մէջ ստացուածքներ ունին. — Ո՞րն է հիւսիսային Ամերիկայի ամենէն բազմամարդ եւ քաղաքակրթեալ երկիրը. — Միացեալ Նահանգներն ի՞նչ պատճառներով քիչ ժամանակի մէջ ա՛յնքան մեծ յառաջադիմութիւն ըրին քաղաքակրթութեան ամէն ճիւղերուն մէջ. — Թուէ՛ հանդերձ Անգղիեաններով՝ Նոր Աշխարհի երեւելի նաւահանգիստները. — Եւրոպական ո՞ր ազգերն 'ի սկզբան ծանօթացան եւ տիրեցին Ամերիկայի հարուստ աշխարհներուն։

5.

Որ թուականին եւ ո՞վ գտաւ Ամերիկան. — Բնիկներն ինչու Հնդիկ կը կոչուին. — Ո՞վ էր Ամերիկոս Վեսփուչչի. — Ամերիկայէ յԵւրոպա փոխադրեալ բուսական, հանքային եւ ձեռարուեստական գլխաւոր բերքերը ո՞րոնք են. — Նոր Աշխարհի ո՞ր երեւելի նաւահանգիստներն Եւրոպիոյ հետ կանոնաւոր յարաբերութիւն ունին. — Ո՞ր երկիրներն երկրաշարժի ենթակայ են։

ՀՐԱՀԱՆԳ

1° գծել համր Ամերիկա մը եւ նշանակել երեւելի գետերն՝ իրենց վրայ եւ բերանը գտնուող գլխաւոր նաւահանգիստներով։
2° գծել նոյնպէս համր քարտէսի վրայ՝ Եւրոպական կալուածները։
3° գծել, խահուէ, ծխախոտ, շաքար, բամպակ, եւ արմտիք արտադրող երկիրները՝ տարբեր տարբեր գոյներով,
4° Առանձինն գծել Միացեալ Նահանգները։

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՐՈՐԴ

ՈՎԿԷԱՆԻԱ

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՈՎԿԷԱՆԻԱ կը կոչուի Խաղաղական ովկէանոսի մէջ և Հին ու Նոր աշխարհաց միջեւ սփռուած այն մեծ ու փոքր բազմաթիւ արշիպեղագոսներն որոնք հաւաքաբար կը կազմեն Երկրիս հինգերորդ մասն և բաժնուած են 4 գլխաւոր խումբերու 1°. Մալէ-

զիա, 2°. Մէլանէզիա *կամ* Աւստրալիա, 3°. Միքրոնէզիա, 4°. Փօլինէզիա։

Կլիմայ և Բուսաբերութիւն. — Ովկէանիա ըստ մեծի մասին Հասարակածի ներքեւ կը գտնուի. սակայն շնորհիւ ծովէն փչող զով հովերուն՝ շատ տեղ կլիմայն բարեխառն և առողջ է։

Ովկէանիոյ կղզեաց շատերն լեռնոտ, հրաբղխային ու երկրաշարժի ենթակայ են, այսու հանդերձ՝ ունին պարարտ հող և առատ բուսաբերութիւն։ Գլխաւոր բերքերն են՝ բրինձ, շաքարեղէգ, եգիպտացորեն, լեղակ, արմաւ, արմուկք, բամպակ. խահուէ, քափուր, մեխակ, քօքօ, նարինջ, խակեղէն, ծխախոտ, դեղօրայք, կինամոն, սանդալ անուն անուշահոտ փայտ մը և չինութեան ազնիւ փայտեր եւլն. եւլն։

Կենդանիք եւ Հանք

Եւրոպիոյ ընտանի կենդանիք հետզհետէ աճելու վրայ են հոս։ Կը գտնուին ձի, եզ, ոչխար, կով և մանաւանդ Էնկիւրիի տեսակէ այծ, որ ունի փայլուն մազ։ Ասոնցմէ 'ի զատ, կան հոս. Ասիոյ ամեն տեսակ գազաններն, բայց մանաւանդ երեւելի են գոյնզգոյն թութակները, մեծափառ ու գեղեցիկ թռչուններ, դրախտահաւը եւլն։

Վագր

Ովկէանիա ունի հարուստ հանքեր ոսկւոյ, երկաթի, պղնձի, անագի, հանքածխոյ և թանկագին քարերու։

Ովկէանիա ունի իբր 10,800,000 *քիլ. քառ. տարածութիւն և* 37,000,000 *բնակիչ։*

ՄԱԼԷԶԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՄԱԼԷԶԻԱ կը պարունակէ Սունտայի Արշիպեղագոսը, Պօրնէօ, Զէլէպեան, Մոլուքեան *և* Փիլիպեան *կղզիները որք կը կոչուին նաեւ* Կղզիք Արեւելեան Հնդկաց

ՍՈՒՆՏԱՅԻ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍ

Սունտայի արշիպեղագոսին գլխաւոր կղզիներն են Սումադրա, Պանքա, Ճավա և Թիմօր։

Սումադրա (2,700,000 *բն.*), *մեծ և հրաբղխային կղզի մ'է, կլիմայն տաք ու վատառողջ։ Գլխաւոր քաղաքներն են Բատան՝ արեւմտեան կողմը, Բալէմպան՝ արեւելեան ծովեզրին վրայ, Հոլանտական կալուածոց գլխաւոր կեդրոններն են։ Ասոնցմէ 'ի զատ՝ կղզւոյն մնացեալ մասն բաժնուած է ընիկ երեք թագաւորութեանց։*

Հոլանտայի կը վերաբերի նաեւ Պանքա *կղզին՝ որ ունի անագի հարուստ հանք։*

ՃԱՎԱ

Այս կղզին կը գտնուի Սումադրայի հարաւային արեւելեան կողմն, ընդարձակ կղզի մ'է։ Ունի 20,000,000 *բնակիչ և է Հոլանտական կալուածոց ամենէն հարուստը։ Կ'արտադրէ շաքար, խահուէ, բամպակ, լեղակ, ծխախոտ, չինութեան փայտ եւլն։*

Գլխաւոր քաղաքներն են Պադաւիա (105,000 *բն.*), *կղզւոյն հիւսիսային ափանց վրայ մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ է, ունի նոր ու գեղեցիկ թաղ մը՝ ուր Եւրոպացիք կը բնակին։ Մեր Ազգէն ալ կան* 300*ի չափ ընտանիք՝ որոնք պատուաւոր դիրք մը գրաւած են իրենց վաճառականութեամբ և արուեստներով։*

Շէրիպօն *և* Սամարանգ, *կը գտնուին հիւսիսային ափանց վրայ։*

Ներքին գլխ. քաղաքներն են Սուրաքարդա և Ճօքճօքարթա։

Սունտայի արշիպեղագոսը կ'ամբողջայնեն Մատուրա, Պալի, Լոմպօք, Սումպավա, Ֆլօրէս բարեբեր կղզիք՝ Հոլանտացւոց ձեռք։

Թիմօր, բաժնուած է Սպանիոյ և Փորթուգալի միջև։

ՊՕՐՆԷՕԻ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍ

Պօրնէօ ունի 680,000 քիլ. քառ. տարածութիւն և իբր 14,000,000 բնակիչ։ Այս կղզին Աւստրալիայէ յետոյ՝ աշխարհիս մեծագոյն կղզին է,

Պօրնէօ ծածկուած է բարձրաբերձ լեռներով և ոռոգուած է ջրոյ հոսանքներով, Կ'արտադրէ Հասարակածային երկիրներու յատուկ՝ ամեն տեսակ առատ բոյս։ Ունի նաև ոսկւոյ, հանքածխոյ, անագի և պղնձի հարուստ հանքեր։

Այս կղզւոյն հարաւային արևելեան և արևմտեան մասին տէր են Հոլանտացիք, արևմտեան հիւսիսային մասին՝ Անգլիացիք, իսկ մնացեալ մասը կը կառավարեն անկախ Սուլթաններ։

Հոլանտացւոց գլխաւոր կալուածներն են Բոնթիանաք և Պէնժէռմասինկ : Ներքին գլխաւոր քաղաքն է Սինդանգ :

ՑԷԼԷՊԵԱՆ ԿՂԶԻՔ

Ցէլէպեան արշիպեղագոսը կը տարածուի Պօրնէօ կղզւոյն արևելեան կողմն՝ որոյ մեծագոյն կղզին Ցէլէպ ըլլալուն՝ արշիպեղագոսն ալ այդ անուամբ կոչուած է ։ Ցէլէպեանք ունին իբր 2,000,000 բնակիչ և մեծաւ մասամբ կը պատկանին Հոլանտայի։ Գլխաւոր քաղաքներն են Մաքասար և Մէնատօ։

ՄՈԼՈՒՔԵԱՆ ԿՂԶԻՔ

Մոլուքեան արշիպեղագոսն կը տարածուի Ցէլէպեանց արևելեան կողմն և իրենց արտադրած առատ համեմունքին պատճառաւ՝ կը կոչուին նաև Համեմի կղզիք։ Այս արշիպեղագոսն երկու մասերու կը բաժնուի, Մեծ մոլուքեանք և Փոքր մոլուքեանք որք մեծաւ մասամբ կը պատկանին Հոլանտայի։

Փոքր Մոլուքեանք բաղկացած են հինգ կղզիներէ, Թէռնատ, Թիտօռ, Մաքիան, Մոդիր, և Պաքիան. Մեծ Մոլուքեանց գլխաւորներն են Ճիլօլօ, Սէրամ, Ամպուան և Պանտա որք հրաբղխային են։

Մոլուքեանք ունին իբր 400,000 բնակիչ։

ՓԻԼԻՊՊԵԱՆ ԿՂԶԻՔ

Փիլիպպեան արշիպեղագոսն կը տարածուի Մալէզիոյ հիւս. կողմը և բաղկացած է 40ի չափ մեծ ու փոքր կղզիներէ որք ընդհանրապէս հրաբղխային և անտառներով ծածկուած՝ ու սոսկալի մրրիկներու և անձրևաց ենթակայ են, բայց ունին բարեբեր հող և հարուստ բուսաբերութիւն։ Բնակչաց թիւն է իբր 6,000,000։ Գլխաւոր կղզիներն են Լուսօն (2,000,000 բն.), Մայրաքաղաքն է Մանիլլա որ գեղեցիկ դիրքով վաճառաշահ նաւահանգիստ մ'է

Մինտանաօ (1,200,000 բն.), ունի ոսկւոյ հարուստ հանքեր։ Գլխաւոր քաղաքն է Սէյանկան։

Երկրորդական կղզիներն են Փալաւան, Սուրիկաօ, Սամար, Մինտօրօ, Զէպու ևլն։

ԱՒՍՏՐԱԼԻԱ կամ ՄԷԼԱՆԷԶԻԱ

ՄԷԼԱՆԷԶԻԱ՝ անունը կ'ուտան աշխարհագիրք՝ Ովկէանիոյ հարաւային արևմտեան կողմը սփռուած այն արշիպեղագոսին՝ որոյ մեծագոյն կղզին է ԱՒՍՏՐԱԼԻԱ և որ 'ի հնումն կը կոչուէր Նոր Հոլանտա։

Մէլանէզիա կը պարունակէ երեք մեծ երկիրներ և ութը գլխաւոր արշիպեղագոսք։

Երեք մեծ երկիրներն են,

Աւստրալիա, ունի 7,750,000 քիլ. քառ. տար. և 3,800,000 բն։

Աւստրալիոյ արևմտեան և միջին մասերն ընդհանրապէս դաշտային են, իսկ արևելեան կողմը հիւսիսէն 'ի հարաւ կ'երկարին Կապոյտ կամ Աւստրալեան Ալպեանք որք կը պարունակեն բազմաթիւ հրաբղխային գագաթներ։ Հիւսիսային կողմը կը տեսնուի Քարփանթարիի մեծ ծոցը։

Կլիման ընդհանրապէս բարեխառն է և առողջ, մանաւանդ հարաւային կողմը, իսկ սաստիկ տաք կ'ընէ հիւսիսային ծովեզրին վրայ։ Կղզւոյն ամենէն արգասաւոր և լաւ մշակուած մասերն են հարաւային գաւառք՝ յորս յառաջ կ'ուգան Հասարակածի ամէն տեսակ բոյսեր։ Առատօրէն կը գտնուին ոսկի, արծաթ, պղինձ,

երկաթ և հանքածուխ։ Բաց ՚ի ծանօթ ընտանի կենդանիներէ՝ կը գտնուին նաև բազմաթիւ գազանք։ Կայ նաև էնկիւրիի տեսակէ այծ՝ որոյ բուրդն շատ յարգի է։

Աւստրալիա քաղաքականապէս բաժնուած է վեց մասերու։

1°. Նոր Կալլէս Հարաւային. 2°. Վիքթորիա, 3°. Քուինսլէնտ. 4. Հարաւային Աւստրալիա. 5. Հիւսիսային Աւստրալիա 6. Արեւմտեան Աւստրալիա։

1. Նոր Կալլէս Հարաւային. Ունի 800,000 բնակիչ։ Գլխ. քաղաքն է Սիտնէյ՝ Եւրոպական ճաշակաւ շինուած, ծաղկեալ, վաճառաշահ և խիստ գեղեցիկ քաղաք է։ Երեւելի են նաև Փարամաթա և Պօթան-Պէյ։

2. Վիքթորիա. կը գտնուի Նոր Կալլէսի հարաւակողմն և ունի 950,000 բնակիչ և ոսկւոյ հանք։ Գլխաւոր քաղաքն է Մէլպուրն (250'000 բն.) Ֆիլիփի նաւահանգստին վրայ նորաշէն, գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է։ Երեւելի են նաև Ճիլոնկ, Պալլարատ և Սէնտհէօրստ։

3. Քուինսլէնտ. Հարաւային Նոր Կալլէսի հիւսիսային կողմը։ Ունի 200,000 բնակիչ, հարուստ բուսաբերութիւն և բազում արջառ։ Գլխաւոր քաղաքն է Պրիսպան որ համանուն գետին բերանը վաճառաշահ նաւահանգիստ է։

4. Հարաւային Աւստրալիա. Ունի 300,000 բնակիչ։ Գլխաւոր քաղաքն է Ատէլայիտ որ հետզհետէ ծաղկելու վրայ է։

5. Հիւսիսային Աւստրալիա. Իր մէջ կը պարունակէ Ալեքսանտրայան երկիրն ու Մէլվիլ կղզին։ Գլխաւոր քաղաքներն են Պալմէրստըն և Վիքթորիա։

6. Արեւմտեան Աւստրալիա. Գլխաւոր քաղաքներն էն Պէրթ, Ալպանի, Ֆրիմանթըլ։

ՆՈՐ ԿՈՒԻՆԻԱ կամ ԲԱԲՈՒԱԶԻԱ

Այս մեծ կղզին կը տարածուի Աւստրալիոյ հիւսիսային կողմն՝ ուսկից բաժնուած է Թորրէսի նեղուցով։ Հրաբղխային լեռներով ծածկուած կղզի մ'է Նոր Կուինիա որու ներքին մասերը տակաւին ամբողջապէս ծանօթ չեն։ Կ'արտադրէ Հասարակածային երկիրներու յատուկ բոյսեր։ Կղզւոյն արեւմտեան մասին տէր են Հոլանտացիք, հարաւային մասին՝ Անգլիացիք, իսկ հիւսիսային և

արեւելեան մասանց վրայ՝ Գերմանացիք վերջերս գերիշխանութիւն մը ձեռք ձգեցին։ Բնակիչք քաղցրաբարոյ և քաղաքակրթութեան յարմար են և կը հաշուուին իբր 500,000 որոնք Բաբու ցեղին կը վերաբերին և այս պատճառաւ կղզին ալ կոչուած է Բաբուազիա։

Թասմանիա՝ որ կը կոչուի նաև Երկիր Տիէմէնի, Աւստրալիոյ արեւելեան հարաւային կողմը հանքահարուստ և բարեբեր կղզի մ'է և կը պատկանի Անգլիոյ։ Գլխ. քաղաքներն են Հօպարդդօվն և Ճօրճ-Թօվն։

ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍՔ ՄԷԼԱՆԷԶԻՈՅ

Մէլանէզիոյ ութը գլխաւոր արշիպեղագոսներն են.

1. Նոր Բրիտանիոյ Արշիպեղագոս, որ բաղկացած է Նոր Հանովր, Ամիրոբէ, Նոր Իրլանտա, Նոր Բրիտանիա կղզիներէն՝ որոյ վերջի տարիներս Գերմանացիք տիրանալով զայն անուանեցին Պիզմարքեան Արշիպեղագոս։ Նոյնպէս՝

Սողոմոնեան.

Նոր Հէպրիտեանք.

Լա Բէրուզի արշիպեղագոս։

Նոր Քալէտոնիա։

Լուիզիատի արշիպեղագոս, որք կը գտնուին Նոր Բրիտանիոյ արշիպեղագոսին հարաւային արեւելեան կողմը։

Ֆիճի կղզիք, ծովային հրաբուղխէ յառաջ եկած 300 ի չափ կղզեակներէ բաղկացեալ են։ Հողը բարեբեր է և կ'արտադրէ տաք երկրի բերքեր և մանաւանդ սանդալ անուն անուշահոտ փայտը։

Նորֆօլք, Նոր Քալէտոնիոյ արեւելեան հարաւակողմը զուարճալի դիրքով և զուարճալի կլիմայով բարեբեր կղզի մ'է։ Կը պատկանի Անգլիոյ՝ որու իբր Սիպերիա կը ծառայէ։

ՄԻՔՐՈՆԷԶԻԱ

Միքրոնէզիա՝ որ կը նշանակէ Փոքր կղզի, բաղկացած է բազմաթիւ մանր կղզիներէ և կը տարածուի Խաղաղական ովկէանոսի արեւմտեան կողմը։

Գլխաւոր արշիպեղագոսներն են.

Մարիանեան կամ Աւազակաց կղզիք, զորս առաջին անգամ գտաւ Մակելլան 1521 ին, այժմ կը պատկանի Սպանիոյ։ Գլխաւոր քաղաքն է Կուամ որ ունի հարուստ բուսաբերութիւն։ Բնակչաց մէջ կան շատ մը Քրիստոնեայներ։

Քարոլինեան կղզիք, կը գտնուին Նոր Կուինիոյ հիւսիսային կողմը և բաղկացած են 500 է աւելի կղզիներով։ Կլիմայն թէեւ զուարճալի՝ բայց ահաւոր փոթորիկներն ալ անպակաս են։ Բնակիչք կը պատկանին Ամերիկեան և Մալայեան ցեղերու և նշանաւոր են իրենց աշխատասիրութեամբ։ Գլխաւոր կղզիներն են Ուալան, Նամուրէք, Եափ, ևայլն։

Երեւելի են նաեւ Մակէլլանի, Ժիլպէրի, Սամոնի և Մառշալի արշիպեղագոսք։

ՓՈԼԻՆԵԶԻԱ

Փոլինեզիա՝ որ կը կոչուի նաեւ Արեւելեան Ովկիանոս, ձեւացած է Խաղաղական ովկէանու արեւելեան կողմը սփռուած բազմաթիւ մանր կղզիներէ որք ընդհանրապէս բարձրադիր և հրաբղխային են։

1. Նաւորդաց կղզիք (40,000 բն.), Գլխաւորներն են Մաունա, Բօլա, Օբոլու որք շատ բարեբեր են։ Բնակիչք մեծ մասամբ Քրիստոնեայ և քաջ նաւորդներ ու մտացի մարդիկ են։

2. Բարեկամաց կղզիք (50,000 բն.), զորս գտաւ Թասմանն Հոլանտացի նաւապետը 1645 ին և ապա Քուք, բնակչաց հիւրասիրութեանն համար՝ սոյն արշիպեղագոսը կոչեց Բարեկամաց,

3. Սանտուիչ կղզիք (60,000 բն.), հրաբղխային լեռներով ծածկուած կղզիներ են, կ'արտադրեն խահուէ, շաքար, բամպակ, ծխախոտ ելն, Գլխաւոր կղզին է Հաւայի՝ ուր 1779 ին սպաննուեցաւ Քուք անուանի նաւապետը։ Գլխաւոր քաղաքն է Հօնօլուլու որ ունի ընդարձակ վաճառականութիւն։ Բնակչաց մէջ կան բազում Չինացիք։

4° ԹԱՅԻԹԻ կամ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՂԶԻՔ

Ունին 25,000 բնակիչ և կը պատկանին Ֆրանսայի։ Ամենէն երեւելի կղզին է Թայիթի որ՝ իր բնական գմայլելի դիրքին պատճառաւ՝ կոչուած է Թագուհի Խաղաղական ովկէանոսի։ Բնակիչք քաղաքակրթեալ ու Քրիստոնեայ են

5. Մարգիզեան կղզիք, հրաբղխային և անբեր են և բնակիչք վայրենական վիճակի մէջ կը գտնուին։ Գլխաւոր կղզիներն են Նուքա-Հիվա և Սանդա-Տոմինիքա որք կը պատկանին Ֆրանսայի։

Նոր Զելանտացի վայրենիք

6. Նոր-Զէլանտա, Հարաւային Բոլինէզիոյ գլխաւոր արշիպեղագոսն է և կը բաղկանայ երկու մեծ կղզիներէ, Իքանամաուի՝ հիւսիսային կողմը, Փունամու՝ հար. կողմը։ Նոր-Զէլանտա ունի 273,000 քիլ. քառ. տար. և 530,000 բնակիչ որոց 485,000ը Եւրոպացի և մնացեալք՝ բնիկ վայրենիներ են Մէօրիս անուն։ Եւրոպական գաղթականութիւնք և Քրիստոնեայ միսիօնարք կը ջանան քաղաքակրթել այս վայրենիներն որոնք ի բնէ շատ ուշիմ կ'երեւին։ Կլիմայն ընդհանրապէս առողջարար է, ունի հարուստ և բազմատեսակ բոյսեր, պարարտ արօտներ, ընդարձակ անտառներ և հարուստ հանքեր ոսկւոյ, պղնձի և հանքածխոյ։ Գլխաւոր քաղաքներն են Օքլէնտ, Ուէլինկթըն, և Նէլսըն։

Նոր-Զէլանտա կը պատկանի Անգլիոյ։

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1°. Կ. Պոլիսէն Փարիզ երթալու քանի՞ գլխաւոր ճամբայ կայ։

2°. Կ. Պոլիս լայնութեան քանի՞երորդ աստիճանին ներքեւ կը գտնուի եւ ո՞րոնք են Ասիոյ ու Ամերիկայի մէջ՝ իրեն աստիճանակից երեւելի քաղաքները։

3°. Սան-Ֆրանչիսկօէն նաւ մը Կալկաթա պիտի երթայ։ Կ'ուզեմք գիտնալ թէ՛ ո՞ր ովկէանոսներէն, ծովերէն, ծոցերէն ու նեղուցներէն պիտի անցնի, ու այս առթիւ ո՞ր երկիրները, կղզիներն ու հրուանդանները պիտի տեսնէ։

4°. Ջինաստանի Մայրաքաղաքէն Լոնտոն երթալու ամենէն դիւրին ճանապարհը ո՞րն է

5°. Պուէնոս-Այրէսէն Երուսաղէմ պիտի երթամք — Գծէ՛ մեր ընթանալիք ուղին։

6°. Ամստերտամէն՝ նաւով պիտի երթամք ՚ի Ճավա՝ հանդիպելով Ափրիկէի հիւսիսային եւ արեւելեան գլխաւոր նաւահանգիստները. — Գծէ՛ մեր ընթանալիք ուղին։

7°. Պօստօնէն դէպ արեւելք պիտի ուղեւորիմք մինչեւ Խաղաղական ովկէանոսի սահմանը. — Մեր այս ուղեւորութեան նպատակը պիտի լինի՝ ուշադրութիւն ընել թէ՝ Եւրոպիոյ եւ Ասիոյ ո՞ր երկիրներէն պիտի անցնիմք, ի՞նչ երեւելի քաղաքաց պիտի հանդիպիմք եւ ո՞ր գետերը, լեռներն ու լճերը պիտի տեսնեմք։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԵՐԿՐԻՍ ՀԻՆԳ ՄԱՍԱՆՑ ՎՐԱՅ

1.

Ո՞րն է Եւրոպիոյ մեծագոյն երկիրը, ծովը, լիճը, գետը, լեռնաշղթայն, գագաթը, թերակղզին, քաղաքը։ — Ո՞րն է ամենէն հիւսիսային, արեւմտեան ու հարաւային գլուխը։ — Համեմատաբար իւր ընդարձակութեան՝ ո՞րն է Եւրոպիոյ ամենէն բազմամարդ երկիրը. ամենէն ընդարձակ գաղթականութիւններ ունեցողը։ — Ո՞րոնք են ամենէն շատ երկաթուղւոյ գծեր ունեցող երկիրները։ — Ձեռարուեստ եւ ճարտարութիւն ամենէն աւելի ո՞ր երկրաց մէջ զարգացած են։ — Նախնական կրթութիւնը ո՞ր երկիրներու մէջ շատ յառաջ գացած է։ — Ո՞ր երկիրները առատօրէն կարտադրեն արմտիք, գինի, ծխախոտ, տուղձ, հանքածուխ, մարմարիոն, երկաթ, աղ։ — Որո՞նց մէջ կը գտնուի կաթընտու ընտիր կենդանիներ։

2.

Եւրոպիոյ ո՞ր երկիրները այլ եւ այլ ցեղերէ ու ազգութիւններէ բնակիչ կը պարունակեն։ — Որո՞նք են Եւրոպիոյ Կաթոլիկ, Բողոքական եւ Յունադաւան երկիրները։ — Լատինական ցեղն ընդհանրապէս ի՞նչ կրօն կը դաւանի. Գերմանակա՞նը, Սլա՞ւը։ — Եւրոպա քանի՞ հրաբուղխ ունի։ — Որո՞նք են միջերկրականի գլխաւոր նաւահանգիստները։ — Գերմանիա Հիւս. ծովու եւ Էլպայի վրայ ինչ երեւելի նաւահանգիստներ ունի։ — Թուէ՛ Եւրոպիոյ տէրութեանց իւրաքանչիւրին ամենէն երեւելի նաւահանգիստները։ — Եւրոպական Թուրքիոյ ո՞ր քաղաքներն երկաթուղեաւ միացած են։ — Ո՞ր քաղաքները ազնիւ գինի եւ ծխախոտ կարտադրեն, ո՞ւր կը պատրաստեն վարդի իւղ։

3.

Ասիա ի՞նչ գօտիներու ներքեւ կը գտնուի։ Քանի՞ ովկէանոս կը տեսնէ։ — Ո՞րն է ամենէն ընդարձակ երկիրը, ամենէն մեծ լեռնադաշտը, ծովը, ծոցը, ցամաքակղզին, կղզին, անապատը, լեռնաշղթայն, գագաթը, գետը, լիճը, ամենէն բազմամարդ երկիրը, ամենէն սակաւարնակ երկիրները։ — Որո՞նք են Ասիոյ լեռնային, հրաբղխային ու անապատային երկիրները։ — Ո՞ր երկրաց մէջ յառաջ կուգայ խահուէ, բամպակ, ծխախոտ, շաքարեղէգ, բրինձ, թէյ, համեմունք։ — Որո՞նք են Ասիոյ Եւրոպական կալուածները, քրիստոնեայ, մահմետական ու կռապաշտ երկիրները։ — Ամենէն երեւելի նաւահանգիստները։

4.

Ափրիկէի ո՞ր երկիրներն Հասարակածի ներքեւ կը գտնուին։ — Նոր Աշխարհի մէջ ո՞րոնք։ — Ովկէանիոյ մէջ։ Ո՞ր երկիրները կը թրջեն Նիկէր, Նեղոս, Զամպէզ։ — Ափրիկէի մեծագոյն լիճերը ո՞ւր կը գտնուին։ — Եգիպտոս լայնութեան ո՞ր աստիճանին ներքեւ կը գտնուի եւ որո՞նք են Հին ու Նոր աշխարհաց մէջ իրեն աստիճանակից երկիրները։ — Ո՞րն է Ափրիկէի ամենէն ծաղկեալ երկիրը, մեծագոյն լի՞ճը, կղզի՞ն, լեռնագօտի՞ն, գե՞տը։ —

5.

Ո՞րն է աշխարհիս ամենէն շատ երկաթուղի ունեցող երկիրը. ամենէն մեծ քանակութեամբ բամպակ, ցորեն, գինի, խահուէ, հանքածուխ, բըրինձ, թէյ, բժշկական բոյսեր, ատաղձ, թուզ, չամիչ, կանեփ արտադրող երկիրները (զատ զատ)։ — Ցոյց տուր գետերու վրայ շինուած Մայրաքաղաքներ։ — Օսմ. պետութեան արտաքին վաճառականութեան գլխաւոր նիւթերը որո՞նք են. — Ո՞ր գետերը կը բղխին Զուիցերիէն, Աւստրիայէն, Գերմանիայէն. — Հի՞ն թէ Նոր Աշխարհի ցամաքներն աւելի մօտ են բեւեռներուն. — Ցոյց տուր Նոր Աշխարհի այն քաղաքներն որոնք իրենց համանուններն ունին Հնոյն մէջ։ — Անգլիեան կղզեաց գլ. բոյսերը որո՞նք են։ — Ո՞րն է Նոր Աշխարհի ամենէն ընդարձակ, բազմամարդ եւ հարուստ երկիրը. — Ո՞րն է մեծագոյն կղզին, ծոցը, լեռնագօտին, լիճը, գետը, թերակղզին. — Ամենէն լեռնոտ, հրաբղխային եւ անապատային երկիրները. — Լայնութեան ո՞ր աստիճանին տակ կը գտնուին Երուսաղէմ, Թիֆլիզ, Նոր Օռլէան, Փարիզ, Կալկաթա, Ս. Լուի, Մոսքուա, Վենետիկ, Պուխարա, Նիւ Եորք, Կ. Պոլիս, Իզմիր։ — Ո՞րն է Հիւս. ծովու ամենէն երեւելի նաւահանգիստը, Պալթիկի՞, Ատլանտեանի՞, Միջերկրականի՞, Ադրիականի՞, Արշիպեղագոսի՞, Մարմարայի՞, Սեւ, Ազախու՞ կասպի՞ց ծովու։

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

ԵՒՐՈՊԻՈՅ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑԻՆ ՎՐԱՅ

ԴԱՍ Ա.

Գտնել այնպիսի նաւահանգիստներ՝ որոց սկզբնատառերովը կարելի ըլլայ կազմել հետեւեալ անունները.

ԱՆՆԻԲԱԼ, ԿԻԿԵՐՈՆ, ՍՈԿՐԱՏ, ՍԿԻՊԻՈՆ, ԱՐԱՄ. ՆԵՐՍԷՍ, ՆԱՓՈԼԷՕՆ, ՄԱՐԱԹՈՆ, ԱԹԷՆՔ, ՊՈԼԻՍ, ԷԼՊԱ, ՇԱՄԻՐԱՄ.

ՕՐԻՆԱԿ

Ա մսդերտամ
Ն ափոլի
Ն աւփլէա
Ի պրայիլ
Բ ադրաս
Ա ժտէրխան
Լ իվոռնօ

ԴԱՍ Բ.

Եւրոպական տէրութեանց սկզբնատառերով կազմել հետեւեալները.

1. Հայոց մեծագոյն դիցուհին.
2. Կ. Պոլսին առնող Սուլթանին տիտղոսը.
3. Ասիական Թուրքիոյ բարձրագոյն գագաթը.
4. Արաբիոյ պատմական կարեւոր մէկ լեռը.

ՕՐԻՆԱԿ

Ա ւստրիա
Ն որվէկիա
Ա նգլիա
Հ ոլանտա
Ի տալիա
Տ անըմարքա

ԴԱՍ Գ.

Գտնել ներքին այնպիսի քաղաքներ՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալ անունները.

ԽՈՐԵՆԱՑԻ, ՊԵՐԻԿԼԷՍ. ՔՈԼՈՄՊՈՍ, ԼԷՈՆԻԴԱՍ, ՕԳՈՍՏՈՍ, ԱՐԱՄԱԶԴ, ՊՈՄՊԷՈՍ, ԿԵՍԱՐ, ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՀՈՄԵՐՈՍ, ՀԵՐՈԴՈՏՈՍ, ՄԻԼՏՕՆ, ՆԵՐՍԷՍ, ՀՌՈՄ, ՌԱՖԱԷԼ, ՃԷՆՈՎԱ, ՖԻՕՐԷՆՑԱ, ԱՄԵՐԻԿԱ, ՄԱՐՍԻԼԻԱ, ՀՈՒՆՈՍ, ՎՈԼԿԱ.

ՕՐԻՆԱԿ

Խ արքօվ
Ո ւտրէխ
Ր իգա
Ե ենա
Ն իւրէմպէրկ
Ա լիքանթէ
Ց ուրիխ
Ի նսպրուկ

ԴԱՍ Դ.

Գտնել այնպիսի գետեր՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալ անունները։

ՕՐԻՆԱԿ

ՍԴԷՆԼԻ, ԱԴԱՄԵԱՆ, ՆԱՓՈԼԷՕՆ, ԱԹԷՆԱՍ, ԴԱՆԻԷԼ, ՄԱՏԹԷՈՍ, ՆԻՆՈՍ, ՎԱՏԻԿԱՆ, ՕՏԷՍԱ, ԿԱԼԿԱԹԱ, ԴԱՄԱՍԿՈՍ.

Սալա
Դանուբ
Էլպա
Նեվա
Լուար
Ին

ԴԱՍ Ե.

Գտնել այնպիսի գագաթներ կամ լեռնագօտիներ՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալները.

ՕՐԻՆԱԿ

1. *Եգիպտացի մեծ աշխարհագրի մը անունը.*
2. *Միջերկրականի մեծագոյն կղզին.*
3. *Միջերկրականի մէջ Յունաստանի պատկանող կղզին.*
4. *Հին Յունաստանի պատմական երեւելի մէկ լեռը.*

Տրանսիլվանեան
Էտնա
Սիէռա-Մոնչիկ
Ուրալ
Սիէռա տ'Էսդրէլլա
Տինարեան
Ռոտոփ

ԴԱՍ Զ.

Գտնել ներքին այնպիսի քաղաքներ եւ կամ հրուանդաններ՝ որոց վերջին տառերով կարելի ըլլայ կազմել հետեւեալ անունները.

ՕՐԻՆԱԿ

ՖՐԱՆՍԱ, ԱՆԳԼԻԱ, ԿՈՎԿԱՍ, ՍԻԿԻԼԻԱ, ԱՐԱՔՍ, ՌԷՆ, ԼԻՎԻՆԿՍԴԸՆ.

Պէրտիչէ Ֆ
Շէռպու Ր
Քոլոնի Ա
Րօզէ Ն
Քսերէ Ս
Տրէզտ Ա

ԴԱՍ Է.

Եւրոպական կղզեաց սկզբնատառերով կազմել հետեւեալ անունները.

ՕՐԻՆԱԿ

ՊԱՐՈՆԵԱՆ, ՔՈՐՍԻՔԱ, ՍԻԿԻԼԻԱ, ԿԻՊՐՈՍ, ՓԷՔԻՆ.

Պորնհոլմ
Ալանտ
Րիւկէն
Ուայթ
Նաքսոս
Եւբէա
Անտրոս
Նեկրոպոնդ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

	Երես
1. Ընդհանուր գիտելիք	1
2. Ցամաքին բաժանումները	4
2. Ջրոյ բաժանումները	7

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵՒՐՈՊԱ

Եւրոպական աշխարհ

1. Անգլիա	19
2. Տանիմարքա	23
3. Շուէտ-Նորվէկիա	25
4. Եւրոպական Ռուսիա	27
5. Ֆրանսա	31
6. Պելճիքա	35
7. Հոլանտա	37
8. Զուիցերիա	39
9. Գերմանական կայսրութիւն	40
10. Աւստրօ-Հունգարիա	43
11. Սպանիա	48
12. Փորթուկալ	50
13. Իտալիա	52
14. Եւրոպական Թուրքիա	57
15. Պուլկարիա	63
16. Արեւելեան Ռումէլի	66
17. Ռումանիա	67
18. Սերպիա	68
19. Ղարատաղ	69
20. Յունաստան	70
21. Ընդհանուր Հարցումներ Եւրոպիոյ վրայ	73

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍԻԱ

Ասիական Աշխարհ

	Երես
1. Ռուսական Ասիա	79
Կովկասիա	81
2. Թուրքաստան	83
3. Ասիական Թուրքիա	86
4. Պարսկաստան	99
5. Աֆղանիստան	101
6. Պելուճիստան	102
7. Արաբիա	103
8. Ճաբոն	103
9. Հնդկաստան	106
10. Չին	111
11. Հնդկա-Չին	114
12. Ընդհանուր Հարցումներ Ասիոյ վրայ	117

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՓՐԻԿԷ

Ափրիկեան Աշխարհ

1. Եգիպտոս	122
2. Նուպիա	126
3. Եթովպիա	127
4. Պէրպէրիստան	128
5. Սահարա	131
6. Սենեկամպիա	132
7. Հիւսիսային Կուինիա	133
8. Սուտան	351
9. Սօմալ	136
10. Հարաւային Կուինիա	137
11. Հարաւային Նիկրիտիա	139
12. Բարեյուսոյ երկիր	141
13. Քաֆրաստան	142
14. Մոզամպիք	143
15. Զանկէպար	144
16. Օվամփիա	145
17. Ափրիկեան կղզիք	146
18. Ընդհ. Հարցումներ Ափրիկէի վրայ	148

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

—

ՀԻՒՍ. ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկեան Աշխարհք

Երես

1. Գրօէնլանտիա 154
2. Նոր Բրիտանիա 155
3. Միացեալ Նահանգք 158
4. Մեքսիկա 161
5. Կեդրոնական Ամերիկա 163

ՀԱՐ. ԱՄԵՐԻԿԱ

1. Քոլոմպիա 165
2. Վենեցուէլլա 166
3. Կույանա 167
4. Էգուաթոր 168
5. Պրազիլիա 169
6. Բէրու 171
7. Պոլիվիա 173
8. Բարակուա 174

Երես

9. Ուրուկուա 175
10. Չիլի 175
11. Արճէնդին 177
12. Փաթակոնիա 178
13. Անգիլեան կղզիք 179
14. Ամերիկայի վրայ ընդհանուր Հարցումներ 182

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

—

ՈՎԿԷԱՆԻԱ

1. Մալէզիա 185
2. Աւստրալիա 187
3. Միքրոնէզիա 189
4. Փոլինէզիա 390
5. Ընդհ. պարտականութիւն 192
6. Աշխարհագրական Հանելուկներ 195

ՎՐԻՊԱԿ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
3	12	*կը կոչուի*	*կը կոչուին*
4	31	509,000,000	512,000,000
11	11	*Սվկէանոսի*	*Ովկէանոսի*
13	9	*Նուալանտ*	*Նութլանտ*
20	5	*Ենկլիսի*	*Էնկլիսի*
31	17	526	528
32	-14	300	300 *մէթր*
46	9	*ծովուն*	*վրայ*
47	2	*Թիցայի վրայ*	*Դանուբայ վրայ*
53	29	*Զիվիթա-Վէքքի*	*Զիվիթա-Վէքիա*
82	1	7,000,000	8,000,000
96	29	*Իզմիտ*	*Իզմիր*
100	4	*Դաւրէժ*	*Դավրէժ*
102	12	*չաքարեղէք*	*չաքարեղէգ*
102	3	*մանաւանդ եւ*	*եւ մանաւանդ*
105	4	*Լօզօ*	*Լզօ*
115	20	*մինչեւ*	*միջեւ*
134	27	*Պէնէի*	*Պէնէնի*
138	10	*Օանկօյի*	*Լօանկօյի*
140	5	*Ամերիկեան*	*Ափրիկեան*
141	2	*Պաւթէլէ-միՏիազ*	*Պաւթէլէմի-Տիազ*
142	19	*Հրազմնթօմն*	*Կրահմնթօմն*
146	2	4	*եւ*

7223
7.000
0003240
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0003240

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

		Ղրշ.	Փրյ.
1°.	**ՀԱՄԱՌՕՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.** 'Ի պէտս Ազգ. Նախակրթական վարժարանաց	2	2
2°.	**ԸՆԴԱՐՁԱԿ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ**. Բնական, Քաղաքական եւ Տնտեսական՝ հանդերձ նորագոյն եւ կարեւոր ծանօթութեամբք՝ ի պէտս Ազգ. Երկրորդական Նախակրթարանաց	6	
3°.	**ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ**. 'Ի պէտս Ազգ. Նախակրթական վարժարանաց	4	20
4°.	**ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏԻ ԴԱԼՖԱՅԵԱՆ**	5	

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ